ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԳՈԹԱՅԻ ԾՐԱԳՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ ● 1937 ● ԵՐԵՎԱՆ

А $\frac{II}{5830}$

КАРЛ МАРКС
КРИТИКА ГОТСКОЙ ПРОГРАММЫ
Армпартиздат, Ереван, 1937

ԱՌԱՋԱԲԱՆ

«Գոթայի ծրագրի քննադատությունը», «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հետ միասին, Մարքսի ամենանշանակալից ծրագրային աշխատությունն է։ Այդ «Քննադատությունը» սակավաթիվ էջերում, ամենասեղմ ձևակերպումներով տալիս է պրոլետարիատի կուսակցության ծրագրի կարևորագույն թեորիական հիմունքները։

Մարքսն այս աշխատության մեջ շատ մեծ ուշադրություն է նվիրում անցման շրջանի, սոցիալիզմի ու կոմունիզմի հարցին։ Ներկայումս առանձնապես կարևոր է մեզ համար Մարքսի այս յերկը։ Հատկապես այժմ, յերբ պրոլետարիատի դիկտատուրայի առկայությամբ ԽՍՀՄ մեջ իրապես կենսագործվում է այդ անցումը, Մարքսի գիտական կանխատեսությունները առանձին նշանակություն են ստանում, անմիջականորեն կյանքում կիրառվող գործնական դիրեկտիվների բնույթ են ձեռք բերում։ Յեվ յերբ ԽՍՀՄ-ի մեջ, բուրժուազիայի ու նրա գործակալության— ոպորտունիստների—հուսահատ դիմադրության դեմ մղվող պայքարում, արդեն ստեղծված է սոցիալիստական էկոնոմիկայի հիմքը, յերբ մեր կուսակցությունը XVII կոնֆերենցիայում իբրև յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիր առաջադրել է «կապիտալիստական տարրերի ու ընդհանրապես դասակարգերի վերջնական լիկվիդացիան, դասակարգային տարբերությունները ու շահագործում առաջացնող պատճառների լիակատար վոչնչացումը, և կապիտալիզմի մնացորդների հաղթահարումը էկոնոմիկայի ու մարդկանց գիտակցության մեջ, յերկրի ամբողջ աշխատավոր բնակչության՝ անդասակարգ հասարակության գիտակից ու ակտիվ կառուցողների փոխարկելը»,—առանձնապես պայծառ կերպով յերևում է, վոր հենց բոլշևիզմի քաղաքական գիծն է հանդիսանում այն գծի անմիջական շարունակությունը, վոր իրենց ամբողջ կյանքի ընթացքում կիրառում եյին Մարքսն ու Էնգելսը։ ՀամԿոմ(բ)Կուսի ու Կոմինտերնի արդի պայքարը սոցիալ-ֆաշիզմի, հակահեղափոխական տրոցկիզմի և աջի ոպոր-

տունիզմի բոլոր բազմազան ձևերի դեմ՝ այն պայքարի շարունակությունն է, որ Մարքսն ու Էնգելսը մղում էին իրենց ամբողջ կյանքի ընթացքում։ Սոցիալիստական շինարարության հաջողությունները արդյունք են այն մարքսիստական-լենինյան հեղափոխական քաղաքականության, որն ուղղված է դասակարգային պայքար ծավալելու կողմը կապիտալիստական շահագործման դեմ, բուրժուազիայի դեմ,—պայքար, որ մղում են բոլոր ճնշվածներն ու շահագործվողները հեղափոխական պրոլետարիատի գերիշխանության ներքո։

* * *

Իր «Քննադատությամբ» Մարքսը հանդես եկավ 1875 թ. մայիսին այն կոպիտ օպորտունիստական սխալների դեմ, որ թույլ էին տվել գերմանական սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդներն սկզբունքային, ծրագրային հարցերում՝ այն ժամանակ գոյություն ունեցող գերմանական երկու բանվորական կուսակցությունների—Լիբկնեխտի ու Բեբելի ղեկավարած «Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության» (այսպես կոչված այզենախյանների) ու Հազենկլևերի, Հասսելմանի ու Տյոլկեյի գլխավորած լասսալյան «Ընդհանուր գերմանական բանվորական միության»—միացման ժամանակ։ Այդ երկու կուսակցություններն էլ ծագել են 1860-ական թվականներին, երբ դեռևս լուծված չէր միասնական գերմանական պետություն ստեղծելու հարցը,—մի հարց, որ իբրև համազգային նշանակություն ունեցող հարց ամենագլխավոր դերն էր կատարում նաև 1848—1849 թ. թ. հեղափոխության ժամանակ, բայց մնացել էր առանց լուծման։ Այդ հարցը կարելի էր լուծել երկու կերպ. կամ բուրժուական-դեմոկրատական հեղափոխության միջոցով, որը, ինչպես այդ մասին Մարքսն ու Էնգելսը գրում էին դեռ 1847 թվին, պետք է «նախերգանք» լիներ պրոլետարական հեղափոխության՝ դեպի սոցիալիստական հեղափոխություն, կամ թե «պրուսական եղանակով», այսինքն՝ միավորելով Գերմանիան ռազմաբյուրոկրատական ու կիսաֆեոդալական պրուսական միապետության գերիշխանության ներքո, բուրժուական-յունկերական պետություն ստեղծելով։ Լիբկնեխտի ու Բեբելի կուսակցությունը Մարքսի ու Էնգելսի ուժեղ ազդեցության ներքո պայքարում էր առաջին ուղու համար, իսկ լասսալականները, շարունակելով Լասսալի քաղաքականությունը, որը հիմնված էր յուն-

կերական պետությունից բանվորների համար օգնություն ստանալու հույսի վրա՝ իրենց տնտեսական դրությունը բարելավելու համար մղվող պայքարում, այնպիսի քաղաքականություն էին վարում, որն իրապես նպաստում էր Գերմանիան յունկերական յեղանակով միավորելու հարցի լուծմանը։ Հենց այդ պատճառով էլ Մարքսը լասսալականների ճակատին դրոշմեց «պրուսական արքայական սոցիալիստներ» անունը։ Մի շարք պատերազմներ, առանձնապես 1870—1871 թ. թ. ֆրանս-պրուսական պատերազմը, պրոլետարիատի յերկյուղից բուրժուազիայի կնքած դաշինքը յունկերների հետ, գերմանական մանր-բուրժուազիայի յերկչոտությունը, գերմանական պրոլետարիատի թուլությունն ու տհասությունը, Փարիզի Կոմունայի պարտությունը,—այս բոլորն այնտեղ հասցրեց, որ գերմանական միության հարցը վճռվեց հենց «պրուսական» յեղանակով։ Այդպիսով, վերացավ քաղաքական տեսակետից ամենակարևոր տարաձայնություններից մեկը յերկու բանվորական կուսակցությունների միջև։ Կուսակցական և բանվորական մասսաները միավորում էին պահանջում։ Մարքսը վտանգավոր օպորտունիզմ էր տեսնում այն անսկզբունքայնության մեջ, որով այզենախյան կուսակցության առաջնորդները մի ծրագիր հորինեցին, որը մինչ-մարքսիստական, հատկապես լասսալական դավանանքների, վուլգար-դեմոկրատական պահանջների և բոլորովին աղավաղված կոմունիստական թեզիսների մի խառնուրդ էր ներկայացնում։ Մարքսը միանգամայն անպետք էր համարում այդպիսի եկլեկտիկական ծրագիրը։ Մարքսի կարծիքով՝ այդպիսի ծրագիրը կուսակցությանը կանգնեցնում էր ապանդավորության ու մանր-բուրժուական այլասերման վտանգի առաջ, լայն ճանապարհ էր բաց անում օպորտունիզմի համար։ Հենց այդ վտանգի դեմ դուրս յեկավ Մարքսն իր «Քննադատությամբ»։

Պատահական չէ, որ Մարքսի այս աշխատությունը,—որ առաջին անգամ հրատարակեց Էնգելսը «Neue Zeit» («Նոյե Ցայտ») ժուռնալում 1891 թվին, յերբ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ կրկին ուժեղացել էին օպորտունիստական տենդենցները,—գերմանական սոցիալ-դեմոկրատիան դրանից հետո այլևս յերբեք չվերահրատարակեց։ Անկասկած պատահական չէ, որ Ռյազանովը,—որ II Ինտերնացիոնալի «մարքսիզմը» հակադրում էր լենինիզմին և վերջիվերջո ի հաճույս մենշևիկյան ինտերվենտների ուղղակի դավաճանություն գործեց կուսակցության ու պրոլետարիատի դիկտատուրայի վերաբերմամբ,—այն

ամբողջ տասը տարվա ընթացքում, երբ նա կանգնած էր Մարքսի—Էնգելսի Ինստիտուտի գլուխը, ժամանակ չգտավ հեղափոխական մարքսիզմի այդ կարևորագույն փաստաթուղթը տպագրության համար պատրաստելու։

* * *

«Գոթայի ծրագրի քննադատության» մեջ կենտրոնական տեղ է գրավում «ապագա կոմունիզմի զարգացման» վերլուծությունը՝ ամենասերտ կապակցությամբ պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրայի հարցի հետ։

«Քննադատության» այդ մասի հսկայական սկզբունքային ու գործնական նշանակությունն առանձին ուժով ընդգծեց Լենինը 1917 թվին «Պետություն և հեղափոխություն» գրքում, որի մեջ նա զարգացրել է Մարքսի առաջադրած՝ պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը։ Լենինն ասում է. «Այս հարցի (պետության մահացման տնտեսական հիմունքները) ամենամանրամասն բացատրությունը Մարքսը տվել է իր «Գոթայի ծրագրի քննադատության» մեջ... Այս նշանավոր աշխատության բանավիճական մասը, որ լասսալականության քննադատությունն է պարունակում, ստվերի մեջ է պահել, այսպես ասած, նրա դրական մասը, այն է՝ կոմունիզմի զարգացման ու պետության մահացման միջև եղած կապակցության վերլուծությունը»։

Դնելով «կոմունիստական հասարակության զարգացման հարցը,—գրում է Լենինը,—այն հիման վրա, որ այն ծագում է կապիտալիզմից, պատմականորեն զարգանում է կապիտալիզմից, հետևանք է այնպիսի հասարակական ուժի գործողությունների, որը կապիտալիզմն է ծնել»,—Մարքսն ամենևին փորձ չի անում «ուտոպիաներ հորինելու, դատարկ գուշակություններ անելու այնպիսի բաների մասին, ինչ որ չի կարելի գիտենալ։ Մարքսը դնում է կոմունիզմի հարցն այնպես, ինչպես բնախույզը կդներ մի նոր, ասենք, կենսաբանական տեսակի զարգացման հարցը, երբ մենք գիտենք, որ այն հենց այս կերպ է ծագել ու այս-ինչ որոշ ուղղությամբ է կերպարանափոխվում»։

«Առանց ուտոպիաների մեջ ընկնելու՝ Մարքսն ավելի մանրամասն կերպով բնորոշել է այն, ինչ որ այժմ կարելի է բնորոշել այդ ապագայի վերաբերմամբ, այն է՝ կոմունիստական հասարակության ամենացածր ու ամենաբարձր փուլի (աստիճանի, էտապի) տարբերությունը»։ Նա «զգաստ հաշվառում է տալիս այն բանի, թե հատկապես ինչպես է ստիպված լինելու տնտեսավարել

սոցիալիստական հասարակությունը: Մարքսը մոտենում է այնպիսի հասարակության կենսապայմանների կոնկրետ վերլուծությանը, վորի մեջ կապիտալիզմ չի լինի...»: Կապիտալիստական հասարակության ու նրա զարգացման անխուսափելի ընթացքի, նրա մեջ պրոլետարիատի ունեցած դրության ու դերի վերլուծությունը, «պետության մահացման տնտեսական հիմունքների» վերլուծությունը Մարքսին բերում են այն յեզրակացության, թե անհրաժեշտ ու անխուսափելի յե «անցման քաղաքական մի շրջան» «կապիտալիստական ու կոմունիստական հասարակությունների միջև»: Անցման այդ շրջանի պետությունը «չի կարող վոչ այլ ինչ լինել, յեթե վոչ պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրա»:

«Մարքսի այս նշանավոր դատողության մեջ», — գրում եր Լենինը ռենեգատ Կաուցկու մասին գրած իր աշխատության մեջ,— տրված է «նրա ամբողջ հեղափոխական ուսմունքի հանրագումարը» (հատոր XXIII, եջ 338):

1918 թվին ռենեգատ Կաուցկին հանդգնություն ունեցավ հայտարարելու, թե պրոլետարիատի դիկտատուրայի լոզունգը (նա այն անվանում է «բառիկ») Մարքսն առաջադրել է միմիայն մի անգամ — «Գոթայի ծրագրի քննադատության» մեջ: Այդ, իհարկե, սուտ է: Իրապես, պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը կարմիր թելի նման անցնում է Մարքսի ու Էնգելսի ամբողջ ուսմունքի, նրանց բոլոր աշխատությունների միջով: Բայց անկասկած է, վոր Մարքսը «Քննադատության» մեջ է տվել այդ գաղափարի ամենից ավելի պայծառ ձևակերպումը և հիմնավորել այն՝ կոմունիստական հասարակության զարգացման ծավալուն վերլուծությամբ, առանձնապես հանգամանորեն կանգ առնելով «պրոլետարիատի իշխանությունը սոցիալիզմի կազմակերպության համար, դասակարգերը վոչնչացնելու համար, առանց դասակարգերի հասարակության, առանց պետության հասարակության անցնելու համար օգտագործելու հարցի վրա» (Ստալին):

Մեր հեղափոխության փորձը, պրոլետարական դիկտատուրայի ու սոցիալիստական շինարարության 14 տարին մեր յերկրում, յերկրորդ հնգամյակի—դասակարգերի վոչնչացման ու անդասակարգ սոցիալիստական հասարակության հնգամյակի—ծրագիրը և այն խնդիրները, վորոնք այժմ կանգնած են կապիտալիստական յերկրների պրոլետարիատի առաջ, միանգամայն հաստատեցին «կապիտալիզմից կոմունիզմին անցնելու»—«կոմու-

նիստական հասարակության առաջին փուլի»՝ Մարքսի տված վերլուծությունը։ Հաստատվեց այն բարձր գնահատականը, վոր տվել է Լենինն այդ վերլուծության մասին «Պետություն և հեղափոխություն» գրքի մեջ։ Պարզվեց այն անողոք պայքարի վիթխարի նշանակությունը, վոր մղում եր Լենինը մարքսիզմի՝ Կաուցկու նման ռենեգատների դեմ, վորոնք աղավաղում եյին Մարքսի բոլոր հիմնական մտքերը, սոցիալ-դավաճանների դեմ, վորոնք ամբողջովին անցել են հակահեղափոխական բուրժուազիայի բանակը։

***

«Քննադատության» մեջ Մարքսի տված «այնպիսի հասարակության կենսապայմանների» կոնկրետ վերլուծությունը, «վորի մեջ կապիտալիզմ չի լինի», առանձին նշանակություն է ձեռք բերում այն պայքարի կապակցությամբ, վոր կուսակցությունն ստիպված է ներկայումս մղել ձախ հավասարեցման դեմ աշխատավարձի բնագավառում, տարիֆային սիստեմի բնագավառում, վորի անճիշտ կազմակերպումն աշխատուժի հոսունություն է առաջ բերում և վորը հանդիսանում է մեր արդյունաբերության միքանի ճյուղերի հետ ընկնելու կարևորագույն պատճառներից մեկը և հենց դրանով էլ արգելակում է սոցիալիստական շինարարությունը։

Լենինը բազմիցս հանդես է յեկել չմտածված կամ կեղծավոր, յերկու դեպքում էլ ի հաճույս բուրժուազիայի ընթացող, «դատողությունների» դեմ հավասարության * մասին։ Կուսակցությունը, մասնավորապես ընկ. Ստալինը, դեռ 1925 թվին ստիպված յեղավ վճռական հակահարված տալ դեմագոգիական դատարկաբանությանը հավասարության մասին, յերբ այդ լոզունգով հանդես յեկավ Զինովյեվը «Դարաշրջանի փիլիսոփայությունը» հոդվածի մեջ (1925 թվի սեպտեմբերին)։

Անցյալ տարի, յերբ մանր-բուրժուական միտումները, նախապաշարմունքներն ու տենդենցները մեր տնտեսավարների ու արհմիութենականների մի մասի մոտ՝ այնքան փաստականորեն անդրադարձան ժողովրդական տնտեսության սոցիալիստական

* Տես բացի «Պետություն և հեղափոխություն» գրքից, վորի՝ «Գոթայի ծրագրի քննադատության» վերաբերյալ եջերը բերում ենք ստորև, գրքիս վերջում, նաև Յերկեր, հ. XVII, եջ 241—243, հ. XXIII, եջ 351—357, հ. XXIV, եջ 9, 293—303, 308—311, 422, 518. հ. XXV, եջ 8, 63—64, 469—472։

վերակառուցման միքանի բաժնեմասերի վրա, ընկ. Ստալինը տնտեսավարների համագումարում արտասանած իր պատմական ճառում մատնանշեց այն բանի վրա, թե ձախ հավասարեցման վոչնչացումը հնգամյակը չորս տարում հաջողությամբ իրագործելու պայմաններից մեկն է, և ուղղակի վկայակոչեց Մարքսին, նկատի ունենալով ամենից առաջ «Գոթայի ծրագրի քննադատության» մեջ նրա տված բացատրությունները կոմունիստական հասարակության առաջին փուլի, այն է՝ սոցիալիզմի ժամանակ գոյություն ունեցող կենսապայմանների մասին։ Ահա այդ հատվածն ընկ. Ստալինի ճառից.

«Մարքսն ու Լենինն ասում են, թե վորակյալ աշխատանքի ու անվորակյալ աշխատանքի միջև յեղած տարբերությունը գոյություն պիտի ունենա մինչև անգամ սոցիալիզմի ժամանակ, մինչև իսկ դասակարգերի վոչնչացումից հետո, թե միմիայն կոմունիզմի ժամանակ պիտի անհետանա այդ տարբերությունը, թե՝ նկատի ունենալով այդ, «աշխատավարձը» մինչև իսկ սոցիալիզմի ժամանակ պետք է տրվի ըստ աշխատանքի, այլ վոչ թե ըստ ունեցած կարիքի։ Բայց մեր հավասարիչները տնտեսավարների ու արհմիութենականների միջից՝ համաձայն չեն սրա հետ և կարծում են, թե այդ տարբերությունն արդեն անհետացել է մեր խորհրդային կարգերի ժամանակ։ Ո՞վ է իրավացի. Մարքսն ու Լենինը, թե՞ հավասարիչները։ Պետք է ընդունել, վոր այստեղ իրավացի յեն Մարքսն ու Լենինը։ Բայց սրանից հետևում է, վոր ով տարիֆային սիստեմը կառուցում է հավասարեցման «սկզբունքների» վրա, առանց հաշվի առնելու վորակյալ աշխատանքի ու անվորակյալ աշխատանքի միջև յեղած տարբերությունը, նա խզում է կապը մարքսիզմի հետ, խզում է կապը լենինիզմի հետ»։

Յերբ ընկ. Ստալինը պայքար հայտարարեց հավասարեցման դեմ, և մեր կուսակցությունը, մեր արհմիութենական ու տնտեսական կազմակերպությունները բռնեցին հաջող սոցիալիստական շինարարության այդ կարևորագույն պայմանի հետևողական կատարման ուղին, բուրժուական ու սոցիալ-ֆաշիստական քննադատները սահմանագծից այն կողմը, աջ ու ձախ քննադատները մեզ մոտ՝ ընկ. Ստալինի այդ լոզունգն ընդունեցին չարախնդությամբ և ամեն տեսակ կեղծավոր առարկություններով հարձակվեցին նրա վրա։ Խոսեցին կապիտալիստական մեթոդներին արվող զիջումների մասին, կոմունիստական սկզբունքից հրաժար-

վելու մասին։ Չէ՞ վոր կոմունիզմ նշանակում է — հավասարություն. հետևաբար, հավասարեցման լիկվիդացիան նշանակում է հրաժարում կոմունիստական սկզբունքից, հրաժարում մարքսիզմի սկզբունքներից։

Գերմանական գրող Եմիլ Լուդվիգի հետ ունեցած զրույցի մեջ ընկ. Ստալինն ուղղակի վկայակոչում է «Գոթայի ծրագրի քննադատությունը»։

«Այնպիսի սոցիալիզմ, վորի ժամանակ բոլոր մարդիկ պետք է ստանան միևնույն վարձը, միևնույն քանակությամբ միս, միևնույն քանակությամբ հաց, միևնույն կոստյումներն հագնեն, միևնույն մթերքներն ստանան միևնույն քանակությամբ,—այդպիսի սոցիալիզմ մարքսիզմը չի ճանաչում։ Մարքսիզմը միմիայն մի բան է ասում. քանի դասակարգերը դեռ վերջնականապես վոչնչացված չեն, և քանի դեռ աշխատանքը գոյության միջոցից չի դարձել կյանքի առաջին պահանջմունքը, հոժարակամ աշխատանք հասարակության համար, մարդիկ իրենց աշխատանքի համար վարձատրություն կստանան ըստ կատարած աշխատանքի։ «Յուրաքանչյուրից՝ ըստ նրա կարողությունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի»,—այս է սոցիալիզմի մարքսիստական ֆորմուլան, այսինքն՝ կոմունիզմի առաջին ստադիայի, կոմունիստական հասարակության առաջին ստադիայի ֆորմուլան։ Միմիայն կոմունիզմի բարձրագույն ստադիայի ժամանակ, միմիայն կոմունիզմի բարձրագույն փուլի ժամանակ, յուրաքանչյուրն աշխատելով իր կարողություններին համապատասխան՝ իր աշխատանքի համար կստանա իր պահանջմունքների համեմատ։ «Յուրաքանչյուրից՝ ըստ նրա կարողությունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա պահանջմունքների»։

Միանգամայն պարզ է, վոր տարբեր մարդիկ ունեն և սոցիալիզմի ժամանակ կունենան տարբեր պահանջմունքներ։ Սոցիալիզմը յերբեք չի ժխտել ճաշակների, պահանջմունքների քանակի ու վորակի տարբերությունները։ Կարդացեք, թե ինչպես էր Մարքսը քննադատում Շտիրներին նրա ունեցած հավասարեցման տենդենցների պատճառով, կարդացեք Մարքսի՝ 1875 թ. Գոթայի ծրագրի քննադատությունը, կարդացեք Մարքսի, Ենգելսի, Լենինի հետագա աշխատությունները, և Դուք կտեսնեք, թե վորքա՞ն սուր

կերպով են նրանք հարձակվում հավասարեցման վրա։ Հավասարեցման աղբյուրը մտածողության գյուղացիական յեղանակն է, բոլոր բարիքները հավասար բաժանելու հոգեբանությունը, պրիմիտիվ գյուղացիական «կոմունիզմի» հոգեբանությունը։ Հավասարեցումը վոչ մի ընդհանուր բան չունի մարքսիստական սոցիալիզմի հետ։ Միմիայն մարքսիզմին անտեղյակ մարդիկ կարող են գործն այնպես պրիմիտիվ կերպով պատկերացնել, իբր թե ռուս բոլշևիկներն ուզում են բոլոր բարիքները մի տեղ ժողովել և ապա հավասար բաժանել։ Բանն այդպես են պատկերացնում այն մարդիկ, ովքեր վոչ մի ընդհանուր բան չունեն մարքսիզմի հետ։ Այդպես եյին պատկերացնում կոմունիզմը Կրոմվելի ու Ֆրանսական հեղափոխության ժամանակների պրիմիտիվ «կոմունիստները» նման մարդիկ։ Բայց մարքսիզմն ու ռուս բոլշևիկները վոչ մի ընդհանուր բան չունեն այդպիսի հավասարիչ «կոմունիստների» հետ» («Большевик», 1932 թ. № 8, եջ 39—40)։

Մեր սոցիալիստական շինարարության պրակտիկան մի գերազանց պատմական ստուգումն է հանդիսանում Մարքսի խորագույն վերլուծության ու համարձակ գիտական կանխատեսության ճշտության, ինչպես վոր այդ տրված է «Գոթայի ծրագրի քննադատության» մեջ։

Պայքարելով մանր-բուրժուական հավասարեցման դեմ, առնելով այն բոլշևիկյան ինքնաքննադատության կրակի տակ, մեր կուսակցությունը պայքարում է իսկական մարքսիզմ-լենինիզմի համար ընդդեմ Մարքսի ու Լենինի գիտական, պրոլետարական կոմունիզմի մանր-բուրժուական, ապորտունիստական աղավաղման։

* * *

Մարքսի նամակը Բրակեյին «Գոթայի ծրագրի քննադատության» հետ միասին Ենգելսի պնդումով տպագրվեց «Neue Zeit»-ում 1891 թվին։ Տպագրության ժամանակ, խմբագրության պնդումով, Ենգելսի համաձայնությամբ, միքանի կրճատումներ արվեցին։ Մենք այստեղ տպագրում ենք լրիվ տեքստը։

«Քննադատությունից» հետո մենք տալիս ենք ժամանակագրական հաջորդականությամբ Մարքսի ու Ենգելսի մի շարք նամակները, վորոնք գրված են Գոթայի ծրագրի կապակցությամբ։ Նրանք եյականապես լրացնում են «Քննադատության» թե բա-

նավլիճական և թե գրական մասը, ինչպես և լուսաբանում են նրա գրվելու պատմությունը։

Ենգելսի նամակը Բեբելին 1875 թ. մարտի 18—28-ին գրված է թարմ տպավորության տակ, ծրագրի նախագծի հետ ծանոթանալուց հետո, վոր 1875 թ. մարտի 7-ին հրապարակվեց յերկու սոցիալիստական կուսակցությունների օրգաններում—այզենախյան «Volksstaat» («Ֆոլկսշտատ») լրագրում և լասալական «Neuer Social-Demokrat»-ում («Նոյեր Սոցիալ-Դեմոկրատ»)։ Այզենախյանները հաշվի չեյին առել Ենգելսի այն ցուցումները, թե պետք չե շտապել միավորման գործում, այլ պետք է լասալական առաջնորդներին մեկուսացնելու կուրս վերցնել, պետք է պայքարել մասսաների համար։ Լենինը «Պետություն և հեղափոխություն» բրոշյուրի նախապատրաստական նյութերի մեջ նկատում է, վոր այս նամակը «չափազանց մեծ կարևորություն ունի պետության հարցի նկատմամբ», նա ամենամանրամասն կերպով վերլուծում է այս նամակը և զարգացնում է նրա մեջ առաջ մղած թեորիական դրույթները։

Մարքսի նամակը Վ. Բրակեյին 1875 թ. մայիսի 5-ին, լինելով «Քննադատության» համար ուղեկցագիր, բաց է անում այզենախյան կուսակցության առաջնորդների կատարած ամենակոպիտ տակտիկական սխալները—հատկապես Լիբկնեխտի սխալները՝ միավորման մասին կատարած բանակցությունների ժամանակ։ Ուշագրավ է այն սպառնալիքը, վոր յեթե ծրագիրն ընդունվի, ապա Մարքսն ու Ենգելսը հրապարակով հանդես կգան մի հայտարարությամբ, վոր նրանք վոչ մի ընդհանուր բան չունեն այդ ծրագրի հետ։ Այս նամակի մեջ են գտնվում այն նշանավոր խոսքերը, թե «իրական շարժման ամեն մի քայլն ավելի կարևոր է, քան մի դյուժին ծրագրեր»։ Ամեն յերանգների ոպորտունիստները—թե Ռուսաստանում և թե Արևմուտքում—փորձում եյին ոգտագործել Մարքսի այս ասույթը իրենց պայքարում թեորիական, սկզբունքային, ծրագրային հարցերի վերաբերմամբ ցուցաբերվող անհաշտության դեմ, այսինքն՝ հեղափոխական մարքսիզմի դեմ, նրա մեջ վորոնելով ամեն տեսակ գռեհկության, ամեն տեսակ եկլեկտիկականության արդարացումը թեորիայի մեջ, ինչպես և ամեն տեսակ ոպորտունիզմի ու մերկ եմպիրիզմի արդարացումը պրակտիկայի մեջ։

1902 թվին, յերբ ռաբոչեդելական-«եկոնոմիստներն» առաջ մղեցին Մարքսի այս ասույթը՝ իրենց ոպորտունիստական պրակտիցիզմն արդարացնելու համար, Լենինն այդ փորձին վճռական

հակահարված տվեց, բացատրելով Մարքսի խոսքերի իսկական բովանդակությունն այն կոնկրետ սիտուացիայի կապակցությամբ, վորի մեջ Մարքսը գրել եր այն. «Յեթե պետք եր արդեն միանալ,— գրում եր Մարքսը կուսակցության առաջնորդներին, — ապա պայմանագրեր կնքեցեք շարժման գործնական նպատակներն իրագործելու համար, բայց մի թույլ տաք սկզբունքների փերեզակություն, թեորիական «զիջումներ» մի անեք։ Ահա թե վորն եր Մարքսի միտքը...» («Что делать?», Յերկերի հատոր IV, եջ 379—380)։

Ենգելսի հետագա յերկու նամակները—Բրակեյին՝ Բրաունշվայգ 1875 թ. հոկտեմբերի 11-ին և Բեբելին՝ Լայպցիգ նույն թվի հոկտեմբերի 12-ին—պարունակում են այդ միջոցին արդեն ընդունված ծրագրի հակիրճ, բայց վոչնչացնող բնութագիրը։

Այդ նամակներում կա բացատրություն, թե ինչու Մարքսն ու Ենգելսը հրաժարվեցին իրենց սկզբնական մտադրությունից՝ հրապարակով հանդես գալու Գոթայի ծրագրի դեմ։ Ենգելսը մատնանշում ե այն հանգամանքի վրա, վոր ինչպես բուրժուազիան, այնպես ել կուսակցական մասսաները, բանվորները, խառնաշփոթ ծրագիրը «բացատրեցին կոմունիստականորեն» և նրա մեջ «գտնում են մեր դիտավորությունները», այսինքն՝ հեղափոխական բովանդակություն։ Այս կապակցությամբ անհրաժեշտ ե ուշադրություն դարձնել այդ նամակների այն հատվածների վրա, վորտեղ Ենգելսն ուղղակի խոսում ե պառակտման անխուսափելիության մասին մերձավոր ապագայում։ Մարքսն ու Ենգելսն անկասկած լասսալական առաջնորդների հետ պառակտվելու կուրս եյին վերցրել։

Բանի վոր միացած կուսակցության մեջ «սպեցիֆիկ լասսալականության» ազդեցությունը՝ Բիսմարկի հետ համաձայնություն կայացնելու իր կուրսով և ընդհանուր ընտրական իրավունքի ամենափրկիչ ուժի և պետության ոգնությամբ կազմակերպված արտադրողական ընկերությունների վերաբերմամբ ունեցած հավատով, հատկապես բացառիկ որենքի տարիները (1878—1890), խոշոր չափով թուլացավ, և նախկին «այզենախյանները», վորոնք Մարքսին ու Ենգելսին ավելի մոտ եյին կանգնած, արագությամբ դուրս մղեցին լասսալականներին կուսակցության ղեկավար պոստերից,—դրա համար պառակտման հարցը հատկապես ծրագրի պատճառով՝ վերացավ, վերանում եր նաև հենց այդ փաստաթղթի քննադատությունը հրապարակորեն ծավալելու անհրաժեշտությունը։

Օպորտունիզմն ու հաշտվողականությունը դեպի այն՝ միացյալ կուսակցության մեջ հանդես յեկավ նոր դեպքերի կապակցությամբ, նոր պարագաներում։ Մարքսն ու Ենգելսը ստիպված յեղան յեռանդուն պայքար մղելու օպորտունիստական տրամադրությունների ու հոսանքների դեմ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ («Անտի-Դյուրինգ», «1879 թ. Շրջաբերական նամակը», «Երֆուրտի ծրագրի քննադատությունը» և այլն)։ Գոթայի միավորման ժամանակ թույլ տրված տակտիկական ու սկզբունքային սխալները չեյին կարող ազդեցություն չգործել նաև հետագայում, մանավանդ վոր գերմանական սոցիալ-դեմոկրատիան այդ սխալները յերբեք վճռական ծավալուն քննադատության չի յենթարկել։ Թե ինչ նշանակություն եր տալիս Ենգելսն այդ սխալների հետագա ազդեցությանը, այդ մասին խոսում են մեր զետեղած յերկու փաստաթղթերն այն պայքարի վերաբերյալ, վոր մղում եր Ենգելսը 1891 թվին Մարքսի «Գոթայի ծրագրի քննադատության» հրատարակման շուրջը։

Նրանցից առաջինն այն առաջաբանն ե, վոր Ենգելսը 1891 թվին զետեղեց Մարքսի «Քննադատության» սկզբում, յերբ նա հրատարակեց այն գերմանական կուսակցության կենտրոնական թեորիական որգան «Neue Zeit»-ում («Նոյե Ցայտ»)։ Այն ժամանակ, սոցիալիստների դեմ ուղղված օրենքի վերացումից հետո, ղեկավար կուսակցական շրջաններում և հատկապես ռայխստագի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի անդամների մեջ սկսեց մի ուժեղ օպորտունիստական հոսանք կազմվել։ Կուսակցության ծրագրի առաջիկա վերանայումն առիթ ծառայեց այն բանին, վոր Ենգելսը հանդես յեկավ օպորտունիստների դեմ, հրատարակելով Մարքսի «Քննադատությունը», այն Մարքսի, վորի անունը պաշտոնապես դրոշմված եր կուսակցության դրոշակի վրա,— ճիշտ ե, Լասսալի անվան հետ կողք-կողքի։ Ինքն Ենգելսն այդ հրատարակությունը «ռումբ» անվանեց (Զորգեյին ուղղած նամակում 1891 թվի հունվարի 17-ին)։ Ծայրահեղ դեպքում «Քննադատությունը» Վիեննայում հրատարակելու սպառնալիքով նա հարկադրեց Կաուցկուն, «Neue Zeit»-ի խմբագրին, տպագրելու այն գերմանական սոցիալ-դեմոկրատիայի այդ կենտրոնական թեորիական որգանում։ Կուսակցական լայն մասսաները հրատարակությունն ընդունեցին «մեծ գոհունակությամբ», բայց «սոցիալիստական տուզերի» մոտ, ինչպես և սպասում եր Ենգելսը, այն ծայրահեղ վրդովմունք առաջացրեց (նամակ Զորգեյին 1891 թ. փետրվարի 11-ին)։ Ֆրակցիան շտապեց իրեն Գրիլլենբերգերի հայ-

տարարել ռայխստագի ամբիոնից, վոր կուսակցությունը մերժել է Մարքսի հայացքներն ու ցուցումները, առանձնապես պրոլետարիատի դիկտատուրայի նրա իդեան, և յերբեք համամիտ չի յեղել նրա հետ: Կուսակցության կենտրոնական օրգան «Vorwärts»-ը («Ֆորվերտս») պաշտոնապես հայտարարեց, թե «Քննադատության» հրատարակությունը տեղի յե ունեցել առանց կենտրոնական կոմիտեյի գիտության, վորը յերբեք իր համաձայնությունը չեր տա դրա համար, և Բեբելն էլ հարկավոր համարեց այդ հայտարարությունը կրկնել իր անունից: Ենգելսն առաջնորդների այդ վրդովված աղաղակներին պատասխանեց մի նոր «ռումբով»՝ «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» գրվածքի, այդ բոցավառ մանիֆեստի վերահրատարակությամբ, վորի մեջ Մարքսը հանճարեղ պատմական վերլուծության յենթարկեց «յերկինքը գրոհի յենթարկող» փարիզյան բանվորների առաջին հերոսական փորձը՝ պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու: «Քաղաքացիական պատերազմի» վերահրատարակության իր առաջաբանն Ենգելսը վերջացրեց այս խոսքերով, վորոնք ուղղված եյին Գերմանիայի «սոցիալիստական տուզերին»:

«Վերջին ժամանակներս սոցիալ-դեմոկրատական ֆիլիստերը* կրկին փրկարար սարսափ է սկսում զգալ պրոլետարիատի դիկտատուրա բառերը լսելիս: Ուզո՞ւմ եք իմանալ, մեծարգո պարոններ, թե ինչ է այդ դիկտատուրան: Նայեցեք Փարիզի կոմունային: Նա պրոլետարիատի դիկտատուրան եր»:

A II 5830

Վերջին փաստաթուղթը—Ենգելսի նամակը Կաուցկուն 1891 թվի փետրվարի 23-ին—հատկապես հենց լույս է սփռում այդ թշնամական ընդունելության վրա, վոր ցույց տվին գերմանական սոցիալ-դեմոկրատիայի «տուզերը» Մարքսի «Քննադատության» հրատարակմանը Ենգելսի կողմից: Նրանց այն կշտամբանքի դեմ, թե իբր այդ «Քննադատությունը» կարող է «զենք տալ թշնամիների ձեռքը», Ենգելսն առարկում է և առաջ է մղում օպորտունիզմի դեմ պայքարելու անհրաժեշտությունը, ընդգծում է «անվերապահ ինքնաքննադատության» նշանակությունն՝ իբրև այդ պայքարի և կուսակցության շարքերն իդեապես խտացնելու

* Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ֆորշտանդը (վարչությունը) «սոցիալ-դեմոկրատական ֆիլիստեր» բառերի փոխարեն դրել է «գերմանական ֆիլիստեր» բառերը:

ամենասուր զենքի։ Այս նամակում շատ արժեքավոր է նաև Լասսալի անողոք բնութագիրը—Էնգելսի մտադրված մի աշխատության ուրվագիծը, վորի նպատակն էր լիկվիդացիայի ենթարկել «լեգենդան Լասսալի մասին»։ Այդ լեգենդայի տարածմանն այն ժամանակ արդեն նպաստում էր նաև Կաուցկին։ Նա գովերգում էր Լասսալին, «վորի աշխատություններից—նրա կարծիքով—բոլոր ավագ կուսակցականները, ինչպես նաև յերիտասարդների մեծամասնությունը, քաղում էյին իրենց առաջին սոցիալիստական գիտելիքներն ու իրենց առաջին խանդավառ հրապուրումը սոցիալիզմով»։ Այդ դեռ քիչ է. Կաուցկին Լասսալին մի շարքում էր դասում Մարքսի հետ իբրև գերմանական պրոլետարիատի առաջնորդ և ուսուցիչ։ Կաուցկու և ուրիշների հենց այս ու սրանց նման դատողություններն առիթ տվին Էնգելսին իր նամակում բողոքելու «Լասսալի լեգենդայի» դեմ*։

Այդ բոլոր փաստաթղթերից հետո մենք Մարքսի «Գոթայի ծրագրի քննադատության» այս հրատարակության մեջ զետեղում ենք Լենինի «Մարքսիզմը պետության մասին» վերնագրով տետրակից մի հատված և Լենինի «Պետություն և հեղափոխություն» գրքից այն գլուխները, վորոնք անմիջականորեն «Քննադատության» են վերաբերում։ Այդ փաստաթղթերը մեզ ցույց են տալիս, թե ինչպես էր ուսումնասիրում Լենինը Մարքսին ու Էնգելսին, թե ինչպես նա իր պայքարում ընդդեմ ոպորտունիզմի հանուն պրոլետարական հեղափոխության՝ թեորիական տեսակետից հենվում էր Մարքսի ու Էնգելսի վրա։ Լենինի պայքարը արդի ոպորտունիզմի ու ռենեգատության դեմ՝ Մարքսի ու Էնգելսի պայքարի անմիջական շարունակությունն է մարքսիզմի բուրժուական խեղաթյուրման ու գռեհկացման դեմ, հանուն պրոլետարիատի հեղափոխական թեորիայի ու քաղաքականության։

Ի պատասխան գերմանական սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդների վայնասունի՝ «Քննադատության» հրատարակման առթիվ, Էնգելսը վստահորեն հայտարարեց. «Մարքսի քննադատությունն իրեն համար ճանապարհ բաց կանի, և հենց այդ նպատակով էլ յես հրատարակեցի այն»։ Յեվ «Քննադատությունը» բաց արեց այդ ճանապարհը։ Լենինի ձեռքում «Քննադատությունը» նորից Մարքսի այն կարևորագույն աշխատություններից մեկը հանդիսացավ, վորի վրա հենվելով Լենինը վոչնչացուցիչ հարվածներ

---

* Կաուցկու գրքի մասին ավելի մանրամասն տես Էնգելսի այս նամակի ծանոթագրությունների մեջ։

ե հասցնում հակահեղափոխության բանակն անցած ռենեգատներ՝ Կաուցկու, Վանդերվելդի ու Ընկ. «թեորիաներին», վերականգնում ու ավելի յել զարգացնում Մարքսի ուսմունքը պետության մասին, պրոլետարիատի դիկտատուրայի մասին, անցման շրջանի մասին կապիտալիզմի ու կոմունիզմի միջև, կոմունիզմի յերկու փուլերի մասին, այն ե՝ սոցիալիստական ու կոմունիստական հասարակության մասին։ Յեվ հատկապես հենց «Գոթայի ծրագրի քննադատության» հիման վրա յել ծավալել Լենինը «Պետություն և հեղափոխություն» V գլխում (տես այս գրքի հավելվածը) այն փայլուն, իսկական գիտական կանխատեսության վրա հիմնված անցման պատկերը սոցիալիզմի միջով դեպի կոմունիզմ, վոր կուսակցության XVII կոնֆերենցիան պայքարի հիմք դարձրեց դասակարգերի վոչնչացման և սոցիալիստական հասարակության կառուցման համար յերկրորդ հնգամյակի ընթացքում։

Անհաշտ պայքարի նմուշ հանդիսանալով գիտական կոմունիզմի հիմնական իդեաների համար՝ նրա խեղաթյուրումների դեմ և ամենաարժեքավոր ավանդ լինելով այդ իդեաների ընդհանուր գանձարանում՝ Մարքսի «Գոթայի ծրագրի քննադատությունը» և նրա թեզիսների հետագա զարգացումը Լենինի կողմից տալիս են մեզ «կողմնորոշման այն ուժը, հեռանկարի պարզությունը, աշխատանքի վստահությունը, մեր գործի հաղթանակի հավատը» (Ստալին), վորոնք միշտ մեր կուսակցության հաղթանակների գրավական են ծառայել և վորոնք յերկրորդ հնգամյակի իսկապես համաշխարհային-պատմական խնդիրների իրականացման հիմնական յերաշխիք են հանդիսանում։

* * *

«Գոթայի ծրագրի քննադատությունը» շոշափում ե մի շարք կարևոր սկզբունքային հարցեր, բացի այն հարցերից, վորոնց մասին մենք խոսեցինք վերևում։ Ընթերցողին դյուրություն տալու համար՝ վերջում կցված ե նյութերի ցանկ, վոր ընդգրկում ե վոչ միայն «Քննադատության» տեքստը, այլև բոլոր հավելվածներինը։

Մարքսի իսկական ձեռագիրը չի պահպանվել։ Պահպանվել ե միմիայն անհայտ ձեռքով արտագրած մի պատճեն, վոր գտնվել ե Ենգելսի թղթերի մեջ։ Այդ պատճենը հանվել ե այն ժամանակ, յերբ Ենգելսը 1891 թվին հրատարակեց «Քննադատությունը»։ Հենց այդ տեքստից ել կատարվել ե «Գոթայի ծրագրի քննադա-

տության» թարգմանությունն այս հրատարակության համար, ըստվորում վերականգնված է այն ամենը, ինչ որ ջնջված է եղել առաջին հրատարակության ժամանակ։ Տեքստի վերաբերյալ տողատակի բոլոր ծանոթագրությունները պատկանում են խմբագրությանը։

Ծանոթագրությունները կազմել և տպագրության համար պատրաստել է ընկ. Ն. Ցոբելը։

Մարքսի—Էնգելսի—Լենինի ինստիտուտ

14 ապրիլի 1932 թ.

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

ԳՈԹԱՅԻ ԾՐԱԳՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (1875)

I

1. *«Աշխատանքն ամեն հարստության և ամեն կուլտուրայի աղբյուրն է, և* վորովհետև *օգտաբեր աշխատանքը միայն հասարակության մեջ և հասարակության միջոցով է հնարավոր, ուստի աշխատանքի արդասիքն անկրճատ, հավասար իրավունքով պատկանում է հասարակության բոլոր անդամներին»։*

Պարագրաֆի առաջին մասը. — *«Աշխատանքն ամեն հարստության և ամեն կուլտուրայի աղբյուրն է»։*

Աշխատանքն աղբյուրը *չէ ամեն հարստության։* Բնությունը *նույնչափ աղբյուր է սպառողական արժեքների (իսկ չէ՞ վոր հենց դրանցից է կազմված նյութական հարստությունը), վորչափ և աշխատանքը, վորը հենց լոկ դրսևորումն է մի բնական ուժի՝ մարդկային աշխատուժի* [1]*։ Այդ ֆրազը կարելի յե գտնել բոլոր մանկական այբբենարաններում, և ճիշտ է այն չափով, վորչափով* յենթադրվում է, *թե աշխատանքը տեղի յե ունենում համապատասխան առարկաներով և միջոցներով։ Բայց մի սոցիալիստական ծրագիր չպետք է թույլ տա այդպիսի բուրժուական դարձվածքներով լռությամբ մատնելու այն* պայմանները, *վորոնք հենց իմաստ են տալիս նրանց։ Յեվ այն չափով, վորչափով մարդն ամենից առաջ վերաբերվում է բոլոր աշխատամիջոցների և առարկաների առաջին աղբյուրը կազմող բնությանը իբրև սեփականատեր,*

---

[1] *Հմմտ. «Կապիտալի» մեջ (հատոր I, գլ. V, § 1). «Աշխատանքն ամենից առաջ մի պրոցես է մարդու ու բնության միջև, մի պրոցես, վորում մարդը յուր սեփական գործունեությամբ բնության հետ յուր նյութափոխանությունն է կատարում, կարգավորում և վերահսկում։ Բնության նյութի դիմաց նա հանդես է գալիս իբրև մի բնական ուժ։ Նրա մարմնին պատկանող բնական ուժերը, բազուկներն ու վոտքերը, գլուխն ու ձեռքը նա շարժման մեջ է դնում, վորպեսզի բնական նյութը, յուր սեփական կյանքի համար պիտանի ձև տալով, յուրացնի։—Այն ժամանակ, յերբ նա այս շարժման միջոցով ներգործում է իրենից դուրս յեղած բնության վրա և փոփոխում է այն, նա միևնույն ժամանակ փոփոխում է յուր բնությունը» (տես հայերեն թարգմանություն, եջ 143)։*

վարվում նրա հետ իբրև իրեն պատկանողի հետ, այդ չափով ել նրա աշխատանքը դառնում է սպառողական արժեքների, ուրեմն նաև հարստության աղբյուր։ Բուրժուաները լուրջ հիմքեր ունեն աշխատանքին **գերբնական ստեղծագործական ուժ** վերագրելու, վորովհետև աշխատանքի հենց բնապայմանավորվածությունից է հետևում, վոր մարդը, չունենալով վորևե ուրիշ սեփականություն, քան իր աշխատուժը, ամեն հասարակական և կուլտուրական դրություններում պիտի լինի ստրուկը ուրիշ մարդկանց, վորոնք դարձել են աշխատանքի նյութական պայմանների սեփականատերեր։ Նա կարող է աշխատել միայն նրանց թույլտվությամբ, ուրեմն ապրել միայն նրանց թույլտվությամբ [1]։

Թողնենք այժմ այս նախադասությունն այնպես, ինչպես վոր կա իր թերություններով։ Ի՞նչպիսի յեզրակացություն կարելի յեր սպասել։ Ակներևորեն հետևյալը·

«Վորովհետև աշխատանքն ամեն հարստության աղբյուրն է, ուստի և հասարակության մեջ ել վոչ վոք չի կարող հարստություն յուրացնել այլ կերպ, բայց յեթե վորպես աշխատանքի արդյունք։ Ուրեմն յեթե մեկն ինքը չի աշխատում, ապա նա ապրում է ուրիշի աշխատանքով և յուրացնում իր կուլտուրան նույնպես ուրիշի աշխատանքի հաշվին»։

Դրա փոխարեն՝ «**և վորովհետև**» պատճառական շաղկապի միջոցով առաջին նախադասությանը կցվում է յերկրորդ նախադասությունը, վորպեսզի վերջինից, այլ վոչ թե առաջինից, հանվի յեզրակացությունը։

Պարագրաֆի յերկրորդ մասը.— «Ոգտաբեր աշխատանքը հնարավոր է միայն հասարակության մեջ և հասարակության միջոցով»։

Առաջին թեզի համաձայն՝ աշխատանքն աղբյուր եր ամեն հարստության և ամեն կուլտուրայի, ուրեմն նաև վոչ մի հասարակություն հնարավոր չեր առանց աշխատանքի։ Այժմ մենք իմանում ենք հակառակը, այն, վոր վոչ մի «ոգտաբեր» աշխատանք հնարավոր չե առանց հասարակության։

---

[1] Հմմտ. «Կապիտալի» մեջ հետևյալ հատվածը (հատոր II, գլ. I, § 2). «Ինչպես ել վոր լինեն արտադրության հասարակական ձևերը, բանվորներն ու արտադրության միջոցները միշտ նրա ֆակտորներն են մնում։ Բայց միմյանցից անջատ վիճակում թե սրանք և թե նրանք ֆակտորներ են հանդիսանում լոկ իբրև հնարավորություն։ Ընդհանրապես արտադրելու համար՝ նրանք պետք է միանան։ Այն հատուկ բնույթն ու յեղանակը, վորով իրագործվում է այս միացումը, տարբերում է սոցիալական կառուցվածքի առանձին տնտեսական դարաշրջանները»։

Նույն իրավունքով էլ կարելի յեր ասել, թե միայն հասարակության մեջ անօգուտ և նույնիսկ հանրության համար վնասակար աշխատանքը կարող է դառնալ զբաղմունքի ճյուղ, թե միայն հասարակության մեջ կարելի յե ապրել պարապությամբ և այլն,—կարճ՝ կարելի յեր արտագրել ամբողջ Ռուսսոն[1]։

Իսկ ի՞նչ է «օգտաբեր» աշխատանքը։ Անշուշտ՝ միայն այն աշխատանքը, վորն առաջացնում է նպատակադրած օգտավետ արդյունք։ Վայրենին,—իսկ մարդը վայրենի յեր, յերբ դադարել է կապիկ լինելուց,—սպանելով գազանին քարով, հավաքելով պտուղներ և այլն, կատարում է «օգտաբեր» աշխատանք։

Յերրորդ՝ յեզրակացությունը.—*«Յեվ վորովհետև օգտաբեր աշխատանքը միայն հասարակության մեջ և հասարակության միջոցով է հնարավոր, ուստի աշխատանքի արդյունքն անկրճատ, հավասար իրավունքով պատկանում է հասարակության բոլոր անդամներին»։*

Գեղեցի՜կ յեզրակացություն։ Յեթե օգտաբեր աշխատանքը հնարավոր է միայն հասարակության մեջ և հասարակության միջոցով, ապա աշխատանքի արդյունքը պատկանում է հասարակությանը, իսկ առանձին բանվորին հասնում է դրանից միայն այն, ինչ անհրաժեշտ չէ աշխատանքի «պայմանը»՝ հասարակությունը պահպանելու համար։

Իսկապես՝ այդ թեզը բոլոր ժամանակներում առաջադրել են նրանք, ովքեր պաշտպանել են **ամեն մի տվյալ հասարակակարգ**։ *Նախ առաջ են գալիս կառավարության և դրան կպած ամենի պահանջները, վորովհետև նա այն հասարակական օրգանն է,*

---

1 *Ժան-Ժակ-Ռուսսո (1712—1778)—Լուսավորության դարաշրջանի ֆրանսական փիլիսոփա և հրապարակախոս։ Իբրև բուրժուազիայի հեղափոխական թևի («Յերրորդ դասի») ներկայացուցիչ՝ նա հետևողական բուրժուական դեմոկրատիայի տեսաբանն էր։ Լինելով ֆեոդալական շահագործման ու աբսոլուտիզմի դեմ մղվող պայքարի յեռանդուն քարոզիչ՝ նա պաշտպանում էր «ժողովրդական գերիշխանության» թեորիան, վորն իր կենսագործումը ձեռք բերեց յակոբինների պլեբեյական հեղափոխական պայքարում։ Ֆեոդալական հասարակակարգի իր քննադատությունը Ռուսսոն հիմնավորում էր բնական հավասարության վերացական, ապապատմական ուսմունքով, մարդկության նախնական յերջանիկ կոմունիստական վիճակով, բնության ու բնական հասարակությունների գերազանցությամբ կուլտուրայի, լուսավորության վերաբերմամբ։ Ժամանակակիցները նրան անվանում էին «բնության առաքյալ»։ Մարքսը նամակում մատնանշում է, վոր Գոթայի ծրագիրը փոխանակ հասարակակարգի ու նրա զարգացման օրենքների գիտական դասակարգային վերլուծությունը տալու՝ զբաղվում է այստեղ Ռուսսոյի քարոզը հիշեցնող վերացական քարոզի կրկնությամբ։*

վորը պահպանում է հասարակական կարգը. ապա գալիս են մասնավոր սեփականության զանազան տեսակների պահանջները, վորովհետև մասնավոր սեփականության զանազան տեսակները հասարակության հիմունքներն են և այլն։ Ինչպես տեսնում ենք, այդպիսի սնամեջ ֆրազներ կարելի յե շրջել ու դարձնել, ինչպես կամենում ենք։

Վորևե խելացի միտք կարող են ունենալ պարագրաֆի առաջին և յերկրորդ մասերը միայն հետևյալ ձևակերպությամբ.

«Աշխատանքը դառնում է հարստության և կուլտուրայի աղբյուր միայն վորպես հասարակական աշխատանք», կամ վոր նույնն է՝ «հասարակության մեջ և հասարակության միջոցով»։

Այդ թեզն անվիճելիորեն ճիշտ է, վորովհետև յեթե մեկուսացած աշխատանքը (յենթադրելով նրա իրային պայմանները) կարող է ստեղծել նաև սպառողական արժեքներ, սակայն չի կարող ստեղծել վոչ հարստություն, վոչ էլ կուլտուրա։

Բայց նույնքան անվիճելի յե նաև մյուս թեզը.

«Ինչ չափով վոր աշխատանքը զարգանում է հասարակայնորեն և դրանով էլ դառնում հարստության և կուլտուրայի աղբյուր, այդ չափով էլ զարգանում են չքավորությունն ու անապահովությունը բանվորի, հարստությունն ու կուլտուրան՝ վոչ-բանվորի համար»։

Սա յե ամբողջ մինչայժմյան պատմության օրենքը։ Ցել ուրեմն, ընդհանրապես «աշխատանքի» և ընդհանրապես «հասարակության» մասին ընդհանուր ֆրազներով խոսելու փոխարեն՝ պետք էր այստեղ վորոշակի ցույց տալ, թե ինչպես են վերջապես այժմյան կապիտալիստական հասարակության մեջ ստեղծվել այնպիսի նյութական և այլ պայմաններ, վորոնք ընդունակ են դարձնում բանվորներին և ստիպում սրանց՝ ջախջախելու այդ հասարակական նզովքը։

Վոճի և բովանդակության տեսակետից սխալ այդ ամբողջ պարագրաֆը, սակայն, փաստորեն ընդունված է միայն նրա համար, վոր կուսակցության դրոշի վրա գրվի Լասսալի [1] ֆորմուլան վոր-

---

[1] Ֆերդինանդ Լասսալ (1825—1864)—գերմանական քաղաքագետ և հրապարակախոս, վոր խոշոր դեր է կատարել գերմանական բանվորական շարժման պատմության մեջ։ 60-ական թվականների սկզբին, յերբ բանվորական շարժումն աշխուժացավ ամբողջ Գերմանիայում, Լասսալը հիմնեց Ընդհանրական գերմանական բանվորական միությունը, դրանով ստեղծելով գերմանական բանվորների առաջին, բուրժուական-դեմոկրատական կուսակցություններից անկախ, մասսայական քաղաքական կազմակերպությունը։ Այս է նրա պատմա-

պես նշանաբան—«աշխատանքի անկրճատ արդյունք»։ Հետո յես կվերադառնամ «աշխատանքի արդյունքին», «հավասար իրավունքին» և այլն, վորովհետև այդ բաները կրկնվում են մի փոքր տարբեր ձևով։

2. «Ժամանակակից հասարակության մեջ աշխատանքի միջոցները կապիտալիստական դասակարգի մենաշնորհն են։ Բանվոր դասակարգի դրանով պայմանավորված կախվածությունն ամեն ձևի թշվառության և ստրկության պատճառն է»։

կան նշանակությունը։ Սակայն Լասսալը, վոր անցյալում գտնվել եր Մարքսի ազդեցության տակ և Մարքսի հետ ունեցած—անձնական ու գրավոր—հարաբերությունների ժամանակ իրեն նրա «աշակերտն» եր համարում, պրոլետարական հեղափոխության հողի վրա չեր կանգնած։ Նա իր ստեղծած կուսակցությունն ոպորտունիստական ճանապարհով տարավ, ռեֆորմիստական լոզունգներ առաջադրեց և քարոզում եր, վոր դեպի սոցիալիզմը տանող ուղին պետք է անցնի «ազատ», այսինքն՝ ընդհանուր ընտրական իրավունք ունեցող բուրժուական պետության միջով, քարոզում եր պրուսական պետության ոժանդակությունը վայելող արտադրողական կոոպերացիա։ Այն ժամանակվա ամենակարևոր քաղաքական հարցում, Գերմանիայի միավորման հարցում, վորը կարող եր լուծվել կամ հեղափոխությամբ, կամ Պրուսիայի դինաստիական պատերազմներով, Լասսալն ուղղակի ջուր ածեց պրուսական յունկերական կառավարության ջրաղացին՝ համաձայնություն կայացնելով Բիսմարկի հետ։ «Լասսալն ու լասսալյանները,—գրում եր Լենինը 1913 թվին,—տեսնելով պրոլետարական ու դեմոկրատական ուղու թույլ շանսերը, հեղհեղուկ տակտիկա բանեցրին, հարմարվելով յունկեր Բիսմարկի գերիշխանությանը։ Նրանց սխալները վեր եյին ածվում բանվորական կուսակցությունը դեպի բոնապարտիստական-պետական-սոցիալիստական ուղին թեքելուն» («Ավգուստ Բեբել», 1913 թ. Յերկերի հատոր XVI, եջ 547)։ «Լասսալը,—գրում եր Լենինը 1915 թվին,—Բիսմարկի հետ ունեցած իր հաճոյախաղերով ոպորտունիստ եր։ Լասսալն հարմարվում եր Պրուսիայի ու Բիսմարկի հաղթությանը, Իտալիայի ու Գերմանիայի դեմոկրատական ազգային շարժումների բավականաչափ ուժ չունենալուն։ Հենց դրանով Լասսալը յերերվում եր դեպի նացիոնալ-լիբերալ բանվորական քաղաքականություն։ Իսկ Մարքսը խրախուսում, զարգացնում եր ինքնուրույն, հետևողական-դեմոկրատական, նացիոնալ-լիբերալական յերկչոտությանը թշնամական քաղաքականություն (Պրուսիայի միջամտությունը Նապոլեոնի դեմ 1859 թվին առաջ կմղեր ժողովրդական շարժումը Գերմանիայում)։ Լասսալն ավելի շատ վոչ թե դեպի ներքև, այլ դեպի վերև եր նայում, նա հրճվանքով եր նայում Բիսմարկին։ Բիսմարկի «հաջողությունն» ամենևին չի արդարացնում Լասսալի ոպորտունիզմը» («Под чужим флагом», հատոր XVIII, եջ 104)։ Լասսալականությունը գերմանական բանվորական շարժման ամբողջ պատմության ընթացքում միշտ յեղել և ոպորտունիստների դրոշակը։ Պատերազմի ժամանակ և նրանից հետո սոցիալ-շովինիստները, սոցիալ-ֆաշիստները հաճախ են առաջ մղել և շարունակում են առաջ մղել «Հետ դեպի Լասսալը» լոզունգը։

Ինտերնացիոնալի կանոնադրությունից ¹ վերցրած այդ թեզը իր այդ «ուղղված» հրատարակությամբ՝ սխալ ե։

Արդի հասարակության մեջ աշխատանքի միջոցները կալվածատերերի և կապիտալիստների մենաշնորհն են (կալվածատիրության մենաշնորհը նույնիսկ կապիտալի մենաշնորհի հիմքն ե)։ Ինտերնացիոնալի կանոնադրությունը նշված հատվածում չի տալիս վո՛չ մեկ և վո՛չ էլ մյուս դասակարգի մոնոպոլիստների անունը։ Նա խոսում ե «աշխատանքի միջոցների, այսինքն, կենսաղբյուրների մենաշնորհի մասին»։ «Կենսաղբյուրներ» հավելումը բավականաչափ ցույց ե տալիս, վոր աշխատանքի միջոցների հասկացողության մեջ մտնում ե նաև հողը։

Ուղղումը կատարվել ե այն պատճառով, վոր Լասսալը, այժմ արդեն բոլորին հայտնի շարժառիթով, միայն կապիտալիստական դասակարգի վրա յեր հարձակվում, այլ վոչ թե կալվածատերերի ²։

---

¹) Խոսքը վերաբերում ե Բանվորների միջազգային ընկերության— I Ինտերնացիոնալի կանոնադրությանը, վոր գրել ե Մարքսը 1864 թ. նոյեմբերին։ Կանոնադրության համապատասխան կետն ասում ե. «... Բանվորի տնտեսական ստրկացումը աշխատանքի միջոցների մոնոպոլիստին, այն միջոցների, վորոնք կյանքի աղբյուրն են հանդիսանում, ստրկության բոլոր ձևերի, ամեն տեսակ սոցիալական աղքատության, մտավոր դեգրադացիայի ու քաղաքական կախվածության հիմքն ե»։

² Մարքսը նկատի ունի Լասսալի «համաձայնությունը» Բիսմարկի հետ, վորի մասին Մարքսն իմացավ միմիայն Լասսալի մահից հետո։ 1865 թվի փետրվարի 23-ին Կուգելմանին գրած նամակում Մարքսն այդ մասին գրում ե. «... Շուտով յերևան յեկավ—դրա ապացույցները մեր ձեռքն ընկան,—վոր Լասսալն իրոք դավաճանել ե կուսակցությանը։ Նա ֆորմալ պայմանագիր ե կնքել Բիսմարկի հետ (և այն էլ, իհարկե, առանց վորևե յերաշխիքի վերջինիս կողմից)։ 1864 թվի սեպտեմբերի վերջին նա պետք ե ուղևորվեր Համբուրգ և այնտեղ... «հարկադրեր» Բիսմարկին միացնելու Շլեզվիգ-Հոլշտայնը, այսինքն՝ հայտարարելու այդ բանը «բանվորների» անունից, վորի փոխարեն Բիսմարկը խոստանում եր ընդհանուր ընտրական իրավունք և միքանի սոցիալիստական շառլատանություններ։ Ափսոս, վոր Լասսալը [մենամարտության ժամանակ սպանվելու հետևանքով] չկարողացավ այդ կատակերգությունը մինչև վերջը հասցնել։ Այդ կատակերգությունը նրան ծիծաղելի ու հիմար դրության մեջ կգցեր և դրանով ընդմիշտ վերջ կդներ նման ձևի բոլոր փորձերին»։ Մարքսը չգիտեր այն, ինչ վոր յերևան յեկավ միայն 1928 թվին, այն ե՝ վոր Լասսալը համաձայնության եր յեկել Բիսմարկի հետ վո՛չ թե իր մահից միքիչ առաջ, այլ նշանակալից չափով ավելի առաջ, դեռևս 1863 թվի մայիսի սկզբին։ Հետևաբար, նա բանակցություններ ե սկսել Բիսմարկի հետ մինչեվ Ընդհանուր գերմանական բանվորական միության հիմնումը, և կարելի յե յենթադրել, վոր այդ միությունը հիմնվել ե Բիսմարկի հետ ունեցած գաղտնի համաձայնությամբ։ «Պրուսական-արքայական» սոցիալիզմի բնութագրման համար այստեղ մեջ ենք բերում Լասսալի նամակի մի հատվածը, ուղղված Բիսմարկին 1863 թ.

Անգլիայում կապիտալիստը մեծ մասամբ նույնիսկ սեփականատեր չէ այն կալվածքի, որի վրա գտնվում է նրա գործարանը։

3. «Աշխատանքի ազատագրումը պահանջում է աշխատամիջոցների բարձրացումը հասարակության հանրային սեփականության և ամբողջ աշխատանքի ընկերակցական կանոնավորումն՝ աշխատանքի արդասիքի արդար բաշխման հետ միասին»։

«Աշխատամիջոցների բարձրացումը հանրային սեփականության»—ըստ յերևութին պիտի լինի՝ նրանց «վերածումն հանրային սեփականության», սակայն դա՝ ի միջի այլոց։

Ի՞նչ է «աշխատանքի արդասիքը»։ Աշխատանքի արտադրանքը, թե՞ այդ արտադրանքի արժեքը։ Իսկ վերջին դեպքում՝ արտադրանքի ամբողջ արժեքը, թե՞ միայն արժեքի այն մասը, որը աշխատանքը նորից ավելացրել է սպառած արտադրամիջոցների արժեքին [1]։

«Աշխատանքի արդասիք» ասածը մի ճապաղ պատկերացումն է, որ Լասսալն առաջ է քաշել տնտեսական որոշ հասկացությունների փոխարեն։

Ի՞նչ է «արդար բաշխումը»։

Մի՞թե բուրժուաները չեն պնդում, թե այժմյան բաշխումն «արդարացի» յէ։ Յեվ մի՞թե դա իրոք միակ «արդարացի» բաշխումը չէ այժմյան արտադրության յեղանակի հիման վրա։ Տնտեսական հարաբերությունները կարգավորված են իրավահասկացությունների միջոցով, թե՞ ընդհակառակը՝ իրավահարաբերություններն առաջանում են տնտեսական հարաբերություններից։ Յեվ

հունիսի սկզբին. «Բանվոր դասակարգը... հակամետ կլիներ... թագի մեջ տեսնելու սոցիալական դիկտատուրայի բնական կրողին, իբրև հակադրություն բուրժուական հասարակության յեսամոլության, յեթե թագը, իր կողմից,... բռներ իսկական հեղափոխական ու ազգային ուղին և արտոնված դասերի միապետությունից՝ սոցիալական ու հեղափոխական միապետության փոխարկվեր» («Летопись марксизма» VI, 1928, եջ 11)։ Տես ծանոթագրություն եջ 26—27։

[1] «Կապիտալի» մեջ Մարքսն արդյունքի ընդհանուր արժեքն անվանում է «արդյունքի արժեք», մինչդեռ արժեքի այն նոր մասը, որ ավելացնում է նրա վրա աշխատանքը, նա անվանում է «նոր արժեք» կամ «նորից արտադրած արժեք» (Հմմտ. «Կապիտալ», հատոր I, գլ. 6. «Հաստատուն կապիտալ և փոփոխուն կապիտալ». գլ. 7, § 2. «Արդյունքի արժեքի արտահայտումն արդյունքի համամասնական մասերի մեջ». գլ. 7, § 3. «Սենիորի վերջին ժամը»։ «Նոր արժեքի» մասին հմմտ. նաև գլ. 15. «Աշխատուժի գնի ու հավելյալ արժեքի մեծությունների փոխհարաբերությունը»։

մի՞թե սոցիալիստական հերձվածողները[1] չունեն նույնպես ամենատարբեր պատկերացումներ «արդարացի» բաշխման մասին։

Իմանալու համար, թե ինչ պետք է հասկանալ տվյալ դեպքում «արդարացի բաշխում» ֆրազի տակ, մենք պետք է համադրենք առաջին պարագրաֆն այս պարագրաֆին։ Վերջինս յենթադրում է մի հասարակություն, վորի մեջ «աշխատամիջոցները հանրային սեփականություն են և ամբողջ աշխատանքը կանոնավորվում է ընկերակցաբար»․ իսկ առաջին պարագրաֆից մենք տեսնում ենք, վոր «աշխատանքի արգասիքն անկրճատ պատկանում է հասարակության բոլոր անդամներին՝ հավասար իրավունքի հիման վրա»։

«Հասարակության բոլոր անդամներին»։ Նաև չաշխատողներին։ Հապա ո՞ւր մնաց «աշխատանքի անկրճատ արգասիքը»։ Հասարակության աշխատող անդամներին միայն։ Հապա ո՞ւր մնաց հասարակության բոլոր անդամների «հավասար իրավունքը»։

Սակայն «հասարակության բոլոր անդամները» և «հավասար

---

[1] Հերձվածողական սոցիալիզմի մասին Մարքսը գրել է 1872 թվին մի բրոշյուրում («Կարծեցյալ պառակտումներ Ինտերնացիոնալի մեջ»), վորն ուղղված է բակունինյանների դեմ. «Բուրժուազիայի դեմ պրոլետարիատի մղած պայքարի առաջին փուլը նշված է աղանդավորական շարժումով։ Այդ շարժումը գոյության իրավունք ունի այն դարաշրջանում, յերբ պրոլետարիատը դեռ բավականաչափ չի զարգացել, վորպեսզի գործի իբրև դասակարգ։ Անհատական մտածողները, քննադատության յենթարկելով սոցիալական հակամարտությունները՝ տալիս են հարցի ֆանտաստիկ լուծումը, վորը բանվորական մասսան պարտավոր է լոկ ընդունել, տարածել ու կիրառել գործնականապես։ Հենց իրենց բնությամբ՝ այդպիսի քրմերի կողմից կազմակերպված աղանդները ձեռնպահ են մնում [քաղաքական պայքարից], նրանք հեռու յեն ամեն մի ռեալ գործունեությունից, հեռու յեն քաղաքականությունից, գործադուլներից, կոալիցիաներից, մի խոսքով—ամբողջ շարժումից իբրև ամբողջություն առած։ Պրոլետարական մասսան միշտ անտարբեր կամ մինչև անգամ թշնամի յե մնում նրանց պրոպագանդային։ Փարիզի ու Լիոնի բանվորները մերժեցին սեն-սիմոնիստներին, ֆուրյերիստներին, իկարյաններին ճիշտ այնպես, ինչպես անգլիական չարտիստներն ու տրեդյունիոնիստները մերժեցին ոուենիստներին։ Այդ աղանդները, վորոնք շարժման ծագման ժամանակ ծառայում եյին իբրև նրա լծակները, նրա համար խոչընդոտների փոխարկվեցին այն րոպեյից սկսած, յերբ շարժումը գերազանցեց նրանցից, և այն ժամանակ նրանք ռեակցիոն դարձան։ Դրա ապացույցներն են—աղանդները Ֆրանսիայում, Անգլիայում և, վերջապես, լասսալականները Գերմանիայում, վորոնք յերկար տարիներ պրոլետարիատի կազմակերպմանն արգելք հանդիսանալուց հետո՝ պարզ զենք դարձան վոստիկանության ձեռքում։ Ամփոփենք. աղանդավորությունը պրոլետարական շարժման մանկությունն է միայն, ինչպես վոր աստղաբանությունն ու ալքիմիան գիտության մանկությունն են հանդիսանում»։

իրավունքն» ակներևաբար միայն ֆրազներ են։ Իսկ եականն այն ե, որ այդ կոմունիստական հասարակության մեջ յուրաքանչյուր բանվոր պետք ե ստանա լասալյան «անկրճատ» «աշխատանքի արդասիք»։

Յեթե վերցնենք նախ «աշխատանքի արդասիք» բառերը աշխատանքի արդյունքի իմաստով, ապա ընկերակցական աշխատանքի արդասիքը պիտի լինի հասարակական ամբողջական արդյունքը։

Դրանից հիմա պիտի դուրս գալ՝

Առաջին. սպառած արտադրամիջոցների վերականգնմանը հատկացվելիք մասը։

Յերկրորդ. արտադրության ընդլայնման համար հատկացվելիք լրացուցիչ մասը։

Յերրորդ. պահեստի կամ ապահովության ֆոնդեր՝ դժբախտությունների, բնության պատահարներից առաջացած խանգարումների և այլ դեպքերի համար։

«Աշխատանքի անկրճատ արդասիքից» այդ հանումները տնտեսական անհրաժեշտություն են, և նրանց մեծությունը պիտի որոշվի յեղած միջոցների և ուժերի համեմատ, մասամբ նաև հավանականության թեորիայի միջոցով, բայց նրանք ոչ մի կերպ չեն կարող հաշվի յենթարկվել արդարության հիման վրա։

Մնում ե ամբողջական արտադրանքի մյուս մասը, որ ծառայելու յե իբրև սպառամիջոց։

Անհատական բաժանումից առաջ՝ դրանից կրկին դուրս պիտի գալ՝

Առաջին. ընդհանուր, արտադրությանը չվերաբերող վարչածախսերը։

Այդ մասը հենց սկզբից կրճատվելու յե նշանակալից չափով՝ այժմյան հասարակության մեջ ծախսվող մասի համեմատությամբ, և հետզհետե պակասելու յե նոր հասարակության զարգացման զուգահեռ։

Յերկրորդ. այն, ինչ որ հատկացվելու յե հանրային կարիքների բավարարմանը, ինչպես՝ դպրոցներ, առողջապահական հիմնարկություններ և այլն։

Այդ մասը հենց սկզբից զգալապես աճելու յե՝ այժմյան հասարակության մեջ կատարվող ծախսերի համեմատությամբ, և ավելանալու յե այն չափով, ինչ չափով զարգանալու յե նոր հասարակությունը։

Յերրորդ. անաշխատունակների և այլնի համար ֆոնդեր, կարճ՝

այն, ինչ այսօր վերաբերում է այսպես կոչված պաշտոնական աղքատախնամությանը։

Այժմ միայն մոտենում ենք այն «բաշխմանը», որին այնքան սահմանափակ կերպով աչքի առաջ է ունեցել ծրագիրը՝ լասսալյան ազդեցության տակ, այսինքն սպառողական միջոցների այն բաժնին, որ բաշխվում է ընկերակցության առանձին արտադրողների միջև[1]։

«Աշխատանքի անկրճատ արգասիքն» աննկատելիորեն վերածվել է արդեն «կրճատվածի», թեև արտադրողից՝ որպես առանձին անհատից՝ վերցվածն ուղղակի կամ անուղղակի կերպով վերադարձվում է նրան՝ որպես հասարակության անդամի։

Ինչպես «աշխատանքի անկրճատ արգասիք» ֆրազը չքացել է, այնպես էլ այժմ չքանում է «աշխատանքի արգասիք» ֆրազն առհասարակ[2]։

Ընկերակցական, արտադրամիջոցների հանրային սեփականության վրա հիմնված հասարակության ներսում արտադրողները չեն փոխանակում իրենց արտադրանքները. նույնչափ էլ սակավ է այստեղ արտադրանքների վրա գործադրած աշխատանքը հանդիսանում որպես այդ արտադրանքների արժեք, որպես դրանցում յեղող իրային հատկություն, որովհետև այժմ կապիտալիստական հասարակությանը հակադիր, անհատական աշխա-

---

1 Իր «Բնակարանային հարցը» բրոշյուրում Ենգելսն էլ քննադատում է «աշխատանքի լրիվ արգասիքի» «սոցիալիստական» պահանջը, բանավիճելով ֆրանսական մանր-բուրժուական սոցիալիստ Պրուդոնի սխեմի դեմ, որը նույնպես պաշտպանում էր այդ պահանջը։ Նա գրում է. «Հասկանալի յե.. ինքնըստինքյան, որ նույնիսկ արդի խոշոր արդյունաբերությամբ պայմանավորված հասարակական արտադրության ժամանակ [այսինքն՝ կոմունիզմի ժամանակ] ամեն մեկին կարող է ապահովվել «նրա աշխատանքի լրիվ արգասիքը», որչափով այդ ֆրազն առհասարակ իմաստ ունի։ Իսկ այդ ֆրազի մեջ իմաստ կա լոկ այն դեպքում, յեթե այն ընդլայնված իմաստով հասկանանք, այսինքն՝ որ ո՛չ թե յուրաքանչյուր առանձին բանվորն է դառնում «իր աշխատանքի» այդ «լրիվ արգասիքի» տերը, այլ որ ամբողջ հասարակությունը, որ բացառապես բանվորներից է բաղկացած, տիրանում է իր աշխատանքի բոլոր արդյունքներին՝ այդ արդյունքները նա մասամբ բաշխում է իր անդամների միջև սպառման համար, մասամբ գործադրում է արտադրության միջոցները փոխարինելու և բազմացնելու համար, և մասամբ էլ կուտակում է իբրև արտադրության ու սպառման պահեստի ֆոնդ» (Ֆր. Ենգելս, Բնակարանային հարցը, հրատ. 1932 թ., եջ 24)։

2 «Աշխատանքի անկրճատ» կամ «լրիվ արգասիքի» լասսալյան պահանջի այս հերքման հետ համեմատիր Լենինի «Պետություն և հեղափոխություն» գրքում, գլ. V, § 3. «Կոմունիստական հասարակության առաջին փուլը»—առաջին պարբերությունները։

տանքներն այլևս գոյություն ունեն վորպես վողջ աշխատանքի բաղկացուցիչ մասեր՝ վոչ թե զարտուղի ճանապարհով, այլ ուղղակի կերպով։ «Աշխատանքի արդյունք» բառերը, վոր իրենց յերկդիմության պատճառով այժմ ել անընդունելի յեն, կորցնում են այսպիսով ամեն մի իմաստ։

Մենք այստեղ գործ ունենք վոչ թե այնպիսի կոմունիստական հասարակության հետ, վորը զարգացել է իր սեփական հիմքերի վրա, այլ ընդհակառակը՝ այնպիսի, վորը հենց նոր է առաջանում կապիտալիստական հասարակությունից և վորը, հետևապես, բոլոր կողմերով ել՝ տնտեսական, բարոյական ու մտավոր՝ կրում է հին հասարակության դրոշմը, այն հասարակության, վորի արգանդից նա ծնվել է։ Դրա համապատասխան՝ առանձին արտադրողը հասարակությունից հետ է ստանում,—հանումներից հետո,—ճիշտ նույնքան, վորքան ինքը տալիս է նրան։ Ինչ նա տվել է հասարակությանը, դա նրա անհատական աշխատանքի քանակն է։ Որինակ՝ հասարակական աշխատորը բաղկացած է անհատական աշխատաժամերի գումարից. առանձին արտադրողի անհատական աշխատաժամանակը— դա նրա կողմից տրված հասարակական աշխատորվա մասն է, նրա բաժինը դրանում։ Նա ստանում է հասարակությունից մի ստացագիր, թե այս-ինչ քանակությամբ աշխատանք է հանձնել (հանրային ֆոնդերի համար նրա աշխատանքը դուրս գալուց հետո), և այդ ստացագրով նա ստանում է հասարակական պահեստից այնքան սպառողական միջոցներ, վորքան արժե նրա աշխատանքը։ Այդպիսով աշխատանքի միևնույն քանակը, վոր նա տվել է հասարակությանը մի ձևով, հետ է ստանում մի ուրիշ ձևով։

Այստեղ ակնհայտորեն տիրում է հենց այն սկզբունքը, վորը կանոնավորում է ապրանքափոխանակությունը, վորչափով դա հավասար արժեքների փոխանակություն է։ Փոխված են բովանդակությունն ու ձևը, վորովհետև փոփոխված պայմաններում վոչ վոք չի կարող այլ բան տալ, քան իր աշխատանքը, իսկ մյուս կողմից վոչինչ չի կարող առանձին անհատի սեփականություն դառնալ, բացի անհատական սպառողական միջոցներից։ Սակայն ինչ վերաբերում է այդ վերջինների բաշխմանն առանձին արտադրողների միջև, այստեղ ել տիրապետում է հենց նույն սկզբունքը, վորը տիրապետում է ապրանքային համարժեքների փոխանակության ժամանակ, այսինքն՝ վորևե ձևի նույնաչափ աշխատանքը փոխանակվում է մի այլ ձևի նույնաչափ աշխատանքի հետ։

Դրա համար էլ այստեղ հավասար իրավունքն սկզբունքով դեռևս բուրժուական իրավունքն է, թեև սկզբունքն ու պրակտիկան այլևս իրար դեմ չեն մարտնչում, այնինչ ապրանքափոխանակության ժամանակ համարժեքների փոխանակությունը գոյություն ունի միայն միջին հաշվով, այլ ոչ թե յուրաքանչյուր առանձին դեպքի համար։

Չնայած այս առաջադիմությանը՝ այդ հավասար իրավունքը տակավին կաշկանդված է բուրժուական շրջանակի մեջ։ Արտադրողների իրավունքը համամասնական է իրենց արտաբերած աշխատանքին. հավասարությունն այն է, որ չափվում է հավասար մասշտաբով՝ աշխատանքով։

Բայց մեկը գերազանց է մյուսից ֆիզիկապես կամ մտավորապես, ուրեմն և միևնույն ժամանակամիջոցում տալիս է աշխատանքի ավելի քանակ կամ ընդունակ է ավելի յերկար ժամանակ աշխատելու. իսկ վորպեսզի աշխատանքը կարողանա ծառայել իբրև չափ, նա պետք է վորոշվի ըստ տևողության, կամ ըստ լարունության, հակառակ դեպքում նա կդադարեր մասշտաբ լինելուց։ Այդ հավասար իրավունքն անհավասար իրավունք է անհավասար աշխատանքի համար։ Նա չի ճանաչում վորևե դասակարգային տարբերություն, վորովհետև ամեն մեկը միայն բանվոր է, ինչպես և մյուսը. բայց նա լռելյայն ճանաչում է անհավասար անհատական օժտվածություն և, հետևաբար, աշխատունակություն՝ վորպես բնական արտոնություն։ Դրա համար էլ նա իր բովանդակությամբ անհավասարության իրավունք է, ինչպես ամեն մի իրավունք: Իրավունքը կարող է ըստ իր բնույթի գոյություն ունենալ միայն հավասար մասշտաբի գործադրությամբ. բայց անհավասար անհատները (իսկ նրանք տարբեր անհատներ չեյին լինի, յեթե անհավասար չլինեյին) չափելի յեն միայն հավասար մասշտաբով, այն էլ յերբ նրանց մոտենում ենք միևնույն տեսակետից, նայում նրանց վրա մի վորոշ կողմից, ինչպես, որինակ, տվյալ դեպքում նրանց դիտում ենք սոսկ վորպես բանվորներ, և նրանց մեջ ուրիշ վոչինչ չենք տեսնում, մյուս բոլոր կողմերը զանց ենք առնում։ Ապա՝ մի բանվոր ամուսնացած է, մյուսը վոչ. մեկն ունի ավելի յերեխաներ, քան մյուսը, և այլն և այլն։ Հավասար աշխատանք կատարելու, հետևաբար, հասարակական սպառողական ֆոնդից հավասար բաժին ունենալու ժամանակ մեկը, այդպիսով, ստանում է փաստորեն ավելի, քան մյուսը, մեկն ավելի հարուստ է, քան մյուսը և այլն։ Այդ բոլոր

թերություններից խուսափելու համար իրավունքը հավասար լինելու փոխարեն՝ պետք է լիներ անհավասար [1]:

Սակայն այդ թերություններն անխուսափելի յեն կոմունիստական հասարակության առաջին փուլում, յերբ նա տակավին նոր է դուրս յեկել կապիտալիստական հասարակությունից՝

---

[1] Հավասարության պահանջի մասին Ենգելսը գրում է «Անտի-Դյուրինգում». «Հավասարության պահանջը կրկնակի նշանակություն է ստանում պրոլետարիատի բերանում: Կամ այդ պահանջը (մանավանդ իր սկզբնական շրջանում, ինչպես, օրինակ՝ գյուղացիական պատերազմի ժամանակ) բնականորեն աճած մի ռեակցիա յե աղաղակող սոցիալական անհավասարությունների դեմ, այն կոնտրաստի դեմ, վոր գոյություն ունի ունևորների ու չքավորների միջև, տերերի ու ստրուկների միջև, գեղխ կյանք վարողների ու սովյալների միջև, ընդվզում իբրև մի ռեակցիա դա պարզապես հեղափոխական բնազդի արտահայտությունն է ներկայացնում և իր արդարացումը դրա մեջ, միմիայն դրա մեջ է գտնում: Կամ թե հավասարության պրոլետարական պահանջը ծագել է հավասարության բուրժուական պահանջի դեմ ուղղված ռեակցիայից, վորից նա հետևցնում է շատ թե քիչ ուղիղ պահանջներ, վորոնք շատ ավելի հեռու յեն տարածվում. այդ պահանջն ագիտացիոն միջոց է ծառայում, վորպեսզի բանվորներին վոտքի հանի կապիտալիստների դեմ, հիմնվելով հենց իրենց կապիտալիստների պատճառաբանությունների վրա. այս դեպքում այդ պահանջը պահպանվում է և կործանվում բուրժուական հավասարության հետ միասին: Յերկու դեպքում էլ հավասարության պրոլետարական պահանջի իրական բովանդակությունը դասակարգերը վերացնելու պահանջն է: Հավասարության ամեն մի պահանջ, վորը հիշյալ սահմաններից անցնում է, անհրաժեշտորեն անհեթեթությունների յե հանգում» (տես «Անտի-Դյուրինգ», հայերեն թարգմ., Յերևան 1936, եջ 142):—«Եկոնոմիկան ու քաղաքականությունը պրոլետարիատի դիկտատուրայի դարաշրջանում» աշխատության մեջ Լենինն Ենգելսի այս պարզաբանման մասին գրում է. «Ենգելսը վաղուց պարզաբանել է «Անտի-Դյուրինգում», վոր հավասարության հասկացողությունը՝ ապրանքային արտադրության հարաբերությունների արտանկարը լինելով՝ փոխարկվում է նախապաշարմունքի, յեթե հավասարությունը չհասկանանք դասակարգերի վոչնչացման իմաստով: Շարունակ մոռանում են այս այբբենական ճշմարտությունը՝ հավասարության բուրժուական-դեմոկրատական և սոցիալիստական հասկացողության տարբերության մասին: Իսկ յեթե չմոռանանք այն, ապա ակներև է դառնում, վոր պրոլետարիատը՝ տապալելով բուրժուազիային՝ հենց դրանով վճռական քայլ է անում դասակարգերը վոչնչացնելու համար և վոր այդ գործն ավարտելու համար պրոլետարիատը պետք է շարունակի իր դասակարգային պայքարը, օգտագործելով պետական իշխանության ապարատը և գործադրելով պայքարի, ազդեցության, ներգործության զանազան յեղանակներ տապալված բուրժուազիայի վերաբերմամբ և տատանվող մանր բուրժուազիայի վերաբերմամբ» (հատոր XXIV, եջ 515): Տես Լենինի «Պետություն և հեղափոխություն» գրքի (սույն հրատարակության հավելվածում) այն հատվածները, վորտեղ Լենինը մասամբ մեջ է բերում, մասամբ ամփոփում ու զարգացնում է Մարքսի արտահայտած մտքերը «Քննադատության» մեջ:

յերկար յերկունքից հետո։ Իրավունքը յերբեք չի կարող ավելի բարձր լինել, քան հասարակության տնտեսակարգը և դրանով պայմանավորված նրա կուլտուրական զարգացումը[1]։

Կոմունիստական հասարակության ավելի բարձր փուլում, յերբ վերացած կլինի անհատների ստրկացուցիչ յենթարկումն աշխատանքի բաժանման պայմաններին, դրա հետ միասին վերացած կլինի նաև մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակադրությունը, յերբ աշխատանքը դարձած կլինի վոչ միայն սոսկ ապրելու միջոց, այլև կյանքի առաջին կարիքը. յերբ անհատների բազմակողմանի զարգացման հետ միասին աճած կլինեն նաև արտադրողական ուժերը և հասարակական հարստության բոլոր աղբյուրները կհոսեն ավելի լիառատ կերպով,—ահա միայն այդ ժամանակ կարելի կլինի ամբողջովին թռչել-անցնել բուրժուական իրավունքի նեղ հորիզոնից, և հասարակությունը կարող կլինի իր դրոշակի վրա գրել—Յուրաքանչյուրն՝ ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ իր պահանջմունքների[2]։

Ցես ավելի ընդարձակորեն կանգ առա մի կողմից «աշխատանքի անկրճատ արդասիքի», մյուս կողմից «հավասար իրավունքի», «արդարացի բաշխման» վրա, վորպեսզի ցույց տամ, թե ի՛նչպիսի մեծ հանցանք են գործում մարդիկ, ցանկանալով, մի կողմից, պարտադրել մեր կուսակցությանը վորպես դոգմա՝ այնպիսի պատկերացումներ, վորոնք թեև ունեցել են իր ժամանակին վորևե իմաստ, բայց այժմ դարձել են ֆրազային հնոտի, մյուս կողմից էլ՝ խեղաթյուրել մեր կուսակցության կողմից մեծ դժվարությամբ ձեռք բերված և նրա մեջ արդեն արմատներ

---

[1] Տես Լենինի պարզաբանումները «Պետություն և հեղափոխություն» գրքում (սույն հրատարակության հավելված) § 3. «Կոմունիստական հասարակության առաջին փուլը»։

[2] Տես Լենինի պարզաբանումները «Պետություն և հեղափոխություն» գրքում (սույն հրատարարակության հավելված) § 4. «Կոմունիստական հասարակության բարձրագույն փուլը»։—Կոմունիստական շաբաթորյակների առթիվ Լենինը 1919 թվի դեկտեմբերին ասում եր.

«Յեթե մենք մեզ հարց տանք, թե ինչ ե ներկայացնում իրենից կոմունիզմի տարբերություն սոցիալիզմից, ապա մենք պետք ե ասենք, վոր սոցիալիզմն այն հասարակությունն ե, վորն անմիջականորեն աճում ե կապիտալիզմից, նոր հասարակության առաջին տեսակն ե։ Իսկ կոմունիզմը հասարակության ավելի բարձր տեսակն ե, և այն կարող ե զարգանալ այն ժամանակ միայն, յերբ սոցիալիզմը լիովին կամրապնդվի։ Սոցիալիզմը յենթադրում ե աշխատանք առանց կապիտալիստների ոգնության, հասարակական աշխա-

բռնած ռեալիստական ըմբռնումը և այդ փոխարինել իդեոլոգիական իրավական և այլ բարբաջանքներով, վոր այնքան մոտ են դեմոկրատների և ֆրանսական սոցիալիստների սրտերին։

Մի կողմ թողնելով մինչև այժմ շարադրվածը՝ ընդհանրապես էլ սխալ էր՝ տեսնել էյականը այսպես կոչված բաշխման մեջ և գլխավոր շեշտը դնել դրա վրա։

Սպառողական միջոցների ամեն մի բաշխում սոսկ հետեվանք է հենց արտադրապայմանների բաշխման։ Իսկ այդ վերջին բաշխումն ինքը հենց արտադրության յեղանակի բնույթն է։ Կապիտալիստական արտադրաձևն, օրինակ, հիմնված է այն բանի վրա, վոր արտադրության իրային պայմանները պատկանում են վոչ-բանվորներին՝ կապիտալատիրականության և հողատիրականության ձևով. մինչդեռ մասսան միայն անձնական արտադրապայմանների՝ աշխատուժի սեփականատեր է։ Յեթե արտադրության տարրերն այդպես են բաշխված, դրանից ինքնին առաջանում է սպառողական միջոցների այսօրվա բաշխումը։ Իսկ յեթե իրային արտադրապայմանները լինեն հենց բանվորների ընկերակցական սեփականությունը, այդ դեպքում նմանապես առաջ կգա սպառողական միջոցների մի բաշխում, վորը միանգամայն կտարբերվի ժամանակակից բաշխումից։ Վուլգար սոցիալիզմը (դրանից էլ դեմոկրատիայի մի մասը) ժառանգել է բուրժուական տնտեսագետներից այն մոտեցումը, ըստ վորի բաշխումը դիտվում և քննության է առնվում արտադրաձևից անկախ, այդ պատճառով էլ գործն այնպես է շարադրվում, կարծես թե սոցիալիզմն զբաղվում է գերազանցապես բաշխման հարցերով [1]։ Եվ ինչո՞ւ կրկին

տանը՝ աշխատավորների կազմակերպված ավանգարդի, նրա առաջավոր մասի խստագույն հաշվառման, վերահսկողության ու հսկողության ներքո. ըստվորում պետք է վորոշվեն թե աշխատանքի չափերը և թե նրա վարձատրությունը։ Այդ բանը վորոշակիորեն անհրաժեշտ է այն պատճառով, վոր կապիտալիստական հասարակությունը մեզ այնպիսի հետքեր ու այնպիսի սովորույթներ է թողել, ինչպես անջատ-անջատ աշխատանքը, անվստահությունը դեպի հասարակական տնտեսությունը, մանր տնտեսատիրոջ հին սովորույթները, վորոնք իշխում են բոլոր գյուղացիական յերկրներում։ Այս բոլորը հակառակ է ընթանում իսկապես կոմունիստական տնտեսությանը։ Իսկ կոմունիզմ մենք անվանում ենք այնպիսի կարգը, յերբ մարդիկ վարժվում են հասարակական պարտականություններ կատարել առանց հարկադրման հատուկ ապարատների, յերբ ձրի աշխատանքն ընդհանուրի օգտի համար ընդհանրական յերևույթ է դառնում» (հատոր XXIV, եջ 651)։ Հմմտ. նաև Լենինի «От разрушения векового уклада к творчеству нового» հոդվածը (հատոր XXV, եջ 151)։

1 «Կապիտալի» II հատորում Մարքսն ասում է. «Ի մի՛ջի այլոց, բուր-

հետ գնալ, երբ իրական գրությունը վաղուց արդեն պարզ է կացուցված:

> 4. «Աշխատանքի ազատագրումը պետք է լինի բանվոր դասակարգի գործը, որի հանդեպ բոլոր մյուս դասակարգերը լոկ մի ճետադիմական մասսա յեն»:

Առաջին ստրոֆը վերցված է Ինտերնացիոնալի կանոնադրության ներածությունից, բայց միայն «բարելավված է»: Այնտեղ ասված է. «Բանվոր դասակարգի ազատագրումը պետք է լինի հենց բանվորների գործը» [1]. իսկ այստեղ, ընդհակառակը, «բանվոր դասակարգը» ազատագրելու յե—ինչը—«աշխատանքը»: Թող հասկանա, ով կարող է:

Ի հատուցումն դրա, ընդհակառակը, հակաստրոֆը [2] լասսալյան ցիտատ է ամենամաքուր տեսակի, «որի (բանվոր դասակարգի) հանդեպ բոլոր մյուս դասակարգերը լոկ մի ռեակցիոն մասսա յեն» [3]:

ժուական մատերիալիզմին հատուկ է, քանի որ բուրժուայի գլուխն ամբողջովին զբաղված է գործեր սարքելով, ոչ թե արտադրության յեղանակի ընույթի մեջ տեսնել նրան համապատասխանող փոխանակության յեղանակի հիմքը, այլ ընդհակառակը» (հատոր II, գլ. IV): Արտադրության հարաբերության հարցը դեպի բաշխումը, փոխանակությունն ու սպառումը՝ Մարքսը մանրամասնորեն վերլուծում է իր անավարտ աշխատության--«Քաղաքատնտեսության քննադատության ներածության» մեջ (1857) (որ հրատարակված է «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» աշխատության հետ միասին):—«Նարոդնիկության տնտեսական բովանդակությունն ու նրա քննադատությունը պ. Ստրուվեյի գրքում» (1894) վերնագրով հոդվածում Լենինը՝ հենվելով «Գոթայի ծրագրի քննադատությունից» վերև մեջ բերված հատվածի վրա՝ գրում էր. «Մարքսը գռեհիկ սոցիալիզմը հակադրում է գիտականին, որն էական նշանակություն չի տալիս բաշխմանը՝ բացատրելով հասարակակարգը արտադրական հարաբերությունների կազմակերպությամբ և համարելով, որ նրանց տվյալ կազմակերպությունն արդեն իսկ պարունակում է բաշխման որոշ սիստեմ: Այս գաղափարով է տոգորված Մարքսի ամբողջ ուսմունքը»... (հատոր I, էջ 310. հայերեն թարգմանություն, էջ 431):

[1] I Ինտերնացիոնալի (տես ստորև, էջ 41, ծանոթ. 3) կանոնադրության ներածական խոսքերը ճշգրիտ ասում են. «Բանվոր դասակարգի ազատագրումը պետք է հենց բանվոր դասակարգի իրեն գործը լինի...»:

[2] Հունական ողբերգության մեջ խմբի յելույթները կազմված էյին լինում ստրոֆներից ու անտիստրոֆներից:

[3] Տես ստորև այս դրույթի քննադատությունը, որ տվել է Էնգելսը 1875 թ. մարտի 18-ին Բեբելին գրած նամակում: Մարքսն ու Էնգելսը, քննադատելով այդ լոզունգը, շարունակ մատնանշում էյին պրոլետարիատի դաշնակիցների նշանակությունը և ընդգծում էյին բուրժուական-դեմոկրատական հեղափոխության՝ սոցիալիստական հեղափոխության գերաճելու պրոցեսի հրա-

«Կոմունիստական մանիֆեստում» ասված է. «Այն բոլոր դասակարգերից, որոնք այսօր կանգնած են բուրժուազիայի դեմ, միայն պրոլետարիատն է իսկապես հեղափոխական դասակարգը: Մնացած դասակարգերը քայքայվում և կործանվում են խոշոր ինդուստրիայի զարգացմամբ, իսկ պրոլետարիատն այդ զարգացման հատուկ արգասիքն է» [1]:

կայական նշանակությունը: Օրինակ՝ Էնգելսը 1882 թ. նոյեմբերի 2-ին Բեռնշտայնին ուղղված նամակում գրում էր. «Յերեխայական է հանդիսանում այն պատկերացումը, թե մերձակա հեղափոխությունը պետք է նրանով սկսվի, թե «այստեղ Գվելֆն է, այնտեղ Գիբելլինը», ամբողջ աշխարհը յերկու բանակի յե բաժանվելու.— մի կողմում՝ մենք ենք, իսկ մյուս կողմում — ամբողջ «միասնական ռեակցիոն մասսան». այս նշանակում է, որ հեղափոխությունը պետք է սկսվի հինգերորդ գործողությունից և ոչ թե առաջինից, որի մեջ բոլոր ոպոզիցիոն կուսակցությունների մասսան միավորվում է կառավարության ու նրա հիմարությունների դեմ, և այդ յեղանակով հաղթում է. դրանից անմիջապես հետո առանձին կուսակցությունները հաղթողների մեջ մեկը մյուսի հետևից մաշվում են, անկարելի յեն դառնում իրենց հետագա գոյությունը, մինչև որ, վերջապես, դրա շնորհիվ ժողովրդի ամբողջ մասսան հարկադրված կլինի բոլորովին մեր կողմն անցնելու, և այն ժամանակ կարող է տեղի ունենալ այնքան փառաբանված ֆոլլմարյան վճռական ճակատամարտը»: Համմտ. Լենինի մոտ. «Մտածել, թե հնարավոր է սոցիալական հեղափոխությունն առանց մանր ազգերի ապստամբությունների գաղութներում ու Եվրոպայում, առանց մանր բուրժուազիայի մի մասի հեղափոխական պայթյունների՝ իր բոլոր նախապաշարմունքներով, առանց անգիտակից պրոլետարական ու կիսապրոլետարական մասսաների շարժման՝ կալվածատիրական, յեկեղեցական, միապետական, ազգային և այլ ճնշման դեմ,— այդպես մտածել՝ կնշանակի հրաժարվել սոցիալական հեղափոխությունից: Գուցե մի տեղում մի զորաբանակ շարք կկանգնի ու կասի՝ «մենք սոցիալիզմի կողմնակից ենք», իսկ մի այլ տեղում՝ մի ուրիշ զորաբանակ և կասի՝ «մենք իմպերիալիզմի կողմնակից ենք», և այդ կլինի սոցիալական հեղափոխություն ...:

Ով «մաքուր» սոցիալական հեղափոխություն է սպասում, նա յերբեք չի տեսնի այն: Այդպիսին հեղափոխական է խոսքերով, որ չի հասկանում իսկական հեղափոխությունը:

1905 թվի ռուսական հեղափոխությունը բուրժուական-դեմոկրատական հեղափոխություն էր: Այն բաղկացած էր բնակչության բոլոր դժգոհ դասակարգերի, խմբերի, տարրերի մի շարք ճակատամարտերից ...: Օբյեկտիվորեն, մասսաների շարժումը խորտակում էր ցարիզմը և ճանապարհ էր մաքրում դեմոկրատիայի համար, այդ պատճառով էլ գիտակից բանվորները ղեկավարում էին այն:

Սոցիալիստական հեղափոխությունը Եվրոպայում չի կարող ոչ այլ ինչ լինել, յեթե ոչ բոլոր ու ամեն տեսակ ճնշվածների ու դժգոհների մասսայական պայքարի բռնկում»... («Итоги дискуссии о самоопределении», հատոր XIX, էջ 269):

[1] Տես Կ. Մարքս ու Ֆր. Էնգելս, Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, հայերեն թարգմանության յերկրորդ հրատարակություն, էջ 37:

Այստեղ բուրժուազիան, որպես խոշոր ինդուստրիայի կրողը, ճանաչված է իբրև հեղափոխական դասակարգ—ֆեոդալների և միջին դասերի համեմատությամբ, որոնք ձգտում են պահպանելու իրենց՝ հնացած արտադրայեղանակներով պայմանավորված բոլոր հասարակական դիրքերը: Հետևապես դրանք չեն կազմում բուրժուազիայի հետ միասին միայն մի ռեակցիոն մասսա:

Մյուս կողմից, պրոլետարիատը հեղափոխական է բուրժուազիայի հանդեպ, որովհետև նա, աճած լինելով հենց խոշոր ինդուստրիայի հողի վրա, ձգտում է արտադրությունից ջնջել այն կապիտալիստական բնույթը, որը բուրժուազիան ջանում է հավիտենականացնել: Բայց «Մանիֆեստն» ավելացնում է, որ «միջին խավերը... հեղափոխական դառնում են այն պատճառով, որ նրանց սպառնում է պրոլետարիատի շարքն անցնելու վտանգը»[1]:

Այս տեսակետից էլ նույնպես անմտություն է ասել, թե բանվոր դասակարգի նկատմամբ նրանք բուրժուազիայի և նույնիսկ ֆեոդալների հետ միասին «լոկ մի ռեակցիոն մասսա յեն կազմում»:

Միթե վերջին ընտրությունների ժամանակ[2] արհեստավորներին, մանր արդյունաբերողներին և այլն, ինչպես նաև գյուղացիներին ասել են, թե «մեր նկատմամբ դուք բուրժուաների և ֆեոդալների հետ միասին լոկ մի ռեակցիոն մասսա յեք կազմում»:

Լասսալն անգիր գիտեր «Կոմունիստական մանիֆեստն» այնպես, ինչպես նրա հավատացյալները՝ նրա փրկարար գրվածքները: Յեթե նա այնուամենայնիվ կոպիտ կերպով կեղծել է «Մա-

---

[1] «Մանիֆեստի» այն պարբերությունը, որից վերցրած է այս ցիտատը, ամբողջությամբ հետևյալն է. «Միջին խավերը՝ մանր արդյունաբերողները մանր առևտրականները, արհեստավորները, գյուղացիները, սրանք բոլորն էլ պայքարում են բուրժուազիայի դեմ՝ իրենց, որպես միջին խավերի, գոյությունն ապահովելու համար: Նրանք, հետևաբար, հեղափոխական չեն, այլ պահպանողական: Դեռ ավելին. նրանք հետադիմական են, որովհետև ձգտում են հետ դարձնել պատմության անիվը: Յեթե նրանք հեղափոխականորեն են տրամադրված, ապա այդ այն պատճառով, որ նրանց սպառնում է պրոլետարիատի շարքն անցնելու վտանգը, այն պատճառով, որ նրանք պաշտպանում են ոչ թե իրենց ներկա, այլ ապագա շահերը, որ նրանք թողնում են իրենց տեսակետը՝ պրոլետարիատի տեսակետի վրա կանգնելու համար» (Կ. Մարքս ու Ֆր. Ենգելս, Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, հայերեն թարգմ. 2-րդ հրատարակություն, էջ 37):

[2] Ռայխստագի այն ընտրությունները, որոնց վերաբերում է խոսքն այստեղ, տեղի յեն ունեցել 1874 թվի հունվարին:

նիֆեստը», ապա դա արել է՝ իր դաշինքն արդարացնելու համար [1] աբսոլուտիստական և ֆեոդալական հակառակորդների հետ ընդդեմ բուրժուազիայի։

Բացի այդ՝ լասսալյան իմաստուն ասույթը, ընդհանրապես, բռնադատորեն է կցված վերոհիշյալ պարագրաֆին, առանց որևէ կապակցության՝ Ինտերնացիոնալի կանոնադրության անհաջող կերպով «բարելավված» ցիտատի հետ։ Այստեղ, ուրեմն, պարզապես մի անամոթություն է, այն էլ ոչ երբեք անհաճելի պարոն Բիսմարկին,—մեկն այն էժանագին ստահակություններից, որով չարաշահում է Բեռլինի Մարատը [2]։

[5] «Իր ազատագրության համար պայքարելով՝ բանվոր դասակարգը գործում է ամենից առաջ այժմյան ազգային պետության շրջանակում, գիտակցելով, որ իր՝ բոլոր կուլտուրական երկրների բանվորության համար ընդհանուր՝ ձգտումների անհրաժեշտ հետևանքը լինելու է ժողովուրդների միջազգային եղբայրացումը»։

«Կոմունիստական մանիֆեստին» և ամբողջ առաջվա սոցիալիզմին ընդդեմ՝ Լասսալը մոտեցել էր բանվորական շարժմանը ամենանեղ ազգային տեսակետից։ Դրանում նրան հետևում են, այն էլ Ինտերնացիոնալի գործունեությունից հետո [3]։

---

[1] Տես էջ 28, ծանոթագրություն 2։

[2] Մարատ (1743—1793)— Ֆրանսիական մեծ հեղափոխության խոշորագույն դեմքը, հեղափոխական ագիտատորներից ամենայեռանդուններից մեկը։ Այստեղ Մարքսը հեգնորեն «Բեռլինյան Մարատ» է անվանում Հասսելմանին (նրա մասին տես էջ 66, ծանոթագր. 1, լասսալյանների կենտրոնական օրգան «Neuer Socialdemokrat»-ի («Նոյեր Սոցիալ-դեմոկրատ») գլխավոր խմբագրին։

[3] Առաջին Ինտերնացիոնալը, Բանվորների միջազգային ընկերությունը (1864—1872), Մարքսի ղեկավարությամբ «հիմք դրեց բանվորների միջազգային կազմակերպության՝ նրանց հեղափոխական գրոհը կապիտալի վրա նախապատրաստելու համար» (Լենին, հատոր XXIV, էջ 247)։ Առաջին Ինտերնացիոնալի պատմության մասին Լենինն իր «Կարլ Մարքս» հոդվածում գրում է. «50-ական ու 60-ական թվականների դեմոկրատական շարժումների աշխուժացման դարաշրջանը Մարքսին նորից պրակտիկ գործունեության հրավիրեց։ 1864 թվին (սեպտեմբերի 28-ին) Լոնդոնում հիմնվեց հռչակավոր I Ինտերնացիոնալը ... Մարքսն այդ ընկերության հոգին էր, նրա առաջին «դիմումի» ու մեծ քանակությամբ բանաձևերի, հայտարարությունների, մանիֆեստների հեղինակը։ Միավորելով տարբեր երկրների բանվորական շարժումը, ջանալով դեպի միահամուռ գործունեության հունն ուղղել ոչ-պրոլետարական, մինչմարքսյան սոցիալիզմի (Մաձձինի, Պրուդոն, Բակունին, անգլիական լիբերալ

Կատարելապես հասկանալի յե ըստինքյան, վոր առհասարակ կռվել կարողանալու համար բանվոր դասակարգը պետք ե իր տանը կազմակերպվի վորպես դասակարգ և վոր իր պայքարի անմիջական թատերաբեմը պիտի լինի իր սեփական յերկիրը։ Այդ չափով էլ նրա դասակարգային կռիվն ազգային ե, բայց վոչ թե ըստ բովանդակության, այլ, ինչպես «Կոմունիստական մանիֆեստն» ե ասում, «ըստ ձևի»[1]։ Սակայն «այժմյան ազգային պետության շրջանակը», որինակ՝ Գերմանական կայսրությունն, իր հերթին գտնվում ե տնտեսապես համաշխարհային շուկայի «շրջանակում», քաղաքականապես՝ պետությունների սիստեմի «շրջանակում»։ Առաջին իսկ պատահած վաճառականը գիտե, վոր գերմանական առևտուրը միաժամանակ արտասահմանյան առևտուր ե, և պարոն Բիսմարկի մեծությունը հենց այն ե, վոր նա մի տեսակ միջազգային քաղաքականություն ե վարում[2]։

տրեդ-յունիոնիզմը, լասալյան դեպի աջ ձգտող տատանումները Գերմանիայում և այլն) զանազան ձևերը, պայքարելով այդ բոլոր աղանդների ու դպրոցների թեորիաների դեմ՝ Մարքսը կռում-կոփում եր բանվոր դասակարգի պրոլետարական պայքարի միասնական տակտիկան տարբեր յերկրներում։ Փարիզի կոմունայի անկումից (1871 թ.) հետո... և Ինտերնացիոնալի պառակտումից հետո բակունիստների ձեռքով՝ նրա գոյությունն Յեվրոպայում անկարելի դարձավ։ Ինտերնացիոնալի Հաագայի կոնգրեսից (1872) հետո Մարքսն անցկացրեց Ինտերնացիոնալի Գլխավոր խորհրդի տեղափոխությունը Նյու-Յորկ։ Առաջին Ինտերնացիոնալը վերջացրեց իր պատմական դերը՝ իր տեղը զիջելով բանվորական շարժման անհամեմատ ավելի խոշոր աճման դարաշրջանին աշխարհի բոլոր յերկրներում, այն ե՝ նրա ընդլայնակի աճման դարաշրջանին, մասսայական սոցիալիստական բանվորական կուսակցությունների ստեղծմանն առանձին ազգային պետությունների հիման վրա» (հատոր XVIII, եջ 7—8)։ Կոմինտերնի ծրագրում ասված ե. «Լինելով պրոլետարիատի միասնական ու կենտրոնացրած միջազգային կուսակցություն՝ Կոմունիստական Ինտերնացիոնալն I Ինտերնացիոնալի սկզբունքների միակ շարունակողն ե հանդիսանում, սկզբունքների, վորոնք իրականացվում են հեղափոխական պրոլետարական շարժման նոր, մասսայական հիմքի վրա»։

[1] «Մանիֆեստի» մեջ ասված ե. «Պրոլետարիատի կռիվը բուրժուազիայի դեմ ամենից առաջ ազգային ե, թեև վոչ ըստ բովանդակության, այլ ըստ ձևի։ Ամեն մի յերկրի պրոլետարիատը պետք ե իր հաշիվը մաքրի բնականաբար նախ և առաջ՝ յուր սեփական բուրժուազիայի հետ»։ Յեվ ապա, «Բանվորները հայրենիք չունեն։ Չի կարելի նրանցից խլել այն, ինչ վոր նրանք չունեն։ Ձգտելով ամենից առաջ նվաճել քաղաքական իշխանությունը, հասնել ազգային մեկ դասակարգի, հաստատել իրեն վորպես ազգ, պրոլետարիատը տակավին ինքն ե ազգային, թեև վոչ յերբեք այն իմաստով, ինչպես հասկանում ե բուրժուազիան» (տես «Կոմունիստական մանիֆեստ», հայերեն թարգմ. 2-րդ հրատարակություն, եջ 38, 47—48)։

[2] 1890 թվին Ենգելսն այսպես բնորոշեց Բիսմարկի միջազգային քաղա-

Իսկ ինչի՞ յե վերածում գերմանական բանվորական կուսակցությունն իր միջազգայնությունը։ Այն գիտակցության, թե նրա ձգտումների հետևանքը լինելու յե «ժողովուրդների միջազգային յեղբայրացումը», մի ֆրազ, վոր վերցված ե բուրժուական «Ազատության և Խաղաղության Միությունից» [1] և վորը պետք

քականությունը. «1859 թվի պատերազմը սարսափ ազդեց նաև Պրուսիային։ Նա գրեթե կրկնապատկեց իր զորաքանակը և իշխանության գլուխ դրեց մի այնպիսի մարդու, վորը գոնե մեկ տեսակետից կարող եր մրցել ռուսական դիվանագիտության հետ—միջոցների մեջ խտրություն չդնելու տեսակետից։ Այդ մարդը Բիսմարկն եր։ 1863 թվի լեհական ապստամբության ժամանակ նա—հակառակ Ավստրիայի, Ֆրանսիայի ու Անգլիայի—դերասանական դիրք ընդունելով՝ Ռուսաստանի կողմն անցավ և ամեն ինչ արեց, վորպեսզի ոգնի նրան հաղթություն տանելու։ Այս բանն ապահովեց նրան ցարի հրաժարումը նրա քաղաքականության սովորական գծից Շլեզվիգ-Հոլշտայնի հարցում. 1864 թվին ցարի համաձայնությամբ այդ հերցոգությունները խլվեցին Դանիայից։ Իսկ այնուհետև յեկավ ավստրո-պրուսական պատերազմը. այս դեպքում ել նորից ուրախություն պատճառեցին ցարին յերկրորդ անգամ քթթակելով Ավստրիային և ավելացնելով Պրուսիայի հզորությունը, վորը միակ հավատարիմ, նույնիսկ 1859—1860 թ. թ. քացիներից հետո դեռ ևս հավատարիմ, վասալն եր։ 1866 թվի պատերազմի հետևանքը յեղավ ֆրանս-պրուսական պատերազմը, և ցարը կրկին անցավ իր պրուսական «ղոչաղ քեռու» կողմը. Նա անմիջական սպառնալիքի տակ պահեց Ավստրիային և այդպիսով Ֆրանսիային զրկեց միակ դաշնակցից, վորը կարող եր նրան լիակատար պարտությունից փրկել։ Բայց պրուսական զենքի արագ հաղթությունների շնորհիվ Ալեքսանդրը 1870 թվին, ճիշտ այնպես, ինչպես և Լուի Բոնապարտը 1866 թվին, հիմարի դրության մեջ մնաց» («Ռուսական ցարիզմի արտաքին քաղաքականությունը»)։— Բիսմարկի միջազգային քաղաքականության ամենախոշոր հաջողությունը հանդիսացող ֆրանս-պրուսական պատերազմի պատմական նշանակության մասին Լենինը գրում եր. «Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Գերմանիան կողոպտեց Ֆրանսիային, բայց այդ բանը չի փոխում այս պատերազմի հիմնական պատմական նշանակությունը, վոր գերմանական ժողովրդի տասնյակ միլիոնավոր անդամներին ազատեց ֆեոդալական ցաքուցրիվությունից և յերկու բռնակալների՝ ռուսական ցարի ու Նապոլեոն III-ի՝ ճնշումից» («Социализм и война». 1915 թ., հատոր XVIII, եջ 194)։

[1] Խաղաղության ու ազատության միջազգային լիգան—60-ական ու 70-ական թվականներին գոյություն ունեցող բուրժուական դեմոկրատների ու պացիֆիստների, ազատ առևտրի կողմնակիցների միջազգային կազմակերպություն եր։ 1867 թ. Ժընեվում հիմնված այդ լիգայի դեմ՝ I Ինտերնացիոնալը Մարքսի պնդումով ու ղեկավարությամբ վճռական պայքար մղեց։ Լիգայի լոզունգներն եյին՝ «Ժողովուրդների ընդհանրական յեղբայրությունը»—«Յեվրոպայի Միացյալ պետությունները» (տես Ենգելսի կարծիքը լիգայի մասին՝ սույն հրատարակության հավելվածներում—Ենգելսի նամակը Ա. Բեբելին 1875 թ. մարտի 18—28)։

ծառայի վորպես համարժեք բանվոր դասակարգերի միջազգային յեղբայրացման՝ նրանց միասնորեն մղվող կռվի մեջ ընդդեմ տիրող դասակարգերի և նրանց կառավարությունների։ Ուրեմն՝ գերմանական բանվոր դասակարգի *միջազգային ֆունկցիաների* մասին վոչ մի խոսք։ Յեվ ահա այսպիսի լոզունգ պիտի հակադրի նա իր սեփական, բոլոր մյուս յերկրների բուրժուա դասակարգերի հետ իր դեմ արդեն յեղբայրացած բուրժուազիային և պարոն Բիսմարկի միջազգային դավադիր քաղաքականությանը[1]։

Փաստորեն ծրագրի միջազգային դավանանքը *դեռևս անսահմանորեն* ցածր է գտնվում ազատ առևտրի կուսակցության դավանանքից։ Այդ կուսակցությունը նույնպես պնդում է, թե իր ձգտումների հետևանքը պիտի լինի «ժողովուրդների միջազգային յեղբայրացումը»։ Բայց նա համենայն դեպս մի բան էլ *անում է*՝ առևտուրը միջազգային դարձնելու համար, և բոլորովին չի բավականանում այն գիտակցությամբ, թե բոլոր ժողովուրդներն իրենց տանն զբաղվում են առևտրով։

Բանվոր դասակարգերի միջազգային գործունեությունը վոչ մի կերպ չի կախված «*Բանվորների միջազգային ասոցիացիայի*» գոյությունից։ Դա միայն առաջին փորձն էր՝ մի կենտրոնական որգան ստեղծելու այդ գործունեության համար։ Այդ փորձն ունեցավ մնայուն հետևանք՝ իր տված խթանի շնորհիվ, բայց Փարիզի կոմունայի անկումից հետո անկարելի յեր այլևս շարունակել այն իր *առաջին պատմական* ձևով։

Բիսմարկի «Norddeutsche»-ն[2] կատարելապես իրավացի յեր,

---

[1] Փարիզի կոմունայի անկումից հետո՝ Բիսմարկը 1871—1872 թ. թ. փորձեց ֆորմալ դաշնագիր կնքել Գերմանիայի, Ավստրիայի ու Ռուսաստանի միջև՝ միացյալ ուժերով հեղափոխական շարժումն ընդհանրապես և I Ինտերնացիոնալը մասնավորապես հալածանքի յենթարկելու համար։ Թեև ֆորմալ դաշնագիր չկնքվեց, սակայն մեծ պետությունների կառավարական որգանները գործնականում այն ժամանակ արդեն միահամուռ եյին գործում հեղափոխականներին հալածելու խնդրում։

[2] Բիսմարկի որգան «Norddeutsche Allgemeine Zeitung»-ում («Նորդդոյչե ալգեմայնե ցայտունգ») 1875 թ. մարտի 20-ին (№ 67) առաջնորդող եր տպված սոցիալ-դեմոկրատական ծրագրի նախագծի մասին։ Նրա մեջ հատուկ ուշադրություն եր դարձրած ծրագրի 5-րդ կետի վրա, վորի մասին խոսում է այստեղ Մարքսը, և նրա առթիվ գրված եր, թե սոցիալ-դեմոկրատիան, ըստ յերևույթին, «ձգտում է, գոնե մասամբ, ազատվել Ինտերնացիոնալի ազդեցությունից», թե «սոցիալ-դեմոկրատական ագիտացիան շատ տեսակետներից ավելի զգույշ է դարձել» և թե՝ «սոցիալ-դեմոկրատիան հրաժարվում է Ինտերնացիոնալից»։

յերը նա՝ ի բավականություն իր տիրոջ՝ ազդարարում եր, թե գերմանական բանվորական կուսակցությունը նոր ծրագրի մեջ հրաժարվել ե ինտերնացիոնալիզմից [1]։

---

1 Ենգելսը, վորը Գոթայի ծրագրի «միջազգայնությունը» ճիշտ այնպես եր գնահատում, ինչպես Մարքսը, 1875 թ. ոգոստոսի 13-ին գրում եր Ֆ. Բեկքերին. «Գերմանիայում... լասսալականների հետ միանալուց հետո վերջնականապես կտրվեց առանց այն էլ թույլ կապն Ինտերնացիոնալի հետ»։

II

«Յելնելով այս սկզբունքներից՝ Գերմանական բանվորական կուսակցությունն ամեն օրինական միջոցներով ձգտում է ազատ պետության և... սոցիալիստական հասարակության. աշխատավարձի սիստեմի վերացման՝ իր յերկաթե օրենքի հետ միասին և... ամեն ձևի շահագործման վերացման. սոցիալական և քաղաքական ամեն անհավասարության վոչնչացման»։

«Ազատ» պետությանը յես կանդրադառնամ հետո։

Ուրեմն՝ Գերմանական բանվորական կուսակցությունն ապագայում հավատալու յե Լասսալի «աշխատավարձի յերկաթե օրենքին»[1]։ Վորպեսզի այն չկորչի, անմտորեն խոսում են «աշխատավարձի սիստեմի» (պետք է լիներ՝ վարձու աշխատանքի սիստեմի) վերացման մասին՝ «աշխատավարձի յերկաթե օրենքի» հետ միասին։ Յեթե յես վերացնում եմ վարձու աշխատանքը, ապա բնականաբար վերացնում եմ նաև նրա օրենքները, լինեն դրանք «յերկաթե» կամ սպունգե։ Բայց Լասսալի պայքարը վարձու աշխատանքի դեմ պտտվում է համարյա միայն այդ այսպես կոչված օրենքի շուրջը։ Յեվ այդ պատճառով, ապացուցելու համար, թե Լասսալի աղանդը հաղթանակել է, պետք է «աշխատավարձի սիստեմը» վերացվի «աշխատավարձի յերկաթե օրենքի» հետ միասին, այլ վոչ թե առանց դրան։

Հայտնի յե, վոր «աշխատավարձի յերկաթե օրենք» դարձ-

[1] Լասսալը հետևյալ կերպով եր ձևակերպում այդ «օրենքը». «Տնտեսական յերկաթե օրենքը, վոր վորոշում է աշխատավարձը ներկա պայմաններում, աշխատուժի առաջարկի ու պահանջարկի տիրապետության ժամանակ, հետևյալն է. միջին աշխատավարձը շարունակ կրճատվում է մինչև ապրուստի անհրաժեշտ մինիմումը, վոր հարկավոր է գոյության պահպանման ու բազմացման համար» («Offenes Antwortschreiben an das Zentralkomitee zur Berufung eines allgemeinen deutschen Arbeiterkongresses zu Leipzig». Ցյուրիխ. 1863 թ.)։ Տե՛ս Էնգելսի քննադատությունը 1875 թ. մարտի 18-ին Բեբելին գրած նամակում (սույն հրատարակության հավելվածներում)։

վածի մեջ Լասսալին պատկանում է վոչ այլ ինչ, բայց յեթե Գյոթեյի «ewigen, ehernen grossen Gesetzen» («հավիտենական, յերկաթե մեծ օրենքներից») փոխ առած «յերկաթե» բառը: «Ehr-kapb» բառը մի նշան է, վորով ուղղափառները ճանաչում են իրար: Իսկ յեթե վերցնում եմ օրենքը Լասսալի կնիքով և, հետևաբար, Լասսալի իմաստով, ապա պետք է վերցնեմ նաև նրա հիմնավորումը: Ի՞նչ է նշանակում այն: Ինչպես արդեն ցույց է տվել Լանգեն[1] Լասսալի մահվանից քիչ հետո, դա (հենց իր՝ Լանգեյի քարոզած) Մալթուսի[2] բնակչության թեորիան է: Իսկ յե-

---

[1] Ֆ. Ա. Լանգե (1828—1875)—գերմանական գիտնական, փիլիսոփա-իդեալիստ, մանր-բուրժուական-դեմոկրատական հրապարակախոս, սոցիալ-ռեֆորմիստական բնույթ ունեցող «Բանվորական հարցը, նրա նշանակությունը ներկայի և ապագայի համար» գրքի հեղինակ (առաջին հրատարակությունը 1865 թվին, 2-րդ հրատարակությունը 1870 թվին): «Լանգեն,—գրում էր նրա մասին Մարքսը Կուգելմանին ուղղած նամակում 1870 թ. հունիսի 27-ին,—Բանվորական հարցը և այլն վերնագրով գրքում (2-րդ հրատարակություն) ինձ մեծ գովասանքների յե արժանացնում, բայց նրա համար միայն, վորպեսզի ե՛լ ավելի բարձրացնի ինքն իրեն,—և ահա թե ինչ բանի համար: Պարոն Լանգեն մեծ հայտնագործություն է արել: Ամբողջ պատմությունը պետք է բնության մի մեծ օրենքի յենթարկել: Այդ օրենքը «struggle for life»—«գոյության կռիվ» (Դարվինի արտահայտությունը այս դեպքի համար կիրառելով՝ հասարակ ֆրազ է) ֆրազն է, իսկ այդ ֆրազի բովանդակությունը Մալթուսի օրենքն է ազգաբնակության կամ, ավելի շուտ, գերբնակչության մասին: Այսպիսով, փոխանակ վերլուծելու «struggle for life»-ն, ինչպես այն արտահայտվում է պատմականորեն հասարակության վորոշ տարբեր ձևերի մեջ, գործը միայն այն բանին է վերածվում, վորպեսզի ամեն մի կոնկրետ պայքար համաձայնեցվի «struggle for life» ֆրազին. իսկ այս ֆրազը—մալթուսյան ֆրազին ազգաբնակության մասին: Չի կարելի չխոստովանել, վոր այս մի շատ խորը մեթոդ է փքուն, գիտական ձևացող, ամբարտավան տգիտության ու մտքի ծուլության համար»: Մալթուսյան «օրենքի» մասին տե՛ս հետևյալ ծանոթագրությունը:

[2] Թոմաս Ռոբերտ Մալթուս (1766—1834)—անգլիական տնտեսագետ. իր «Ազգաբնակության օրենքի փորձ» (1798) վերնագրով գրքում այն միտքն էր զարգացնում, թե գոյություն ունի ազգաբնակության անփոփոխ մի օրենք, ըստ վորի բնակչությունն ավելի արագ (յերկրաչափական պրոգրեսիայով—1, 2, 4, 8, 16 ...) է աճում, քան գոյության միջոցները (վերջիններիս արտադրությունն աճում է թվաբանական պրոգրեսիայով—1, 2, 3, 4, 5 ...): Հետևաբար, ըստ Մալթուսի, թշվառության պատճառը մարդկանց բազմացման անսահման ձգտման ու գոյության միջոցների սահմանափակ աճման միջև յեղած բնական հակասությունն է: Մարքսը, վոր Մալթուսի գիրքը պասկվիլ անվանեց մարդկային ցեղի մասին, ցույց տվեց Մալթուսի այդ «օրենքի» անհեթեթությունը և ապացուցեց, վոր արտադրության ամեն մի առանձին պատմական յեղանակին իրականում հատուկ են բնակչության իր առանձին, պատմական նշանակություն ունեցող օրենքները» («Կապիտալ», հատոր I,

Թե այդ թեորիան ճիշտ է, ապա ուրեմն չենք կարող այդ օրենքը վերացնել, եթե նույնիսկ հարյուր անգամ վերացնելու լինենք վարձու աշխատանքը, որովհետև այդ դեպքում օրենքին ենթարկվում է ոչ միայն վարձու աշխատանքի սիստեմը, այլև յուրաքանչյուր հասարակական սիստեմ։ Հենց այդ թեորիայի վրա հենված՝ հիսուն և ավելի տարուց ի վեր տնտեսագետներն ապացուցում են, թե սոցիալիզմը ոչ թե կարող է վերացնել բնությամբ պայմանավորված թշվառությունը, այլ միայն ընդհանրացնել, հավասարապես տարածելով այն ամբողջ հասարակության վրա։

Բայց այդ բոլորը գլխավորը չէ։ Միանգամայն զանց առնելով օրենքի լասսալյան սխալ ըմբռնումը, իսկապես զայրացուցիչ հետադարձը հետևյալն է.

Լասսալի մահվանից հետո[1] սկսել է մտնել մեր կուսակցության մեջ այն գիտական հայացքը աշխատավարձի վերաբերմամբ, համաձայն որի աշխատավարձն այն չէ, ինչ որ նա թվում է, այսինքն՝ աշխատանքի արժեքը կամ գինը, այլ աշխատուժի արժեքի կամ գնի միայն քողարկված ձևն է։ Դրանով մի անգամ ընդմիշտ դեն է գցվել աշխատավարձի ամբողջ մինչայժմյան բուրժուական ըմբռնումը, ինչպես նաև դրա դեմ մինչև օրս ուղղված քննադատությունը, և պարզ կացուցվել, որ վարձու բանվորը սոսկ թույլտվություն ունի աշխատելու իր սեփական կյանքի, այսինքն ապրելու համար միայն այն դեպքում, եթե նա որոշ ժամանակ ձրիաբար աշխատում է կապիտալիստի (հետևաբար, նրա հետ միասին հավելյալ արժեքը լափողների) համար. որ ամբողջ կապիտալիստական արտադրասիստեմը ձգտում է երկարացնել այդ ձրի աշխատանքը՝ աշխատօրվա ընդարձակման կամ արտադրողականության զարգացման, այսինքն աշխատուժի լարվածության բարձրացման միջոցով, և այլն. որ, հետևաբար, վարձու աշխատանքի սիստեմը ստրկության մի սիստեմ է, այն էլ այնպիսի ստրկության, որն այնքան ավելի դաժան է դառնում, որքան ավելի են զարգանում աշխատանքի հասարակական արտադրողական ուժերը, անկախ նրանից՝ լավ, թե վատ է վարձատրվում բանվորը[2]։ Եվ ահա, երբ այդ ըմբռնումն ավելի

գլ. 23, § 3։ Նույն տեղում §§ 2—3 տես Մալթուսի թեորիայի քննադատությունը և բնակչության՝ արտադրության կապիտալիստական եղանակին հատուկ օրենքի շարադրանքը)։

[1] Լասսալն սպանվեց մենամարտում 1864 թվի սեպտեմբերին։

[2] Ահա թե ինչ է գրում Էնգելսը կապիտալիստական վարձու ստրկու-

ու ավելի յեն խորանում մեր կուսակցության մեջ, մարդիկ վերադառնում են Լասսալի դոգմաներին, թեև այժմ պետք է իմանային, որ Լասսալը չգիտեր, թե ինչ է աշխատավարձը, այլ, հետևելով բուրժուական տնտեսագետներին, յերևույթականն ընդունում եր եյականի տեղ։

Այդ միևնույնն է, յեթե ասեյինք, թե ստրկության գաղտնիքը վերջապես գտած և ապստամբության դիմած ստրուկներից մեկը, որ տակավին տոգորված է հնացած հասկացողություններով, գրեր ապստամբների ծրագրում.—ստրկությունը պետք է վերացվի, որովհետև ստրկության սիստեմի պայմաններում ստրուկների սնուցումը չի՛ կարող մի որոշ, չափազանց ցածր մաքսիմումից բարձրանալ։

Այն իրողությունը միայն, որ մեր կուսակցության ներկայացուցիչներն ընդունակ են յեղել մի այդպիսի սոսկալի հանցափորձ կատարելու կուսակցական մասսայի մեջ տարածված հաս-

---

թյան մասին «Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում» գրքում. «Իրավաբանորեն և փաստորեն բանվոր դասակարգն ունեոր դասակարգի, բուրժուազիայի, ստրուկն է. այն աստիճան նրա ստրուկն է, որ վաճառվում է որպես ապրանք, որի գինը, ինչպես և ամեն մի այլ ապրանքինը, բարձրանում է ու իջնում։ Յեթե բանվորների պահանջարկը բարձրանում է, նրանց գինն էլ բարձրանում է. իսկ յեթե նրանց վերաբերմամբ պահանջարկը նվազում է, նրանց գինն էլ նվազում է. յեթե պահանջարկը նրանց վերաբերմամբ այնքան է նվազում, որ բանվորների որոշ թիվ վաճառք չի գտնում, «մնում է պահեստում», այդ դեպքում նրանք ստիպված են իբրև աղքատի պաշար մնալ, իսկ որովհետև դրանով ապրել չի լինի, ուստի նրանք քաղցից մեռնում են... Ամբողջ տարբերությունը հին բացահայտ ստրկությունից այն է, որ արդի բանվորն ազատ է թվում, որովհետև նա վաճառվում է վո՛չ թե միանգամ ընդմիշտ, այլ մաս առ մաս, մի օրով, մի շաբաթով, տարով, և որովհետև վոչ թե մի սեփականատերը վաճառում է այն մյուսին, այլ նա ինքն է ստիպված վաճառելու իրեն, քանի որ նա մի մարդու ստրուկը չէ, այլ ամբողջ ունեոր դասակարգի։ Նրա համար գործի եյությունը չի փոխվում, և յեթե ազատության այս ցնորքը պետք է նրան որոշ ռեալական ազատություն էլ տա, ապա, մյուս կողմից, նրա այժմյան դրությունն այն անոգտավետ կողմն ունի, որ վոչ վոք նրա համար գոյության միջոցներ չի յերաշխավորում և որ բուրժուազիան կարող է ամեն րոպե զրկել նրան գործից ու սովամահության դատապարտել, յեթե նա կարիք չունի վոչ նրա աշխատանքի, վոչ էլ նրա գոյության։ Իսկ բուրժուազիայի համար իրերի ներկա դրությունն անհամեմատ ավելի օգտավետ է, քան թե հին ստրկությունը. բուրժուազիան կարող է, յերբ ուզենա, հեռացնել իր բանվորներին, չկորցնելով իր ներդրած կապիտալը, և առհասարակ աշխատանքը նրան շատ ավելի եժան է նստում, քան թե կնստեր ստրուկների աշխատանքը, ինչպես այդ, ի մխիթարություն նրա, հաշվել է Ադամ Սմիթը» (1928 թ. հրատարակություն, եջ 129—130)։

կացողության դեմ, չի՞ ապացուցում միայն, թե ինչպիսի՜ վոճրագործ թեթևամտությամբ, ինչպե՜ս անխղճմտանք կերպով են նրանք ձեռնարկել կոմպրոմիսային ծրագիր կազմելուն։

Պարագրաֆի վերջին անորոշ ֆրազը—«ամեն սոցիալական և քաղաքական անհավասարության վերացումն» բառերի փոխարեն ասվելու յեր, թե դասակարգային խտրությունների վոչնչացմամբ ինքն իրեն կանհետանա նաև նրանցից ծագող ամեն սոցիալական և քաղաքական անհավասարությունը։

III

«**Սոցիալական հարցի լուծմանը ուղի հարթելու համար՝** Գերմանական բանվորական կուսակցությունը պահանջում է արտադրողական ընկերությունների հիմնում, պետության օժանդակությամբ և **աշխատավոր ժողովրդի** դեմոկրատական հսկողությամբ։ Արտադրողական ընկերությունները թե ինդուստրիայի և թե հողագործության մեջ այնպիսի ծավալով են **կյանքի կոչվելու, որ նրանցից ամբողջական աշխատանքի սոցիալիստական կազմակերպություն առաջանա**»։

Լասսալյան «աշխատավարձի երկաթե օրենքին» հետևում է մարգարեյի փրկարար միջոցը։ «Ուղին հարթվում է» արժանավայել կերպով։ Գոյություն ունեցող դասակարգային կռվի փոխարեն՝ առաջադրվում է լրագրագրչակի ֆրազը՝ «սոցիալական **հարցը**», որի «**լուծման**» «ուղին հարթվում է»։ «Ամբողջական աշխատանքի սոցիալիստական կազմակերպությունն» «առաջանում է» ոչ թե հասարակության հեղափոխական փոխակերպության պրոցեսից, այլ «պետության օժանդակությունից», որ մատուցում է պետությունը արտադրողական ընկերություններին. իսկ այդ վերջինները «**կյանքի յեն կոչվում**» ոչ թե բանվորների, այլ պետության կողմից։ Սա միանգամայն արժանի յե Լասսալի երևակայությանը, թե պետության դրամական օգնությամբ կարելի յե կառուցել մի նոր հասարակություն, ինչպես մի նոր երկաթուղի։

«Պետության օժանդակությունը», ամոթխածության մի փոքր մնացորդից դրդված, դրվում է... «աշխատավոր ժողովրդի» դեմոկրատական հսկողության տակ։

Նախ՝ «աշխատավոր ժողովուրդն» իր մեծամասնությամբ բաղկացած է Գերմանիայում գյուղացիներից, և ոչ թե պրոլետարներից։

«Յերկրորդ՝ «դեմոկրատական» բառը գերմաներեն նշանակում է՝ «volksherrschaftlich» (ժողովրդապետական)։ Իսկ ինչ է նշանա-

կում «աշխատավոր ժողովրդի ժողովրդապետական հսկողությունը»։ Այն էլ մի այնպիսի աշխատավոր ժողովուրդ, որը պետությանը ներկայացրած իր այս պահանջների միջոցով արտահայտում է իր լիակատար գիտակցությունը, թե ինքը ո՛չ տիրապետում է, ո՛չ էլ հասունացած է տիրապետելու համար։

Այստեղ ավելորդ է կանգ առնել այն գեղատեսիլ քննադատության վրա, որ տվել էր Լուի Ֆիլիպի[1] օրով Բյուշեն[2] ֆրանսիական սոցիալիստներին հակադիր և որն ընդունված էր «Atelier»-ի[3] հետադիմական բանվորների կողմից։ Գլխավոր դըժբախտությունն այն չէ, որ այդ յուրահատուկ հրաշագործ բուժամիջոցը մտցված է ծրագրի մեջ, այլ այն, որ դասակարգային շարժման տեսակետից մարդիկ ընդհանրապես հետ են գնում դեպի հերձվածողական շարժման տեսակետը։

Որ բանվորներն ուզում են ընկերակցական արտադրության պայմաններ ստեղծել սոցիալական մասշտաբով, այն էլ ամենից առաջ իրենց մոտ՝ ազգային շրջանակներում, դա հենց ցույց է տալիս, որ նրանք աշխատում են ներկա արտադրապայմանները հեղաշրջելու ուղղությամբ և դա ոչ մի առնչություն չունի պետության օժանդակությամբ կոոպերատիվ ընկերություններ հիմնելու հետ։ Իսկ ինչ վերաբերում է այժմյան կոոպերատիվ ընկերություններին, ապա դրանք ունեն միայն այնքան արժեք, որքան հենց բանվորների անկախ ստեղծագործություններ են և չեն հովանավորվում ո՛չ կառավարությունների և ո՛չ էլ բուրժուաների կողմից։

---

[1] Լուի-Ֆիլիպ (1773—1850)—Ֆրանսիայի թագավորը «հուլիսյան միապետության» շրջանում։ 1830 թվի հուլիսյան հեղափոխությունը նրան գահ բարձրացրեց, 1848 թվի փետրվարյան հեղափոխությունը տապալեց նրան։

[2] Բյուշե (1796—1865)—ֆրանսիական պատմաբան ու հրապարակախոս, անցյալ դարի 40-ական թվականներին առաջնորդ ֆրանսիական կաթոլիկական «սոցիալիզմի», որն այն ժամանակ ուժեղացող հեղափոխական բանվորական շարժման դեմ պահանջ էր առաջադրում պետության օժանդակությամբ արտադրական կոոպերատիվներ ստեղծել։ Նրա մասին տե՛ս նաև Էնգելսի՝ 1875 թվի մարտի 18—28-ին Բեբելին գրած նամակում (սույն հրատարակության հավելվածներում)։

[3] «Atelier» («Արհեստանոց»)—առաջին բանվորական ժուռնալը (ամսագիր) Ֆրանսիայում (Փարիզում), որը գրվում, խմբագրվում և հրատարակվում էր բացառապես բանվորների ձեռքով (1840—1848)։ «Ատելյե»-ի խումբը գտնվում էր Բյուշեյի ռեակցիոն կաթոլիկական սոցիալիզմի ազդեցության տակ։ Քաղաքական տեսակետից՝ նա պաշտպանում էր բուրժուական ռադիկալներին։

IV

Այժմ անցնենք դեմոկրատական հատվածին։

Ա. «Պետության ազատական հիմունքը»։

Նախ՝ ըստ II հատվածի՝ Գերմանական բանվորական կուսակցությունը ձգտում է «ազատ պետության»։

Ազատ պետություն,— ի՞նչ է այդ։

Հավատարիմ հպատակի սահմանափակ գիտակցությունից ազատված բանվորների նպատակը չէ ամենևին՝ ազատ կացուցանել պետությունը։ Գերմանական կայսրության մեջ «պետությունը» համարյա այնչափ «ազատ» է, վորչափ և Ռուսաստանում։ Ազատությունն այն է, վոր պետությունը վերածվի հասարակության վերադաս որգանից նրա միանգամայն ստորադաս որգանի. և հենց այսոր էլ պետական ձևերն ազատ կամ անազատ են այն չափով, ինչ չափով նրանք սահմանափակում են «պետության ազատությունը»։

Գերմանական բանվորական կուսակցությունը,— գոնե այն դեպքում, յեթե ընդունի այդ ծրագիրը,— ցույց կտա, թե վորքան մակերեսորեն է յուրացրել սոցիալիստական գաղափարները. չէ՞ վոր փոխանակ գոյություն ունեցող հասարակությունը (իսկ դա վերաբերում է ամեն մի ապագա հասարակության) ճանաչելու իբրև հիմք գոյություն ունեցող պետության (կամ ապագա հասարակությունը ապագա պետության) համար, ծրագիրն, ընդհակառակը, դիտում է պետությունն իբրև մի ինքնուրույն եյություն, վորն ունի իր սեփական հոգեկան, բարոյական, ազատական հիմքերը։

Յեվ միաժամանակ՝ մերկապարանոց չարաշահումն ծրագրի կողմից «արդի պետություն», «արդի հասարակություն» բառերի, ինչպես նաև էլ ավելի մերկապարանոց թյուրըմբռնումն հենց այն պետության, վորին նա ուղղում է իր պահանջները։

«Արդի հասարակությունը» կապիտալիստական հասարակությունն է, վոր գոյություն ունի բոլոր կուլտուրական յերկրներ-

բում առավել կամ նվազ չափով զերծ միջնադարյան մնացորդներից, առավել կամ նվազ չափով փոխակերպված ամեն մի երկրի ուրույն պատմական զարգացման միջոցով, առավել կամ նվազ չափով զարգացած։ Դրան հակառակ՝ «արդի պետությունը» փոփոխվում է երկրի սահմանների հետ միասին։ Նա այլ է պրուսական-գերմանական կայսրության մեջ, քան Շվեյցարիայում, այլ է Անգլիայում, քան Միացյալ Նահանգներում։ «Արդի պետությունը», հետևաբար, մի ֆիկցիա է։

Սակայն տարբեր կուլտուրական երկրների տարբեր պետությունները, չնայած իրենց ձևերի բազմազանության, ունեն այն ընդհանուրը, որ բոլորն էլ կանգնած են նորագույն բուրժուական հասարակության հողի վրա՝ մեկն ավելի, մյուսը նվազ չափով կապիտալիստորեն զարգացած։ Այդ պատճառով էլ նրանք որոշ էական հատկություններով նման են միմյանց։ Այդ իմաստով է, որ կարելի է խոսել «արդի պետության» մասին, հակադրելով այն ապագայի, երբ կմեռնի նրա այժմյան արմատը՝ բուրժուական հասարակությունը։

Ապա հարց է առաջանում. ինչպիսի՞ հեղաշրջման կենթարկվի պետությունը կոմունիստական հասարակության մեջ։ Այլ խոսքով՝ ինչպիսի՞ հասարակական ֆունկցիաներ կմնան այնտեղ, որոնք նման կլինեն պետության այժմյան ֆունկցիաներին։ Այդ հարցին կարելի է միայն գիտականորեն պատասխանել, և այդ պրոբլեմին չի կարելի նույնիսկ լվի մի ոստյունի չափ մոտենալ, եթե ժողովուրդ բառը պետություն բառին մինչև անգամ հազարավոր ձևերով կապակցվի։

Կապիտալիստական և կոմունիստական հասարակության միջև ընկած է մի ժամանակաշրջան, որի ընթացքում մեկը հեղափոխականորեն վերածվում է մյուսին։ Դրան համապատասխանում է նաև քաղաքական փոխանցման մի շրջան, որի պետությունը չի կարող լինել այլ բան, քան պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրան[1]։

---

[1] «Մինչև այժմ,—գրում էր Լենինը 1916 թ. աշնանը այս թեզիսի առթիվ,—այդ ճշմարտությունն անվիճելի էր սոցիալիստների համար, իսկ նրա մեջ պարունակվում է պետության ճանաչումը ընդհուպ մինչև հաղթող սոցիալիզմի վերաճումը լիակատար կոմունիզմի» («Итоги дискуссии о самоопределении», հատոր XIX, էջ 243)։ Այս ձևակերպման մեջ արդեն պարունակվում է «Պետություն և հեղափոխություն» գրքի ամբողջ V գլխի էությունը, որը մենք տալիս ենք իբրև այս հրատարակության հավելված։—Ռենեգատ Կաուցկին 1922 թվին այսպես «ուղղեց» Մարքսի այդ թեզիսը. «Դեմոկրատական

Ծրագիրը չի զբաղվում ո՛չ վերջինով, ո՛չ էլ կոմունիստական հասարակության ապագա պետականությամբ[1]:

Նրա քաղաքական պահանջները չեն պարունակում մի այլ բան, քան յեթե հանրածանոթ բազմիցս կրկնված դեմոկրատական արտունչներ՝ ընդհանուր ընտրական իրավունք, ուղղակի օրենսդրություն, ժողովրդական իրավունք, ժողովրդական բանակ և այլն[2]: Դրանք պարզ արձագանքներ են բուրժուական ժողովրդական կուսակցության[3], Խաղաղության և Ազատության

պետության զուտ բուրժուական կառավարման և զուտ պրոլետարական կառավարման ժամանակի միջև գտնվում է մեկի՝ մյուսին փոխարկվելու ժամանակաշրջանը: Դրան համապատասխանում է նաև անցման քաղաքական շրջանը, վորի կառավարությունը, իբրև կանոն, կոալիցիոն կառավարության ձև կունենա» («Пролетарская революция и ее программа», 1922 թ., եջ 196): Դրանով Կաուցկին թեորիական կամուրջ էր գցում, վորպեսզի սոցիալ-դեմոկրատիան անցնի դեպի սոցիալ-ֆաշիզմ ու ֆաշիզմ:

[1] «Գոթայի ծրագրի քննադատության» այս հատվածի առթիվ տե՛ս Լենինի դիտողությունը «Մարքսիզմը պետության մասին» տետրակում (այս հրատարակության հավելվածներում):

[2] Հենց «քաղաքական պահանջների» բառացի տեքստը. 1. Ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ընտրական իրավունք բոլոր տղամարդկանց համար, սկսած 21 տարեկան հասակից, պետության ու համայնքի բոլոր ընտրությունների ժամանակ: 2. Անմիջական ժողովրդական օրենսդրություն՝ առաջարկություններ անելու և մերժելու իրավունքով: 3. Ընդհանուր զինապարտություն: Միլիցիա՝ մշտական բանակի փոխարեն: Ժողովրդական ներկայացուցչության վճիռ պատերազմի ու հաշտության հարցի մասին: 4. Բոլոր բացառիկ օրենքների վերացում, այն է՝ մամուլի, միությունների ու ժողովների մասին յեղած օրենքների: 5. Ժողովրդական դատարան: Արդարադատության ձրի կատարում:

[3] Գերմանական ժողովրդական կուսակցությունը, կամ դեմոկրատական կուսակցությունը, հիմնվել է 1865 թվի սեպտեմբերին Դարմշտադտում և վերակազմվել իր Շտուտգարտի համագումարում 1868 թվի սեպտեմբերին: Դա գերմանական մանր ու միջակ պետությունների, գլխավորապես Հարավային Գերմանիայի ռադիկալների, մասամբ նաև հեղափոխականորեն տրամադրված մանր բուրժուազիայի կուսակցությունն էր: Գերմանիան յունկերական միապետական Պրուսիայի գերիշխանության ներքո միացնելու բիսմարկյան քաղաքականությանը այդ կուսակցությունը գերմանական դեմոկրատական հանրապետության սահմանումն էր հակադրում: Սերտ կապակցության մեջ էր Խաղաղության ու ազատության միջազգային լիգայի հետ (տե՛ս եջ 43, ծանոթագր. 1): Ձգտում էր տարածել իր ազդեցությունը բանվորների վրա: Աջակցում էր ամեն տեսակ լուսավորական բանվորական ընկերությունների ստեղծման, ղեկավարող դեր էր կատարում «գերմանական բանվորական ընկերությունների» տարեկան համագերմանական համագումարներում: Նրա սաքսոնական ճյուղը, վորը բաղկացած էր գրեթե բացառապես բանվորական ընկերությունների անդամներից, հենարան էր ծառայում Վ. Լիբկնեխտի ու Ա. Բեբելի համար, վո-

միության: Այդ բոլոր պահանջները, յեթե միայն չեն չափազանցված յերևակայական պատկերացումներով, արդեն իրականացված են: Միայն թե այն պետությունը, վորն իրականացրել է այդպիսիք, չի գտնվում գերմանական կայսրության սահմաններում, այլ Շվեյցարիայում, Միացյալ Նահանգներում և այլն: Այդ տեսակի «ապագայի պետությունը» արդի պետությունն է՝ թեև գերմանական կայսրության «շրջանակից» դուրս գոյություն ունեցող:

Սակայն մի բան է մոռացվել: Վորովհետև Գերմանական բանվորական կուսակցությունը բացահայտորեն հայտարարում է, թե գործում է «արդի ազգային պետության» սահմաններում, ուրեմն՝ իր պետության, պրուսական-գերմանական կայսրության ներսում,—այլապես նրա պահանջները կլինեյին մեծ մասամբ անմիտ, վորովհետև պահանջում ես միայն այն, ինչ չունես,—ուստի նա չպիտի մոռանար ամենագլխավորը, այսինքն այն, վոր բոլոր այդ գեղեցիկ բաները հիմնված են այսպես կոչված ժողովրդական սուվերենիտետի ճանաչման վրա և հետևաբար տեղին են միայն դեմոկրատական հանրապետության մեջ:

Քանի վոր չկա համարձակություն,—իսկ դա խոհեմություն է, վորովհետև պայմաններն զգուշություն են թելադրում,—դեմոկրատական հանրապետություն պահանջելու, ինչպես անում եյին ֆրանսական բանվորական ծրագրերը Լուի Ֆիլիպի և Լուի Նապոլեոնի[1] օրով, ապա պետք չեր դիմել խաբեյական հնարքների, վորոնք վոչ «անկեղծ» են, վոչ էլ արժանավայել,—պահանջելու այնպիսի բաներ, վորոնք իմաստ ունեն միայն դեմոկրատական հանրապետության մեջ, այն էլ պահանջելու մի այնպիսի պետությունից, վորը վոչ այլ ինչ է, բայց յեթե

րոնք այն ժամանակ ագիտացիա եյին մղում «Ժողովրդական կուսակցության» շրջանակներում՝ ինքնուրույն բանվորական կուսակցություն ստեղծելու համար: Այն բանից հետո, յերբ, Մարքսի ու Էնգելսի պահանջով, 1868 թվի սեպտեմբերին Լիբկնեխտն ու Բեբելը գերմանական բանվորական ընկերությունների միության Նյուրնբերգի համագումարում կարողացան այդ միությունը միացնել I Ինտերնացիոնալի հետ, իսկ մի տարի հետո, 1869 թվի օգոստոսին, բանվորական ընկերությունների Այզենախյան համագումարում հիմնվեց սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը,—Ժողովրդական կուսակցությունն արագությամբ կորցրեց բանվորների վրա ունեցած իր ազդեցությունը: Այզենախյանները շարունակում եյին վորոշ կոնտակտ պահպանել նրա ձախ թևի հետ: (Այդ մասին տե՛ս եջ 67, ծանոթագրություն 3):

[1] Խոսքը վերաբերում է Նապոլեոն III-ին (Լուի Բոնապարտ)—ֆրանսական կայսր (1851—1870 թ. թ.):

պառլամենտական ձևերով պարուրված, ֆեոդալական հավելված-ներով խառնված, արդեն բուրժուազիայի ազդեցությանը յեն-թարկված, բյուրոկրատորեն կառուցված, վոստիկանական ուժով պահպանված միլիտարիստական բռնապետություն[1]։ Յեվ այն ե՛լ այս պետությանը դեռ վստահացնել ել, թե կարելի յե նրանից «օրինական միջոցներով» նման բան ձեռք բերել։

Նույնիսկ վուլգար դեմոկրատիան, վոր դեմոկրատական հանրապետության մեջ տեսնում ե յերկնային թագավորության իրականացումը և բոլորովին չի կռահում, թե բուրժուական հա-սարակության հենց այդ վերջին պետական ձևի մեջ ե, վոր դա-սակարգային կռիվը ստանալու յե վճռական վերջավորություն,— մինչև անգամ այդ դեմոկրատիան լեռան մեծությամբ ավելի բարձր ե այն տեսակի դեմոկրատիայից, վորը գտնվում ե վոստիկանո-րեն թույլատրվածի, իսկ տրամաբանորեն անթույլատրելիի սահ-մաններում[2]։

Վոր իսկապես «պետություն» ասելով հասկացվում ե կառա-վարական մեքենա, կամ պետություն, վորչափով վոր նա աշխա-տանքի բաժանման հետևանքով կազմում ե հասարակությունից առանձնացած, մի ինքնուրույն օրգանիզմ, դա ցույց են տալիս արդեն հետևյալ խոսքերը. «Գերմանական բանվորական կու-սակցությունը պահանջում ե վորպես պետության տնտեսական հիմք — միասնական պրոգրեսիվ յեկամտային հարկ և այլն»։ Հար-կերը կառավարական մեքենայի տնտեսական հիմքն են և ուրիշ վոչինչ։ «Ապագայի պետության» մեջ, վոր գոյություն ունի Շվեյ-ցարիայում, այդ պահանջը համարյա թե բավարարված ե։ Յե-կամտային հարկը յենթադրում ե զանազան հասարակական դա-սակարգերի զանազան յեկամտային աղբյուրներ, հետևապես կա-

---

1 «Մարքսը,—գրում եր 1913 թվին Լենինը հոհենցոլլերնյան նոր գեր-մանական կայսրության սահմանադրության այդ բնութագրի մասին,—հարյուր հազար անգամ ավելի խորը գնահատեց գերմանական «սահմանադրության» իս-կական եյությունը, քան թե բուրժուազիայի հարյուրավոր պրոֆեսորներ, տերտերներ ու հրապարակախոսներ, վորոնք գովերգում եյին «իրավական պետությունը»։ Նրանք փորսող եյին տալիս գերմանական ժամկլիխաններին հաջողության ու հաղթանակի առջև։ Նա գնահատում եր քաղաքականության դասակարգային եյությունը, ղեկավարվելով վո՛չ թե դեպքերի տվյալ «կետամա-նով», այլ միջազգային դեմոկրատիայի ու միջազգային բանվորական շարժման ամբողջ փորձով» («Յերկեր», 1913 թ., հատոր XVII, եջ 100)։

2 «Գոթայի ծրագրի քննադատության» այս հատվածի առթիվ տես Լենինի դիտողությունը «Մարքսիզմը պետության մասին» տետրում (այս հրատարակության հավելվածներում)։

պիտալիստական հասարակություն։ Այդ պատճառով էլ ամենևին զարմանալի չէ, որ Լիվերպուլի ֆինանսական ռեֆորմների միության բուրժուաները — Գլադստոնի յեղբոր գլխավորությամբ[1] — առաջադրում են նույն պահանջները, ինչ որ ծրագիրը։

B. Վորպես հոգեկան և բարոյական հիմք պետության համար՝ Գերմանական բանվորական կուսակցությունը պահանջում է.

1. «Ժողովրդական ընդհանուր և հավասար կրթություն պետության ձեռքով։ Դպրոցի ընդհանուր պարտադիր հաճախումն, ձրի ուսում»։

Ժողովրդական հավասար կրթությո՞ւն։ Ի՞նչ են պատկերացնում այդ բառերի տակ։ Կարծում են արդյոք, թե արդի հասարակության մեջ (և միայն դրա մասին է խոսքը) կրթությունը կարող է հավասար լինել բոլոր դասակարգերի համար։ Կամ գուցե ուզում են պահանջել, որ նաև բարձր դասակարգերը բռնադատորեն սահմանափակվեն համեստ կրթությամբ — ժողովրդական դպրոցով, — այն միակով, որ համապատասխանում է վոչ միայն վարձու բանվորների, այլև գյուղացիների տնտեսական դրությանը։

«Դպրոցի ընդհանուր պարտադիր հաճախում։ Ձրի ուսում»։ Առաջինը գոյություն ունի նույնիսկ Գերմանիայում, յերկրորդը՝ Շվեյցարիայում և Միացյալ Նահանգների ժողովրդական դպրոցներում։ Յեթե Միացյալ Նահանգներից մի քանիսում կրթական բարձրագույն հիմնարկությունները նույնպես «ձրի» յեն, ապա դա փաստորեն նշանակում է միայն, որ բարձր դասակարգերը հոգում են իրենց ուսման ծախսերը հարկերի ընդհանուր քանակից։ Անցողակի նշեմ, որ նույնը վերաբերում է նաև Ա. 5-րդ կետում պահանջված «ձրի դատավարությանը»։ Քրեական դատավարությունն ամեն տեղ ձրի յէ։ Քաղաքացիական դատավարությունը պտտվում է համարյա միայն սեփականության վերաբերյալ բողոքների շուրջը, հետևաբար վերաբերում է համարյա բացառապես ունևոր դասակարգերին։ Ի՞նչ է, այդ վերջինները պետք է իրենց դատավարությունը ժողովրդի միջոցների հաշվին կատարեն։

[1] Վ. Գլադստոն (1809—1898)—XIX դարի յերկրորդ կեսի անգլիական լիբերալ մինիստրներից ամենաականավորը։ Նրա յեղբայրը, Ռոբերտսոն Գլադստոնը (1805—1875), խոշոր առևտրական էր Լիվերպուլում, լիբերալ պրոպագանդա յէր մղում պրոգրեսիվ հարկեր մտցնելու ոգտին, վորոնք առաջին հերթին պետք է ծանրանային խոշոր հողատիրության վրա։

Դպրոցներին վերաբերող պարագրաֆը պետք է պահանջեր գոնե տեխնիկական դպրոցներ (թեորետիկական և գործնական)՝ ժողովրդական դպրոցի հետ կապված:

Միանգամայն մերժելի յէ «ժողովրդական կրթությունը պետության ձեռքով»: Մի ընդհանուր օրենքով սահմանել ժողովրդական դպրոցների միջոցները, ուսուցչական կազմի որակավորումը, ուսման ճյուղերը և այլն, և, ինչպես այդ անում են Միացյալ Նահանգներում, պետական վերահսկիչների միջոցով հսկել այդ օրինական հրահանգների կատարման վրա,—դա միանգամայն այլ բան է, քան ժողովրդի դաստիարակությունը պետությանը հանձնելը: Պետք է, ընդհակառակը, հավասարապես բացառել թե կառավարության և թե յեկեղեցու ազդեցությունը դպրոցի վրա: Պրուսական-գերմանական կայսրության մեջ (թող չդիմեն անհույս խուսափանքի, որ իբր թե խոսքը վերաբերում է «ապագայի պետությանը». մենք տեսանք, թե հարցն ինչումն է) ինքը պետությունն, ընդհակառակը, պետք ունի մի շատ խիստ դաստիարակության՝ ժողովրդի միջոցով:

Բայց և այնպես ամբողջ ծրագիրը, չնայած ամբողջ դեմոկրատական զանգահարության, սկզբից մինչև վերջը վարակված է լասալյան հերձվածի հպատակային հավատով դեպի պետությունը կամ,—որ ավելի լավ չէ,—դեմոկրատական հրաշագործության հավատով, կամ էլ ավելի ճիշտ՝ մի կոմպրոմիս է այդ յերկու տեսակի հրաշագործական հավատների միջև, որոնք հավասարապես հեռու յեն սոցիալիզմից:

«Գիտության ազատություն»—ասված է պրուսական սահմանադրության մի պարագրաֆում: Էլ ինչու՞ յէ դա ընկել նաև այստեղ:

«Խղճի ազատությո՛ւն»: Յեթե այժմ, կուլտուրքամպֆի[1] այս

---

[1] «Կուլտուրքամպֆը,—գրում էր Լենինը,—պայքար էր «կուլտուրայի համար», այսինքն՝ Բիսմարկի պայքարը 1870-ական թվականներին կաթոլիկների գերմանական կուսակցության, «կենտրոնի» կուսակցության դեմ՝ կաթոլիկության ոստիկանական հալածանքների յենթարկելու միջոցով: Այդպիսի պայքարով Բիսմարկը միմիայն ամրապնդեց կաթոլիկների մարտնչող կղերականությունը, միմիայն վնասեց իսկական կուլտուրայի գործին, որովհետև առաջին պլանը մղեց կրոնական բաժանումները քաղաքական բաժանումների փոխարեն, բանվոր դասակարգի ու դեմոկրատիայի որոշ շերտերի ուշադրությունը դասակարգային ու հեղափոխական պայքարի կենսական խնդիրներից հեռացրեց դեպի ամենամակերեսային ու բուրժուական-կեղծ հակակղերականությունը» («Об отношении рабочей партии к религии», 1909 թ., հատոր XIV, էջ 69):

դարաշրջանում, մարդիկ ցանկանում են հիշեցնել լիբերալիզմին իր հին նշանաբանները, ապա դա կարելի յեր անել միայն հետեվյալ ձևով—«հնարավորություն տալ ամեն մեկին բավարարելու իր կրոնական, ինչպես նաև մարմնական կարիքները, առանց այն բանի, վոր վոստիկանությունն իր քիթը խոթի»: Բայց Բանվորական կուսակցությունը պետք է այդ պատեհությամբ արտահայտեր իր այն համոզումը, թե բուրժուական «խղճի ազատությունը» վոչ այլ ինչ է, բայց յեթե ամեն հնարավոր տեսակի կրոնական խղճի ազատության հանդուրժումն, իսկ Բանվորական կուսակցությունն, ընդհակառակը, ձգտում է ազատել խիղճը կրոնական սնահավատությունից[1]: Սակայն մարդիկ չեն սիրում «բուրժուական» մակարդակից հեռանալ:

Այժմ յես վերջացնում եմ, վորովհետև ծրագրի մեջ հաջորդող հավելվածը[2] չի կազմում նրա եյական մասը: Այդ պատճառով եվ դիտողություններս կլինեն խիստ կարճ:

2. «Նորմալ աշխատօր»:

Վոչ մի ուրիշ յերկրի բանվորական կուսակցություն չի սահմանափակվել այդպիսի անորոշ պահանջով, այլ միշտ նշել է աշխատօրվա տևողությունը, վոր նա տվյալ պայմաններում նորմալ է համարում:

3. «Կանանց աշխատանքի սահմանափակումն և յերեխաների աշխատանքի արգելումն»:

Աշխատօրվա յենթարկումը նորմայի՝ պետք է արդեն պարունակի իր մեջ կանանց աշխատանքի սահմանափակումն, վորչափով վոր այդ վերջինը վերաբերում է աշխատանքի տևողությանը, ընդհատումներին և այլն: Հակառակ դեպքում այդ սահմանափակումը կարող է նշանակել կանանց աշխատանքի լրիվ արգելումն այնպիսի արտադրաճյուղերում, վորոնք հատկապես

[1] Համա. Լենինի մոտ (1907 թ.). [Բանվորական կուսակցությունը] «կրոնը մասնավոր գործ է համարում պետության վերաբերմամբ, բայց վոչ յերբեք իրեն վերաբերմամբ, վոչ՝ մարքսիզմի վերաբերմամբ, վոչ՝ բանվորական կուսակցության վերաբերմամբ» («Об отношении рабочей партии к религии». 1909 թ., հատոր XIV, եջ 70): Համա. նաև ՀամԿ(բ)Կ ծրագիրը, 13-րդ կետ:

[2] Այդ հավելվածը պարունակում է «պահանջներ բանվոր դասակարգի պաշտպանության համար կապիտալի իշխանության դեմ, գոյություն ունեցող հասարակության շրջանակներում»: Նրանց առաջին կետը, վոր Մարքսը չի շոշափում, պահանջում է «կոալիցիայի ազատություն»:

վնասակար են կանանց օրգանիզմի և հակաբարոյական են կանանց սեռի համար։ Յեթե այդ եյին յենթադրում, ապա այդպես էլ պիտի ասեյին։

«Յերեխաների աշխատանքի արգելումը»։ Այստեղ բացարձակորեն անհրաժեշտ էր մատնանշել տարիքի սահմանը։

Յերեխաների աշխատանքի ընդհանուր արգելումն անհամատեղելի յե խոշոր ինդուստրիայի գոյության հետ և այդ պատճառով էլ դատարկ ու բարի բաղձանք է միայն։

Դրա գործադրությունը,—յեթե հնարավոր լիներ,—կլիներ ռեակցիոն քայլ, վորովհետև յերեխաների աշխատաժամանակն ըստ իրենց տարիքի խստիվ կանոնավորելուն, ինչպես նաև նրանց պաշտպանության այլ միջոցներին զուգընթաց՝ արտադրողական աշխատանքի վաղաժամ կապակցումը կրթության հետ արդի հասարակության փոխակերպության ամենահզոր միջոցներից մեկն է։

4. «Գործարանային, արհեստավորական և տնային արդյունաբերության պետական հսկողություն»։

Պրուսական-գերմանական պետության հանդեպ անպայման պետք էր պահանջել, վոր վերահսկիչները փոփոխելի յեն միայն դատական կարգով, վոր ամեն մի բանվոր կարող է նրանց դատի կանչել պարտականությունների զանցառման պատճառով, վոր նրանց պաշտոնը վարեն բժշկական կրթություն ունեցողները միայն։

5. «Կալանավորների աշխատանքի կանոնավորում»։

Մանր պահանջ ընդհանուր բանվորական ծրագրի մեջ։ Համենայն դեպս պետք էր պարզ արտահայտել, թե քրեական հանցագործների հետ չպիտի վարվել վորպես գազանների, ոգտագործելով նրանց մրցակցային նախանձը և մանավանդ չպիտի զրկել նրանց միակ ուղղիչ միջոցից՝ արտադրողական աշխատանքից։ Դա ամենաքիչն է, վոր պետք էր սպասել սոցիալիստներից։

6. «Մի գործուն որենք՝ պատասխանատվության վերաբերյալ»[1]։

---

[1] Այսինքն՝ պատասխանատվություն բանվորների առողջության ու կյանքի համար դժբախտ դեպքերի ժամանակ և առողջության համար վնասակար ձեռնարկություններում։

Պետք է ասվեր, թե ինչ է հասկացվում պատասխանատվության «գործուն» որենք ասելով։

Հարևանցիորեն նկատեմ, վոր նորմալ աշխատորվան վերաբերող պարագրաֆում մոռացության է տրվել գործարանային որենսդրության այն մասը, վորը վերաբերում է առողջապահական միջոցառումներին և դժբախտ պատահարների դեմ նախազգուշական միջոցներին և այլն։ Պատասխանատվության որենքը գործադրության մեջ է մտնում միայն այն ժամանակ, յերբ այդ կանոնները վոտնահարվում են։

Կարճ՝ այդ հավելվածն էլ աչքի չի ընկնում իր անփույթ խմբագրությամբ։

Dixi et salvavi animam meam[1]:

---

[1] «Ասացի և իմ հոգին փրկեցի», այսինքն՝ կատարեցի իմ պարտքը։

ՄԱՐՔՍԻ ՈՒ ԵՆԳԵԼՍԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԳՈԹԱՅԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ԵՆԳԵԼՍԸ — ԲԵԲԵԼԻՆ

Լոնդոն, 18(28) մարտի 1875 թ.

Սիրելի Բեբել[1].

Փետրվար 23-ի Ձեր նամակն ստացել եմ և ուրախ եմ, վոր ֆիզիկապես այնքան լավ եք զգում Ձեզ։

Դուք հարցնում եք ինձ, թե մենք ինչ կարծիք ունենք միացման պատմության մասին։ Դժբախտաբար մեզ պատահել է նույնը, ինչ Ձեզ։ Վո՛չ Լիբկնեխտը, վո՛չ էլ ուրիշ մեկը մեզ վորևե տեղեկություն չի տվել, և այդ պատճառով մենք էլ գիտենք միայն այն, ինչ թերթերում կա. իսկ դրանցում վոչինչ չկար, մինչև վոր, մոտավորապես 8 օր առաջ, ծրագրի նախագիծը հասավ։ Վերջինս, համենայն դեպս, մեզ քիչ զարմանք չպատճառեց։

Մեր կուսակցությունը լասսալյաններին այնքան հաճախ ձեռք է մեկնել հաշտության, կամ գոնե՝ համաձայնության համար և այնքան հաճախ ու այնքան հուժ կերպով հետ է մղվել

---

[1] *Ավգուստ Բեբել (1840—1913)—XIX դարի յերկրորդ կեսի և XX դարի սկզբի միջազգային բանվորական շարժման ականավորագույն ներկայացուցիչ, գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ու II Ինտերնացիոնալի հիմնադիրներից ու առաջնորդներից մեկը։ Զբաղմունքով—բանվոր-տոկար։ Գործելով «դասակարգային պրոլետարական կազմ ունեցող մասսայական սոցիալիստական կուսակցությունների կազմավորման ու հասունացման շրջանում» (Լենին), Բեբելը, Մարքսի ու Ենգելսի ուժեղ ազդեցության տակ, վորոնք պաշտպանում եյին նրան և քննադատում նրա թույլ տված ոպորտունիստական բնույթի սկզբունքային ու տակտիկական սխալները, կարողացավ իսկական մասսայական բանվորական կուսակցության հիմք դնել։ Ենգելսի մահից հետո (1895 թ.), իմպերիալիստական դարաշրջանի պայմաններում, Բեբելն այլևս հեղափոխական-պրոլետարական առաջնորդի բարձրության վրա չեր կանգնած։ Ճիշտ է, նա կտրուկ կերպով հանդես յեկավ բերնշտայնականության—բացահայտ ոպորտունիզմի դեմ, բայց իրականում հարմարվում եր գերմանական սոցիալ-դեմոկրատիայի (և ամբողջ II Ինտերնացիոնալի) մեջ աճած ոպորտունիզմին։ Նրա ցենտրիզմն արտահայտվեց նաև նրա վերաբերմունքի մեջ դեպի բոլշևիզմը, Կաուցկու և ուրիշների հետ միասին նրա կատարած փորձերի մեջ՝ բոլշևիզմը լուծել մենշևիզմի մեջ։*

Հազենկլևվերների, Հասսելմանների և Տյոլկեների[1] կողմից, որ դրանից ամեն մի յերեխա պետք է յեզրակացներ հետևյալը. յեթե հիմա այդ պարոններն իրենք են գալիս և հաշտություն խնդրում, ապա նրանք պետք է մի շատ մեծ դժվարության մեջ գտնվելիս լինեն։ Սակայն այդ մարդկանց հանրածանոթ բնավորությունը նկատի ունենալով, մեր պարտականությունն է օգտագործել այդ դժվարին կացությունը՝ ամեն հնարավոր յերաշխիք ձեռք բերելու համար, վորպեսզի այդ մարդիկ մեր կուսակցության հաշվին նորից չամրացնեն իրենց խախտված դիրքը բանվորների հասարակական կարծիքի մեջ։ Նրանց պետք եր ընդունել չափազանց սառն ու կասկածանքով, միացումը կապել նրանց այն պատրաստակամության աստիճանի հետ, վորով նրանք համաձայն կլինեյին թողնելու իրենց աղանդավորական նշանաբաններն ու իրենց պետական օժանդակությունը և հիմնականում ընդունելու 1869 թվի այզենախյան ծրագիրը[2] կամ ներկա ժամենտին համարմարեցրած նրա բարեփոխված հրատարակությունը։ Մեր կուսակցությունը թեորիական տեսակետից,—այսինքն նրանում, ինչ վճռական նշանակություն ունի ծրագրի համար,—բացարձակորեն վոչինչ չունի սովորելու լասսալյաններից. վերջիններս, սակայն, կարող են սովորել նրանից։ Միացման առաջին պայմանն եր, վոր նրանք դադարեյին հերձվածողներ, լասսալյաններ լինելուց, վոր նրանք, այդպիսով, առաջին հերթին յեթե վոչ ամբողջովին թողնեյին պետական օժանդակության ամենաբուժիչ միջոցը, համենայն դեպս ընդունեյին այն վորպես մի ստորադաս անցողիկ միջոցառում, ի շարս շատ ուրիշ հնարավոր միջոցների։ Ծրագրի նախագիծը ցույց է տալիս, վոր մերոնք լասսալյան

---

[1] Վիլհելմ Հազենկլևեր, Վիլհելմ Հասսելման և Վիլհելմ Տյոլկե—լասսալյան կուսակցության ամենաականավոր առաջնորդներն այդ դարաշրջանում։ Առաջինը—1871—1875 թ. թ. կուսակցության նախագահը. այզենախյանների հետ միանալուց հետո՝ աչքի ընկնող կուսակցական պոստեր եր գրավում, բայց ղեկավարող դեր արդեն չեր կատարում (մեռել է 1889 թվին)։ Յերկրորդը—սոցիալիստների դեմ ուղղված բացառիկ որենքի ուժի մեջ յեղած ժամանակ անարխիստ դարձավ, 1880 թվին վտարվեց կուսակցությունից։ Տյոլկեն (1817—1893) մինչև իր կյանքի վերջը գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության շարքերում մնաց, բայց խոշոր դեր չեր կատարում միացյալ կուսակցության ղեկավարության մեջ։

[2] Վ. Լիբկնեխտի ու Ա. Բեբելի ղեկավարած՝ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ծրագիրը, կուսակցության, վոր ձևակերպվեց սաքսոնական Այզենախ քաղաքում տեղի ունեցած համագումարում 1869 թվի օգոստոսին։ Տես եջ 55, ծանոթագր. 3։

առաջնորդներից հարյուր անգամ գերազանց լինելով թեորիական տեսակետից, նույնչափ էլ հետ են մնում նրանցից քաղաքական խորամանկությամբ։ «Ազնիվները»[1] կրկին անգամ դաժան կերպով խաբվել են անազնիվներից։

Նախ՝ ընդունված է բարձրահնչուն, բայց պատմականորեն սխալ լասսալյան ֆրազը, թե՝ բանվոր դասակարգի հանդեպ բոլոր մնացած դասակարգերը մի հետադիմական մասսա յեն[2]։ Այդ թեզն իրավացի յե միայն առանձին բացառիկ դեպքերում, օրինակ՝ պրոլետարական հեղափոխության միջոցին, ինչպիսին յեղել է Կոմունան, կամ մի յերկրում, ուր վոչ միայն բուրժուազիան է կերպավորել պետությունն ու հասարակությունը իր նման, այլև նրանից հետո նաև դեմոկրատական մանր բուրժուազիան է այդ կերպարանափոխումը հասցրել իր վերջին հետևություններին։ Յեթե, օրինակ, Գերմանիայում դեմոկրատական մանր բուրժուազիան պատկաներ այդ հետադիմական մասսային, ապա ինչպես կարողացավ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը գնալ նրա հետ, ժողովրդական կուսակցության[3] հետ տարիներ շարունակ ձեռք-ձեռքի տված։ Ինչպես կարող էր «Volksstaat»-ը[4] վերցնել համարյա իր ամբողջ քաղաքական բովանդակությունը մանր-բուրժուական-դեմոկրատական «Frankfurter Zeitung»-ից[5]։ Յեվ ինչպես կարելի յեր մտցնել

---

1 Խոսքը վերաբերում է «այզենախյաններին»։

2 Լասսալյան այս ֆրազի մասին տես վերևում Մարքսի քննադատությունը էջ 38 և էջ 38, ծանոթագր. 3։

3 «Ժողովրդական կուսակցության» մասին տես էջ 55, ծանոթագրություն 3։ Այզենախյանները 1871 թվականից հետո էլ քաղաքական կոնտակտ պահպանեցին «ժողովրդական կուսակցության» ձախ թևի հետ, վոր ղեկավարում էր Ի. Յակոբին, մի հին դեմոկրատ ու հանրապետական, վոր թշնամաբար էր վերաբերվում բիսմարկյան կայսրությանը։ Այդ առթիվ պետք է ասել, վոր Լիբկնեխտը, իբրև այզենախյանների առաջնորդ, չէր կարողանում բավականաչափ ճշգրիտ սահմանագիծ անցկացնել, յերևան հանել մի կողմից՝ մանր-բուրժուական դեմոկրատիայի օպոզիցիոն քաղաքականության և մյուս կողմից՝ պրոլետարական, սոցիալիստական կուսակցության հեղափոխական քաղաքականության միջև յեղած սկզբունքային տարբերությունը։ Մարքսն ու Էնգելսը հաճախ մտրակում էին Լիբկնեխտին՝ այս աջ-օպորտունիստական սխալի համար, վորը ջուր էր ածում լասսալյանների ջրաղացին։

4 «Volksstaat» («Ժողովրդական պետություն») — այզենախյանների կենտրոնական օրգանը 1870—1876 թ. թ.։ Լույս էր տեսնում շաբաթական յերկու անգամ՝ Լայպցիգում։ Նրա խմբագիրը Վիլհելմ Լիբկնեխտն էր։

5 «Frankfurter Zeitung» («Ֆրանկֆուրտի լրագիր») — այն ժամանակ

նույն այդ ծրագրի մեջ վոչ պակաս, քան յոթ այնպիսի պահանջներ, վորոնք ուղղակիորեն և բառացի կերպով համապատասխանում են՝ ժողովրդական կուսակցության և մանր-բուրժուական դեմոկրատիայի ծրագրին։ Յես նկատի ունեմ 1 մինչև 5 և 1 մինչև 2 քաղաքական պահանջները, վորոնց թվում չկա և վոչ մեկը, վոր բուրժուական-դեմոկրատական[1] չլինի։

Յերկրորդ. բանվորական շարժման միջազգայնության սկզբունքը կատարելապես ժխտվում է գործնականորեն ներկա ժամանակվա համար. և դա տեղի յե ունենում այն մարդկանց կողմից, վորոնք հինգ տարի շարունակ և ամենադաժան պայմաններում բարձր են պահել այդ սկզբունքն ամենափառավոր կերպով։ Գերմանական բանվորները դարձել են յեվրոպական շարժման ավանգարդն հենց այն պատճառով, վոր պատերազմի ժամանակ նրանք իսկական միջազգային դիրք եյին բռնել. վոչ մի ուրիշ պրոլետարիատ չեր կարող այդքան լավ պահել իրեն[2]։ Յեվ ահա այժմ նրանք պիտի ժխտեն այդ սկզբունքը, այն էլ մի այնպիսի մոմենտում, յերբ արտասահմանում բանվորներն ամենուրեք այնքան ուժեղ են շեշտում այն, վորքան կառավարությունները ձգտում են ճնշել դրա գործադրության ամեն մի փորձ վորևե կազմակերպության կողմից։ Իսկ ինչ է մնում այնուհետև բանվորական շարժման միջազգայնությունից։ Դժգույն մի հույս,—վոչ անգամ յեվրոպական բանվորների հետագա համագործակցության վրա՝ իրենց ազատագրական պայքարում,—

օպոզիցիոն (ամենօրյա) թերթ եր, հարավային գերմանական մանր-բուրժուական դեմոկրատների օրգանը, վորը «բանվորական հարցում» սոցիալ-ռեֆորմիստական դիրք եր գրավում։

[1] Տես «Նախագիծը»—սույն գրքի հավելվածում։ Մարքսի քննադատությունը—եջ 55 և 56—58։

[2] Գերմանական սոցիալ-դեմոկրատական բանվորները 1870—1871 թ. թ. ֆրանս-պրուսական պատերազմի հենց սկզբից մի շարք բանաձևերով ու կոչերով իրենց թշնամական վերաբերմունքն արտահայտեցին դեպի պատերազմի գերմանական ղեկավարները, իրենց համերաշխությունը ֆրանսական բանվորների հետ, իսկ յերբ պրուսացիները Սեդանի մոտ հաղթություն տարան, պահանջում եյին «Ֆրանսիայի համար պատվավոր հաշտություն», բողոքում եյին Էլզաս-Լոթարինգիայի կցման դեմ։ Ռայխստագում Բեբելն ու Լիբկնեխտը հանդես յեկան կտրուկ բողոքով պատերազմի դեմ և ռազմական վարկերի քվեարկության ժամանակ ձեռնպահ մնացին. Սեդանից հետո ռազմական վարկերի դեմ քվեարկեցին։ (Սրա մասին ավելի մանրամասն տես I Ինտերնացիոնալի Գլխավոր խորհրդի յերկու դիմումների մեջ—ֆրանս-պրուսական պատերազմի առթիվ, վոր գրել է Մարքսը. Կ. Մարքս, Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում 1871 թվին. հայերեն հրատարակություն, Յերևան

վոչ, այլ մի ապագա «ժողովուրդների միջազգային յեղբայրակցության» վրա, խաղաղության լիգայի բուրժուաների «Յեվրոպայի Միացյալ Նահանգների» վրա։

Իհարկե, բոլորովին պետք չէր խոսել Ինտերնացիոնալի՝ վորպես այդպիսինի մասին։ Բայց և այնպես առնվազն պետք չէր նահանջել 1869 թվականի ծրագրից, այլ մոտավորապես պիտի ասվեր այսպես. թեև Գերմանական բանվորական կուսակցությունն ամենից առաջ գործում է իրեն տրված պետական սահմանների ներսում (նա իրավունք չունի յեվրոպական պրոլետարիատի անունից խոսելու, վոչ էլ նամանավանդ վորևէ սխալ հայտարարություն անելու), սակայն նա գիտակցում է իր համերաշխությունը բոլոր յերկրների բանվորների հետ, և միշտ պատրաստ կլինի՝ ինչպես մինչև այժմ, այնպես էլ այսուհետև, կատարելու այդ համերաշխության հետևանքով իր վրա դրված պարտականությունները։ Այդպիսի պարտականություններ գոյություն ունեն նույնիսկ այն ժամանակ, յերբ իրենց չեն հռչակում կամ դիտում «Ինտերնացիոնալի» մի մասը. օրինակ՝ գործադուլի ժամանակ օգնություն և շտրայկբրեխերների դեմ պայքար, հոգատարություն այն մասին, վոր կուսակցական մարմինները տեղյակ պահեն գերմանական բանվորներին արտասահմանյան շարժման վերաբերմամբ, ագիտացիա՝ սպառնացող կամ սկսվող կաբինետային պատերազմների դեմ, գործելակերպ՝ այդպիսի պատերազմների ընթացքում, նման այն վերաբերմունքի,

---

1931 թ., էջ 29—44)։ — 1874 թվին Էնգելսը գրում էր. «Հենց 1870 թվին գերմանական բանվորները մասնակցեցին այն ծանր փորձությանը, վոր ներկայացնում էր պատերազմի բոնապարտական պրովոկացիան և դրա բնական ազդեցությունը — Գերմանիայում առաջացած ընդհանուր ազգային վոգևորությունը։ Գերմանական սոցիալիստական բանվորները մի վայրկյան անգամ սխալանքի մեջ չընկան։ Ազգային շովինիզմի գեթ նշույլը յերևան չեկավ նրանց մեջ։ Հաղթանակի ամենախենթ արբեցության շրջանում սառնասիրտ մնալով՝ նրանք պահանջում էին «արդարացի հաշտություն կնքել Ֆրանսական հանրապետության հետ, առանց վորևէ աննեքսիայի», ընդվորում նույնիսկ պաշարողական դրությունն ի վիճակի չէր նրանց լռեցնելու։ Թե պատերազմի պանծալի համբավը և թե «գերմանական կայսրության մեծաշուք փառքը» արձագանք չէին գտնում այդ բանվորների մեջ. նրանց միակ նպատակը Յեվրոպայի ամբողջ պրոլետարիատի ազատագրման խնդիրն էր։ Անշուշտ կարելի չէ ասել, վոր ուրիշ վոչ մի յերկրի բանվորները մինչև այժմ յենթակա չեն յեղել մի այսպիսի դժվար փորձության, վորին նրանք դիմացան այնքան փայլուն կերպով» («Գերմանական գյուղացիական պատերազմը», 1874 թվի հուլիսի 1-ի առաջաբանը, հայերեն հրատարակություն, Յերևան 1934, էջ 20—21)։

վոր օրինակելի կերպով գործադրվեց 1870 և 1871 թվականներին և այլն։

Երրորդ. մերոնք թույլ են տվել իրենց վզին փաթաթելու լասսալյան «աշխատավարձի յերկաթե օրենքը»[1], հիմնված միանգամայն հնացած տնտեսական հայացքի վրա, ըստ վորի բանվորն իբր թե ստանում է միջին հաշվով միայն աշխատավարձի մինիմումը, այդ էլ այն պատճառով, վոր ըստ Մալթուսի բնակչության թեորիայի՝ միշտ լինում է բանվորների ավելցուկ (այդպես եր Լասսալի փաստարկումը)։ Այնինչ մարքսը «Կապիտալում» մանրամասնորեն ապացուցել է, վոր այն օրենքները, վորոնք կանոնավորում են աշխատավարձը, շատ բարդ են, հանգամանքների համեմատ՝ յերբեմն մեկը, յերբեմն էլ մյուսն է գերակշռում, թե դրանք, հետևաբար, ամենևին յերկաթե չեն, այլ ընդհակառակը, շատ առաձգական, թե վերջապես բոլորովին չի կարելի խնդիրն այդպես մի-յերկու խոսքով վերջացնել, ինչպես յերևակայում եր Լասսալը։ Այդ օրենքի Մալթուսի տված հիմնավորումը, վոր Լասսալն արտագրել է նրանից և Ռիկարդոյից (վերջինիս խարդախելով), այնպես, ինչպես բերված է, օրինակ՝ «Բանվորների ընթերցագրքում», եջ 5, Լասսալի մի ուրիշ գրքույկից[2], հանգամանորեն հերքել է Մարքսն իր «Կապիտալի» այն հատվածում, վորտեղ խոսում է «կապիտալի կուտակման պրոցեսի» մասին։ Այդպես՝ վորդեգրելով լասսալյան «յերկաթե օրենքը», մարդիկ ընդունում են մի սխալ թեզ և դրա սխալ հիմնավորումը։

Չորրորդ. ծրագիրն առաջադրում է վորպես սոցիալական միակ պահանջ Լասսալի պետական օժանդակությունն իր ամենամերկ ձևով, ինչպես վոր Լասսալն այն գողացել է Բյուշեյից։ Յեվ դա այն ժամանակ, յերբ Բրակեն[3] շատ գեղեցիկ կերպով ցույց

---

[1] Տես Մարքսի պարզաբանումները վերևում, II հատվածում, եջ 46—50։

[2] 1863 թվի մայիսի 17-ին և 19-ին Մայնի Ֆրանկֆուրտում Լասսալի արտասանած յերկու ճառերը Ընդհանրական գերմանական բանվորական միությունը հրատարակել եր «Arbeiter Lesebuch», այսինքն՝ «Ընթերցանության գիրք բանվորների համար» վերնագրով։ Ենգելսը նկատի ունի այն հատվածն առաջին ճառից, վոր Լասսալը վերցրել է հենց իր իսկ բրոշյուրից— «Բաց պատասխան Կենտրոնական կոմիտեյին՝ ընդհանուր գերմանական բանվորական համագումարը Լայպցիգում հրավիրելու շուրջը» (Ցյուրիխ, 1863 թ.)։ Տե՛ս եջ 46, ծանոթագրություն, վորտեղ մենք մեջ ենք բերել այդ կտորը։

[3] Վիլհելմ Բրակե (1843—1880)—այզենախյան կուսակցության առաջ-

է տվել այդ պահանջի ամբողջ վոչնչությունը. այն ժամանակ, յերբ մեր կուսակցության համարյա բոլոր, յեթե վոչ առանց մնացորդի բոլոր, ճառախոսները ստիպված են յեղել լասսալյանների դեմ մղած պայքարի մեջ հանդես գալ հենց այդ «պետական ոժանդակության դեմ»։ Դրանից ավելի՛ խոր չէր կարող իրեն նվաստացնել մեր կուսակցությունը։ Ինտերնացիոնալիզմ՝ իջեցրած մինչև Ամանդ Գյոգգը[1], սոցիալիզմ՝ իջեցրած մինչև բուրժուական հանրապետական Բյուշեն, վորն այդ պահանջն առաջադրել է սոցիալիստների դեմ՝ նրանց կործանելու համար։

Սակայն «պետական ոժանդակությունը» լասսալյան իմաստով ամենալավ դեպքում ուրիշ մի շարք միջոցներից միայն մեկն է՝ առաջադրած նպատակին հասնելու համար, մի նպատակ, վորը չափազանց տկարամտորեն է նշված ծրագրի նախագծում— «սոցիալական հարցի լուծման ուղին հարթելու համար»,—կարծես թե մեզ համար տակավին գոյություն ունի թեորիապես չլուծված սոցիալական հարց։ Յեթե, ուրեմն, ասում են, թե՝ Գերմանական բանվորական կուսակցությունը ձգտում է վոչնչացնել վարձու աշխատանքը և դրա հետ միասին դասակարգային տարբերությունները՝ իրագործելով ազգային մասշտաբով կոլեկտիվ արտադրություն արդյունաբերության ու հողագործության մեջ, յեթե նա հանդես է գալիս այն բոլոր միջոցառումների ոգտին, վորոնք կարող են այդ նպատակին հասցնել,—ապա վոչ մի լասսալական դրան դեմ բան չի ունենա ասելու։

Հինգերորդ. վոչ մի խոսք չկա արհեստակցական միությունների միջոցով բանվոր դասակարգի կազմակերպման մասին, վոր-

---

նորդներից մեկը, մոտ էր կանգնած Մարքսին ու Էնգելսին, պաշտպանում էր նրանց, թեև վոչ շատ յեռանդուն, Գոթայի ծրագրի ոպորտունիստական սխալների դեմ նրանց մղած պայքարում։ 1873 թվին գրեց «Լասսալի առաջարկը» վերնագրով բրոշյուրը։ Բրոշյուրը, վոր ուղղված էր 1869 թվի այզենախյան ծրագրի 10-րդ կետի դեմ՝ բանվորական արտադրողական ընկերություններին պետական ոժանդակություն ընձեռելու մասին, տալիս էր լասսալական շարժման ծավալուն քննադատությունը։ «Ծանոթանալով Կ. Մարքսի աշխատությունների հետ,—գրում է Բրակքեն այդ բրոշյուրի առաջաբանում,—և մտնելով այզենախյան կուսակցության մեջ, յես ավելի ու ավելի համոզվում եյի այն բանում, վոր Լասսալի առաջարկությունները բանվորական հարցի վերաբերմամբ կենսագործելն ավելի շատ վնաս կբերի, քան թե ոգուտ ...»։ Տես նաև էջ 78, ծանոթագր. 2։

[1] Ամանդ Գյոգգ (1820—1897)—մանր-բուրժուական դեմոկրատ Բադենից, 1848—1849 թ. թ. հեղափոխության մասնակից, 60-ական թվականներին պացիֆիստական պրոպագանդա յեր մղում. Խաղաղության ու ազատության լիգայի (տես էջ 44, ծանոթագր. 1) ղեկավարներից մեկն էր։

պես դասակարգ։ Իսկ դա մի շատ էական կետ է, որովհետև հենց դա յէ պրոլետարիատի իսկական դասակարգային կազմակերպությունը, որի մեջ նա մղում է իր առօրյա պայքարը կապիտալի դեմ, որի մեջ նա դաստիարակվում է և որն այսօր ամենավատ տեսակի ռեակցիայի ժամանակ իսկ (ինչպես այժմ Փարիզում) ամենևին չի կարելի այլևս փոչնչացնել։ Ահա նկատի ունենալով այն կարևորությունը, որ այդ կազմակերպությունը ձեռք է բերում նաև Գերմանիայում, մեր կարծիքով միանգամայն անհրաժեշտ կլիներ այն հիշատակել ծրագրում և ըստ հնարավորության մի որոշ տեղ հատկացնել նրան կուսակցական կազմակերպության մեջ։

Այդ ամենը կատարել են մերոնք՝ ի հաճույս լասսալյաններին։ Իսկ ինչ են զիջել նրանք։ Այն մի կույտ բավականաչափ շփոթ, զուտ դեմոկրատական պահանջներ ծրագրում, որոնցից մի քանիսն ուղղակի մոդայի բաներ են, ինչպես, օրինակ՝ «օրենսդրություն ժողովրդի միջոցով», որ գոյություն ունի Շվեյցարիայում և ավելի շատ վնաս, քան օգուտ է բերում, յեթե նա առհասարակ որևէ մի բան է բերում։ Յեթե ասվեր «կառավարություն ժողովրդի միջոցով», դա գոնե մի միտք կունենար։ Բացակայում է նույնպես ամեն մի ազատության առաջին պայմանը,—այն, որ բոլոր պաշտոնյաները պաշտոնական գործողությունների համար ամեն մի քաղաքացու հանդեպ պատասխանատու յեն սովորական դատարանների առջև և ընդհանուր օրենքի հիման վրա։ Այլևս չեմ ուզում խոսել այնպիսի պահանջների մասին, ինչպիսիք են, օրինակ՝ գիտության ազատություն, խղճի ազատություն, որոնք գոյություն ունեն ամեն մի լիբերալ բուրժուական ծրագրում և որոնք այստեղ օտարոտի յեն յերևում։

Ազատ ժողովրդական պետությունը դարձել է ազատ պետություն։ Քերականորեն վերցրած՝ ազատ պետությունն այն է, ուր պետությունն ազատ է իր քաղաքացիների հանդեպ, այսինքն մի պետություն՝ բռնապետական կառավարությամբ։ Պետք էր վերջ տալ պետության վերաբերյալ զրույցին, մանավանդ Կոմունայից հետո, որն այլևս պետություն չէր իսկական իմաստով։ «Ժողովրդական պետություն» ասածը անարխիստները ձանձրալիության չափ հաճախ են մեր աչքը խոթել, թեև արդեն Մարքսի գրվածքը Պրուդոնի[1] դեմ և ապա «Կոմունիստական մանի-

[1] Պյեր-Ժոզեֆ Պրուդոն (1808—1865)— մանր-բուրժուական տեսաբան։ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ» III, քննադատական, գլուխ

ֆեստն»[1] ուղղակի ասում են, թե սոցիալիստական հասարակակարգի հաստատման հետ միասին պետությունն ինքն իրեն լուծվում է և անհետանում։ Իսկ վորովհետև պետությունը միայն մի ժամանակավոր հաստատություն է, վորը ծառայեցնում են կռվի, հեղափոխության մեջ հակառակորդին բռնությամբ ճնշելու համար, ուստի և պարզ անմտություն է խոսել «ազատ ժողովրդական պետության» մասին։ Քանի դեռ պրոլետարիատը կարիք է զգում պետության, նա դրա կարիքն զգում է վոչ թե ազատության շահի, այլ իր հակառակորդներին ճնշելու համար. իսկ հենց վոր հնարավոր է դառնում խոսել ազատության մասին, այն ժամանակ պետությունը դադարում է գոյություն ունենալուց վորպես այդպիսին[2]։ Այդ պատճառով ել մենք կառաջարկեյինք՝

Պրուդոնը հանդես է գալիս «պահպանողական կամ բուրժուական սոցիալիստների» մեջ։ «Զվոչնչացնել կապիտալիզմն ու նրա հիմքը—ապրանքային արտադրությունը, այլ այդ հիմքը մաքրել չարարկություններից, պալարներից և այլն, չվոչնչացնել փոխանակությունն ու փոխանակարժեքը, այլ, ընդհակառակը, «սահմանադրել» այն, դարձնել այն ընդհանրական, բացարձակ, «արդարացի», հեռու տատանումներից, ճգնաժամերից, չարարկություններից,—ահա Պրուդոնի իդեան» (Ленин, «Критические заметки по национальному вопросу», 1913 թ., հատոր XVII, եջ 145)։ Պրուդոնն ընդունում եր պրոլետարիատի կազմակերպության անհրաժեշտությունը, բայց միայն ամեն տեսակ կոոպերատիվ ընկերությունների ձևով, վորոնք, այսպես ասած՝ կապիտալիզմի թիկունքում սոցիալիզմ են կառուցելու։ Ժխտելով պրոլետարիատի մասնակցության անհրաժեշտությունը քաղաքական պայքարի մեջ՝ Պրուդոնը խաղաղ անարխիզմի տեսաբանը դարձավ։ Պրուդոնիզմն I Ինտերնացիոնալի դարաշրջանում մեծ ազդեցություն եր գործում մի շարք ռոմանական յերկրների բանվորական շարժման վրա, վորոնց ժողովրդական տնտեսության մեջ գերակշռող դեր եր խաղում մանր արտադրությունը։ Մարքսի ու Ենգելսի պայքարը պրուդոնիզմի դեմ I Ինտերնացիոնալում հասցրեց մարքսիզմի հաղթանակին։ Ֆրանսիայի ու Իսպանիայի անարխո-սինդիկալիստների մեջ պրուդոնիզմի վորոշ ազդեցությունը պահպանվել է մինչև այսոր ել։—Մարքսի գիրքը Պրուդոնի դեմ լույս տեսավ 1847 թվին ֆրանսերեն «Փիլիսոփայության թշվառությունը» վերնագրով։ Այն հատվածը, վոր Ենգելսը նկատի ունի, Լենինը մեջ է բերում «Մարքսիզմը պետության մասին» տետրում (տե՛ս այս հրատարակության հավելվածները, եջ 117—118)։

[1] «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» համապատասխան հատվածը մեջ է բերում Լենինը նույն տեղում (տես այս գրքում, եջ 118—119)։

[2] Մեջ բերենք այստեղ Ենգելսի մի մոռացված կարծիքը պետության մահացման ու պրոլետարիատի դիկտատուրայի մասին, վոր նա արտահայտել է ամերիկյան սոցիալիստ Վան-Պատտենին գրած նամակում 1883 թվի ապրիլի 18-ին. «Մարքսն ու յես հենց 1845 թվից սկսած միշտ այն հայացքն ենք ունեցել, վոր գալիք պրոլետարական հեղափոխության վերջնական հետևանքներից մեկը լինելու յե աստիճանական լուծումն ու վերջնական անհետացումն

«պետություն» բառի փոխարեն ամեն տեղ դնել հին գերմաներեն գեղեցիկ բառը—«համայնք (Gemeinwesen), վորը հրաշալի կերպով համապատասխանում է ֆրանսական «կոմունա» բառին[1]։

«Բոլոր սոցիալական և քաղաքական անհավասարության վերացումն»—ևս մի շատ կասկածելի ֆրազ է, վոր գործ է ածված «բոլոր դասակարգային խտրությունների վոչնչացման» փոխարեն։ Նույնիսկ յերկրից յերկիր, գավառից գավառ, տեղից տեղ գոյություն պիտի ունենա միշտ կենսապայմանների վորոշ անհավասարություն, վորը կարելի կլինի հասցնել նվազագույն չափի, բայց վոչ յերբեք վերացնել։ Լեռնային բնակիչները միշտ ապրելու յեն այլ պայմաններում, քան դաշտավայրում ապրողները։ Սոցիալիստական հասարակության պատկերացումը վորպես հավասարության թագավորություն—դա միակողմանի ֆրանսական մի պատկերացում է, վոր հիմնված է «ազատության,

---

այն քաղաքական կազմակերպության, վորի գլխավոր նպատակը միշտ յեղել է ապահովել, զինված ուժի միջոցով, աշխատավոր մեծամասնության ճնշումն ունևոր փոքրամասնության կողմից։ Ունևոր փոքրամասնության անհետանալու հետ միասին՝ անհետանում է նաև զինված պետական ուժի անհրաժեշտությունը, վորը ծառայում է ճնշման նպատակներին։ Միևնույն ժամանակ մենք միշտ կարծել ենք, վոր դրա համար, ինչպես նաև գալիք սոցիալական հեղափոխության ուրիշ, շատ ավելի կարևոր նպատակների իրագործման համար, պրոլետարիատը պետք է սկզբից իր ձեռքն առնի կազմակերպված քաղաքական պետական իշխանությունը և նրա ոգնությամբ խորտակի կապիտալիստական դասակարգի դիմադրությունը և վերակազմի հասարակությունը։ Այս բոլորն արդեն 1847 թվին շարադրված է «Կոմունիստական մանիֆեստում», յերկրորդ գլխի վերջում։

Անարխիստները հարցը գլխիվայր են դնում։ Նրանք ասում են, թե պրոլետարական հեղափոխությունը պետք է գործն սկսի պետության քաղաքական կազմակերպության վերացմամբ։ Բայց պրոլետարիատի հաղթությունից հետո հենց պետությունն է հանդիսանում այն միակ կազմակերպությունը, վոր բանվոր դասակարգը կարող է իր ձեռքը վերցնել և նրան ընթացքի մեջ դնել։ Թող այդ պետությունը միանգամից հենց մեծ փոփոխությունների կարիք ունենա, նախքան նա կկարողանա կատարել իր նոր ֆունկցիաները։ Բայց այդպիսի մոմենտում բոլորովին խորտակել այն՝ կնշանակեր խորտակել այն միակ ապարատը, վորի միջոցով հաղթական պրոլետարիատը կարող է իրականացնել իր հենց նոր նվաճած իշխանությունը, ճնշել իր թշնամիներին—կապիտալիստներին և հասարակության այն տնտեսական հեղափոխությունն առաջացնել, առանց վորի ամբողջ հաղթությունն անխուսափելիորեն պետք է պարտությամբ ու բանվորների մասսայական ջարդով վերջանար, ինչպես այդ յեղավ Փարիզի կոմունայից հետո»։

[1] Այս առաջարկին Լենինն սկզբունքային մեծ նշանակություն եր տալիս։ Տես «Մարքսիզմը պետության մասին» տետրի (սույն հրատարակության հավելվածներում) առաջին եջերը։

հավասարության, յեղբայրության» հին նշանաբանի վրա, մի պատկերացում, վորը տեղին եր իր ժամանակին և իր տարածության վրա վորպես զարգացման մի վորոշ աստիճան, սակայն վորը՝ հին սոցիալիստական դպրոցների բոլոր միակողմանիությունների նման՝ պետք այսօր հաղթահարված լինի, վորովհետև դա միայն շփոթ և առաջացնում մարդկանց գլուխներում և վորովհետև այժմ հայտաբերված են նյութի ավելի ճշգրիտ շարադրաձևեր։

Ես վերջացնում եմ, թեև արժեր քննադատել այդ չափազանց թույլ ու անհամ խմբագրված ծրագրի ամեն մի խոսքը։ Այդ ծրագիրն այնպիսի ծրագիր է, վոր, յեթե ընդունվի, Մարքսը և յես յերբեք չպետք կարողանանք հարել այդ հիմքի վրա կառուցված նոր կուսակցությանը և ստիպված պետք լինենք խիստ լրջորեն մտածելու, թե ինչպիսի դիրք պետք բռնենք — նաև հրապարակորեն[1] — դրա հանդեպ։ Նկատի ունեցեք, վոր արտասահմանում մեզ են պատասխանատու համարում Գերմանական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության բոլոր և ամեն մի արտահայտության ու գործողության համար։ Այդպես է անում, որինակ, Բակունինը յուր «Քաղաքականություն և անարխիա»[2] գրքում, վորտեղ մեզ է պատասխանատու դարձնում ամեն մի չմտածված բառի համար, վոր ասել ու գրել է Լիբկնեխտը[3]

---

[1] Այն մասին, թե ինչու Մարքսն ու Ենգելսն այս օպորտունիստական ծրագրի ընդունումից հետո հրապարակով նրա դեմ դուրս չեկան, տես Ենգելսի նամակը Բրակեյին 1873 թվի հոկտեմբերի 11-ին (սույն հրատարակության հավելվածներում)։

[2] Խոսքը վերաբերում է Բակունինի «Պետականություն և անարխիա։ Յերկու կուսակցությունների պայքարը Բանվորների միջազգային ընկերության մեջ» (1873) գրքին, վորի մեջ Բակունինը Լիբկնեխտին «Մարքսի գործակալն» է համարում և Մարքսին պատասխանատու յե դարձնում Լիբկնեխտի բոլոր թեորիական ու տակտիկական սխալների համար, Լիբկնեխտի, «վոր գործում է Մարքսի անմիջական ղեկավարությամբ»։

[3] Վիլհելմ Լիբկնեխտ (1826—1900) — XIX դարի յերկրորդ կեսի գերմանական և միջազգային բանվորական շարժման խոշորագույն դեմքերից մեկը։ Իբրև հարավային-գերմանական դեմոկրատ՝ մասնակցում եր 1848—1849 թվականների հեղափոխությանը։ 50-ական թվականներին գաղթեց Լոնդոն, վորտեղ Մարքսի ազդեցության տակ սոցիալիստ դարձավ։ Բեբելի հետ միասին 1868—1869 թ. թ. հիմնադիր յեղավ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության («այզենախյանների» կուսակցության), յեռանդուն ագիտացիա ծավալեց Գերմանիայի միավորման հեղափոխական ուղու համար,—ճիշտ է՝ հաճախ ընկնելով «ավստրոսիրության» մեջ և պաշտպանելով պարտիկուլյարիզմը,—պայքար եր մղում լասսալականների դեմ։ 1870—

«Demokratisches Wochenblatt»-ի[1] հիմնադրումից իվեր: Մարդիկ յերևակայում են, թե մենք այստեղից ղեկավարում ենք ամբողջ պատմությունը, մինչդեռ դուք ինձնից վոչ-պակաս գիտեք, որ մենք համարյա յերբեք ամենաչնչին չափով անգամ չենք խառնվել կուսակցական ներքին գործերին, և յեթե խառնվել ել ենք, ապա միմիայն նրա համար, որ ըստ հնարավո-

---

1871 թ. թ. ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ հեղափոխական-ինտերնացիոնալիստական դիրք եր բռնում: Բազմաթիվ տասնամյակների ընթացքում կուսակցության կենտրոնական օրգանի գլխավոր խմբագիրն եր, կուսակցության վարչության անդամ, ռայխստագի անդամ և այլն: Լիբկնեխտի ագիտացիան պրոլետարական մասսաներին հրապուրում եր դասակարգային պայքարի գաղափարի քարոզով և դաստիարակում եր այդ մասսաներին ատելության վոգով դեպի գոյություն ունեցող կապիտալիստական հասարակակարգը: Լենինը «Что делать?» գրվածքում (1902 թ.) բնորոշում է նրան իբրև «ժողովրդական տրիբունի» տիպար (հատոր IV, եջ 423—424): Իբրև կուսակցության քաղաքական առաջնորդ—թույլ ավեց խոշորագույն օպորտունիստական սխալներ, վորոնք հիմնականում արմատացած են նրա մտածողության վոչ-դիալեկտիկական յեղանակի և նրա՝ վուլգար դեմոկրատիզմի հանդեպ խոնարհվելու հակման մեջ: Գոթայի միավորման ժամանակ 1875 թվին այզենախյանների թույլ տված սկզբունքային և տակտիկական ամենակոպիտ սխալների համար ամենից առաջ պատասխանատու յե Լիբկնեխտը, ինչպես նաև սոցիալիստների դեմ բիսմարկյան բացառիկ օրենքի հայտարարությունից հետո առաջին ժամանակներն առաջացած շփոթվածության համար: Ներկուսակցական պայքարում՝ 1885 թվին շոգենավային սուբսիդիաների քվեարկության հարցի շուրջը՝ Լիբկնեխտը հաշտվողական դիրք եր բռնում: Հաճախ տարաձայնություններ եր ունենում Բեբելի հետ, վորը Ենգելսի ղեկավարությամբ մի շարք հարցերում ավելի ճիշտ դիրք եր բռնում: Պայքար մղելով տիրապետող դասակարգերի ու կառավարության դեմ՝ Լիբկնեխտը, վոր 1872 թվին ինքն իրեն «հեղափոխության զինվոր» եր անվանել, միաժամանակ դրա հետ մեկտեղ հաճախ քարոզում եր խաղաղ «կուլտուրական» հեղափոխության լասալյան իդեան, ժխտելով բռնության դերը սոցիալիստական հեղափոխության մեջ: Այնուամենայնիվ, նրա հեղափոխական խանդավառությունը, վոր յերևան եր գալիս նրա ագիտացիոն գործունեության մեջ, նրան սերտորեն կապում եր բանվորական շարժման հեղափոխական թևի հետ, և իր կյանքի վերջում Լիբկնեխտը դիմադրություն եր ցույց տալիս Միլյերանի, Բերնշտայնի և ուրիշների նման օպորտունիստներին: Լիբկնեխտի «Վոչ մի կոմպրոմիս» (1899) վերնագրով բրոշյուրի ռուսերեն թարգմանության առաջաբանում Լենինը 1907 թվին բնորոշում եր նրա տակտիկան օպոզիցիոն բուրժուական կուսակցությունների հետ համաձայնություն կնքելու հարցում իբրև հեղափոխական տակտիկայի օրինակ, հակադրելով այն՝ մենշևիկների տակտիկային (Յերկերի հատոր X, եջ 215—220):

[1] «Demokratisches Wochenblatt» («Դեմոկրատական շաբաթաթերթ») — այզենախյանների օրգանը մինչև նրանց անջատումը Սաքսոնական մանրբուրժուական ռադիկալ ժողովրդական կուսակցությունից: Լույս եր տեսնում Վ. Լիբկնեխտի խմբագրությամբ Լայպցիգում 1863—1869 թվականներին:

րության կրկին հարթենք մեր կարծիքով տեղի ունեցած սայթաքումները, այն էլ լոկ թեորիայի ասպարեզում։ Սակայն դուք ինքներդ պետք է հասկանաք, վոր այդ ծրագիրը կազմում է մի շրջադարձ, վորը մեծ հեշտությամբ կարող էր ստիպել մեզ մերժելու ամեն մի պատասխանատվություն այդ ծրագիրն ընդունող կուսակցության համար։

Ընդհանրապես՝ կարևորը մի կուսակցության պաշտոնական ծրագիրը չէ, այլ այն, թե ինչ է անում նա։ Բայց և այնպես, ամեն մի նոր ծրագիր միշտ հանդիսանում է հրապարակորեն ծածանվող մի դրոշ, և արտաքին աշխարհը գաղափար է կազմում կուսակցության մասին հենց ըստ այդ դրոշի։ Այդ պատճառով էլ ծրագիրը չպետք է պարունակի մի հետաշարժ քայլ, ինչպես սա պարունակում է՝ այզենախյան ծրագրի համեմատությամբ։ Պետք է նաև մտածել այն մասին, թե ինչ կասեն մյուս յերկրների բանվորներն այդ ծրագրի վերաբերմամբ, թե ինչ տպավորություն կանի լասսալականության առջև ամբողջ գերմանական սոցիալ[իստական] պրոլետարիատի գլխաթափումը։

Ընդսմին յես համոզված եմ, վոր միացումն այդ հիմքի վրա հազիվ մի տարի տևի։ Միթե մեր կուսակցության լավագույն գլուխները պետք է անգիր արած՝ սաղմոսերգեն Լասսալի ֆրազները աշխատավարձի յերկաթե որենքի և պետական օժանդակության մասին։ Յես կուզենայի տեսնել, որինակ, Ձեզ այդ դերում։ Իսկ յեթե նրանք այդ անեյին, լսողները կսուլեյին նրանց։ Յեվ յես վստահ եմ, վոր լասսալյանները պնդում են ծրագրի հենց այդ կետերի վրա, ինչպես հրեա Շեյլոկն[1] իր մի ֆունտ մսի վրա։ Պառակտումը տեղի կունենա. բայց մենք կրկին «ազնիվ» դարձրած կլինենք Հասսելմանին, Հազենկլևերին, Տյոլկեյին և դրանց համախոհներին. այդ պառակտումից մենք դուրս կգանք թուլացած, իսկ լասսալյաններն՝ ամրացած. մեր կուսակցությունը կորցրած կլինի իր քաղաքական կուսությունը և յերբեք չպետք է կարողանա այլևս սրտանց պայքարել ընդդեմ այն լասսալյան ֆրազների, վորոնք միառժամանակ ինքն ունեցել է իր դրոշի վրա. և յեթե լասսալյանները կրկին ասեն, թե իրենք են իսկական և միակ բանվորական կուսակցությունը, իսկ մերոնք՝ բուրժուաներ, ապա դրա ապացույցը կլինի ծրագիրը։ Դրա մեջ յեղած բոլոր սոցիալիստական միջոցառումները պատկանում են

[1] Շեյլոկ—ագահ վաշխառու տիպ Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը» դրամայում։

Նրանց, իսկ մեր կուսակցությունը վոչինչ չի մտցրել, բացի մանրբուրժուական դեմոկրատիայի պահանջներից, այն դեմոկրատիայի, վորին ինքը կուսակցությունը հենց նույն ծրագրում համարել է «ռեակցիոն զանգվածի» մի մասը։

Յես այս նամակը չշտապեցի ուղարկել, մտածելով, վոր ձեզ ազատ կարձակեն ապրիլի 1-ին ի պատիվ Բիսմարկի ծննդյան[1], և չեյի ուզում, վոր դա ձերբակալման վտանգի յենթարկվի՝ մաքսանենգության միջոցով տեղ հասցնելու փորձի ժամանակ։ Բայց ահա հենց նոր մի նամակ ստացա Բրակեից, վորը ծրագրի վերաբերմամբ նույնպես ունի ծանր կասկածներ և կամենում է իմանալ մեր կարծիքը[2]։ Այդ պատճառով էլ գործը փութացնելու համար յես ուղարկում եմ նամակը նրա միջոցով, վորպեսզի նա էլ կարդա և յես ստիպված չլինեմ նորից գրելու այդ բոլոր մանրունքների մասին։ Ի միջի այլոց յես Ռամմին[3] էլ եմ գրել ճշմարտությունը հայտնապես, իսկ Լիբկնեխտին՝ միայն մի-

---

[1] Լիբկնեխտն ու Բեբելը 1870—1871 թ. թ. ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ իրենց բռնած հեղափոխական-ինտերնացիոնալիստական դիրքի համար՝ 1872 թվի մարտին, Լայպցիգի հռչակավոր դատավարության ժամանակ, պետական դավաճանության մեղադրանքով դատապարտվեցին յերկու տարվա բերդարգելության։ Բեբելի բանտարկության ժամկետը վերջացավ 1874 թվի մայիսի 14-ին, բայց նա վեց շաբաթից հետո կրկին ստիպված յեղավ բանտ նստել և 9 ամիս էլ նստել Ցվիկաույում (Սաքսոնիա) «Նորին մեծությանը» վիրավորելու համար։ Նրա բանտարկության վերջանալու ժամկետը—1875 թ. ապրիլի 1-ը—պատահաբար զուգադիպում էր Բիսմարկի ծննդյան տարեդարձին։

[2] Բրակեն (տե՛ս էջ 70, ծանոթագր. 3) 1875 թ. մարտի 25-ին Էնգելսին գրած նամակում սուր քննադատության յենթարկեց Գոթայի ծրագրի նախագիծը։ «Այդ ծրագիրն ինձ համար անընդունելի յե,—գրում էր նա,—և Բեբելն էլ նույն կարծիքին է»։ Իր քննադատության մեջ Բրակեն գլխավոր ուշադրությունը դարձրեց պետության օժանդակությամբ կազմակերպված արտադրողական ընկերությունների վերաբերյալ կետի վրա։ Բրակեյի կարծիքով՝ այդ կետն ընդունելով կուսակցությունն իրեն աղանդի յե փոխարկել, վորը փորձում է հասարակական զարգացումն առաջ շարժել իբրև մարիոնետկայի։ «Քանի վոր, ըստ յերևույթին, Բեբելը վորոշել է պայքարել,—գրում է Բրակեն,—ապա յես, համենայն դեպս, իմ ուժերի չափով կպաշտպանեմ նրան։ Բայց դրա համար յես կուզենայի իմանալ, թե ինչ եք մտածում Դուք ու Մարքսն այս առթիվ։ Դուք ավելի հասուն փորձ ունեք, ձեր հայացքներն իմից ավելի խորն են...»։ «Յեթե դուք սրան համաձայն եք, յես Բեբելին կառաջարկեմ համագումարում միասին հանդես գալ ծրագրի նախագծով»։ Սակայն Բեբելը չարդարացրեց Բրակեյի հույսերը և ծրագրի դեմ հանդես չեկավ։

[3] Ռամմ—գերմանական սոցիալ-դեմոկրատ, այզենախյանների կուսակցության կենտրոնական օրգան «Volksstaat»-ի (Լայպցիգում) խմբագիրներից մեկը։ Կուսակցության մեջ ղեկավարող դեր չէր կատարում։

քանի խոսք։ Ես չեմ կարող վերջինիս ներել, վոր վոչ մի խոսք չի հայտնել մեզ ամբողջ խնդրի մասին (մինչդեռ Թամմը և մյուսները կարծում եյին, թե նա մեզ ճշգրիտ կերպով իրազեկ ե պահել), մինչև վոր, այսպես ասած, այլևս շատ ուշ եր։ Այդպես ե վարվել նա միշտ,—և հենց այդ ե յեղել պատճառը, վոր մենք, Մարքսը և յես, յերկար անհաճո գրագրություն ենք ունեցել նրա հետ,—բայց․ այս անգամ արդեն չափազանց վատ ե, և մենք վճռականապես հրաժարվում ենք գնալ նրա հետ այդ ուղիով։

Աշխատեցեք այնպես անել, վոր ամառն այստեղ գաք։ Դուք, անշուշտ, կապրեք ինձ մոտ, և յեթե յեղանակը լավ լինի, կարող ենք մի-յերկու որով ծովը լողանալու գնալ․ յերկար բանտարկությունից հետո Ձեզ շատ ոգտակար կլինի այդ։

Սիրալիր վողջույններով՝ Ձեր Ֆ. Ե.

ՄԱՐՔՍԸ—Վ. ԲՐԱԿՔԵՅԻՆ [1]

Լոնդոն, 5 մայիսի 1875 թ.

Սիրելի Բրակքե.

Ընդամին ուղարկվող քննադատական դիտողությունները միացուցիչ ծրագրի վերաբերմամբ բարի յեղեք կարդալուց հետո հանձնել Գայբին[2], Աուերին[3], Բեբելին և Լիբկնեխտին՝ ծանոթանալու համար։ Յես չափազանց զբաղված եմ և ստիպված նույնիսկ բժշկի կողմից կարգադրված աշխատանքի չափն անցնել մեծապես։ Այդ պատճառով ինձ համար յերբեք «հաճույք» չէր այսպես յերկար մրոտել։ Բայց և այնպես դա անհրաժեշտ էր, վորպեսզի հետագայում իմ անելիք քայլերը սխալ կերպով չմեկնաբանեն կուսակցական բարեկամները, վորոնց համար նշանակված է այս հաղորդումը։—Էնգելսը և յես միացուցիչ համագումարից հետո հրապարակելու յենք մի հակիրճ հայտարարություն այն բովանդակությամբ, վոր մենք միանգամայն անմասնակից ենք հիշյալ սկզբունքային ծրագրին և վոչ մի առնչություն չունենք դրա հետ։

Դա անհրաժեշտ է, քանի վոր արտասահմանում տարածված է կուսակցության թշնամիների կողմից հոգատար կերպով սնուցվող այն կարծիքը,—միանգամայն սխալ կարծիքը,—թե մենք այստեղից գաղտնաբար ղեկավարում ենք այսպես կոչված այզենախյան կուսակցության շարժումը։ Դեռևս նոր լույս տեսած իր ռուսերեն գրքույկում Բակունինը, օրինակ, պատասխանատու

---

[1] *Այս նամակին կից Մարքսն ուղարկեց Բրակքեյին՝ այզենախականների ղեկավարներից մեկին՝ իր «Գոթայի ծրագրի քննադատությունը»։ Էնգելսը, 1891 թվին հրատարակելով «Քննադատությունը», նրա հետ միասին տպագրեց նաև այս նամակը։*

[2] *Ավգուստ Գայբ (1842—1879)—այզենախյան կուսակցության գանձապահը, 1874 թվից ռայխստագի անդամ։*

[3] *Իգնաց Աուեր (1846—1907)—այզենախյան կուսակցության քարտուղարը, հետագայում գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ռեֆորմիստական թևի պարագլուխներից մեկը։*

յի դարձնում ինձ վոչ միայն այդ կուսակցության բոլոր ծրագրերի և այլնի համար, այլև Լիբկնեխտի յուրաքանչյուր քայլի համար [1] այն օրից, յերբ նա սկսել է աշխատակցել ժողովրդական կուսակցության հետ։

Բացի դրանից, իմ պարտականությունն է չճանաչել նույնիսկ դիվանագիտական լռությամբ մի ծրագիր, վոր իմ համոզմամբ բացարձակապես խոտելի յե և կուսակցությունը բարոյալքող։

Իսկական շարժման ամեն մի քայլ ավելի կարևոր է, քան մի յերկվեցյակ ծրագիր [2]։ Հետևաբար, յեթե անկարելի յեր,—իսկ ժամանակի պայմանները թույլ չեն տալիս այդ,—այզենախյան ծրագրի սահմաններից հեռանալ, ապա պարզապես պետք եր համաձայնության գալ ընդհանուր թշնամու դեմ գործելու համար։ Բայց յերբ կազմվում են սկզբունքային բնույթ ունեցող ծրագրեր (փոխանակ հետաձգելու մինչև այն ժամանակ, յերբ դա նախապատրաստված կլինի յերկարատև միահամուռ գործակցությամբ), այն ժամանակ ամբողջ աշխարհի առջև բարձրացվում են սահմանաքարեր, վորոնցով նա չափում է կուսակցական շարժման բարձրությունը։ Լասսալյան ղեկավարները յեկան, վորովհետև պայմաններն ստիպեցին նրանց գալ։ Յեթե սկզբից ևեթ հայտարարվեր նրանց, թե սկզբունքային վոչ մի սակարկություն չպիտի թույլատրվի, ապա նրանք ստիպված կլինեին բավականանալ գործողության ծրագրով կամ կազմակերպչական պլանով՝ գործակցության համար։ Դրա փոխարեն նրանց թույլ են տալիս ներկայանալու մանդատներով զինված, և իրենց կողմից ճանաչում են այդ մանդատները պարտադիր, հետևապես անձնատուր լինում այն մարդկանց շնորհին, հենց վորոնք օգնության կարիք ունեն։ Խնդիրը հաջողությամբ պսակելու համար նրանք մինչև միաձայնեցման համագումար կրկին հրավիրում են իրենց համագումարը, մինչդեռ սեփական կուսակցությունը գումարում է իր համագումարը post festum [3]։ (Այստեղ պարզ է մտադրությունը—անհնարին դարձնել ամեն մի քննադատություն և թույլ չտալ սեփական

---

1 Մարքսը նկատի ունի Բակունինի «Государственность и анархия» («Պետականություն և անարխիա») բրոշյուրը։ Տե՛ս եջ 75, ծանոթագր. 2։

2 Այս թեզի մասին տե՛ս Լենինի պարզաբանումը սույն հրատարակության մեջ, եջ 114—115։

3 Գոթայի միացուցիչ համագումարը տեղի ունեցավ 1875 թվականի մայիսի 22—27-ը. դրանից առաջ՝ լասսալականների համագումարը—մայիսին, իսկ այզենախյանների համագումարը—Համբուրգում, հունիսի 8-ին։

կուսակցության ուշքի գալու)։ Հայտնի յե, վոր միացման սոսկ իրողությունը բավարարում ե բանվորներին․ սակայն սխալվում են, յերբ կարծում են, թե այդ ակնթարթային հաջողությունը չափազանց թանգ գնով չի գնված։

Ընդհանրապես ծրագիրն անպետք ե միանգամայն, յեթե նույնիսկ աչքաթող անենք լասսալյան հավատո հանգանակի սրբացումը։

Շուտով կուղարկեմ ձեզ «Կապիտալի» ֆրանսերեն հրատարակության վերջին պրակը։ Տպագրությունը յերկար ժամանակով դադարեցված ե յեղել ֆրանսական կառավարության հրամանով։ Այս շաբաթվա ընթացքում, կամ յեկող շաբաթվա սկզբին վերջանալու յե տպագրությունը [1]։ Ստացե՞լ եք արդյոք առաջին վեց պրակները։ Հաղորդեցեք, խնդրեմ, նաև Բերնհարդ Բեկքերի [2] հասցեն, նրան ել պիտի ուղարկեմ վերջին պրակները։

«Volksstaat»-ի գրավաճառանոցն ունի յուրահատուկ սովորություններ։ Մինչև այժմ յես դեռ չեմ ստացել նույնիսկ մի հատիկ օրինակ «Քյոլնի կոմունիստների դատավարության» նոր տպագրությունից [3]։

Լավագույն ողջույնով

Ձեր ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

---

[1] «Կապիտալի» I հատորի ֆրանսերեն առաջին թարգմանությունը, վոր խմբագրել եր Մարքսն ինքը, լույս եր տեսնում պրակներով 1872—1875 թվերին Փարիզում։

[2] Բերնհարդ Բեկքեր (1826—1882)—գերմանական պատմաբան ու հրապարակախոս, լասսալյան Ընդհանրական գերմանական բանվորական միության հիմնադիրներից մեկը, Լասսալի մահից հետո նրա կտակով կուսակցության նախագահը. 1866 թվի սկզբին կապերը կտրեց լասսալականների հետ և հետագայում հարեց այզենախյաններին։

[3] Մարքսի «Մերկացումներ կոմունիստների Քյոլնի պրոցեսի մասին» վերնագրով բրոշյուրը գրված ե 1853 թվին. վերահրատարակվել ե «Volksstaat»-ի հրատարակչության կողմից Մարքսի 1875 թ. հունվարի 8-ին գրած վերջաբանով։

ԷՆԳԵԼՍԸ—ԲՐԱԿՔԵՅԻՆ

Լոնդոն, 11 հոկտեմբերի 1875 թ.

Սիրելի Բրակքե.

Ձեր վերջին նամակների (ամենավերջինը հունիսի 28-ից) պատասխանն ուշացրի նախ այն պատճառով, որ Մարքսը և ես համարյա ամբողջ վեց շաբաթ ապրում էյինք բաժան—նա Կարլսբադում, իսկ ես՝ ծովափում, ուր «Volksstaat»-ը ես չեմ տեսել, և ապա այն պատճառով, որ ուզում էյի մի քիչ սպասել, մինչև որ նոր միացումը և համակցված կոմիտեն [1] *ցույց տան իրենց գործնականում։*

Մենք միանգամայն համաձայն ենք Ձեզ հետ, որ Լիբկնեխտը, ինչ գնով *էլ լինի՝ միացումը տեսնելու իր կրքոտ ցանկությամբ, փչացրել է ամբողջ գործը։ Կարելի յեր միացումը համարել անհրաժեշտ, բայց պետք չէր խոսել այդ մասին կամ այդ ցույց տալ հակառակ կողմին։ Այդպիսի դեպքերում միշտ ստիպված ես լինում մի սխալը հետագայում արդարացնել մի ուրիշ սխալով։ Յերբ արդեն տեղի յեր ունեցել—փտած հիմքի վրա—այն միացուցիչ համագումարը, որի մասին այնքան թմբկահարել էյին, ապա ոչ մի կերպ չէյին ուզում թույլ տալ նրա անհաջողությունը և այդպիսով ստիպված էյին դիմել նոր զիջումների՝ էական կետերում։ Դուք միանգամայն իրավացի յեք—այդ միացումը կրում է իր մեջ պառակտման սաղմ, և ես ուրախ կլինեմ, յեթե հեռանան* միայն *անբուժելի ֆանատիկոսները, այլ ոչ թե նրանց բոլոր կողմնակիցները—ընդհանրապես ասած՝ ամուր մարդիկ, որոնք կարող են պիտանի լինել՝ լավ ղեկավարության դեպքում։ Այդ բոլորը կախված կլինի ժամանակից և հանգամանքներից, որոնց ժամանակ տեղի կունենա այդ անխուսափելի դեպքը։*

---

[1] *Գոթայի համագումարում, նոր կանոնադրության համաձայն, յերեք ղեկավար օրգաններ ընտրվեցին—վարչություն, վերահսկիչ հանձնաժողով և կոմիտե։ Վերջինիս խնդիրն էր հանդես գալ այն դեպքերում, յերբ տարաձայնություններ են ծագում վարչության ու վերահսկիչ հանձնաժողովի միջև։*

Ծրագիրն իր վերջնական խմբագրությամբ բաղկացած է յերեք հիմնական մասից.

1. Լասսալյան ֆրազներից և նշանաբաններից, վորպիսիք չեր կարելի ընդունել վոչ մի դեպքում. յերբ յերկու ֆրակցիաներ միանում են, նրանք ծրագրի մեջ մտցնում են այն, ինչում նրանք համաձայն են, այլ վոչ թե այն, վորը վիճելի յե։ Բայց և այնպես մերոնք համաձայնել են մտցնել հենց վիճելի կետերը և, այդպիսով, կամովին անցել Կավդյան կիրճով[1]։

2. Մի շարք վուլգար-դեմոկրատական պահանջներից՝ ձևակերպված ժողովրդական կուսակցության վոգով ու վոճով։

3. Իբր թե կոմունիստական ֆրազներից՝ մեծ մասամբ փոխառած [Կոմունիստական] Մանիֆեստից, սակայն այնպես փոփոխված, վոր ի մոտո քննելիս՝ պարզվում են նրանց լրիվին ապաղակող անհեթեթությունները։ Ով վոչինչ չի հասկանում այդ հարցերում, ավելի լավ է՝ թող քիթը չխոթի, կամ թող բառացի արտագրի նրանցից, ովքեր՝ ընդհանուր խոստովանությամբ՝ հասկանում են այդ հարցերը։

Բարեբախտաբար ծրագիրն ավելի հաջողություն ունեցավ, քան արժանի յեր։ Բանվորները, բուրժուազիան և մանր բուրժուազիան տեսնում եյին այնտեղ այն, ինչ վոր պետք է լիներ, սակայն ինչ վոր չկա. և այդ բանակներից վոչ մեկում էլ չգտընվեց մեկը, վոր հրապարակորեն քններ այդ ապշեցուցիչ թեզերից մեկի իսկական բովանդակությունը։ Հենց այդ հանգամանքն է, վոր հնարավորություն ընձեռեց մեզ լռել այդ ծրագրի մասին։ Բացի դրանից՝ անկարելի յե թարգմանել այդ ֆրազները մի ուրիշ լեզվով՝ առանց հարկադրված լինելու կամ գրել ակնհայտորեն անմտություններ, կամ էլ դնել նրանց մեջ կոմունիստական միտք, և հենց այդպես էլ անում են բոլորը՝ և՛ բարեկամները, և՛ թշնամիները։ Յես ինքս ստիպված եյի այդպես վարվել, յերբ թարգմանում եյի այն մեր իսպանական բարեկամների համար։

Այն, ինչ վոր յես գիտեմ Կոմիտեյի մասին, առայժմ քիչ բան է ասում մխիթարական։ Նախ՝ նրա ցույց տված անվայել վերաբերմունքը դեպի Ձեր և Բեկքերի աշխատությունները[2]. յե-

---

1 Այսինքն՝ ընդունեցին ստորացուցիչ պայմաններ։

2 Խոսքը վերաբերում է Կոմիտեյի առաջարկին՝ կուսակցական գրականության ցուցակից հանել Բ. Բեկքերի անտիլասսալյան աշխատությունները («Enthüllungen über das tragische Lebensende Ferdinand Lassalles», Braunschweig 1868 — «Մերկացումներ Ֆ. Լասսալի վողբերգական վախճանի

թե դա չի անցել, ապա վոչ Կոմիտեյի պատճառով։ Զոննեմանը[1], վորին Մ[արքսը] տեսել է իր ուղևորության ժամանակ, պատմել է, թե ինքն առաջարկել է Վալթայխին՝[2] «Frankfurter Zeitung»-ի աշխատակիցը լինելու, իսկ Կոմիտեն թույլ չի՛ տվել Վ[ալթայխին] համաձայնելու։ Դա ավելի վատ է, քան դրաքննությունը, և յես չեմ հասկանում, ինչպես է Վալթայխը հաշվի առել այդ արգելումը։ Յեվ ինչպիսի՛ անմտություն։ Նրանք, ընդհակառակը, պիտի հոգային, վոր «Frankfurter Zeitung»-ին թղթակցեյին մեր ընկերները ամբողջ Գերմանիայում։ Վերջապես՝ Բեռլինի կոոպերատիվ տպարանը հիմնելու ժամանակ լասսալյան մասնակիցների վերաբերմունքն ինձ թվում է վոչ այնքան էլ անկեղծ. մինչդեռ Լայպցիգի տպարանում մերոնք միամիտ վստահությամբ վերահսկող խորհրդի ֆունկցիաները հանձնել եյին Կոմիտեյին, բեռլինցիներին պետք է դեռ միայն սովորել այդ անելու։

Համենայն դեպս լավ է, վոր Կոմիտեն քիչ է գործունյա և, ինչպես ասում է Կ[արլ] Հիրշը[3], վոր միքանի որ առաջ այստեղ եր, ամփոփվել է թղթակցային և տեղեկատու բյուրոյի դերում։ Կոմիտեյի ամեն մի ակտիվ յելույթը միայն կարագացներ ճգնաժամը, և այժմ մարդիկ, ըստ յերևույթին, զգում են այդ։

Յեվ ինչ թուլամորթություն է համաձայնել, վոր Կոմիտեյում լինեն յերեք լասսալականներ և յերկու մերոնք[4]։

մասին»։ «Geschichte der Arbeiteragitation Lassalles», Braunschweig 1874—«Լասսալի բանվորական ագիտացիայի պատմությունը», Բրաունշվայգ 1874), ինչպես նաև Վ. Բրակքեյի անտիլասսալյան աշխատությունը («Der Lassallesche Vorschlag», Braunschweig 1873—«Լասսալի առաջարկը», Բրաունշվայգ 1873)։ Համմ. եջ 70, ծանոթագր. 3, և եջ 82, ծանոթագր. 2։

1 Լեոպոլդ Զոննեման (1831—1909)—գերմանական քաղաքագետ ու հրապարակախոս, ժողովրդական կուսակցության ղեկավարներից մեկը, «Frankfurter Zeitung»-ի (տես եջ 67, ծանոթագր. 5) խմբագիրը։ Դեպի Բիսմարկի քաղաքականությունն ունեցած բացասական վերաբերմունքը նրան 60—70-ական թվականներին վորոշ հարցերում մոտեցրեց այզենախյանների հետ։

2 Յուլիուս Վալթայխ (1839—1915)—զբաղմունքով կոշկակար, այզենախյան կուսակցության ականավոր գործիչներից մեկը, առաջ լասսալական, դեռ Լասսալի կենդանության ժամանակ հանդես է յեկել նրա դիկտատորության դեմ, վորի պատճառով էլ վտարվել է Ընդհանուր գերմանական բանվորական միությունից։

3 Կարլ Հիրշ (1841—1900)—գերմանական սոցիալիստական աչքի ընկնող ժուռնալիստ, վորն այն ժամանակ մոտ եր կանգնած Մարքսին ու Ենգելսին։

4 Վարչության կազմի մեջ մտան լասսալական Հազենկլևերը, Հարտմանը, Դեռոսսին և այզենախյան Գայբն ու Աուերը։

Ընդհանուր առմամբ մերոնք, ըստ յերևույթին, պրծել են կտրատած տեղերով, թեև բավական քանակությամբ։ Հույս ունենանք, վոր բանը դրանով ել կսահմանափակվի, իսկ այդ ժամանակի ընթացքում լասսալյանների մեջ մղած պրոպագանդան կկատարի իր գործը։ Յեթե դրությունը չփոխվի մինչև ռայխստագի մոտակա ընտրությունները, գործը կարող ե ընթանալ լավ։ Բայց այն ժամանակ Շտիբերը[1] և Տեսսենդորֆը[2] կսկսեն լայնորեն աշխատել և հենց այդ ժամանակ ել կերևա, թե մենք ինչ ենք ստացել հանձինս Հասս[ելմանի] և Հազ[ենկլեվերի]։

Մ[արքսը] վերադարձել ե Կարլսբադից միանգամայն վերափոխված. նա կազդուրվել ե, աշխուժացել ու առողջ ե և շուտով կարող կլինի կրկին լրջորեն աշխատանքի նստել։ Մեր յերկուսի կողմից ել սրտագին վողջույն։ Ըստ դեպքի՝ հաղորդեցեք մեզ այդ պատմության հետագա ընթացքը։ Լայպցիգցիները[3] բոլորն ել շատ են շահագրգռված դրանում, վորպեսզի գրեն ամբողջ անցուդարձի մասին պարզորեն, և կուսակցության GerfiG պատմությունն այժմ ավելի քան յերբևիցե կմնա դրվանի տակ։

Անկեղծորեն նվիրված՝ Փ. Ե.

---

[1] Վիլհելմ Շտիբեր—պրուսական քաղաքական վոստիկանության աչքի ընկնող չինովնիկ, հեղափոխական պրոլետարական կազմակերպությունների կատաղի հալածող, վոր ամենաստոր միջոցներ եր գործադրում մեղադրյալների դեմ հանցանքի փաստանշաններ հերյուրելու համար, ինչպիսիք են՝ կեղծիքներ, սուտ վկայություններ, կաշառումներ, կոտրանքներ և այլն։ Նա 1852 թվին կոմունիստների Քյոլնի պրոցեսի դատաքննության ղեկավարն եր։ Նրա այն ժամանակվա մեքենայությունները Մարքսը մերկացրեց 1853 թվին «Մերկացումներ կոմունիստների Քյոլնի պրոցեսի մասին» վերնագրով բրոշյուրում (Маркс и Энгельс, Сочинения, т. VIII):

[2] Տեսսենդորֆ—պրուսական դատախազ, 70-ական և 80-ական թվականներին հռչակվեց իբրև «սոցիալիստների դեմ կայացած քաղաքական պրոցեսների մասնագետ»։

[3] Լայպցիգցիները, այսինքն՝ Լիբկնեխտն ու կենտրոնական որգան «Volksstaat»-ի խմբագրության մյուս անդամները։

ԷՆԳԵԼՍԸ—ԲԵԲԵԼԻՆ

Լոնդոն, 12 հոկտեմբերի 1875 թ.

Սիրելի՛ Բեբել.

Ձեր նամակը կատարելապես հաստատում է մեր այն տեսակետը, թե միությունը մեր կողմից շատ է շտապեցվել և իր մեջ կրում է ապագա պառակտման սաղմը։ Եթե հաջողվեր այդ պառակտումը ձգձգել մինչև ռայխստագի առաջիկա ընտրությունների վերջը[1]*, շատ լավ կլիներ…*

Ծրագիրն, ինչպես որ նա այժմ կա, բաղկացած է երեք մասից.—

1. լասսալյան ֆրազներից և լոզունգներից, որոնց ընդունումը մեր կուսակցության կողմից՝ կմնա նախատինք։ Երբ երկու ֆրակցիաներ համաձայնության են գալիս մի ընդհանուր ծրագրի շուրջը, ապա դրա մեջ մտցնում են այն, ինչի մասին նրանք համաձայն են իրար հետ, և չեն շոշափում այն, ինչի մասին նրանք համաձայն չեն։ Թեև լասսալյան պետական օժանդակությունը կար նաև այզենախյան ծրագրում[2]*, սակայն որպես մի շարք անցման միջոցների մեկը, և դատելով այն ամենի հիման վրա, ինչ ես լսել եմ, ապահովաբար այն դուրս կնետվեր ծրագրից՝ Բրակեյի առաջարկությամբ*[3] *այս տարվա համագումարում, եթե միայն տեղի ունեցած չլիներ միացումը։ Իսկ այժմ նա փայլում է որպես մի անվրեպ և բացարձակ բուժամիջոց՝ սոցիալական բոլոր չարիքների դեմ։ Թույլ տալ փաթաթելու կուսակցության վզին «աշխատավարձի երկաթե օրենքը»*

---

1 *Ռայխստագի մերձակա ընտրությունները տեղի ունեցան 1877 թվի սկզբին։*

2 *1869 թվի օգոստոսին Այզենախում ընդունված սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ծրագրի «անմիջական պահանջների» վերջին (տասներորդ) կետն ասում է. «Պետական օժանդակություն կոոպերացիային և պետական վարկ արտադրողական ազատ ընկերություններին՝ դեմոկրատական երաշխիքների հետ միասին»։*

3 *Տես էջ 70, ծանոթագր. 3։*

և լասսալյան մյուս ֆրազները—դա մի հսկայական բարոյական պարտություն էր։ Կուսակցությունը դարձավ դեպի լասսալյան դավանանքը։ Դա արդեն անկարելի յե բացասել։ Ծրագրի այդ մասը մի Կավդյան կիրճ ե, վորի միջով մեր կուսակցությունը սողացել ե սրբազան Լասսալի ավելի մեծ փառքի համար.

2. դեմոկրատական պահանջներից, վորոնք կազմված են կատարելապես ժողովրդական կուսակցության վոգով և վոճով.

3. շփոթ ու անտրամաբանական պահանջներից, վորոնք ուղղված են «արդի պետությանը» (ընդվորում անհայտ ե, թե ում են ուղղված մնացած պահանջները).

4. ընդհանուր թեզերից, վորոնք վերցված են գլխավորապես «Կոմունիստական մանիֆեստից» և Ինտերնացիոնալի ստատուտից, սակայն վերախմբագրված այնպես, վոր պարունակում են կամ միանգամայն ստություններ, կամ ել բացարձակ անմտություններ, ինչպես Մարքսը մանրամասնորեն ապացուցել ե Ձեզ ծանոթ հոդվածում [1]։

Վողջ ծրագիրն իր ամբողջությամբ վերին աստիճանի անկարգ ե, խառնաշփոթ, անկապ, անտրամաբանական և պարսավելի։ Յեթե բուրժուական մամուլում լիներ մի հատիկ անգամ խելքը գլխին մարդ, նա անխնա քննադատության կենթարկեր ծրագիրը՝ նախադասություն առ նախադասություն, կհետախուզեր ամեն մի նախադասության բովանդակությունը, շոշափելիորեն ցույց կտար նրա անմտությունը, կհայտաբերեր բոլոր հակասությունները և տնտեսագիտական վրիպումները (որինակ՝ այն, վոր աշխատամիջոցներն այսոր կազմում են «կապիտալիստական դասակարգի մենաշնորհը», կարծես թե գոյություն չունեն հողատերեր, կամ աշխատանքի ազատագրության» դրույթը՝ բանվոր դասակարգի

[1] Ենգելսը նկատի ունի Մարքսի «Գոթայի ծրագրի քննադատությունը»։ Բայց նա սխալվում եր, յենթադրելով, թե Բեբելը ծանոթ եր «Քննադատությանը»։ Յերբ Ենգելսը 1891 թվին հրատարակեց «Քննադատությունը», պարզվեց, վոր Վ. Լիբկնեխտը, հակառակ Մարքսի ուղղակի արած ցուցումին (տես նրա նամակը Բրակեյին, եջ 80 շար.), Բեբելին ցույց չի տվել այդ փաստաթուղթը. «Փաստաթուղթը 1875 թ. մայիս-հունիսին, Ենգելսի արտահայտության համաձայն, գիտակցաբար թաքցրել ու ներքնակի տակ եյին դրել» (նամակ Կաուցկուն 1891 թվի փետրվարի 11-ին)։ Բեբելը նրա հետ ծանոթացավ միմիայն 1891 թվին, յերբ «Քննադատությունն» արդեն տպագրվեց «Neue Zeit»-ում։ Հարկավոր ե ավելացնել, վոր «Քննադատությունը» կարդալով համարի լույս տեսնելուց դեռ առաջ Բեբելը փորձ արեց կանգնեցնել նրա հրապարակումը և համապատասխան հեռագիր ուղարկեց, բայց արդեն ուշ եր։ (Տես «Vorwärts», Բեռլին, 26 փետրվարի 1891 թ.)։

ազատագրության փոխարեն, այնինչ հենց աշխատանքն է, վոր այսօր չափազանց ազատ է) և այդպիսով մեր կուսակցությունը կդարձներ սոսկալիորեն ծիծաղելի։ Դրա փոխարեն՝ բուրժուական թերթերի ավանակները միանգամայն լրջորեն են ընդունել այդ ծրագիրը, կարդացել դրանում այն, ինչ վոր չկա ամենևին, և կոմունիստական իմաստ տվել նրան։ Բանվորներն էլ են, ըստ յերևույթին, վարվում այդպես։ Յեվ հենց այդ հանգամանքն է միայն, վոր հնարավորություն ընձեռեց Մարքսին և ինձ՝ հրապարակորեն չհրաժարվելու այդ ծրագրից։ Քանի դեռ մեր հակառակորդները, ինչպես և բանվորները, մեր միտքն են կարդում այդ ծրագրում, մեզ թույլատրելի յե լռել այդ մասին։

Յեթե անձնական կազմի արդյունքը Ձեզ բավարարում է, ապա մեր պահանջներն էլ բավականաչափ իջած պիտի լինեն։ Յերկո՛ւսը մերոնցից, իսկ յերեքը լասսալյաններից։ Ուրեմն, այդտեղ էլ մերոնք հավասար իրավունքներ ունեցող դաշնակիցներ չեն, այլ պարտվածներ, նախապես ճնշված՝ ձայների մեծամասնությամբ։ Կոմիտեյի գործունեյությունն էլ, վորքան մեզ հայտնի յե, մխիթարական չէ. 1) Բրակեյի և Բ. Բեկքերի յերկու գրվածքները լասսալականության մասին՝ կուսակցական գրականության ցուցակի մեջ չմտցնելու վորոշումը. յեթե այդ վորոշումը հետ է վերցված, ապա դա տեղի յե ունեցել անկախ Կոմիտեյից և Լիբկնեխտից։ 2) Արգելումն Վալթայխին՝ լինել «Frankfurter Zeitung»-ի թղթակիցը, ինչպես առաջարկում եր Զոննեմանը։ Դրա մասին Զոննեմանն ինքն է պատմել Մարքսին՝ նրա ճանապարհորդության ժամանակ։ Այդ խնդրում ինձ ավելի զարմացնում է Կոմիտեյի հրակայական հիմարությունը, քան նրա հանդգնությունը և այն պատրաստակամությունը, վորով Վալթայխը յենթարկվել է այդ վորոշմանը՝ փոխանակ արհամարհելու այն։ Կոմիտեն ավելի շուտ պիտի հոգար, վոր բոլոր վայրերից էլ միայն մերոնք սպասարկեյին մի այնպիսի թերթի, ինչպիսին է «Frankfurter»-ը[1]։

...Թե այդ ամբողջ պատմությունը մի դաստիարակչական եքսպերիմենտ է, վոր մինչև իսկ այս պայմաններում խոստանում է մի շատ նպաստավոր հետևանք,—դրանում դուք միանգամայն իրավացի յեք։ Միությունը՝ վորպես այդպիսին՝ մի խոշոր հաջողություն է, յեթե տևի յերկու տարի։ Սակայն այդ կարելի յեր ձեռք բերել անկասկած շատ ավելի եժան գնով։

Ֆ. Ե.

---

1 Այս պարբերության առթիվ տե՛ս Էնգելսի՝ 1875 թվի մարտի 11-ին Բրակեյին ուղղած նախորդ նամակը և եջ 84—85, ծանոթագրությունները։

ՖՐԻԴՐԻԽ ԷՆԳԵԼՍԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ [1]

Այստեղ տպագրված ձեռագիրը,—թե կցված նամակը Բրակեին [2] և թե ծրագրի նախագծի քննադատությունը,—ուղարկված էր Բրակեին 1875 թվականին, Գոթայի միացման համագումարից քիչ առաջ, տեղեկացնելու համար Գայբին, Աուերին, Բեբելին ու Լիբկնեխտին [3], և ապա վերադարձնելու Մարքսին։ Վորովհետև Հալլեյի կուսակցական համագումարը [4] մտցրել է իր որակարգի մեջ Գոթայի ծրագրի վերաբերմամբ մտքերի փոխանակություն, ուստի կարծում եմ, վոր յեթե շարունակեյի գաղտնի պահել հրատարակությունից այս կարևոր—գուցե և ամենակարևոր—փաստաթուղթը, վորը վճռական նշանակություն պիտի

---

[1] Այս առաջաբանը կցեց Էնգելսը «Քննադատությանը», յերբ հրատարակեց այն «Neue Zeit»-ում 1891 թվին։ Հրատարակման պատմության առթիվ տե՛ս ստորև, Էնգելսի նամակը Կ. Կաուցկուն 1891 թվի փետրվարի 23-ին և այս հրատարակության առաջաբանը, եջ 13 շար.։

[2] Տես Մարքսի նամակը Բրակեին 1875 թ. մայիսի 5-ին, եջ 80։

[3] Բրակեյի, Գայբի, Աուերի, Բեբելի և Լիբկնեխտի մասին տես ծանոթագրությունները եջ 65, 70, 75 և 80։

[4] Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության համագումարը Հալլեյում,—առաջին համագումարը սոցիալիստների դեմ ուղղված բացառիկ որենքի վերացումից հետո,—1890 թվի հոկտեմբերի 16-ին Գոթայի ծրագրի գլխավոր հեղինակ Վ. Լիբկնեխտի առաջարկությամբ վորոշեց կուսակցության հետևյալ համագումարի համար նոր ծրագրի նախագիծ պատրաստել։ Լիբկնեխտի կազմած և համագումարի կողմից ընդունված բանաձևն այդ վորոշումը նրանով եր հիմնավորում, թե Գոթայի ծրագիրը, «վորքան էլ այն հիանալիորեն արդարացրեց իրեն վերջին 15 տարիների մարտերում, առանձնապես բացառիկ որենքի շրջանում, այնուամենայնիվ շատ կետերում արդեն հնացած ե»։ Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի նոր ծրագիրն ընդունվեց Երֆուրտի համագումարում («Երֆուրտի ծրագիր»)։ Գոթայի ծրագրի համեմատությամբ վերջինս մի մեծ քայլ եր դեպի առաջ, բայց, հակառակ Էնգելսի համառ պահանջին, այն լռության մատնեց պրոլետարիատի դիկտատուրայի հարցը և անգամ պահանջների շարքում մինչև իսկ դեմոկրատական հանրապետության պահանջ չեր պարունակում։

ունենա հարցի քննության ժամանակ, կատարած կլիներ խարդախություն։

Սակայն ձեռագիրն ունի նաև մի ուրիշ, ավելի լայն նշանակություն։ Այստեղ առաջին անգամ պարզ և վորոշ կերպով հանդես է բերված Մարքսի դիրքն այն ուղղության նկատմամբ, վոր սկսել եր Լասսալն իր ագիտացիայի հենց առաջին որից, ըստվորում այդ դիրքը վերաբերում է թե նրա տնտեսական սկզբունքներին և թե տակտիկային։

Անողոք խստությունը, վորով այստեղ տարրալուծվում է ծրագրի նախագիծը, անողոքությունը, վորով ձեռք բերված յեզրակացություններն են ձևակերպվում, նախագծի թերություններն են ցուցաբերվում,—այդ բոլորն այսոր, տասն և հինգ տարի անցնելուց հետո, այլևս չեն կարող վիրավորական լինել։ Յուրահատուկ լասսալականներ գոյություն ունեն միայն արտասահմանում, վորպես մեկուսացած բեկորներ, և նույնիսկ Գոթայի ծրագրի ստեղծագործողներն այն լքեցին Հալլեյում՝ բացարձակ անբավարար լինելու պատճառով։

Բայց և այնպես յես բաց եմ թողել ու բազմակետերով փոխարինել միքանի անձնական սուր արտահայտություններ և գնահատականներ, վորոնք նշանակություն չունեյին խնդրի եյության համար։ Մարքսն ինքը կվարվեր այդպես, յեթե հրատարակելու լիներ իր ձեռագիրն այսոր։ Տեղ-տեղ յեղած կրքոտ լեզուն հետևանք եր յերկու հանգամանքի։ Նախ՝ Մարքսը և յես շատ ավելի սերտորեն եյինք կապված գերմանական շարժման հետ, քան վորևե մի ուրիշ շարժման. այդ պատճառով ել ծրագրի այս նախագծի մեջ հայտաբերված վորոշակի հետաշարժ քայլը մեզ պիտի առանձնապես խիստ հուզեր։ Յերկրորդ՝ մենք այն ժամանակ, Ինտերնացիոնալի Հաագայի համագումարից հազիվ յերկու տարի անց [1], գտնվում եյինք ամենաբուռն պայքարի մեջ Բա-

[1] I Ինտերնացիոնալի հինգերորդ, Հաագայի, կոնգրեսը 1872 թվի սեպտեմբերին անցավ մի կողմից բակունիստների, իսկ մյուս կողմից Գլխավոր խորհրդի միջև տեղի ունեցող պայքարի նշանի տակ, ըստվորում Գլխավոր խորհրդի պայքարը ղեկավարում եյին Մարքսն ու Ենգելսը։ Կոնգրեսի մեծամասնությունն անցավ Գլխավոր խորհրդի կողմը։ Բակունինին վտարեցին։ Սակայն բակունիստները շարունակեցին Ինտերնացիոնալի դեմ պայքարել նաև Հաագայից հետո. յերկու-յերեք տարի անց I Ինտերնացիոնալը—Բանվորների միջազգային ընկերությունը—ֆորմալ կերպով դադարեցրեց իր գոյությունը,—այն բանից հետո, յերբ նա տասը տարի շարունակ ղեկավարում եր յեվրոպական պատմության մի կողմը, և այն ել հատկապես այն կողմը,

կունինի և նրա անարխիստների դեմ [1], վորոնք մեզ պատասխանատու եյին համարում այն բոլորի համար, ինչ կատարվում եր բանվորական շարժման մեջ Գերմանիայում։ Մենք պետք ե ուրեմն սպասեյինք, վոր այդ ծրագրի գաղտնի հայրությունն ել մեզ պիտի վերագրեյին։ Այդ նկատառումներն այժմ վերացած են և դրանց հետ միասին վերացած ե նաև նշած տեղերի անհրաժեշտությունը։

վորի մեջ պարունակված ե ամբողջ ապագան» (Ենգելսը՝ Զորգեյին 1874 թ. սեպտեմբերի 12-ին)։

[1] Մարքսիզմի ու բակունինիզմի միջև յեղած սկզբունքային ու գործնական ամենագլխավոր տարաձայնությունների մասին Լենինը գրում եր. «Մարքսիզմն անարխիզմից նրանով ե տարբերվում, վոր ընդունում ե պետության անհրաժեշտությունը սոցիալիզմին անցնելու համար, — բայց (և սրա մեջ ե տարբերությունը Կաուցկուց և Ընկ.) վոչ այնպիսի պետության անհրաժեշտությունը, ինչպիսին ե սովորական պառլամենտական բուրժուական դեմոկրատական հանրապետությունը, այլ այնպիսի պետության, ինչպիսին եր 1871 թ. Փարիզի Կոմունան, ինչպիսին եյին 1905 և 1907 թվականների Բանվորական պատգամավորների խորհուրդները»։ «Այն ժամանակ, Փարիզի Կոմունայի պարտությունից հետո, պատմությունն օրակարգի հարց դարձրեց դանդաղ կազմակերպական-լուսավորական աշխատանքը։ Ուրիշը չկար։ Անարխիստները վոչ միայն թեորիայի տեսակետից արմատապես սխալ եյին (և սխալ են միշտ), այլև թե տնտեսապես և թե քաղաքականապես անարխիստները ճիշտ չգնահատեցին մոմենտը, չըմբռնելով համաշխարհային սիտուացիան — իմպերիալիստական շահույթներով այլասերված Անգլիայի բանվորը, խորտակված Կոմունան Փարիզում, հենց նոր (1871 թ.) հաղթանակած բուրժուական-ազգային շարժումը Գերմանիայում, դարավոր քնով քնած կիսաճորտական Ռուսաստանը։ Մարքսն ու Ենգելսը ճիշտ հաշվի առան մոմենտը, ըմբռնեցին սոցիալական հեղափոխության սկզբնավորությանը դանդաղորեն մերձենալու խնդիրները» («Задачи пролетариата в нашей революции», հատոր XX, եջ 132 — 133)։ «Պետություն և հեղափոխություն» գրքում Լենինը գրում ե. «Անարխիստները փորձում եյին հենց Փարիզի Կոմունան այսպես ասած՝ «իրենցը» հայտարարել, վոր իբր թե հաստատում ե իրենց ուսմունքը, բայց նրանք ամենևին չեն հասկացել Կոմունայի դասերն ու Մարքսի վերլուծությունն այդ դասերի վերաբերմամբ։ Այն կոնկրետ քաղաքական հարցերի նկատմամբ, թե՝ հարկավոր ե, արդյոք, ջարդուփշուր անել հին պետական մեքենան և ինչո՞վ պետք ե փոխարինել այն — անարխիզմը վոչինչ չավեց, վոր գոնե մոտավորապես համապատասխաներ ճշմարտությանը» (հատոր XXI, եջ 442. հայերեն թարգմանություն, Յերևան 1937 թ., եջ 110—111)։ Բուխարինի սխալների մասին մարքսիստների ու անարխիստների միջև յեղած տարբերության հարցի առթիվ դեպի պետությունն ունեցած իրենց վերաբերմունքի մեջ՝ տե՛ս Լենինի «Интернационал молодежи» հոդվածը (հատոր XIX, եջ 295 — 296)։ Մարքսիզմի և անարխիզմի միջև յեղած հիմնական սկզբունքային տարաձայնության հարցի մասին տես նաև եջ 73 — 74, ծանոթագր. 2։

Նաև գրաքննական նկատառումներով միքանի խոսքեր փոխարինված են բազմակետերով։ Որտեղ յես ավելի մեղմ արտահայտություն պիտի ընտրեյի, այդպիսին առել եմ անկյունավոր փակագծերի մեջ[1]։ Բացի սրանցից, ձեռագիրը տպագրված է բառացի։

Ֆր. ԷՆԳԵԼՍ

Լոնդոն, 6 հունվարի 1891 թ.

[1] «Քննադատության» մեր հրատարակած տեքստում բոլոր բաց թողնված հատվածները վերականգնված են։

ԷՆԳԵԼՍԸ — ԿԱՈՒՑԿՈՒՆ

Լոնդոն, 23 փետրվարի 1891 թ.

Սիրելի Կաուցկի[1].

Անցյալ օրը ես շտապեցի ուղարկել քեզ իմ շնորհավորանքը, որ հավանաբար արդեն ստացած կլինես։ Իսկ այժմ կրկին դառնանք Մարքսի նույն նամակին։

Պարզվեց, որ անհիմն էր երկյուղը, թե այդ նամակը զենք կտա մեր թշնամիների ձեռքը։ Չարամիտ ինսինուացիաներ կարելի է, իհարկե, տարածել ամեն մի առիթով։ Բայց ընդհանուր առմամբ թշնամիներն ստացել են մի այնպիսի տպավորություն— լիակատար տարակուսանք՝ այս անհերքելի ինքնաքննադատությունից, ինչպես նաև այնպիսի զգացում—որպիսի ներքին ուժ պիտի ունենա կուսակցությունը, որ կարողանա ինքն իրեն հրամցնել նման բաներ։ Դա պարզ երևում է հակառակորդների լրագրերից, որ ուղարկել ես ինձ (շնորհակալություն) և որ ստացել եմ ուրիշներից։ Ասեմ շիտակորեն՝ հենց այդ պատճառով էլ ես հրապարակել եմ այդ փաստաթուղթը։ Ես շատ լավ հասկանում էի, որ առաջին մոմենտում դա ոմանց պիտի դիպչեր շատ անհաճո կերպով։ Հնար չկար խուսափել դրանից։ Սակայն ամենից գերակշռողը գործնական բովանդակությունն է։ Ես գիտեի՝ կուսակցությունն այնքան էր ամուր, որ կարող էր տանել այդպիսի քննություն, և հույս ունեի, որ ներկայումս էլ նա կհասկանա 15 տարի առաջ արտասանած այդ անկեղծ խոսքն այնպես, ինչպես պետք է։ Ուստի կարելի կլինի արժանավոր հպարտությամբ մատնանշել ուժերի այդ քննությունը և ասել—կարելի՞ չէ արդյոք գտնել մի ուրիշ կուսակցություն, որը համարձակվեր անել մի նման բան։ Բայց դա թողնված

---

[1] Կաուցկին այն ժամանակ խմբագիրն էր գերմանական սոցիալ-դեմոկրատիայի թեորիական օրգան «Neue Zeit» («Նոր ժամանակ») շաբաթաթերթի, որի մեջ Էնգելսը հրատարակեց Մարքսի «Քննադատությունը»։

եր Սաքսոնիայի և Վիեննայի «Arbeiterzeitung»-ներին և «Züricher Post»-ին[1]:

Եթե «Neue Zeit»-ի № 21-ի մեջ հրապարակման պատասխանատվությունը վերցնում ես քեզ վրա, ապա դա չափազանց զովելի չէ, սակայն չմոռանաս, որ առաջին դրդումը համենայն դեպս տվել եմ ես և որ որոշ չափով ես եմ հարկադրել քեզ անել այդ[2]: Ուստի գլխավոր պատասխանատվությունը ես վերցնում եմ ինձ վրա։ Ինչ վերաբերում է մանրամասնություններին, ապա միշտ կարելի է ունենալ տարբեր կարծիքներ։ Ես ջնջել եմ ու փոխել այն ամենը, որի դեմ դու և Դիցը[3] առարկում էիք, և եթե Դիցը դեռ ավելի շատ ջնջեր, ես այդ դեպքում էլ կլինեի ըստ հնարավորության զիջող, ինչպես այդ ապացուցել եմ Ձեզ փաստորեն։ Գլխավորն այն է, որ ես պարտավոր էի հրապարակել այդ նյութը, հենց որ ծրագիրը քննության առարկա դարձավ։ Մյուս կողմից էլ Լիբկնեխտն է ուխտ հանդիսացել. Հալլեյում իր արած զեկույցի մեջ նա առանց քաշվելու մասամբ օգտագործում է իր ցիտատները Մարքսից որպես իր սեփականությունը, մասամբ էլ վիճաբանում փաստաթղթի դեմ՝ առանց հիշատակելու այն[4]: Մարքսն անպայման կհակադրեր իր օրի-

---

[1] Այդ լրագրերից առաջին յերկուսը սոցիալ-դեմոկրատական էյին, իսկ վերջինը՝ բուրժուական։

[2] Էնգելսը նկատի ունի այն հանգամանքը, որ յերբ նա Կաուցկուն հրապարակման համար ուղարկեց Մարքսի «Գոթայի ծրագրի քննադատությունը», նրան նախազգուշացրեց, որ յեթե այդ աշխատությունը չտպագրվի «Neue Zeit»-ում, ապա նա (Էնգելսը) կհրատարակի այն Վիեննայի «Arbeiter Zeitung»-ում («Բանվորական լրագրում»), այսինքն՝ այս թե այն ձևով Մարքսի «Քննադատությունը» լույս կտեսնի։

[3] Վ. Դից (1843—1922)—գերմանական սոցիալ-դեմոկրատ, ռայխստագի անդամ, կուսակցական հրատարակչության ղեկավար Շտուտգարտում, որտեղ հրատարակվում էր նաև «Neue Zeit»-ը։ Միշտ պատկանել է գերմանական սոցիալ-դեմոկրատիայի աջ օպորտունիստական թևին, պատերազմի ժամանակ—սոցիալ-շովինիստ։

[4] Թեև իր զեկուցման մեջ Հալլեյի համագումարում (տես էջ 90, ծանոթագրություն 4) Լիբկնեխտն ընդունեց, որ հին ծրագիրը վերամշակման կարիք ունի, բայց և այնպես նա ամեն կերպ գովաբանում էր այն իբրև «պայքարի դրոշ», իբրև «ուղեցույց աստղ» և այլն։ Վերլուծելով Գոթայի ծրագրի յուրաքանչյուր կետն առանձին և տեղ-տեղ մեջ բերելով Մարքսի ու Էնգելսի առարկությունները, առանց նրանց անունները հիշատակելու, Լիբկնեխտն ամեն մի կետի վերլուծումը վերջացնում էր այն յեզրակացությամբ, թե այդ կետն «սկզբունքային տեսակետից» կամ «հիմնականում» «անկասկած ճիշտ է, թեև, գուցե, վերախմբագրման կարիք ունի»։

գինալն այդ վերամշակմանը, և յես պարտավոր եյի անել նույնը նրա փոխարեն։ Դժբախտաբար յես այդ ժամանակ փաստաթուղթը չունեյի ձեռքիս տակ. մեծ դժվարությամբ յես գտել եմ այն բավականաչափ ուշ։

Դու ասում ես՝ Բեբելը գրել է քեզ, թե Մարքսի գնահատականը Լասսալի մասին շատ է գրգռել հին լասսալյաններին։ Դա շատ հնարավոր է։ Բայց չէ՞ որ այդ մարդիկ չգիտեն իրական պատմությունը, և ըստ յերևույթին վոչինչ չի արվել՝ նրանց այդ բանում լուսավորելու համար[1]։ Յես մեղավոր չեմ, որ այդ մարդկանց հայտնի չէ, թե Լասսալի ամբողջ մեծությունն այն է, որ Մարքսը թույլ եր տալիս նրան մի շարք տարիների ընթացքում պսակավորել իրեն Մարքսի գիտական հետազոտությունների պտուղներով, որպես իր սեփականը, միաժամանակ խեղաթյուրելով՝ տնտեսագիտական իր կրթության պակասավորության շնորհիվ։ Բայց յես Մարքսի կտակակատարն եմ, և յես ունեմ ըստ այդմ ել իմ պարտականությունները։

Ահա արդեն 26 տարի յե, ինչ Լասսալը պատկանում է պատմությանը։ Յեթե բացառիկ օրենքի տիրապետության ժամանակաշրջանում նա չի յենթարկվել պատմական քննադատության, ապա այժմ արդեն ժամանակն է, որ այդ վերջինը մտնի իր իրավունքների մեջ և պարզի Լասսալի ճշմարիտ դերը Մարքսի նկատմամբ։ Նրա ճշմարիտ դեմքը ծածկող և գեղեցկացնող լեգենդան չի կարող դառնալ կուսակցության հավատո հանգանակը։ Վոր-

[1] Այս կշտամբանքն ուղղված է ամենից առաջ Կաուցկու հասցեյին։ Ձգտելով մեղմացնել այն տպավորությունը, որ լասսալականության մարքսյան քննադատությունը գործեց գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ղեկավար շրջանների վրա, Կաուցկին «Neue Zeit»-ի 21-րդ համարում մի հոդված զետեղեց «Մեր ծրագիրները» վերնագրով, որի մեջ նա օպորտունիստաբեն նվազեցնում եր Մարքսի քննադատության գործնական նշանակությունը, սահմանագծվելով նրանից ու փառաբանելով Լասսալի մեծ «ծառայությունները»։ «Այն դերը, — գրում եր ի միջի այլոց Կաուցկին, — որ բռնել է Մարքսը Լասսալի վերաբերմամբ, չի համընկնում գերմանական սոցիալ-դեմոկրատիայի դերի հետ... վերջինս նրան այլ կերպ է վերաբերվում, քան Մարքսը... Կարո՞ղ ենք մենք մոռանալ այն մարդուն, որի յերկերից մենք բոլորս, կուսակցության հին անդամներս, ինչպես նաև ավելի յերիտասարդների վիթխարի մեծամասնությունը, տոգորվել ենք սոցիալիստական գիտելիքների տարրերներով, առաջին սքանչացումով սոցիալիզմի առաջ։ Մենք ուշադրությամբ ուսումնասիրում ենք ու կշռադատում այն ամենը, ինչ որ ասում է Մարքսն իր աշակերտ Լասսալի մասին, բայց չենք մոռանում, որ Լասսալն էլ պատկանում եր մեր ուսուցիչների ու առաջավոր մարտիկների շարքերին» («Neue Zeit», 1890—91 թ., 1 հատոր, եջ 680)։

քան էլ բարձր դասելու լինենք Լասսալի ծառայությունը բանվորական շարժման մեջ, նրա պատմական դերը մնում է երկակի: Լասսալ-սոցիալիստին ամեն քայլափոխին ուղեկցում է Լասսալ-դեմագոգը: Ագիտատոր և կազմակերպիչ Լասսալի այսպես ասած բոլոր ծակոտիներից յերևում է իրավաբանը, վոր մղում է Հացֆելդյան պրոցեսը[1]: Նույն ցինիզմը միջոցների ընտրության մեջ, նույն հակումը՝ իրեն շրջապատել կասկածելի և վաճառվող մարդկանցով, վորոնց կարելի յե օգտագործել իբրև պարզապես զենք, կամ էլ շպրտել դեն: Մինչև 1862 թվականը գործնականում լինելով յուրահատուկ պրուսական վուլգար դեմոկրատ՝ բոնապարտիստական ուժեղ հակումներով (հենց նոր աչքի անցրի նրա նամակները Մարքսին), նա հանկարծ փոխում է իր ֆրոնտը և սկսում իր ագիտացիան՝ զուտ անձնական բնույթ կրող պատճառներից դրդված: Յեվ հազիվ յերկու տարի անց՝ նա սկըսեց արդեն ձգտել, վոր բանվորներն անցնեն թագավորի կողմը՝ ընդդեմ բուրժուազիայի, և ծայր տվավ այնպիսի ինտրիգների՝ բնավորությամբ իրեն նման Բիսմարկի հետ, վորոնք անխուսափելիորեն պիտի բերեյին փաստական դավաճանության բանվորական շարժման նկատմամբ, յեթե նա, իր բարեբախտությամբ, չսպանվեր ժամանակին: Իր ագիտատորական գրվածքներում այն ուղիղը, վոր նա վերցրել է Մարքսից, այնպես է հյուսված իր սեփական, լասսալյան, և, վորպես որենք, սխալ դատողությունների հետ, վոր անկարելի յե մեկը բաժանել մյուսից: Բանվորների մի մասը, վոր վիրավորված է Մարքսի դատավճռից, գիտե Լասսալին միայն յերկու տարվա նրա ագիտացիայից, իսկ դրա վրա էլ նայում է փայլուն ակնոցներով: Սակայն այդպիսի նախապաշարումների հանդեպ պատմական քննադատությունը չի կարող ընդմիշտ սառել-մնալ պատվավոր դիրքի մեջ: Իմ պարտականությունն էր պարզել, վերջապես, Մարքսի և Լասսալի փոխհարաբերությունը: Յեվ յես այդ արի: Դրանով կարող եմ առայժմ բավականանալ, մանավանդ վոր ունեմ շատ ուրիշ գործեր: Իսկ Մարքսի գրչին պատկանող հրապարակված անխնա դատողությունը Լասսալի մասին բավականին կունենա իր ներգործությունը և աշխատանքի շունչ կտա ուրիշներին: Յեթե

---

[1] Լասսալն իբրև փաստաբան մի ամբողջ տասնամյակ (1845—1854) վարում էր կոմսուհի Սոֆիա Հացֆելդի (1805—1881) խիստ բարդ և այն ժամանակ խիստ «զգայացունց» ապահարզանի պրոցեսը, ըստվորում այդ գործը վարում էր փաստաբանական բոլոր հնարավոր «տրյուկներով»:

հարկադրված լինեյի յես ինքս ձեռք զարնելու այդ աշխատանքին, ընտրության առջև կանգ չեյի առնի. յես ստիպված պիտի լինեյի միանգամ ընդմիշտ վերջ տալու Լասսալի մասին յեղած լեգենդային։

Ֆրակցիայում սկսել են խոսել «Neue Zeit»-ի համար գրաքննություն մտցնելու անհրաժեշտության մասին. լա՜վ է։ Ի՞նչ է դա—բացառիկ օրենքի ժամանակների ֆրակցիոնական դիկտատուրայի ստվե՞ր (դիկտատուրայի, վորն այն ժամանակ անհրաժեշտ եր և կիրառվում եր հրաշալի կերպով)[1], թե՞ Շվայցերի յերբեմնի խիստ կենտրոնացած կազմակերպության[2] հիշողությունները։ Դա իսկապես մի փայլուն միտք է—յենթարկել գերմանական սոցիալիստական գիտությունը՝ սոցիալիստների դեմ ուղղված բիսմարկյան օրենքից ազատագրվելուց հետո՝ մի նոր հակասոցիալիստական օրենքի, վորը պատրաստվելու և կիրառվելու յե հենց սոցիալ-դեմոկրատական ղեկավարության կողմից։ Ասենք, առանց մեզ էլ միջոցներ են ձեռք առնվում, վորպեսզի ծառերը չբարձրանան սոսկալի բարձր։

«Vorwärts»-ում զետեղված հոդվածն ինձ չի հետաքրքրում[3]։

---

[1] Սոցիալիստների դեմ հրատարակված բացառիկ օրենքի ժամանակ (1878—1890), յերբ բոլոր լեգալ բանվորական կազմակերպություններն արգելված եյին, ռայխստագի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան հանդիսանում եր կուսակցության գերագույն օրգանը։ Չնայած ոպորտունիստների խոշոր քանակությանը ֆրակցիայի մեջ՝ ղեկավարությունը գտնվում եր Բեբելի ձեռքում, վորը հենվում եր կուսակցական մասսաների վրա, ինչպես և Ցյուրիխում լույս տեսնող, հետագայում Լոնդոնում հրատարակվող անլեգալ կենտրոնական օրգան «Սոցիալ-դեմոկրատի» վրա, վոր ընդհանուր առմամբ և ամբողջովին խմբագրվում եր Ենգելսի ցուցումների համաձայն։

[2] Այսինքն՝ լասսալյանների կուսակցության, Ընդհանուր գերմանական բանվորական միության, վորի առաջնորդը 1864 թվից մինչև 1871 թիվը Յոհանն Բապտիստ Շվայցերն (1833—1875) եր։ Նա կենտրոնական օրգանի խմբագիր եր, կուսակցության նախագահ, ռայխստագի անդամ։ Շարունակում եր խաղեր սարքելու լասսալյան քաղաքականությունը Բիսմարկի հետ, վորը,—ինչպես պարզվեց միքանի տարի առաջ,—ֆինանսավորում եր նրա լրագրին։ Հետևելով Լասսալի տրադիցիաներին՝ Շվայցերը ղեկավարում եր միությունը դիկտատորական յեղանակով։ Նա փորձում եր իր դիկտատորական իշխանությունը պահպանել նաև այն բանից հետո, յերբ նրա դեմ ուժեղ ոպոզիցիա ծագեց, և ձգտում եր այդ իշխանությունը տարածել արհմիութենական կազմակերպությունների վրա, վորոնց ստեղծմանը նա,—ճիշտ է, միմիայն մասսաների ճնշման ներքո,—ձեռնարկել եր 1868 թվին։

[3] Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի կենտրոնական օրգան «Vorwärts»-ի («Հառաջի») խմբագրական հոդվածն արտահայտում եր կուսակցության վարչության պաշտոնական դիրքը՝ Մարքսի «Քննադատության»

Յես կսպասեմ, մինչև որ Լիբկնեխտը պատմի ամբողջ պատմությունը[1]. այն ժամանակ էլ, թերևս, պատասխանեմ յերկուսին էլ ավելի ընկերական տոնով։ «Vorwärts»-ի հոդվածում պետք կլինի միայն ուղղել մի քանի անճշտություններ (այնտեղ ասված է, օրինակ, թե մենք դեմ եյինք միացմանը, թե դեպքերն ապացուցեցին Մարքսի սխալը և այլն) և ճշգրտել այն, ինչ որ ըստ ինքյան պարզ է։ Այդ պատասխանով, յես կարծում եմ, պետք է վերջ տալ ներկա դիսկուսիային, գոնե իմ կողմից, յեթե միայն նոր հարձակումները կամ սխալ պնդումները չստիպեն ինձ հետագա քայլեր անել։

Դիցին ասա, թե յես զբաղված եմ «Ծագման»[2] վրա աշխատելով։ Այնինչ այսօր Դիցը գրում է Ֆիշերին[3] և խնդրում նաև յերեք նոր նախաբան[4]։

հրատարակման վերաբերմամբ։ Հոդվածը կտրուկ կերպով դատապարտում էր Մարքսի տված գնահատականը Լասսալի մասին և կուսակցության ծառայությունն էր համարում, որ նա, հակառակ Մարքսի կարծիքի, ընդունել է Գոթայի ծրագրի նախագիծը։ Հոդվածն այնուհետև պնդում էր, թե կուսակցության զարգացումն ապացուցել է իբր Մարքսի անճիշտ լինելը և թե՝ ռայխստագի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան ու կուսակցության վարչությունը յերբեք իրենց համաձայնությունը չեյին տա Մարքսի «Քննադատության» հրատարակելու համար։ Այդ հոդվածում կար, ի միջի այլոց, նաև այսպիսի մի հայտարարություն. «Գերմանական սոցիալ-դեմոկրատները վոչ մարքսիստ են, վոչ լասսալական, նրանք սոցիալ-դեմոկրատներ են»։ «Neue Zeit», 1890—91, հատոր I, եջ 684։

[1] Լիբկնեխտը պատրաստվում էր Գոթայի ծրագրի պատմության մասին հատուկ հոդված տալ «Neue Zeit»-ում, որը,—Կաուցկու կարծիքով,— «պետք է տար ընդհանրապես մեր կուսակցական ծրագրերի պատմությունը և, մասնավորապես, այն պայմանների պատմությունը, վորոնց շնորհիվ 1875 թվին Գոթայի ծրագիրը կարող էր կուսակցության մեծամասնության թեորիական գիտակցության արտահայտություն ծառայել»։ (Նույն տեղը, եջ 681)։ Այդպիսի «լրացման» կարիք ունի Մարքսի «Քննադատությունը»,— գրում էր Կաուցկին վերևում հիշված «Մեր ծրագրերը» հոդվածում,—և «Էնգելսը չկարողացավ տալ այն»։

[2] Խոսքը վերաբերում է Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության ու պետության ծագումը» գրքի նոր, չորրորդ, հրատարակությանը։ Այդ հրատարակությունը լույս ընծայվեց կուսակցության Շտուտգարտի հրատարակչության կողմից («Դիցի հրատարակչություն»)։

[3] Ռիխարդ Ֆիշեր (1855—1926)—գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության վարչության անդամ, կուսակցության բեռլինյան գրահրատարակչության ղեկավար։

[4] 1891 թվին Էնգելսն առաջաբաններ է գրել նոր հրատարակվող հետևյալ բրոշյուրների համար. «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում», «Վարձու աշխատանք և կապիտալ», «Սոցիալիզմի զարգացումն ուտոպիայից դեպի գիտություն»։

ԼԵՆԻՆԸ «ԳՈԹԱՅԻ ԾՐԱԳՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ

«ՄԱՐՔՍԻԶՄԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՏԵՏՐԻՑ

(հունվար–փետրվար 1917 թ.)

ԷՆԳԵԼՍԻ ՆԱՄԱԿԸ ԲԵԲԵԼԻՆ

Պետության վերաբերյալ հարցի համար **բացառիկ** *մեծ կարևորություն է ներկայացնում* **Էնգելսի** *նամակը* **Բեբելին**՝ *գրված 18/28.* III. *1875 թ. (Բեբել՝ «Իմ կյանքից», հ.* II, *էջ 318 և հետևյալները։ Շտուտգարտ 1911 թ., նախաբան 2.* IX. *1911 թ.)։*

Ահա գլխավորագույն տեղերը՝ լրիվին.

«... Ազատ ժողովրդական պետությունը դարձել է ազատ պետություն։ Քերականորեն վերցրած՝ ազատ պետությունն այն է, ուր պետությունն ազատ է իր քաղաքացիների հանդեպ, այսինքն մի պետություն՝ բռնապետական կառավարությամբ։ **Պետք էր վերջ տալ պետության վերաբերյալ զրույցին**, *մանավանդ* **կոմունայից հետո, որն այլևս պետություն չէր իր իսկական իմաստով**։ «**Ժողովրդական պետություն**» *ասածդ անարխիստները ձանձրալիության չափ հաճախ են մեր աչքը խոթել, թեև արդեն Մարքսի գրվածքը Պրուդոնի դեմ և ապա «Կոմունիստական մանիֆեստը» ուղղակի ասում են, թե* **սոցիալիստական հասարակակարգի հաստատման հետ միասին պետությունն ինքն իրեն լուծվում է և անհետանում**: *Իսկ վորովհետև պետությունը միայն մի ժամանակավոր հաստատություն է, վորին ծառայեցնում են կռվի, հեղափոխության մեջ, հակառակորդին բռնությամբ ճնշելու համար, ուստի այդ պատճառով էլ պարզ անմտություն է խոսել ազատ ժողովրդական պետության մասին։ Քանի դեռ պրոլետա-*

NB

րիատը կարիք է զգում (ընդգծումը Էնգելսինն է) պետության, նա դրա կարիքն զգում է վոչ թե ազատության շահի, այլ իր հակառակորդներին ճնշելու համար. իսկ
NB հենց վոր հնարավոր է դառնում խոսել ազատության մասին, այն ժամանակ պետությունը դադարում է գոյություն ունենալուց վորպես այդպիսին: Այդ պատճառով էլ մենք կառաջարկեյինք՝ «պետություն» (ընդգծումն Էնգելսինն է) բառի փոխարեն ամեն տեղ դնել հին գերմաներեն գեղեցիկ բառը՝ «համայնք» (Gemeinwesen),
NB վորը հրաշալի կերպով համապատասխանում է ֆրանսական «կոմունա» բառին» (էջ 321—322):

Դա Մարքսի և Էնգելսի, թերևս, ամենանշանավոր և, հավանորեն, ամենասուր տեղն է, այսպես ասած, «ընդդեմ պետության»:

(1) «Պետք է դեն գցել վողջ դրույցը պետության մասին»:

(2) «Կոմունան այլևս պետություն չէր իր իսկական իմաստով» (իսկ ինչ էր. մի անցումային ձև պետությունից դեպի վոչ-պետություն, ակնհայտ է):

(3) «Ժողովրդական պետություն» ասածը անարխիստները բավականաչափ մեր «աչքն էին խոթում» (բառացի=ռեխին էին խփում): (Նշանակում է՝ Մարքսը և Էնգելսն ամաչում էին իրենց գերմանական բարեկամների այդ պարզորոշ սխալի համար.—սակայն նրանք այդ համարում էին, և, իհարկե, այն ժամանակվա պայմանների համաձայն ճիշտ էին համարում, անհամեմատ ավելի պակաս կարևոր սխալ, քան անարխիստների սխալը: Դա N.B.!!):

(4) Սոցիալիստական հասարակակարգի հաստատմամբ պետությունն «ինքն իրեն լուծվում է («արձակվում է») Nota bene և չքանում»... (համեմատիր հետագայում՝ «մեռնում է»)...

(5) Պետությունը «ժամանակավոր հաստատություն» է, վորը հարկավոր է «կռվի, հեղափոխության ժամանակ»... (հարկավոր է պրոլետարիատին, իհարկե)...

(6) Պետությունը պետք է՝ վո՛չ թե ազատության, այլ ճնշման (?) համար (Niederhaltung, իսկապես, չի նշանակում ճնշում, այլ ռեստավրացիայից հետ-պահում՝ հնազանդության մեջ պահում) պրոլետարիատի հակառակորդների։

(7) Յերբ լինի ազատություն, այն ժամանակ չի լինի պետությունը։

Սովորաբար «ազատություն» և «դեմոկրատիա» հասկացողությունները համարում են հոմանիշներ և հաճախ գործածում մեկը մյուսի փոխարեն։ Շատ հաճախ վուլգար մարքսիստները (Կաուցկու, Պլեխանովի և Ընկ. գլխավորությամբ) դատում են հենց այդպես։ Գործնականում դեմոկրատիան ժխտում է ազատությունը։ Զարգացման դիալեկտիկան (ընթացքը) այսպես է—աբսոլուտիզմից դեպի բուրժուական դեմոկրատիան. բուրժուական դեմոկրատիայից դեպի պրոլետարականը. պրոլետարականից դեպի վոչ մեկը։

---

(8) «Մենք» (այսինքն Ենգելսը և Մարքսը) կառաջարկեյինք «ամեն տեղ» (ծրագրում) գործածել «պետության» փոխարեն—«համայնք», «կոմունա» !!! NB !!!!

Այստեղից յերևում է, թե ինչպես են փչացրել, ապականել Մարքսին և Ենգելսին վոչ միայն ոպորտունիստները, այլև Կաուցկին։

Ոպորտունիստները չեն հասկացել այդ ութ հարըստագույն մտքերից և վոչ մեկը !!

Նրանք վերցրել են ներկայիս միմիայն գործնական պահանջը—ոգտագործել քաղաքական կռիվը, ոգտագործել արդի պետությունը՝ պրոլետարիատին կրթելու, դաստիարակելու համար, «զիջումներ կորզելու» համար։ Դա ճիշտ է (ընդդեմ անարխիստների), բայց դա մարքսիզմի դեռ լոկ $^1/_{100}$ մասն է, յեթե կարելի յե այդպես թվաբանորեն արտահայտվել։

Իր պրոպագանդիստական և ընդհանրապես հրապարակախոսական աշխատանքի մեջ Կաուցկին բո-

լրովին մթագնել է (թե՞ մոռացել է. թե՞ չի հասկացել) 1, 2, 5, 6, 7, 8 կետերը և Մարքսի «Ջախջախումը» (Պաննեկուկի հետ 1912 կամ 1913 թ. ունեցած իր բանավեճում (տես ստորև, էջ 45—47) Կաուցկին արդեն գլխիվայր ընկել էր օպորտունիզմի մեջ այդ հարցում)։

Անարխիստներից մեզ տարբերում է (α) պետության օգտագործումն այժմ և (β) պրոլետարիատի հեղափոխության ժամանակ («պրոլետարիատի դիկտատուրա»)—կետեր, վորոնք չափազանց կարևոր են գործնականի համար, իսկույն։ (Այդպիսիք են հենց, վոր մոռացել է Բուխարինը!)։

Օպորտունիստներից ավելի խոր, «ավելի հավիտենական» ճշմարտություններ (αα) պետության «ժամանակավոր» բնույթի մասին, (ββ) դրա վերաբերյալ «զրույցի» վնասակարության, (γγ) պրոլետարիատի դիկտատուրայի վոչ այնքան պետական բնույթի, (δδ) պետության և ազատության հակասության, (εε) պետության փոխարեն «համայնքի» ավելի ճիշտ գաղափարի (հասկացողության, ծրագրային տերմինի) մասին, (ςς) բյուրոկրատական-զինվորական մեքենայի «ջախջախման» մասին։ Չմոռանալ նաև, վոր Գերմանիայի բացահայտ օպորտունիստները (Բերնշտայն, Ֆոլլը և այլն) ուղղակի ժխտում են պրոլետարիատի դիկտատուրան, իսկ պաշտոնական ծրագիրը և Կաուցկին՝ անուղղակի կերպով, չխոսելով նրա մասին ամենօրյա ագիտացիայի ժամանակ և հանդուրժելով Ֆոլլի և նմանների ռենեգատությանը։

Բուխարինին գրված էր VIII. 1916 թ.—«Թող հասունանան քո մտքերը պետության մասին»։ Իսկ նա, չթողնելով, վոր հասունանան, խցկվել է մամուլի մեջ, ինչպես «Nota bene», և արել է այդ այնպես, վոր կաուցկիականներին մերկացնելու փոխարեն՝ օգնել է նրանց իր սխալներով !!։ Իսկ ըստ էության՝ Բուխարինն ավելի մոտ է ճշմարտությանը, քան Կաուցկին։

«Neue Zeit» XIX, 1 (1900—1901) (№ 26, 27. III. 1901 թ.), էջ 804—Մ. Բեեր Անգլիայի անկման մասին, նրա իմպերիալիզմի, նեխման և մյուս յերկրների

իմպերիալիզմի վերաբերյալ գրառումներով։ ——
— NB Նույնպես նա. «Սոցիալական իմպերիալիզմ», «Neue Zeit, XX, 1 (1901—1902), էջ 209 և հետևյալները (փաստերը) և «տրեդյունիոնիզմի այժմյան դրությունը», նույն տեղը, էջ 43 (NB) ((«Իմպերիալիստական-սոցիալական երա»))։ NB

XIX, 2, էջ 197—Վալտերի հոդվածը «ռուսական իմպերիալիզմի» մասին... ((Պետրոս I-ից մինչև Չինաստան XX դարում))։

ՄԱՐՔՍ—«ԳՈԹԱՅԻ ԾՐԱԳՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ»

Էնգելսի նամակը Բեբելին գրված է 28. III. 1875 թ.։ Մարքսի նամակը Բրակեյին Գոթայի ծրագրի քննադատության հետ միասին գրված է մի ամսից ավելի ուշ—5. V. 1875 թ. («Neue Zeit» IX, 1, 1891 թ.) (1890—1891 թ. № 18)։

Այդ նամակում Մարքսն առաջին հայացքից շատ ավելի «պետական» է,—եթե թույլատրելի է գործածել մեր թշնամիների սույն անճոռնի արտահայտությունը,—քան Էնգելսը։

Էնգելսն առաջարկում է (1) ամենևին չխոսել պետության մասին. (2) փոխել այդ բառը «համայնքով». (3) մինչև անգամ հայտարարում է, թե Կոմունան (այսինքն պրոլետարիատի դիկտատուրան) «արդեն պետություն չէ իր իսկական իմաստով»,—իսկ Մարքսը այդ բոլորի մասին և ոչ մի խոսք, *և* ընդհակառակը, *մինչև անգամ խոսում է «կոմունիստական հասարակության ապագա պետականության մասին»*!! («Neue Zeit» IX, 1, էջ 573)։ ! !

Առաջին հայացքից կարող է առաջվել տափակ հակասության, խառնաշփոթության կամ տարաձայնության տպավորություն։ Սակայն դա միայն առաջին հայացքից։

Ահա վճռական (ավյալ կետի նկատմամբ) տողերը Մարքսի նամակից ամբողջովին.

«... «Ժամանակակից հասարակությունը» կապիտալիստական հասարակություն է, որ գոյություն ունի բոլոր կուլտուրական երկրներում առավել կամ

նվազ չափով զերծ միջնադարյան մնացորդներից, առավել կամ նվազ չափով մոդիֆիկացիայի յենթարկված ամեն մի յերկրի ուրույն պատմական զարգացման միջոցով, առավել կամ նվազ չափով զարգացած։ Դրան հակառակ՝ «ժամանակակից պետությունը» փոփոխվում է յերկրի սահմանների հետ միասին. նա այլ է պրուսական-գերմանական կայսրության մեջ, քան Շվեյցարիայում, այլ է Անգլիայում, քան Միացյալ Նահանգներում։ «Ժամանակակից պետությունը», հետևաբար, մի ֆիկցիա յե։

Սակայն զանազան կուլտուրական յերկրների տարբեր պետությունները, չնայած իրենց ձևերի բազմապիսության, ունեն այն ընդհանուրը, վոր բոլորն էլ կանգնած են նորագույն բուրժուական հասարակության հողի վրա՝ մեկը ավելի, մյուսը նվազ չափով կապիտալիստորեն զարգացած։ Այդ պատճառով էլ նրանք վորոշ էական հատկություններով նման են իրար։ Այդ իմաստով է ահա, վոր կարելի յե խոսել «ժամանակակից պետության» մասին, հակադիր այն ապագայի, յերբ կմեռնի նրա այժմյան արմատը՝ բուրժուական հասարակությունը։

Ապա հարց է առաջանում.— ինչպիսի հեղաշրջման կենթարկվի **պ ե տ ա կ ա ն ու թ յ ու ն ը կոմունիստական հասարակության մեջ։** Ուրիշ խոսքով՝ **ի՞նչպիսի հասարակական ֆունկցիաներ կմնան այնտեղ, վորոնք նման են պետության այժմյա ֆունկցիաներին։** Այդ հարցին կարելի յե միայն գիտականորեն պատասխանել, և այդ պրոբլեմին չի կարելի նույնիսկ լվի մի վոստյունի չափ մոտենալ, յեթե ժողովուրդ բառը պետություն բառին անգամ հազարավոր ձևերով կապակցվի։

Կապիտալիստական և կոմունիստական հասարակության միջև ընկած է մի ժամանակաշրջան, վորի ընթացքում մեկը հեղափոխականորեն վերածվում է մյուսին։ Դրան համապատասխանում է նաև քաղաքական մի փոխանցման շրջան, վորի պետությունը չի կարող լինել այլ բան, քան **պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրան** (ընդգծումը Մարքսինն է) (եջ 572—573)։

Ծրագիրը չի զբաղվում ո՛չ վերջինիս, ո՛չ էլ կոմունիստական հասարակության ապագա պետականությամբ»:

Պարզ է, որ դա կշտամբանք է. դա պարզ է հետևյալ ֆրազից — ծրագիրն «զբաղվում է» հին դեմոկրատական անհեթեթությամբ, այլ ոչ թե պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրայի և կոմունիստական հասարակության պետականության խնդիրներով...

«... Նրա քաղաքական պահանջները չեն պարունակում մի այլ բան, քան յեթե հանրածանոթ բազմիցս կրկնված դեմոկրատական տրտունջներ՝ ընդհանուր ընտրական իրավունք, ուղղակի օրենսդրություն, ժողովրդական իրավունք, ժողովրդական բանակ և այլն: Դրանք պարզ արձագանքներ են բուրժուական ժողովրդական կուսակցության, Խաղաղության և ազատության միության»... (էջ 573):

(Այդ պահանջները, ուզում է ասել Մարքսը, արդեն «իրագործված են» — միայն ո՛չ թե գերմանական պետության մեջ, այլ ուրիշ պետություններում՝ Շվեյցարիայում, Միացյալ Նահանգներում: Այդ պահանջները տեղին են միայն դեմոկրատական հանրապետության մեջ: Ծրագիրը չի պահանջում հանրապետություն, ինչպես այդ արել են ֆրանսիական բանվորական ծրագրերը Լուի Ֆիլիպի և Լուի Նապոլեոնի ժամանակ, — չի կարելի այդ պահանջել Գերմանիայի համար, հետևապես ռազմական դեսպոտիզմից պետք չէ պահանջել այնպիսի բաներ, որոնք տեղին են լոկ դեմոկրատական հանրապետության համար... Մինչև անգամ

շատ լավ է (և շատ կարևոր)

վուլգար դեմոկրատիան «անհամեմատ ավելի բարձր է կանգնած այն տեսակ դեմոկրատիզմից, որը կառչած է ոստիկանորեն թույլատրվածի, իսկ տրամաբանորեն անթույլատրելիի սահմաններում»):

Այդ խոսքերով Մարքսը կարծես թե նախատեսում էր կաուցկիականության ողջ ստորությունը — զանազան լավ բաների մասին քաղցրիկ ճառեր, որ դառնում են իրականության պաճուճանք, որովհետև քողարկվում է կամ ստվերավորվում դեմոկրատական աշխարհի և իմպերիալիզմի, դեմոկրատիայի և մոնարխիայի և այլնի անհաշտությունը:

Արդ՝ պրոլետարիատի դիկտատուրան «քաղաքական անցումային ժամանակաշրջան» է. պարզ է, որ այդ ժամանակաշրջանի պետությունն էլ անցում է պետությունից դեպի ոչ-պետությունը, այսինքն «այլևս պետություն չէ իր իսկական իմաստով»: Հետևապես Մարքսն ու Էնգելսն ամենևին չեն հակասում իրար այդ կետում:

Սակայն Մարքսը խոսում է նաև «կոմունիստական հասարակության ապագա պետականության» մասին!! Ուրեմն կոմունիստական հասարակությունն անգամ ունենալու է պետականություն!! Չկա՞ այստեղ հակասություն:

պետությունը պետք է բուրժուազիային

Վոչ. I —— կապիտալիստական հասարակության մեջ պետությունն իր իսկական իմաստով է

II — — անցումն (պրոլետարիատի դիկտատուրան) անցումնային տիպի պետություն (ոչ-պետություն իր իսկական իմաստով)	պետությունը պետք է պրոլետարիատին
III — — կոմունիստական հասարակություն—պետության մահացումը:	պետությունը պետք չէ. նա մահանում է։

Լիակատար հետևողականություն և պարզություն!!

Այսպես—

I — *դեմոկրատիան լոկ իբրև բացառություն, յերբեք ոչ լիակատար...*	I — *դեմոկրատիան միայն հարուստների համար և պրոլետարիատի չնչին խավի համար։ [Չքավորները հնարավորություն չունեն մտածելու դրա մասին !]*
II — *համարյա լիակատար դեմոկրատիա՝ սահմանափակված միայն բուրժուազիայի ընդդիմադրության ճնշումով*	II — *դեմոկրատիան չքավորների համար, բնակչության* $^{9}/_{10}$*-ի համար, հարուստների ընդդիմադրության ճնշումը ուժի միջոցով*
III — *իսկապես լիակատար դեմոկրատիա, որ դառնում է սովորություն,* այդ պատճառով էլ *հետզհետե մահանում... Լիակատար դեմոկրատիան հավասար է ոչ մի դեմոկրատիայի։ Դա պարադոքս չէ, այլ ճշմարտություն!։*	III — *լիակատար դեմոկրատիա, որ դառնում է սովորական, այդ պատճառով էլ հետզհետե մահանում, իր տեղը հատկացնելով հետևյալ սկզբունքին—«ամեն մեկին ըստ ընդունակությունների, ամեն մեկին ըստ կարիքների»։*

Տես էջ 19 կողքից *

* Տե՛ս էջ 113—114 նկր.։

Պետության հարցին է վերաբերում Գոթայի ծրագրի քննադատության այն խիստ էական տեղը, որ նվիրված է ապագա հասարակության տնտեսական վերլուծությանը:

Մարքսն այդտեղ (էջ 565—567) քննադատում է լասալյան «աշխատանքի անկրճատ արդյունքի» իդեան, ցույց է տալիս արտադրամիջոցների մաշվածքները լրացնելու ֆոնդի, պահեստի ֆոնդի, կառավարական, դպրոցային, սանիտարական և այլ ծախսերի հանուրդների անհրաժեշտությունը դրանից և շարունակում է.

«Մենք այստեղ խոսում ենք ոչ թե այնպիսի կոմունիստական հասարակության մասին, որը զարգացել է իր սեփական հիմքերի վրա, այլ այնպիսի, որը հենց նոր է առաջանում կապիտալիստական հասարակությունից և որը, հետևապես, բոլոր կողմերով էլ՝ տնտեսական, բարոյական ու մտավոր՝ կրում է հին հասարակության մայրական նշանները, այն հասարակության, որի արգանդից նա ծնվել է: Դրան համապատասխան՝ առանձին արտադրողը հասարակությունից հետ է ստանում—հանուրդներից հետո—ճիշտ նույնքան, որքան ինքը տալիս է նրան: Ինչ նա տվել է հասարակությանը, դա նրա անհատական աշխատանքի քանակն է: Օրինակ՝ հասարակական աշխատօրը բաղկացած է անհատական աշխատաժամերի գումարից. առանձին արտադրողի անհատական աշխատաժամանակը—դա նրա կողմից տված հասարակական աշխատօրվա մասն է, նրա բաժինը դրանում: Նա ստանում է հասարակությունից մի ստացագիր, թե այս-ինչ քանակությամբ աշխատանք է հանձնել (հանրային ֆոնդերի համար նրա աշխատանքի որոշ մասը դուրս գալուց հետո), և այդ ստացագրով նա ստանում է հասարակական պահեստից այնքան սպառողական միջոցներ, որքան արժե նրա աշխատանքը: Այդպիսով աշխատանքի միևնույն քանակը, որ նա տվել է հասարակությանը մի ձևով, հետ է ստանում մի ուրիշ ձևով» (էջ 566):

«Ոչինչ չի կարող առանձին անհատի սեփականություն դառնալ, բացի անհատական սպառողական միջոցներից»: «Սակայն ինչ վերաբերում է այդ վերջինների բաշխմանը առանձին արտադրողների միջև,

այստեղ էլ տիրապետում է հենց նույն սկզբունքը, որը տիրապետում է ապրանքային էքվիվալենտների փոխանակության ժամանակ, այսինքն՝ որևէ ձևի նույնաչափ աշխատանքը փոխանակվում է մի այլ ձևի նույնաչափ աշխատանքի հետ» (էջ 567)։ Իրավունքի այդ հավասարությունը ենթադրում է **անհավասարություն**, անհավասարություն գործնականում, անհավասարություն մարդկանց միջև, որովհետև մեկն ուժեղ է, մյուսը՝ թույլ և այլն (անհատները «չէին լինի տարբեր անհատներ, եթե չլինեին անհավասար» (էջ 567),—մեկն ստանալու է ավելի, քան մյուսը։

Արդ՝

I. «ծննդյան երկար երկունք»

II. «կոմունիստական հասարակության առաջին փազան»

III. «կոմունիստական հասարակության բարձրագույն փազան»

«Սակայն այդ պակասությունններն անխուսափելի են կոմունիստական հասարակության **առաջին փազայում**, երբ նա տակավին նոր է դուրս եկել կապիտալիստական հասարակությունից՝ ծննդյան երկար երկունքից հետո։ Իրավունքը երբեք չի կարող ավելի բարձր լինել, քան հասարակության տնտեսակարգը և դրանով պայմանավորված նրա կուլտուրական զարգացումը»։

NB

«**Կոմունիստական հասարակության բարձրագույն փազայում**, երբ վերացած կլինի մարդու ստրկացուցիչ ենթարկումն աշխատանքի բաժանմանը պայմաններին, երբ դրա հետ մեկտեղ վերացած կլինի նաև մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակադրությունը, երբ աշխատանքը դադարած կլինի այլևս սոսկ ապրելու միջոց լինելուց և դարձած կլինի կյանքի առա-

ջին կարիքը, յերբ անհատների բազմակողմանի զարգացման հետ միասին աճած կլինեն նաև արտադրողական ուժերը և հասարակական հարստության բոլոր աղբյուրները կհոսեն ավելի լիառատ, — ահա միայն այդ ժամանակ կարելի կլինի ամբողջովին թռչել-անցնել բուրժուական իրավունքի նեղ հորիզոնից, և հասարակությունը կարող կլինի իր դրոշակի վրա գրել — ամեն մեկն ըստ իր ընդունակությունների, ամեն մեկին ըստ իր կարիքների» (էջ 567):

NB

Արդ՝ այստեղ պարզ, վորոշակի ու ճշտիվ տարբերվում են կոմունիստական հասարակության յերկու փուլեր.

Նույնպես հարկադրական ձևը — «չի աշխատում, այն և չի ստանում ուտելու»

ստորին («առաջին») — սպառողական միջոցների բաշխումը «համապատասխան» աշխատանքի այն քանակի, վորն ամեն մեկը տվել է հասարակությանը: Բաշխման անհավասարությունը տակավին ուժեղ է: «Բուրժուական իրավունքի նեղ հորիզոնը» գերազանցված է դեռ վոչ ամբողջովին: Դա NB!!: Ակնհայտ է, վոր (կիսաբուրժուական) իրավունքի հետ ամբողջովին չի վերանում նաև (կիսաբուրժուական) պետությունը: Դա Nota Bene!!

NB

Աշխատանքը դարձել է կարիք. չկա վորևե հարկադրանք

«բարձրագույն» — «ամեն մեկն ըստ ընդունակությունների, ամեն մեկին ըստ կարիքների»: Յե՞րբ է այդ հնարավոր: Այն ժամանակ, (1) յերբ կվերանա մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը. (2) յերբ աշխատանքը կդառնա ամենաառաջին կենսական կարիք (NB — աշխատելու սովորությունը կդառնա կանոն, առանց հարկադրանքի!!). (3) յերբ արտադրողական ուժերը մեծապես կզարգանան և այլն: Ակնհայտ է, վոր պետության լիակատար մահացումը հնարավոր է լոկ այս բարձր աստիճանում: Դա NB:

ԵՆԳԵԼՍԻ 1875 ԹՎԱԿԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Ենգելսի նամակում՝ գրված 18/28. III. 1875 թ. Բեբելին կան նաև առանձնապես ուսանելի տեղեր, վորոնք սովորականից ավելի յեն լույս սփռում մարքսիզմի վորոշ կողմերի վրա.

.(1) ...«Նախ՝ ընդունված ե (Գոթայի ծրագրում) բարձրահնչուն, բայց պատմականորեն սխալ լասսալյան ֆրազը, թե՝ բանվոր դասակարգի հանդեպ բոլոր մնացած դասակարգերը մի հետադիմական մասսա յեն։ Այդ թեզն իրավացի յե միայն առանձին բացառիկ դեպքերում, օրինակ՝ պրոլետարական հեղափոխության միջոցին, ինչպիսին յեղել ե կոմունան, կամ մի յերկրում, ուր վո՛չ միայն բուրժուազիան ե կերպարանել պետությունն ու հասարակությունն իր նման, այլև նրանից հետո նաև դեմոկրատական մանր բուրժուազիան ե այդ կերպարանափոխումն արդեն հասցրել իր վերջին հետևություններին (եջ 319)։ (Իսկ Գերմանիայում, ուզում ե ասել Ենգելսը, դուք «տարիներ» շարունակ գնացել եք ժողովրդական կուսակցության հետ և ձեզ մոտ ել կան յոթ քաղաքական պահանջներ, «վորոնց թվում չկա և վո՛չ մեկը, վոր չլիներ բուրժուական-(ընդգծումն Ենգելսինն ե) դեմոկրատական»)։

NB

(ինչպես Շվեյցարիայում)

NB

(2) ...«Հինգերորդ. վոչ մի խոսք չկա արհեստակցական միությունների միջոցով բանվոր դասակարգի կազմակերպման մասին վորպես դասակարգ։ Իսկ դա մի շատ եյական կետ ե, վորովհետև հենց դա յե պրոլետարիատի իսկական դասակարգային կազմակերպությունը, վորի մեջ նա մղում ե իր առորյա պայքարը կապիտալի դեմ, վորի մեջ նա դաստիարակվում ե և վորն ամենավատ ռեակցիայի ժամանակ իսկ (ինչպես այժմ Փարիզում) ամենևին չի կարելի այլևս վոչնչացնել։ Ահա նկատի ունենալով այն կարևորությունը, վոր այդ կազմակերպությունը ձեռք ե բերում նաև Գերմանիայում, մեր կարծիքով միանգամայն անհրաժեշտ կլիներ այն հիշա-

այդպես

NB

տակել ծրագրում և ըստ հնարավորության մի վորոշ տեղ հատկացնել նրան կուսակցական կազմակերպության մեջ» (եջ 321)։

NB

(3) ...«Բացակայում է նույնպես ամեն մի ազատության առաջին պայմանը—այն, վոր բոլոր պաշտոնյաները պաշտոնական գործողությունների համար ամեն մի քաղաքացու հանդեպ պատասխանատու լեն սովորական դատարանների աջև և ընդհանուր որենքի հիման վրա» (եջ 321)։

(4) «...«Ամեն մի սոցիալական և քաղաքական անհավասարության վերացումն»—դա ևս մի շատ կասկածելի ֆրազ է, վոր գործ է ածված «բոլոր դասակարգային խտրությունների վոչնչացման» փոխարեն։ Նույնիսկ յերկրից յերկիր, գավառից գավառ, տեղից տեղ գոյություն պիտի ունենա մշտապես կենսապայմանների վորոշ անհավասարություն, վորը կարելի կլինի հասցնել նվազագույն չափի, բայց վոչ յերբեք վերացնել։ Լեռնային բնակիչները միշտ ապրելու յեն այլ պայմաններում, քան դաշտավայրում ապրողները։ Սոցիալիստական հասարակության պատկերացումը վորպես հավասարության թագավորություն—դա միակողմանի ֆրանսական պատկերացում է, վոր հիմնված է «ազատություն, հավասարություն, յեղբայրություն» հին նշանաբանի վրա, մի պատկերացում, վորը տեղին եր իր ժամանակին և իր տարածության վրա, վորպես զարգացման մի վորոշ աստիճան, սակայն վորը՝ հին սոցիալիստական դպրոցների բոլոր միակողմանիությունների նման՝ պիտի այսոր հաղթահարված լինի, վորովհետև դա միայն շփոթ է առաջ բերում մարդկանց գլուխներում և վորովհետև այժմ հայտաբերված են նյութի ավելի ճշգրիտ շարադրանքներ» (եջ 322)։

NB

Լիբկնեխտի «չմտածված բառը»

(5) Բակունինը իր «Պետականություն և անիշխանություն» գրքում մեզ է պատասխանատու դարձնում Լիբկնեխտի ամեն մի չմտածված բառի համար... (եջ 322—323)։

(6) «Ընդհանրապես՝ կարևորը մի կուսակցության պաշտոնական ծրագիրը չէ, այլ այն, թե ի՛նչ է անում նա: Բայց և այնպես ամեն մի նոր ծրագիր միշտ հանդիսանում է հրապարակորեն ծածանվող մի դրոշ, և արտաքին աշխարհը գաղափար է կազմում կուսակցության մասին հենց ըստ այդ դրոշի» (էջ 323)...

Իր՝ 21. IX. 1875 թ. պատասխանի մեջ Բեբելն ի միջի այլոց գրել է. «Յես միանգամայն համաձայն եմ այն դատողության հետ, որ դուք հանել եք ծրագրի նախագծի վերաբերմամբ, ինչպես ապացուցանում են իմ նամակները Բրակեյին (էջ 334—335): Յես նույնպես խիստ կշտամբել եմ Լիբկնեխտին իր զիջողականության համար...», իսկ այժմ բանը բանից անցել է, «ամեն ինչ հանգում է դաստիարակության խնդիրներին»: NB հա-հա

Թե Բեբելն ինքը մի քիչ առաջ նույն հայացքն ուներ «ժողովրդական պետության» մասին, դա ապացուցանում է նրա գրքույկը՝ «Մեր նպատակները» (9-րդ հրատարակություն, 1886 թ., «Սոցիալ-դեմոկրատական գրադարանում», արտատպված 1872 թվականի 3-րդ հրատարակությունից՝ առանց փոփոխությունների), էջ 14. «Արդ՝ դասակարգային տիրապետության վրա հիմնված պետությունը պետք է դառնա ժողովրդական պետություն... և այդ պետության մեջ... ընկերակցային արտադրությունը պետք է բռնի մասնավոր ձեռնարկությունների տեղը»: Յեվ հենց այդտեղ էլ, 44-րդ էջում, գովասանական վկայություն է տալիս թե Մարքսի և թե Լասսալի մասին!! կողք-կողքի!! Պետության վերաբերյալ նրանց տարբերությունը Բեբելն այն ժամանակ չէր տեսնում:

ՄԱՐՔՍ, «ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆԸ»

«Փիլիսոփայության թշվառության» այն տեղը, որի մասին խոսում է Ենգելսն իր 18/28. III. 1875 թ. նամակում, ըստ յերևույթին, հետևյալն է.

NB «Զարգացման ընթացքում բանվոր դասակարգը կհիմնի հին բուրժուական հասարակության տեղը մի այնպիսի ասոցիացիա, որը բացառում է դասակարգերը և դրանց հակադրությունը. չի լինի արդեն որևէ քաղաքական իշխանություն իր իսկական իմաստով, որովհետև բուրժուական հասարակության ներսում եղող դասակարգային հակադրության պաշտոնական արտահայտությունն է հենց այդ քաղաքական իշխանությունը» (էջ 182, Շտուտգարտ, 1885 թ.): (Առաջաբանի թվականը՝ 15. VI. 1847 թ.):

«ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԸ» ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

NB. **Կոմունիստական մանիֆեստ.**

«Պետությունը, այսինքն որպես տիրապետող դասակարգ կազմակերպված պրոլետարիատը»:

«Կոմունիստական մանիֆեստում» (XI. 1847 թ.) այդ միտքն արտահայտված է այսպես.

«Գծագրելով պրոլետարիատի զարգացման ամենաընդհանուր փուլերը, մենք հետամուտ եղանք արդի հասարակության ծոցում տեղի ունեցող առավել կամ նվազ չափով քողարկված քաղաքացիական կռվին մինչև այն կետը, երբ բռնկում է բացահայտ հեղափոխություն, և պրոլետարիատը, բռնությամբ տապալելով բուրժուազիային, հաստատում է իր իշխանությունը» (I գլխի վերջը):

Իսկ II գլխի վերջում, էջ 37, կարդում ենք.

«...Մենք արդեն վերը տեսանք, որ բանվորական հեղափոխության առաջին քայլը պետք է լինի այն, որ **պրոլետարիատը հասնի տիրող դասակարգի աստիճանին, հաստատի դեմոկրատիա:**

«պետությունը», այսինքն պրոլետարիատը՝

«Պրոլետարիատն իր քաղաքական իշխանությունը պիտի գործադրի բուրժուազիայի ամբողջ կապիտալը հետզհետե խլելու, բոլոր արտադրական միջոցները **պետության, այսինքն՝ իբրև իշխող դասակարգ կազմակերպված պրոլետարիատի** ձեռ-

քում կենտրոնացնելու և արտադրաուժերի զանգվածը հնարավորության չափ արագ բազմացնելու համար։

կազմակերպված իբրև տիրապետող դասակարգ

«Սկզբում դա, բնականաբար, կարող է տեղի ունենալ սեփականության իրավունքի և բուրժուական արտադրահարաբերությունների մեջ միմիայն բռնի միջամտությամբ, հետևաբար՝ այնպիսի միջոցներով, վորոնք տնտեսական տեսակետից անբավարար և անկայուն են թվում, վորոնք սակայն շարժման ընթացքում վերանալու յեն ինքնին և անխուսափելի յեն, վորպես միջոց՝ վողջ արտադրության յեղանակը հեղաշրջելու համար»...

NB «բռնի միջամտություն»

Յեվ «միջոցների» թվարկումից հետո (§§ 1 — 10)* հեղինակները շարունակում են.

«Յերբ զարգացման ընթացքում վերանան դասակարգային տարբերությունները և ամբողջ արտադրությունը կենտրոնանա ընկերակցած անհատների ձեռքը, հասարակական իշխանությունը կկորցնի իր քաղաքական բնույթը։ Քաղաքական իշխանությունն իր իսկական իմաստով մի դասակարգի կազմակերպված ուժն է՝ մյուս դասակարգին ճնշելու համար։ Յեթե պրոլետարիատը բուրժուազիայի դեմ կռվելու համար անհրաժեշտաբար միանում և կազմում է դասակարգ, հեղափոխության միջոցով դառնում իշխող դասակարգ և, վորպես իշխող դասակարգ, բռնությամբ վերացնում է հին արտադրահարաբերությունները, ապա նա այդ արտադրահարաբերությունների հետ վերացնում է դասակարգային հակասության գոյության պայմանները, ընդհանրապես դասակարգերը և այդպիսով ել, վորպես դասակարգ, իր սեփական իշխանու-

«Հասարակական իշխանությունը կորցնում է իր քաղաքական բնույթը»

* Այդ միջոցների մեջ (§§ 1, 5, 6) խոսվում է ամեն տեղ պարզապես «պետության» մասին. օրինակ՝ 6-րդ կետում ասված է. «Հաղորդակցության միջոցների կենտրոնացումը պետության ձեռքում»։

թյունը»... «Արդի պետական իշխանությունը լոկ մի կոմիտե է, որ վարում է ամբողջ բուրժուա դասակարգի ընդհանուր գործերը»։

«Կոմունիստական մանիֆեստը» խոսում է «բանվորական հեղափոխության», «կոմունիստական հեղափոխության», «պրոլետարական հեղափոխության» մասին։ Կարծես «պրոլետարիատի դիկտատուրա» տերմինը դեռ չկա։ Սակայն ակնհայտնի է, որ պրոլետարիատի փոխակերպումն «իշխող դասակարգի», նրա «կազմակերպումը որպես տիրապետող դասակարգ», նրա «բռնի միջամտումը սեփականության իրավունքին» և այլն,—ահա հենց **դա է** «պրոլետարիատի դիկտատուրան»...

NB

«**Պետությունը, այսինքն պրոլետարիատը, որ կազմակերպված է որպես տիրապետող դասակարգ**—ահա հենց ինքը պրոլետարիատի դիկտատուրան։

«ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔԻՑ

(օգոստոս—սեպտեմբեր 1917 թ.)

IV գլուխ

ԵՆԳԵԼՍԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. ՆԱՄԱԿ ԲԵԲԵԼԻՆ

Մարքսի ու Ենգելսի՝ պետության հարցին նվիրված երկերում ամենաուշադրավ դատողություններից մեկը, եթե վոչ ամենաուշադրավը, Ենգելսի նամակի հետևյալ հատվածն է, ուղղված Բեբելին 1875 թվի մարտի 18—28-ին։ Այս նամակը,—փակագծերի մեջ նկատենք,—տպագրել է, վորքան մենք գիտենք, առաջին անգամ Բեբելն իր հիշողությունների («Իմ կյանքից») երկրորդ հատորում, վոր լույս է տեսել 1911 թվին, այսինքն՝ գրվելուց և ուղարկվելուց 36 տարի անցնելուց հետո։

Քննադատելով Գոթայի ծրագրի հենց այն նախագիծը, վոր քննադատել է նաև Մարքսը Բրակեին ուղղած իր հռչակավոր նամակում, և շոշափելով հատկապես պետության հարցը՝ Ենգելսը գրում էր Բեբելին հետևյալը.

«... Ազատ ժողովրդական պետությունն ազատ պետության փոխարկվեց։ Այդ բառերի քերականական իմաստի համաձայն՝ ազատ պետությունն այնպիսի պետություն է, վորի մեջ պետությունն ազատ է իր քաղաքացիների վերաբերմամբ, այսինքն բռնակալական կառավարություն ունեցող պետություն է։ Պետք էր մի կողմ նետել այդ ամբողջ շաղակրատությունը պետության մասին, մանավանդ Կոմունայից հետո, վորն արդեն բուն իմաստով պետություն չէր։ Անարխիստները «ժողովրդական պետությամբ» ավելի քան բավականաչափ ծակել են մեր աչքերը, թեև արդեն Մարքսի երկը Պրուդոնի դեմ, և ապա «Կոմունիստական մանիֆեստն» ուղղակի ասում են, թե սոցիալիստական հասարակակարգ մտցնելու հետ պետությունն ինքն իրեն լուծվում (sich auflöst) և անհետանում է։ Վորովհետև պետությունը միմիայն մի անցողիկ հիմնարկություն է, վորից հարկ է լինում ոգտվել պայքարի, հեղափոխության ընթացքում՝ յուր հակառակորդներին բռնությամբ ճնշելու համար, ուստի ազատ ժողո-

ժողովրդական պետության մասին խոսելը զուտ անմտություն է. քանի պրոլետարիատը դեռ կարիք ունի պետության, նա ազատության շահերի համար չէ, որ զգում է նրա կարիքը, այլ իր հակառակորդներին ճնշելու համար, իսկ երբ հնարավոր է դառնում ազատության մասին խոսել, այն ժամանակ պետությունն, իբրև այդպիսին, դադարում է գոյություն ունենալուց: Այդ պատճառով էլ մենք կառաջարկեինք ամենուրեք պետություն բառի տեղ դնել «համայնք» (Gemeinwesen) բառը, գեղեցիկ հին գերմաներեն մի բառ *, որ համապատասխանում է ֆրանսերեն «կոմունա» բառին» (գերմաներեն բնագիր, էջ 322):

Պետք է նկատի ունենալ, որ այս նամակը վերաբերում է կուսակցական այն ծրագրին, որ Մարքսը քննադատում էր այս նամակից ընդամենը մի քանի շաբաթ հետո թվագրած իր նամակում (Մարքսի նամակը գրված է 1875 թ. մայիսի 5-ին), և որ Էնգելսն այն ժամանակ Մարքսի հետ միասին Լոնդոնում էր ապրում: Ուստի, վերջին ֆրազում «մենք» ասելով՝ Էնգելսն, անկասկած, իր ու Մարքսի անունից է առաջարկում գերմանական բանվորական կուսակցության առաջնորդին՝ ծրագրից դուրս գցել «պետություն» բառը և փոխարինել այն «համայնք» բառով:

Ի՜նչպես վայնասուն կբարձրացնեին «անարխիզմի» մասին՝ օպորտունիստներին հարմարեցնելու համար կեղծած այժմյան «մարքսիզմի» պարագլուխները, եթե նրանց ծրագրի այդպիսի ուղղում առաջարկվեր:

Թող վռնան: Դրա համար նրանց կգովի բուրժուազիան:

Իսկ մենք մեր գործը կանենք: Մեր կուսակցության ծրագրի վերաքննության ժամանակ անպայման պետք է նկատի ունենալ Էնգելսի ու Մարքսի խորհուրդը, որպեսզի ճշմարտությանն ավելի մոտիկ լինենք, որպեսզի վերականգնենք մարքսիզմը, մաքրելով այն աղավաղումներից, որպեսզի ավելի ճիշտ ուղղություն տանք բանվոր դասակարգի կռվին իր ազատագրման համար: Բոլշևիկների մեջ, անշուշտ, Էնգելսի ու Մարքսի խորհրդի հակառակորդներ չեն գտնվի: Դժվարություն առաջ կգա, թերևս, միմիայն տերմինի հարցում: Գերմաներեն յերկու բառ կա, որոնք «համայնք» են նշանակում. Էնգելսը դրանցից ընտրել է այն բառը, որը չի նշանակում առանձին համայնք, այլ նշանակում է նրանց միավորումը, համայնքների սիստեմը: Ռուսերեն այդպիսի բառ չկա, և գուցե հարկ լինի ընտրել ֆրանսերեն «կոմունա» բառը, թեև այդ էլ իր անհարմարությունները ունի:

---

* Ձեռագրում այնուհետև մինչև պարբերության վերջը ասված է հետևյալը. «որը շատ լավ կարող է փոխարինել ֆրանսերեն «կոմունա» բառին»: Խմբ.:

«Կոմունան արդեն բուն իմաստով պետություն չէր» — ահա, առավելապես, Էնգելսի կարևորագույն պնդումը։ Վերևում շարադրածից հետո՝ այդ պնդումը միանգամայն հասկանալի է։ Կոմունան դադարում էր պետություն լինելուց, որչափով նա հարկադրված էր ճնշելու ոչ թե բնակչության մեծամասնությանը, այլ փոքրամասնությանը (շահագործողներին). բուրժուական պետական մեքենան նա ջարդուփշուր արեց. հատուկ ուժի տեղ ասպարեզ էր մտնում բնակչությունն ինքը։ Այս բոլորը շեղումներ են պետությունից այդ բառի բուն իմաստով։ Եվ եթե Կոմունան ամրապնդվեր, ապա նրա մեջ իրենք իրենց «կմահանային» պետության հետքերը, նա կարիք չէր ունենա «վերացնելու» նրա հիմնարկները. վերջիններս կդադարեին գործելուց, երբ այլևս ոչինչ չէին ունենա անելու։

«Անարխիստները մեր աչքերը ծակում են «ժողովրդական պետությամբ»». այս ասելով՝ Էնգելսն ամենից առաջ նկատի ունի Բակունինին ու նրա հարձակումները գերմանական սոցիալ-դեմոկրատների վրա։ Էնգելսն այդ հարձակումները ճիշտ է համարում այնչափով, որչափով «ժողովրդական պետությունը» նույնպիսի մի անմտություն ու նույնպիսի մի շեղում է սոցիալիզմից, ինչպես և «ազատ ժողովրդական պետությունը»։ Էնգելսն աշխատում է շտկել գերմանական սոցիալ-դեմոկրատների պայքարն անարխիստների դեմ, այդ պայքարն սկզբունքորեն ճիշտ դարձնել, այն ազատել «պետության» վերաբերյալ օպորտունիստական նախապաշարմունքներից։ Ավաղ։ Էնգելսի նամակը 36 տարի ծածկոցի տակ մնաց։ Մենք կտեսնենք ներքևում, որ այդ նամակի հրատարակումից հետո էլ Կաուցկին համառորեն պնդում է, ըստ էության, հենց նույն սխալները, որոնցից զգուշացնում էր Էնգելսը։

Բեբելն Էնգելսին պատասխանեց 1875 թ. սեպտեմբերի 21-ին գրած նամակով, որի մեջ նա, ի միջի այլոց, գրում էր, թե «լիովին համաձայն է» Էնգելսի դատողությանը ծրագրի նախագծի մասին, և թե ինքը նախատել է Լիբկնեխտին զիջողականության համար (Բեբելի հիշողությունների գերմ. հրատարակություն, II հատոր, էջ 304)։ Բայց եթե վերցնենք Բեբելի «Մեր նպատակները» բրոշյուրը, այնտեղ բոլորովին անճիշտ դատողությունների կհանդիպենք պետության մասին.

«Պետությունը պետք է դասակարգային տիրապետության վրա հիմնված պետությունից ժողովրդական պետության փոխարկվի» («Unsere Ziele», գերմ. հրատ. 1886. էջ 14)։

Այսպես է տրված Բեբելի բրոշյուրի իՑՑերորդ (իններորդ) հրատարակության մեջ։ Զարմանալի չէ, որ պետության վերաբերյալ օպորտունիստական դատողությունները այդչափ համառորեն կրկնելը ներծծվել է գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ, մանավանդ, յերբ Էնգելսի հեղափոխական բացատրությունները ծածկոցի տակ եյին դրվում, իսկ ամբողջ կենսապայմանները յերկար ժամանակով «մոռացնել եյին տալիս» հեղափոխությունը։

V գլուխ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Այս հարցի ամենամանրամասն բացատրությունը Մարքսը տվել է իր «Գոթայի ծրագրի քննադատության» մեջ (Բրակեյին ուղղված 1875 թ. մայիսի 5 թվակիր նամակով, որ տպագրվել է միմիայն 1891 թվին «Neue Zeit»*-ում,* IX, *1 և ռուսերեն լույս է տեսել առանձին հրատարակությամբ)։ Այս նշանավոր աշխատության բանավիճական մասը, որ լասսալականության քննադատությունն է պարունակում, ստվերի մեջ է պահել, այսպես ասած, նրա դրական մասը, այն է՝ կոմունիզմի զարգացման ու պետության մահացման միջև եղած կապակցության վերլուծությունը։*

1. ՄԱՐՔՍԻ ՀԱՐՑԱԴՐՈՒՄԸ

Մարքսի 1875 թվի մայիսի 5-ին Բրակեյին ուղղած նամակն ու վերը քննարկած՝ Էնգելսի 1875 թվի մարտի 28-ին Բեբելին ուղղած նամակը մակերեսորեն համեմատելիս՝ կարող է այնպես թվալ, թե Մարքսը շատ ավելի մեծ չափով է «պետականության» կողմնակից, քան Էնգելսը, և թե այդ երկու հեղինակների՝ պետության մասին ունեցած կարծիքների տարբերությունը շատ խոշոր է։

Էնգելսն առաջարկում է Բեբելին բոլորովին դեն գցել շաղակրատանքը պետության մասին, ծրագրից միանգամայն վտարել պետություն բառը, փոխարինել այն «համայնք» բառով. Էնգելսը հայտարարում է մինչև անգամ, որ Կոմունան արդեն բառի բուն իմաստով պետություն չէր եղել։ Մինչդեռ Մարքսը խոսում է մինչև իսկ «կոմունիստական հասարակության ապագա պետականության» մասին, այսինքն՝ կարծես ընդունում է պետության անհրաժեշտությունը նույնիսկ կոմունիզմի ժամանակ։

Բայց այդպիսի կարծիքն արմատապես սխալ կլիներ։ Ավելի մոտիկ քննարկումը ցույց է տալիս, որ Մարքսի ու Էնգելսի

հայացքները պետության ու նրա մահացման մասին միանգամայն համապատասխանում են միմյանց, իսկ Մարքսի՝ վերևում առաջ բերված արտահայտությունը հենց այս մեռնող պետականությանն է վերաբերում:

Պարզ է, որ խոսք անգամ չի կարող լինել ապագա «մահացման» ժամկետը որոշելու մասին, մանավանդ որ այն ակնհայտ կերպով տևական մի պրոցես է հանդիսանում: Մարքսի ու Էնգելսի միջև նկատված կարծեցյալ տարբերությունը բացատրվում է այն թեմաների տարբերությամբ, որ վերցրել են նրանք, այն խնդիրների տարբերությամբ, որ հետապնդում էին նրանք: Էնգելսն իր առաջ խնդիր էր դրել ակներև, կտրուկ կերպով, խոշոր գծերով ցույց տալ Բեբելին պետության մասին տարածված սովորական նախապաշարմունքների (որոնց մեծ չափով ենթակա էր նաև Լասսալը) ամբողջ անհեթեթությունը: Մարքսը միմիայն անցողակի է շոշափում այս հարցը, հետաքրքրվելով մի ուրիշ թեմայով, այն է՝ կոմունիստական հասարակության զարգացմամբ:

Մարքսի ամբողջ թեորիան զարգացման թեորիայի կիրառումն է արդի կապիտալիզմի վերաբերմամբ — այդ թեորիայի ամենահետևողական, ամենալիակատար, մտածված ու բովանդակալից ձևով: Բնականաբար, Մարքսի առաջ ծառացավ այդ թեորիայի կիրառման հարցը թե կապիտալիզմի առաջիկա խորտակման և թե ապագա կոմունիզմի զարգացման վերաբերմամբ:

Իսկ ինչպիսի տվյալների հիման վրա կարելի է առաջադրել ապագա կոմունիզմի ապագա զարգացման հարցը:

Այն հիման վրա, որ այն ծագում է կապիտալիզմից, պատմականորեն զարգանում է կապիտալիզմից, հետևանք է այնպիսի հասարակական ուժի գործողությունների, որը կապիտալիզմն է ծնել: Մարքսի մոտ փորձերի հետք անգամ չկա՝ ուտոպիաներ հորինելու, դատարկ գուշակություններ անելու այնպիսի բաների մասին, ինչ որ չի կարելի գիտենալ: Մարքսը դնում է կոմունիզմի հարցն այնպես, ինչպես բնախույզը կդներ մի նոր, ասենք, կենսաբանական տեսակի զարգացման հարցը, երբ մենք գիտենք, որ այն հենց այս կերպ է ծագել ու այս-ինչ որոշ ուղղությամբ է կերպարանափոխվում:

Մարքսն ամենից առաջ դեն է շպրտում այն խառնաշփոթությունը, որ մտցնում է Գոթայի ծրագիրը պետության ու հասարակության փոխհարաբերության հարցի մեջ:

«...Արդի հասարակությունը,—գրում է նա,—կապիտալիստական հասարակություն է, որ գոյություն ունի բոլոր քաղաքակիրթ երկրներում, քիչ

թե շատ ազատ է միջնադարյան խառնուրդից, քիչ թե շատ կերպարանափոխված է յուրաքանչյուր յերկրի պատմական զարգացման առանձնահատկությունների շնորհիվ, քիչ թե շատ զարգացած է։ Դրան հակառակ, «արդի պետությունը» փոխվում է ամեն մի պետական սահմանի փոփոխության հետ։ Պրուս-գերմանական կայսրության մեջ այն բոլորովին այլ է, քան թե Շվեյցարիայում, Անգլիայում՝ բոլորովին այլ, քան թե Միացյալ Նահանգներում։ Հետևաբար, «արդի պետությունը» մի ֆիկցիա յէ։

«Սակայն, չնայած նրանց ձևերի խայտաբղետ բազմազանության՝ տարբեր քաղաքակիրթ յերկրների տարբեր պետությունները այն ընդհանուր գիծն ունեն միմյանց հետ, վոր նրանք կանգնած են կապիտալիստորեն քիչ թե շատ զարգացած արդի բուրժուական հասարակության հողի վրա։ Այդ պատճառով էլ նրանք միքանի ընդհանուր էական հատկանիշներ ունեն։ Այդ իմաստով կարելի յե խոսել «արդի պետականության» մասին՝ հակադրելով այս այն ապագային, յերբ կմահանա նրա այժմյան արմատը, բուրժուական հասարակությունը։

«Այնուհետև հարցն այսպես է դրվում. ի՞նչպիսի կերպափոխության կենթարկվի պետականությունը կոմունիստական հասարակության մեջ։ Ուրիշ խոսքերով՝ այն ժամանակ ի՞նչպիսի հասարակական ֆունկցիաներ կմնան, վոր նման կլինեն այժմյան պետական ֆունկցիաներին։ Այս հարցին կարելի յե միմիայն գիտականորեն պատասխանել. և քանի հազար անգամ էլ զուգորդեն «ժողովուրդ» բառը «պետություն» բառի հետ, այդ բանը մազաչափ անգամ առաջ չի մղի հարցի լուծումը...»։

Այս ձևով ծաղրի յենթարկելով «ժողովրդական պետության» մասին յեղած բոլոր խոսակցությունները՝ Մարքսը դնում է հարցը և կարծես նախազգուշացնում է, թե այդ հարցին գիտական պատասխան տալու համար կարելի յե միմիայն ամրապես հաստատված գիտական տվյալներ գործածել։

Առաջինը, ինչ վոր միանգամայն ճշգրիտ կերպով հաստատել է զարգացման ամբողջ թեորիան, ամբողջ գիտությունն ընդհանրապես,—և ինչ վոր մոռացել են ուտոպիստները, ինչ վոր մոռանում են սոցիալիստական հեղափոխությունից վախեցող այժմյան օպորտունիստները,—այդ այն հանգամանքն է, վոր պատմականորեն անկասկած գոյություն պիտի ունենա կապիտալիզմից դեպի կոմունիզմ տանող անցման մի հատուկ ստադիա կամ մի հատուկ էտապ։

2. ԱՆՑՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻՑ ԴԵՊԻ ԿՈՄՈՒՆԻԶՄ

«...Կապիտալիստական ու կոմունիստական հասարակության միջև,—շարունակում է Մարքսը,—ընկնում է մի շրջան, յերբ առաջինը հեղափոխականորեն փոխակերպվում է վերջինին։ Այդ շրջանին համապատասխանում է նաև անցման մի քաղաքական շրջան, և այդ շրջանի պետությունն ուրիշ վոչինչ չի կարող լինել, բացի պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրայից...»։

Մարքսի այս յեզրակացությունը հիմնված ե այն դերի վերլուծության վրա, վոր խաղում ե պրոլետարիատն արդի կապիտալիստական հասարակության մեջ, հիմնված ե այդ հասարակության զարգացման և պրոլետարիատի ու բուրժուազիայի հակադիր շահերի անհաշտելիության տվյալների վրա։

Առաջ հարցը դրվում եր այսպես. իր ազատագրությունը ձեռք բերելու համար պրոլետարիատը պետք ե տապալի բուրժուազիային, նվաճի քաղաքական իշխանությունը, հաստատի իր հեղափոխական դիկտատուրան։

Այժմ հարցը մի փոքր այլ կերպ ե դրվում. դեպի կոմունիզմ զարգացող կապիտալիստական հասարակությունից կոմունիստական հասարակությանն անցնելն անկարելի յե առանց «քաղաքական անցման շրջանի», և այդ շրջանի պետությունը կարող ե միմիայն պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրան լինել։

Իսկ ինչպիսի հարաբերություն ունի այս դիկտատուրան դեպի դեմոկրատիան։

Մենք տեսանք, վոր «Կոմունիստական մանիֆեստը» պարզապես իրար կողքի յե դնում յերկու հասկացողություն—«պրոլետարիատի՝ տիրող դասակարգի փոխարկվելն» ու «դեմոկրատիայի նվաճումը»։ Ամբողջ վերևում շարադրվածի հիման վրա կարելի յե ավելի ճշգրիտ վորոշել, թե դեմոկրատիան՝ կապիտալիզմից դեպի կոմունիզմ անցնելիս՝ ինչպես ե փոխվում։

Կապիտալիստական հասարակության մեջ, նրա զարգացման ամենաբարենպաստ պայմաններում, մենք քիչ թե շատ լիակատար դեմոկրատիզմ տեսնում ենք դեմոկրատական հանրապետության մեջ։ Բայց այդ դեմոկրատիզմը միշտ սեղմված ե կապիտալիստական շահագործման նեղ շրջանակների մեջ, և այդ պատճառով ել, ըստ եյության, միշտ մնում ե դեմոկրատիզմ փոքրամասնության համար, միմիայն ունեոր դասակարգերի համար, միմիայն հարուստների համար։ Կապիտալիստական հասարակության ազատությունը միշտ մնում ե մոտավորապես մի այնպիսի ազատություն, ինչպիսին հին հունական հանրապետություններում յեղած ազատությունն եր, այն ե՝ ազատություն ստրկատերերի համար։ Արդի վարձու ստրուկները, կապիտալիստական շահագործման պայմանների շնորհիվ, այն աստիճան ճզմված են մնում կարիքի ու աղքատության մեջ, վոր «գլուխ չունեն դեմոկրատիայի», «քաղաքականության» մասին մտածելու, վոր դեպքերի սովորական, խաղաղ ընթացքի ժամանակ բնակչության մեծա-

մասնությունը հեռացված է հասարակական-քաղաքական կյանքի մասնակցությունից:

Այս պնդման ճշտությունը, թերևս, ամենից ավելի ակներև կերպով հաստատում է Գերմանիան, հատկապես այն պատճառով, վոր այս պետության մեջ սահմանադրական լեգալությունը զարմանալիորեն յերկար ու կայուն պահպանվեց գրեթե կես դար (1871—1914), իսկ սոցիալ-դեմոկրատիան այս ժամանակամիջոցում շատ ավելի բան կարողացավ անել, քան ուրիշ յերկրներում «լեգալությունն ոգտագործելու» համար, ինչպես և բանվորների մի այնպիսի խոշոր թիվ կարողացավ իբրև քաղաքական կուսակցություն կազմակերպել, ինչպես վոչ մի այլ տեղ աշխարհում:

Իսկ վորքա՞ն է կապիտալիստական հասարակության մեջ քաղաքականորեն գիտակից ու գործունյա վարձու ստրուկների յերբևիցե տեսնված այդ ամենաբարձր բաժինը: Սոցիալ-դեմոկրատների կուսակցության մի միլիոն անդամ—15 միլիո՛ն վարձու բանվորներից: Արհեստակցականորեն կազմակերպված յերեք միլիոն—15 միլիոնի՜ց:

Դեմոկրատիա չնչին փոքրամասնության համար, դեմոկրատիա հարուստների համար, ահա թե վորն է կապիտալիստական հասարակության դեմոկրատիզմը: Յեթե ավելի մոտիկից զննենք կապիտալիստական դեմոկրատիայի մեխանիզմը, ապա ամենուրեք ու ամեն տեղ,—թե՛ ընտրական իրավունքի «մանր», իբր թե մանր, մանրամասնությունների մեջ (նստակեցության ցենզ, կանանց զրկումն ընտրական իրավունքից և այլն), թե՛ ներկայացուցչական հիմնարկների տեխնիկայի մեջ, թե՛ ժողովների իրավունքի դեմ հարուցված փաստական խոչընդոտների մեջ (հասարակական շենքերն «աղքատների՜» համար չեն), թե՛ ամենորյա մամուլի զուտ կապիտալիստական կազմակերպության մեջ և այլն, և այլն,—մենք կտեսնենք դեմոկրատիզմի անվերջ ու անվերջ սահմանափակումներ: Այդ սահմանափակումները, բացհանումները, բացառումները, խոչընդոտները, վոր հարուցվում են աղքատների դեմ, մանր են թվում մանավանդ այն մարդկանց աչքում, վորոնք յերբեք կարիք չեն տեսել ու ճնշված դասակարգերի հետ նրանց մասսայական կյանքում մոտիկ չեն յեղել (իսկ այդպիսի մարդիկ են բուրժուական հրապարակախոսների ու քաղաքագետների իննը տասներորդը, յեթե վոչ իննսունիննը հարյուրերորդը),—բայց այդ սահմանափակումներն՝ իբրև ընդհանուր գումար վերցրած՝ վտարում, դուրս են մղում չքավորներին քաղաքականությունից, դեմոկրատիայի մեջ ակտիվ մասնակցություն ունենալուց:

Մարքսն սքանչելիորեն ըմբռնել եր կապիտալիստական դեմոկրատիայի այս էությունը, յերբ Կոմունայի փորձը վերլուծելիս՝ ասում եր. ճնշվածներին միքանի տարին մի անգամ թույլ են տալիս վորոշելու, թե ճնշող դասակարգի ներկայացուցիչներից վո՞րը պետք ե պառլամենտում ներկայացնի ու ճնշի նրանց։

Բայց այդ կապիտալիստական դեմոկրատիայից, վոր անխուսափելիորեն նեղ ե, գաղտնաբար հեռու յե վանում չքավորությանը, ուստի և մինչև ծուծը յերեսպաշտ ե ու կեղծ, այդ կապիտալիստական դեմոկրատիայից հառաջընթաց զարգացումը պարզ, ուղիղ ու հարթ չի ընթանում «դեպի մի ավելի ու ավելի լայն դեմոկրատիա», ինչպես պատկերացնում են իրենց՝ ազատամիտ պրոֆեսորներն ու մանր-բուրժուական օպորտունիստները։ Վոչ։ Հառաջընթաց զարգացումը, այսինքն՝ զարգացումը դեպի կոմունիզմ, անցնում ե պրոլետարիատի դիկտատուրայի միջով, և այլ կերպ լինել չի կարող, վորովհետև շահագործող կապիտալիստների դիմադրությունը խորտակելու համար ել ուրիշ վոչ վոք չկա և այն այլ ճանապարհով խորտակել չի կարելի։

Իսկ պրոլետարիատի դիկտատուրան, այսինքն՝ ճնշվածների ավանգարդի կազմակերպությունն իբրև իշխող դասակարգ՝ ճնշողներին ճնշելու համար, չի կարող պարզապես միմիայն դեմոկրատիայի ընդարձակում առաջացնել։ Դեմոկրատիզմի հսկայական ընդլայնման հետ միասին, վորն առաջին անգամ դեմոկրատիզմ ե դառնում չքավորների համար, դեմոկրատիզմ՝ ժողովրդի համար և վոչ թե դեմոկրատիզմ հարուստների համար,—պրոլետարիատի դիկտատուրան ազատությունից մի շարք բացառումներ ե անում ճնշողների, շահագործողների, կապիտալիստների վերաբերմամբ։ Մենք պետք ե նրանց ճնշենք, վորպեսզի մարդկությունն ազատագրենք վարձու ստրկությունից. նրանց դիմադրությունը պետք ե ուժով խորտակել,—պարզ ե, վոր այնտեղ, վորտեղ կա ճնշում, վորտեղ կա բռնություն, այնտեղ չկա ազատություն, չկա դեմոկրատիա։

Ենգելսը գեղեցիկ կերպով արտահայտել ե այս բանը Բեբելին ուղղած իր նամակում, ասելով, ինչպես ընթերցողը հիշում ե, թե «պրոլետարիատը պետության կարիք ունի վոչ թե ազատության համար, այլ իր հակառակորդներին ճնշելու համար, իսկ յերբ կարելի լինի խոսել ազատության մասին, պետություն չի լինի այլևս»։

Դեմոկրատիա ժողովրդի հսկայական մեծամասնության համար և ժողովրդին շահագործողների, ճնշողների բռնի ճնշում, այսինքն՝ դեմոկրատիայից վտարում,—ահա թե ինչպիսի կերպարանափոխություն է կրելու դեմոկրատիան կապիտալիզմից դեպի սոցիալիզմ անցնելիս:

Միմիայն կոմունիստական հասարակության մեջ, երբ արդեն վերջնականապես ջախջախված է կապիտալիստների դիմադրությունը, երբ կապիտալիստներն անհետացել են, երբ չկան դասակարգեր (այսինքն՝ հասարակության անդամների միջև արտադրության հասարակական միջոցների նկատմամբ տարբերություն չկա), այն ժամանակ միայն «անհետանում է պետությունը և կարելի յե խոսել ազատության մասին»: Միմիայն այն ժամանակ հնարավոր է և կիրականացվի իսկապես լիակատար, իսկապես առանց որևէ բացառման դեմոկրատիան: Եվ միմիայն այն ժամանակ դեմոկրատիան կսկսի մահանալ այն հասարակ հանգամանքի շնորհիվ, որ մարդիկ, ազատվելով կապիտալիստական ստրկությունից, կապիտալիստական շահագործման անթիվ սարսափներից, վայրագություններից, անհեթեթություններից, գարշելիություններից, աստիճանաբար կսովորեն պահպանել համակեցության տարրական, դարերից ի վեր հայտնի, բոլոր այբբենարաններում հազարավոր տարիներ կրկնված կանոնները, կսովորեն այդ կանոնները կատարել առանց բռնության, առանց հարկադրանքի, առանց հպատակման, առանց հարկադրման այն հատուկ ապարատի, որ պետություն է կոչվում:

«Պետությունը մահանում է» արտահայտությունը շատ հաջող է ընտրված, որովհետև այն մատնանշում է պրոցեսի թե աստիճանականությունը, թե նրա տարերայնությունը: Միմիայն սովորությունն է, որ կարող է այդպիսի ազդեցություն գործել և անկասկած կգործի, որովհետև մենք միլիոնավոր անգամներ տեսնում ենք մեր շուրջը, թե որքան հեշտությամբ են սովորում մարդիկ համակեցության իրենց համար անհրաժեշտ կանոնները պահելուն, յեթե չկա շահագործում, յեթե չկա ոչ մի այնպիսի բան, որ վրդովում է, բողոք ու ապստամբություն առաջացնում, ճնշման անհրաժեշտություն ստեղծում:

Այսպես ուրեմն՝ կապիտալիստական հասարակության մեջ մենք խուզված, խղճուկ, կեղծ դեմոկրատիա ենք տեսնում, դեմոկրատիա միմիայն հարուստների համար, փոքրամասնության համար: Պրոլետարիատի դիկտատուրան, դեպի կոմունիզմ անցնելու շրջանը, առաջին անգամ դեմոկրատիա կտա ժողովրդի հա-

մար, մեծամասնության համար, միևնույն ժամանակ անհրաժեշտաբար ճնշելով փոքրամասնությանը, շահագործողներին։ Միմիայն կոմունիզմը կարող է իսկապես լիակատար դեմոկրատիա տալ, և որքան ավելի լիակատար լինի այդ դեմոկրատիան, այնքան նա ավելի շուտով անպետք կդառնա, ինքն իրեն կմահանա։

Ուրիշ խոսքով՝ կապիտալիզմի ժամանակ մենք ունենք բառի բուն իմաստով պետություն, մի հատուկ մեքենա, որով մի դասակարգ ճնշում է մյուսին, և այն էլ՝ փոքրամասնությունը ճնշում է մեծամասնությանը։ Հասկանալի յե, որ մի այդպիսի գործի հաջողության համար, ինչպիսին մեծամասնություն կազմող շահագործվողների ճնշումն է փոքրամասնություն կազմող շահագործողների կողմից, հարկավոր է ճնշման ծայրահեղ վայրագություն, գազանություն, հարկավոր են արյան ծովեր, որոնց միջով և մարդկությունն ընթանում է իր ուղին՝ ստրկության, ճորտության, վարձկանության վիճակում։

Այնուհետև, կապիտալիզմից կոմունիզմին անցնելիս՝ ճնշումը դեռևս անհրաժեշտ է, բայց արդեն փոքրամասնություն կազմող շահագործողների ճնշումը՝ մեծամասնություն կազմող շահագործվողների կողմից։ Ճնշման հատուկ ապարատը, հատուկ մեքենան, «պետությունը» դեռ անհրաժեշտ է, բայց այդ արդեն անցման պետություն է, այդ այլևս պետություն չէ իսկական իմաստով, որովհետև փոքրամասնություն կազմող շահագործողների ճնշումը մեծամասնություն կազմող յերեկվա վարձու ստրուկների կողմից համեմատաբար այնքան հեշտ, հասարակ ու բնական գործ է, որ նրա համար շատ ավելի քիչ արյուն կթափվի, քան թե ստրուկների, ճորտերի, վարձու բանվորների ապստամբությունները ճնշելիս, որ այն շատ ավելի եժան կնստի մարդկությանը։ Յեվ այդ բանը համատեղելի յե դեմոկրատիայի տարածման հետ բնակչության այնպիսի վիթխարի մեծամասնության վրա, որ ճնշման հատուկ մեքենայի անհրաժեշտությունն սկսում է չքանալ։ Բնական բան է, որ շահագործողները չեն կարող ժողովրդին ճնշել առանց ամենաբարդ մեքենայի, որ պետք է այդ խնդիրն իրականացնելու համար, իսկ ժողովուրդը կարող է շահագործողներին ճնշել նաև մի շատ պարզ «մեքենայի» միջոցով, գրեթե առանց «մեքենայի», առանց հատուկ ապարատի, զինված մասսաների պարզ կազմակերպությամբ (ինչպես, առաջ ընկնելով նկատենք, Բանվորական ու զինվորական պատգամավորների խորհուրդներն էյին)։

Վերջապես, միմիայն կոմունիզմն է, որ կատարելապես վերացնում է պետության կարիքը, որովհետև նրա ժամանակ ոչ ոք չկա, որին հարկավոր լիներ ճնշել, «ոչ ոք»՝ դասակարգի իմաստով, բնակչության մի որոշ հատվածի դեմ սիստեմատիկ պայքար մղելու իմաստով։ Մենք ուտոպիստներ չենք և ամենևին չենք ժխտում եքսցեսների հնարավորությունն ու անխուսափելիությունն առանձին անձանց կողմից, ինչպես նաև այդպիսի եքսցեսները ճնշելու անհրաժեշտությունը։ Բայց, նախ և առաջ, դրա համար պետք չի հատուկ մեքենա, ճնշման հատուկ ապարատ, այդ բանը կանի հենց ինքը զինված ժողովուրդն այնպիսի պարզությամբ ու հեշտությամբ, ինչպես քաղաքակիրթ մարդկանց որևէ բազմություն նույնիսկ արդի հասարակության մեջ բաժանում է կռվողներին կամ թույլ չի տալիս բռնություն կանանց վերաբերմամբ։ Իսկ, յերկրորդ, մենք գիտենք, որ համակեցության* կանոնները խախտող եքսցեսների արմատական սոցիալական պատճառը մասսաների շահագործումն է, նրանց կարիքն ու աղքատությունը։ Այդ գլխավոր պատճառի վերացումով՝ եքսցեսներն անխուսափելիորեն կսկսեն «մահանալ»։ Մենք չգիտենք, թե որքան արագ և ինչ հաջորդականությամբ, բայց գիտենք, որ նրանք կմահանան։ Նրանց մահացման հետ միասին կմեռնի նաև պետությունը։

Առանց ուտոպիաների մեջ ընկնելու՝ Մարքսն ավելի մանրամասն կերպով բնորոշել է այն, ինչ որ այժմ կարելի յե բնորոշել այդ ապագայի վերաբերմամբ, այն է՝ կոմունիստական հասարակության ամենացածր ու ամենաբարձր փուլի (աստիճանի, էտապի) տարբերությունը։

3. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ

«Գոթայի ծրագրի քննադատության» մեջ Մարքսը մանրամասնաբար հերքում է լասսալյան այն գաղափարը, թե երբ բանվորը սոցիալիզմի ժամանակ ստանալու յե «աշխատանքի անկրճատ» կամ «լրիվ արդյունքը»։ Մարքսը ցույց է տալիս, որ ամբողջ հասարակության ամբողջ հանրային աշխատանքից անհրաժեշտ է հանել թե պահեստի ֆոնդը, թե արտադրության ընդարձակման ֆոնդը, թե «մաշված» մեքենաների փոխհատուցումը և այլն, իսկ ապա սպառման առարկաներից՝ վարչության, դպ-

* Ձեռագրում այնուհետև ջնջված է՝ «հիմնական» բառը։ Խմբ.։

րոցների, հիվանդանոցների, անկելանոցների և այլ ծախսերի ֆոնդը։

Լասսալի մշուշապատ, աղոտ, ընդհանուր ֆրազի փոխարեն («աշխատանքի լրիվ արդյունքը—բանվորին»)՝ Մարքսն զգաստ հաշվառում է կատարում այն բանի, թե ինչպես պետք է ստիպված լինի տնտեսավարելու սոցիալիստական հասարակությունը։ Մարքսը կոնկրետ կերպով վերլուծում է այդպիսի հասարակության կենսապայմանները, վորի մեջ կապիտալիզմ չի լինի, և այդ առթիվ ասում է.

«Մենք այստեղ գործ ունենք» (բանվորական կուսակցության ծրագիրը քննարկելիս) «վո՛չ թե այնպիսի մի կոմունիստական հասարակության հետ, վոր զարգացել է իր սեփական հիմքի վրա, այլ այնպիսի մի հասարակության հետ, վորը հենց նոր-նոր է ծագում կապիտալիստական հասարակությունից և վորն այդ պատճառով բոլոր տեսակետներից—թե՛ տնտեսական, թե՛ բարոյական, թե՛ մտավոր—դեռ կրում է իր վրա այն հին հասարակության դրոշմը, վորի խորքերից նա յելել է»։

Ահա հենց այս կոմունիստական հասարակությունը, վոր նոր-նոր է լույս աշխարհ յեկել կապիտալիզմի խորքերից, վոր ամեն տեսակետից հին հասարակության դրոշմն է կրում, Մարքսն անվանում է կոմունիստական հասարակության «առաջին» կամ ամենաստորին փուլ։

Արտադրության միջոցներն արդեն դադարել են առանձին անձերի մասնավոր սեփականություն լինելուց։ Արտադրության միջոցները պատկանում են ամբողջ հասարակությանը։ Հասարակության ամեն մի անդամ, կատարելով հանրորեն-անհրաժեշտ աշխատանքի մի վորոշ մաս, հասարակությունից վկայագիր է ստանում այն մասին, թե նա այս-ինչ չափով աշխատանք է կատարել։ Այդ վկայագրի հիման վրա նա սպառման առարկաների հասարակական պահեստներից ստանում է համապատասխան քանակությամբ արդյունքներ։ Հանելով աշխատանքի այն քանակությունը, վոր հասարակական ֆոնդի մեջ է մտնում, յուրաքանչյուր բանվոր, հետևաբար, ստանում է հասարակությունից ճիշտ այնքան, վորքան ինքն է տվել նրան։

Կարծես թե «հավասարություն» է թագավորում։

Բայց յերբ Լասսալն՝ աչքի առաջ ունենալով այդպիսի հասարակական կարգերը (վորոնք սովորաբար սոցիալիզմ են կոչվում, իսկ Մարքսի մոտ կրում են կոմունիզմի առաջին փուլ անունը)՝ ասում է, թե այդ «արդարացի բաշխում է», թե այդ «ամեն մեկի հավասար իրավունքն է աշխատանքի հավասար

Վուլգար տնտեսագետները, դրանց թվում նաև բուրժուական պրոֆեսորները, նրանց թվում «մեր» Տուգանը, շարունակ կշտամբում են սոցիալիստներին, թե իբր սրանք մոռանում են մարդկանց անհավասարության մասին և «երազում են» վոչնչացնել այդ անհավասարությունը։ Ինչպես տեսնում ենք, այդպիսի կշտամբանքն ապացուցում է միմիայն պ. պ. բուրժուական իդեոլոգների ծայրահեղ տգիտությունը։

Մարքսը վոչ միայն ամենաճշգրիտ կերպով հաշվի յե առնում մարդկանց անխուսափելի անհավասարությունը, այլ նա հաշվի յե առնում նաև այն, վոր միմիայն արտադրության միջոցների ամբողջ հասարակության ընդհանուր սեփականություն դառնալը («սոցիալիզմ» այդ բառի սովորական գործածությամբ) դեռ չի վերացնում բաշխման թերությունները ու «բուրժուական իրավունքի» անհավասարությունը, իրավունքի, վոր շարունակում է իշխել, քանի դեռ արդյունքներն «ըստ աշխատանքի» յեն բաժանվում։

«...Բայց այդ թերությունները,—շարունակում է Մարքսը,—անխուսափելի յեն կոմունիստական հասարակության առաջին փուլում, նրա այն վիճակում, յերբ նա յերկարատև յերկունքից հետո ծնվում է կապիտալիստական հասարակությունից։ Իրավունքը յերբեք չի կարող ավելի բարձր լինել, քան տնտեսական կարգն ու հասարակության նրանով պայմանավորված կուլտուրական զարգացումը...»։

Այսպիսով, կոմունիստական հասարակության առաջին փուլում (վոր սովորաբար սոցիալիզմ են անվանում) «բուրժուական իրավունքը» լիովին չի վերացվում, այլ միմիայն մասամբ, միմիայն արդեն ձեռք բերված տնտեսական հեղաշրջման չափով, այսինքն՝ միմիայն արտադրության միջոցների վերաբերմամբ։ «Բուրժուական իրավունքը» նրանք առանձին մարդկանց մասնավոր սեփականություն է ճանաչում։ Սոցիալիզմը նրանք ընդհանուր սեփականություն է դարձնում։ Այդ չափով—և միմիայն այդ չափով—«բուրժուական իրավունքը» վերանում է։

Բայց այնուամենայնիվ այն մնում է իր մյուս մասով, մնում է իբրև արդյունքների բաշխման և հասարակության անդամների միջև աշխատանքը բաշխելու կարգավորիչ (վորոշող)։ «Ով չի աշխատում, նա չպետք է ուտի». այս սոցիալիստական սկզբունքըն արդեն իրականացված է. «աշխատանքի հավասար քանակության համար՝ արդյունքի հավասար քանակություն»—սոցիալիստական այս սկզբունքն էլ իրականացված է արդեն: Սակայն,

այս դեռ կոմունիզմ չէ, և այս դեռ չի վերացնում «բուրժուական իրավունքը», վորը անհավասար մարդկանց աշխատանքի անհավասար (փաստորեն անհավասար) քանակության համար հավասար քանակությամբ արդյունք է տալիս։

Այդ—«թերություն է», ասում է Մարքսը, բայց անխուսափելի յե կոմունիզմի առաջին փուլում, վորովհետև, առանց ուտոպիզմի մեջ ընկնելու չի կարելի կարծել, թե տապալելով կապիտալիզմը՝ մարդիկ միանգամից կսովորեն աշխատել հասարակության համար առանց իրավունքի վորևե նորմայի. բացի դրանից՝ կապիտալիզմի վերացումը այդպիսի փոփոխման համար տնտեսական նախադրյալներ չի տալիս միանգամից։

Իսկ այլ նորմաներ, բացի «բուրժուական իրավունքից», չկան։ Յեվ այդ չափով դեռ անհրաժեշտ է մնում պետությունը, վորը, պաշտպանելով արտադրության միջոցների հանրային սեփականությունը, կպաշտպանի աշխատանքի հավասարությունն ու արդյունքի բաշխման հավասարությունը։

Պետությունը մահանում է, վորչափով այլևս կապիտալիստներ չկան, այլևս դասակարգեր չկան, այդ պատճառով էլ վորևե դասակարգի ճնշել չի կարելի։

Բայց պետությունը դեռևս բոլորովին չի մեռել, վորովհետև դեռ մնում է «բուրժուական իրավունքի» պաշտպանությունը, վորը սրբագործում է անհավասարությունը։ Պետության լիակատար մահացման համար հարկավոր է լիակատար կոմունիզմ։

4. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՓՈՒԼԸ

Մարքսը շարունակում է.

«...Կոմունիստական հասարակության բարձրագույն փուլի ժամանակ, յերբ կչքանա մարդուն ստրկացնող նրա հպատակումն աշխատանքի բաժանմանը, յերբ դրա հետ միասին կանհետանա մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակադրությունը, յերբ աշխատանքը կդադարի լոկ ապրուստի միջոց լինելուց, այլ ինքը կդառնա կյանքի առաջին պահանջը, յերբ անհատների համակողմանի զարգացման հետ միասին կաճեն նաև արտադրողական ուժերը և լիառատ հեղեղի նման կհոսեն հասարակական հարստության բոլոր աղբյուրները,—այն ժամանակ միայն կարելի կլինի բոլորովին հաղթահարել բուրժուական իրավունքի նեղ հորիզոնը, և հասարակությունը կկարողանա իր դրոշակի վրա գրել—«Ամեն մեկն ըստ իր ընդունակությունների, ամեն մեկին ըստ իր պահանջմունքների»»։

Միմիայն այժմ մենք կարող ենք գնահատել Էնգելսի դիտողությունների ամբողջ ճշտությունը, յերբ նա անխնա կերպով

ծաղրուծանակի յեր յենթարկում «ազատություն» ու «պետություն» բառերի միացման անհեթեթությունը: Քանի կա պետություն, չկա ազատություն: Յերբ ազատություն լինի, պետություն չի լինի:

Պետության լիակատար մահացման տնտեսական հիմքը կոմունիզմի այնպիսի բարձր զարգացումն է, վորի ժամանակ անհետանում է մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակադրությունը, հետևապես՝ անհետանում է արդի հասարակական անհավասարության կարևորագույն աղբյուրներից մեկը, և այն էլ՝ այնպիսի աղբյուր, վոր միանգամից վոչ մի կերպ չի կարելի վերացնել լոկ արտադրության միջոցները հասարակական սեփականություն դարձնելով, միմիայն կապիտալիստներին սեփականազրկելով:

Այս սեփականազրկումը արտադրողական ուժերի հսկայական զարգացման հնարավորություն կընձեռի: Յեվ, տեսնելով, թե ինչպես այժմ արդեն կապիտալիզմն անհավատալի չափով կասեցնում է այդ զարգացումը, թե ինչքան շատ բան կարելի կլիներ առաջ շարժել արդեն ձեռք բերված արդի տեխնիկայի հիման վրա, մենք իրավունք ունենք ամենալիակատար վստահությամբ ասելու, վոր կապիտալիստների սեփականազրկումն անխուսափելիորեն մարդկային հասարակության արտադրողական ուժերի հսկայական զարգացում կընձեռի: Բայց թե վորքան արագ է առաջ ընթանալու այդ շարժումը, թե վորքան շուտ է այն հասնելու իր կապերն աշխատանքի բաժանման հետ կտրելուն, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրությունը վոչնչացնելուն, աշխատանքը «կենսական առաջին պահանջը» դարձնելուն, այդ մենք չգիտենք և չենք կարող գիտենալ:

Այդ պատճառով էլ մենք իրավունք ունենք խոսելու միմիայն պետության անխուսափելի մահացման մասին, ընդգծելով այդ պրոցեսի յերկարատևությունը, նրա կախումը կոմունիզմի բարձրագույն փուլի զարգացման արագությունից, և թողնելով բոլորովին բաց՝ մահացման ժամկետների ու կոնկրետ ձևերի հարցը, վորովհետև այդպիսի հարցեր լուծելու համար նյութ չկա:

Պետությունը լիովին մահանալ կկարողանա այն ժամանակ, յերբ հասարակությունը կիրականացնի՝ «ամեն մեկն ըստ իր ընդունակությունների, ամեն մեկին ըստ իր պահանջմունքների» կանոնը, այսինքն՝ յերբ մարդիկ այն աստիճան կսովորեն համակեցության հիմնական կանոնները պահպանել և յերբ նրանց աշխատանքն այնքան արտադրողական կլինի, վոր նրանք հոժա-

րակամ կսկսեն աշխատել ըստ ընդունակությունների: «Բուրժուական իրավունքի նեղ հորիզոնը», որ հարկադրում է Շեյլոկի չորությամբ հաշիվ անել, թե չլինի ուրիշից մի կես ժամ ավելի աշխատես, չլինի ուրիշից մի քիչ ավելի պակաս վճար ստանաս, այդ նեղ հորիզոնն այն ժամանակ մարդիկ անցած կլինեն: Այն ժամանակ արդյունքների բաշխումը հասարակության կողմից նորմավորում չի պահանջի, թե յուրաքանչյուրն ինչ քանակությամբ արդյունք պետք է ստանա. ամեն մեկն ազատորեն կվերցնի «ըստ իր պահանջմունքի»:

Բուրժուական տեսակետից հեշտ է այսպիսի հասարակական կառուցվածքը «զուտ ուտոպիա» հայտարարել ու հռհռալ այն բանի վրա, թե սոցիալիստները խոստանում են ամեն մեկին հասարակությունից ուզած քանակությամբ տրյուֆել, ավտոմոբիլ, պիանինո և այլն ստանալու իրավունք, առանց որևէ վերահսկողության՝ առանձին քաղաքացու աշխատանքի վրա: Այդպիսի հռհռոցով է մինչև այժմ էլ իր գլուխն ազատում բուրժուական «գիտնականների» մեծամասնությունը, որ դրանով ցույց է տալիս թե՛ իր տգիտությունը և թե՛ կապիտալիզմի շահագիտական պաշտպանությունն իր կողմից:

Տգիտություն է, որովհետև ոչ մի սոցիալիստի մտքով էլ չի անցել «խոստանալ», որ կոմունիզմի զարգացման բարձրագույն փուլը վրա է հասնելու, իսկ մեծ սոցիալիստների կանխատեսությունը, թե այն գալու է, ենթադրում է ոչ աշխատանքի այժմյան արտադրողականությունը, ո՛չ էլ այժմյան քաղքենուն, որ Պոմյալովսկու մոնթերի նման ընդունակ է «զուր տեղը» փչացնելու հասարակական հարստության պահեստները և անկարելի բաներ պահանջելու:

Մինչև այն ժամանակ, երբ կգա կոմունիզմի «բարձրագույն» փուլը, սոցիալիստներն ամենախիստ վերահսկողություն են պահանջում հասարակության ու պետության կողմից աշխատանքի չափի ու սպառման չափի վրա, միայն թե՝ այդ վերահսկողությունը պետք է սկսվի կապիտալիստների սեփականազրկումից, բանվորների վերահսկողությունից կապիտալիստների վրա և այն պետք է իրականացնի ոչ թե չինովնիկների պետությունը, այլ զինված բանվորների պետությունը:

Բուրժուական իդեոլոգների (ու նրանց՝ պ. պ. Ծերեթելիների, Չերնովների ու Ընկ. նման պոչերի) կողմից կապիտալիզմի շահագիտական պաշտպանության էությունը հենց այն է, որ նրանք, հեռավոր ապագայի մասին կատարվող վեճերով ու զրույց-

ներով հեղաշրջում են այսօրվա քաղաքականության կենսական ու հրատապ հարցը, այն է՝ կապիտալիստների սեփականազրկումը, բոլոր քաղաքացիներին մեկ խոշոր «սինդիկատի», այսինքն՝ ամբողջ պետության աշխատողներ ու ծառայողներ դարձնելը, և այդ ամբողջ սինդիկատի ամբողջ աշխատանքն իսկապես դեմոկրատական պետության, Բանվորական ու զինվորական պատգամավորների խորհուրդների պետության լիովին հպատակեցնելը։

Ըստ էության՝ երբ գիտնական պրոֆեսորը, իսկ նրա հետևից քաղքենին, իսկ սրա հետևից պարոնայք Ծերեթելիներն ու Չեռնովները խոսում են բոլշևիկների անխոհական ուտոպիաների, դեմագոգիական խոստումների մասին, սոցիալիզմ «մտցնելու» անկարելիության մասին, նրանք նկատի ունեն կոմունիզմի հենց բարձրագույն աստիճան կամ փուլը, որը «մտցնել» ո՛չ միայն ոչ ոք չի խոստացել, այլ մտքովն էլ չի անցկացրել, որովհետև «մտցնել» այն առհասարակ չի կարելի։

Եվ այստեղ մենք հասել ենք սոցիալիզմի ու կոմունիզմի միջև եղած գիտական տարբերության այն հարցին, որ շոշափել է Էնգելսն իր վերը բերված դատողության մեջ «սոցիալ-դեմոկրատներ» անվան անճիշտ լինելու մասին։ Տարբերությունը կոմունիզմի առաջին կամ ստորին և բարձրագույն փուլերի միջև ապագայում քաղաքականորեն, հավանականաբար, վիթխարի կլինի, բայց հիմա, կապիտալիզմի ժամանակ, ծիծաղելի կլիներ ընդունել այն, և այդ տարբերությունն առաջին պլանը մղել կարող էին գուցե միմիայն առանձին անարխիստներ (եթե անարխիստների շարքերում դեռ մնացել են այնպիսի մարդիկ, որոնք ոչինչ չեն սովորել Կրոպոտկինների, Գրավի, Կորնելիսսենի ու անարխիզմի մյուս «աստղերի» «պլեխանովյան» փոխակերպությունից հետո, երբ նրանք սոցիալ-շովինիստներ դարձան կամ անարխո-խրամատականներ, ինչպես ասել է պատիվ ու խիղճ պահպանած սակավաթիվ անարխիստներից մեկը՝ Գեն)։

Բայց սոցիալիզմի ու կոմունիզմի միջև եղած գիտական տարբերությունը պարզ է։ Այն, ինչ որ սովորաբար սոցիալիզմ են անվանում, Մարքսն անվանել է կոմունիստական հասարակության «առաջին» կամ ստորին փուլ։ Որչափով ընդհանուր սեփականություն են դառնում արտադրության միջոցները, այդ չափով այստեղ էլ կարելի է «կոմունիզմ» բառը գործածել, եթե չմոռանանք, որ այդ լիակատար կոմունիզմ չէ։ Մարքսի պարզաբանումների խոշոր նշանակությունն այն է, որ նա այստեղ էլ հետևողականորեն կիրառում է մատերիալիստական դիա-

ընկերական, զարգացման ուսմունքը, կոմունիզմը դիտելով իբրև կապիտալիզմից զարգացող մի բան։ Փոխանակ սխոլաստիկ-մտացածին, «հնարովի» բնորոշումների և բառերի շուրջը (ինչ է սոցիալիզմը, ինչ է կոմունիզմը) անպտուղ վիճաբանություններ անելու՝ Մարքսը տալիս է այն բանի վերլուծությունը, ինչ որ կարելի յե կոմունիզմի տնտեսական հասունության աստիճաններ անվանել։

Իր առաջին փուլում, իր առաջին աստիճանի ժամանակ կոմունիզմը դեռ չի կարող տնտեսապես լրիվին հասուն լինել, լրիվին ազատ լինել կապիտալիզմի ավանդություններից կամ հետքերից։ Այստեղից է բղխում այն հետաքրքրական յերևույթը, ինչպիսին է «բուրժուական իրավունքի նեղ հորիզոնի» պահպանումը կոմունիզմի ժամանակ, նրա առաջին փուլում։ Բուրժուական իրավունքը սպառման արդյունքների բաշխման վերաբերմամբ, իհարկե, անխուսափելիորեն նաև բուրժուական պետություն է յենթադրում, վորովհետև իրավունքը վոչինչ է առանց այն ապարատի, վոր կարող է հարկադրել այդ իրավունքի նորմաները կատարելու։

Դուրս է գալիս, վոր կոմունիզմի շրջանում վորոշ ժամանակի ընթացքում վոչ միայն բուրժուական իրավունքն է մնում, այլ մինչև իսկ նաև բուրժուական պետությունն առա՛նց բուրժուազիայի։

Այդ կարող է պարադոքս կամ պարզապես մտքի դիալեկտիկական խաղ թվալ, վորի մեջ հաճախ մեղադրում են մարքսիզմն այն մարդիկ, ովքեր ամենաչնչին ջանք անգամ չեն թափել ուսումնասիրելու նրա չափազանց խոր բովանդակությունը։

Իսկ իրոք, հնի մնացորդները նորի մեջ՝ կյանքը ցույց է տալիս մեզ ամեն քայլափոխում, թե բնության և թե հասարակության մեջ։ Յեվ Մարքսը վոչ թե քմահաճորեն մի կտոր «բուրժուական» իրավունք է մտցրել կոմունիզմի մեջ, այլ վերցրել է այն, ինչ վոր տնտեսապես ու քաղաքականապես անխուսափելի յե կապիտալիզմի խորքերից ծնված հասարակության մեջ։

Դեմոկրատիան ահագին նշանակություն ունի այն կռվում, վոր բանվոր դասակարգը հանուն իր ազատագրության մղում է կապիտալիստների դեմ։ Բայց դեմոկրատիան ամենևին այնպիսի մի սահման չէ, վոր չի կարելի անցնել, այլ միմիայն ֆեոդալիզմից դեպի կապիտալիզմ և կապիտալիզմից դեպի կոմունիզմ տանող ճանապարհի էտապներից մեկն է։

Դեմոկրատիա նշանակում է հավասարություն։ Հասկանալի յե,

թե վորքան մեծ նշանակություն ունի պրոլետարիատի պայքարը հավասարության համար և հավասարության լոզունգը, յեթե ճիշտ հասկանանք այն՝ դասակարգերի վոչնչացման իմաստով։ Բայց դեմոկրատիա նշանակում է միմիայն ֆորմալ հավասարություն։ Յեվ հենց վոր իրականանա հասարակության բոլոր անդամների հավասարությունն արտադրության միջոցներին տիրելու վերաբերմամբ, այսինքն՝ իրականանա աշխատանքի հավասարությունը, աշխատավարձի հավասարությունը, մարդկության առաջ անխուսափելիորեն կանգնելու յե ավելի առաջ գնալու հարցը, ձևական հավասարությունից իրական հավասարության անցնելու, այսինքն՝ այն կանոնն իրականացնելու հարցը, թե՝ «ամեն մեկն ըստ իր ընդունակությունների, ամեն մեկին ըստ իր պահանջմունքների»։ Թե մարդկությունն ինչպիսի էտապներով, ինչպիսի գործնական միջոցառումներ ձեռնարկելով կընթանա դեպի այդ բարձրագույն նպատակը, մենք չգիտենք և չենք կարող գիտենալ։ Բայց կարևոր է պարզել մեզ համար, թե վորքան անսահման կեղծ է այն սովորական բուրժուական պատկերացումը, իբր թե սոցիալիզմն ինչ-վոր մի մեռած, քարացած, միանգամ ընդմիշտ տրված բան է, այնինչ իսկապես միմիայն սոցիալիզմից է սկսվելու արագ, իրական, իսկապես մասսայական, բնակչության մեծամասնության, ապա նաև ամբողջ բնակչության մասնակցությամբ տեղի ունեցող առաջընթաց շարժումը հասարակական ու անձնական կյանքի բոլոր ասպարեզներում։

Դեմոկրատիան պետության ձև է, նրա այլատեսակություններից մեկը։ Յեվ, հետևաբար, այն հանդիսանում է, ինչպես և ամեն մի պետություն, բռնության կազմակերպված, սիստեմատիկ կիրառում մարդկանց վերաբերմամբ։ Այս՝ մի կողմից։ Բայց, մյուս կողմից, այն նշանակում է հավասարության ֆորմալ ճանաչում քաղաքացիների միջև, ճանաչում այն բանի, վոր բոլորը հավասար իրավունք ունեն պետության կառուցվածքը վորոշելու և այն կառավարելու մեջ։ Իսկ այս, իր հերթին, կապված է նրա հետ, վոր դեմոկրատիան իր զարգացման վորոշ աստիճանի ժամանակ, նախ, համախմբում է կապիտալիզմի դեմ հեղափոխական դասակարգին՝ պրոլետարիատին, և նրան հնարավորություն է տալիս՝ կոտրել, ջարդուփշուր անել, յերկրի յերեսից ջնջել բուրժուական, թեկուզ և հանրապետական-բուրժուական, պետական մեքենան, մշտական բանակը, վոստիկանությունը, չինովնիկությունը, փոխարինել նրանց ավելի դեմոկրատական, բայց այնուամենայնիվ դեռ պետական մեքենայով—զինված բանվորական

մասսաների ձևով, որոնք հանգում են ժողովրդի միահամուռ մասնակցությանը միլիցիայի մեջ։

Այստեղ «քանակը որակի յե փոխվում». դեմոկրատիզմի այդպիսի աստիճանը կապված է բուրժուական հասարակության շրջանակներից դուրս գալու, նրա սոցիալիստական վերակառուցումն սկսելու հետ։ Եթե իսկապես բոլորը մասնակցում են պետության կառավարմանը, այդտեղ կապիտալիզմն արդեն չի կարող դիմանալ։ Եվ կապիտալիզմի զարգացումն, իր հերթին, նախադրյալներ է ստեղծում այն բանի համար, որպեսզի իսկապես «բոլորը» կարողանան մասնակցել պետության կառավարման մեջ։ Այդպիսի նախադրյալներից է ընդհանուր գրագիտությունը, որ արդեն իրականացված է մի շարք ամենից ավելի առաջավոր կապիտալիստական յերկրներում, ապա՝ միլիոնավոր բանվորների «վարժեցումն ու կարգապահության յենթարկումը» փոստի, յերկաթուղիների, խոշոր գործարանների, խոշոր առևտրի, բանկային գործի և այլն և այլն խոշոր, բարդ, հանրայնացված ապարատի միջոցով։

Այդպիսի տնտեսական նախադրյալներ ունենալով՝ միանգամայն հնարավոր է անմիջապես, այսօրվանից մինչև վաղը, անցնել այն գործին, որ տապալելով կապիտալիստներին ու չինովնիկներին՝ արտադրության ու բաշխման վերահսկողության գործում, աշխատանքի ու արդյունքների հաշվառման գործում նրանց փոխարինենք զինված բանվորներով, ամբողջովին զինված ժողովրդով։ (Վերահսկողության ու հաշվառման հարցը չպետք է շփոթել ինժեներների, գյուղատնտեսների և այլ գիտականորեն պատրաստված անձնակազմի հարցի հետ. այս պարոններն այսօր աշխատում են՝ հպատակվելով կապիտալիստներին, վաղն էլ ավելի լավ կաշխատեն՝ հպատակվելով զինված բանվորներին)։

Հաշվառում ու վերահսկողություն — ահա այն գլխավոր բանը, որ պահանջվում է կոմունիստական հասարակության առաջին փուլի «կարգավորման», կանոնավոր գործունեության համար։ Այստեղ բոլոր քաղաքացիները դառնում են պետության վարձու ծառայողներ, պետություն, որ հանդիսանում են զինված բանվորները։ Բոլոր քաղաքացիները դառնում են մեկ համաժողովրդական, պետական «սինդիկատի» ծառայողներ ու բանվորներ։ Ամբողջ խնդիրն այն է, որ նրանք հավասարապես աշխատեն, ճշտիվ պահպանելով աշխատանքի չափը, և հավասար վարձատրություն ստանան։ Այս բանի հաշվառումը, սրա վերահսկողությունը կապիտալիզմը ծայրահեղ չափով պարզացրել և դարձրել է հսկողու-

թյան ու գրանցման, թվաբանության չորս գործողությունները գիտենալու ու համապատասխան անդորրագրեր տալու ամենապարզ, ամեն մի գրագետ մարդու համար մատչելի գործառնություններ *։

Երբ ժողովրդի մեծամասնությունը կսկսի ինքնուրույնաբար և ամենուրեք այդպիսի հաշվառում, այդպիսի վերահսկողություն անել կապիտալիստների (որոնք հիմա ծառայողներ են դարձել) ու պարոն ինտելիգենտիկների վերաբերմամբ, որոնք դեռ կապիտալիստական շարժուձևեր են պահպանում, այն ժամանակ այդ վերահսկողությունն իսկապես ունիվերսալ, ընդհանրական, համաժողովրդական կդառնա, այն ժամանակ ոչ մի կերպ հնարավոր չի լինի նրանից խուսափել, «ծածկվելու տեղ չի լինի»։

Ամբողջ հասարակությունը մի գրասենյակ ու մի գործարան կլինի, աշխատանքի հավասարությամբ ու վարձի հավասարությամբ։

Բայց այս «գործարանային» կարգապահությունը, որ կապիտալիստներին հաղթահարած, շահագործողներին տապալած պրոլետարիատը կտարածի ամբողջ հասարակության վրա, ոչ մի կերպ չի հանդիսանում ոչ մեր իդեալը, ոչ մեր վերջնական նպատակը, այլ միմիայն մի աստիճան է, որ անհրաժեշտ է հասարակությունը կապիտալիստական շահագործման զարշությունից ու նողկալիություններից արմատապես մաքրելու և հետագա հառաջխաղացման համար։

Այն մոմենտից սկսած, երբ հասարակության բոլոր անդամները կամ գոնե նրանց ահագին մեծամասնությունն իրենք կսովորեն կառավարել պետությունը, այդ գործն իր ձեռքը կառնեն, «կարգի կգցեն» վերահսկողությունը չնչին փոքրամասնություն կազմող կապիտալիստների վերաբերմամբ, այն պարոնիկների վերաբերմամբ, որոնք ուզում են կապիտալիստական շարժուձևեր պահպանել, այն բանվորների վերաբերմամբ, որոնց խորապես այլասերել է կապիտալիզմը, — այդ մոմենտից սկսում է անհետանալ առհասարակ ամեն մի կառավարչության կարիքը։ Որքան ավելի լիակատար է դեմոկրատիան, այնքան ավելի մոտ է այն մոմենտը,

* Երբ պետությունն իր ֆունկցիաների ամենագլխավոր մասով վեր է ածվում այսպիսի հաշվառման ու վերահսկողության բանվորների կողմից, այն ժամանակ նա դադարում է «քաղաքական պետություն» լինելուց, այն ժամանակ «հասարակական ֆունկցիաները քաղաքական ֆունկցիաներից հասարակ վարչական ֆունկցիաների յեն փոխարկվում» (համմտ. վերը, IV գլ., § 2, Էնգելսի բանավեճն անարխիստների հետ)։

յերբ այն անպետք է դառնում։ Վորքան ավելի դեմոկրատական է այն «պետությունը», վոր զինված բանվորներից է բաղկացած և «բառի բուն իմաստով այլևս պետություն չի» հանդիսանում, այնքան ավելի արագ է սկսում մահանալ **ամեն մի** պետություն։

Վորովհետև, յերբ **բոլորը** կսովորեն կառավարել և իսկապես կսկսեն ինքնուրույնաբար կառավարել հասարակական արտադրությունը, ինքնուրույնաբար կենսագործել ձրիակերների, աղաների, սրիկաների ու «կապիտալիզմի տրադիցիաները պահպանող» ուրիշ նմանների հաշվառումն ու վերահսկողությունը, այն ժամանակ այդ համաժողովրդական հաշվառումից ու վերահսկողությունից խուսափելն այնքան անասելի դժվար կլինի, այնպիսի ամենահազվագյուտ բացառություն կդառնա, հավանորեն այնքան արագ ու լուրջ պատժի կենթարկվի (վորովհետև զինված բանվորները գործնական կյանքի մարդիկ են և վոչ թե սենտիմենտալ ինտելիգենտիկներ, և հազիվ թե թույլ տան կատակ անել իրենց հետ), վոր յուրաքանչյուր մարդկային համակեցության վոչ-բարդ, հիմնական կանոնները կատարելու **անհրաժեշտությունը** շատ շուտով **սովորույթ** կդառնա։

Յեվ այն ժամանակ լայնորեն կբացվի դուռը կոմունիստական հասարակության առաջին փուլից նրա բարձրագույն փուլին անցնելու, իսկ դրա հետ միասին նաև պետության լիակատար մահացման համար։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ [1]

I

(1) Աշխատանքն ամեն հարստության և ամեն կուլտուրայի աղբյուրն է, իսկ վորովհետև ոգտաբեր աշխատանքը միայն հասարակության մեջ և հասարակության միջոցով է հնարավոր, ուստի աշխատանքի արգասիքն ամբողջապես և հավասար իրավունքի հիմունքով պատկանում է հասարակության բոլոր անդամներին [2]։

(2) Արդի հասարակության մեջ աշխատամիջոցները կապիտալիստական դասակարգի մենաշնորհն են կազմում։ Բանվոր դասակարգի դրանով պայմանավորված կախվածությունը ամեն ձևի թշվառության և ստրկության պատճառն է։

(3) Աշխատանքի ազատագրումը պահանջում է աշխատամիջոցների բարձրացումը հասարակության հանրային սեփական-

---

[1] Մարքսի ու Էնգելսի կողմից 1875 թ. մարտից—մայիսին քննադատության յենթարկված ծրագրի նախագիծն ընդունվեց այզենախյանների ու լասսալականների միացուցիչ համագումարում Գոթայում 1875 թվի մայիսի 25-ին։ Համագումարը բնագրի մեջ վորոշ փոփոխություններ ու լրացումներ մտցրեց։ Բացի կոնկրետ պահանջների մեջ մտցրած մի քանի լրացումներից՝ մենք այդ բոլոր փոփոխությունները նշում ենք ծանոթագրություններում։ Այն բոլոր նոր ձևակերպումները, վորոնց վրա, թեկուզ թույլ չափով, արտահայտվել է Մարքսի քննադատության ազդեցությունը, մեր կողմից նշվում է շեղատառ տպագրությամբ, բառվորում ամեն անգամ մատնանշվում է «Քննադատության» համապատասխան եջը։ Ընթերցողն ինքը կարող է համոզվել, վոր Մարքսի ցուցումները միայն շատ թույլ չափով են հաշվի առնըված։—Համագումարում ընդունված ծրագիրն ստացավ «Գերմանիայի Սոցիալիստական Բանվորական Կուսակցության ծրագիրը» վերնագիրը և բնագրում ամենուրեք «Գերմանական Բանվորական Կուսակցություն» անունը փոխարինվել է «Գերմանիայի Սոցիալիստական Կուսակցություն» անունով։

[2] Այս կետի՝ համագումարի կողմից ընդունված վերջնական տեքստը. «Աշխատանքն ամեն հարստության և ամեն կուլտուրայի աղբյուրն է, իսկ վորովհետև ընդհանուր ոգուտ բերող աշխատանքը միայն հասարակության

նության և հասարակական աշխատանքի ընկերական կարգավորումը՝ ամբողջ աշխատանքի արգասիքի արդար բաշխման հետ միասին[1]:

(4) Աշխատանքի ազատագրումը պետք է լինի բանվոր դասակարգի գործը, դասակարգի, վորի հանդեպ բոլոր մյուս դասակարգերը լոկ մի ռեակցիոն մասսա յեն:

(5) Իր ազատագրության համար պայքարող բանվոր դասակարգը գործում է ամենից առաջ ժամանակակից ազգային պետության շրջանակում, գիտակցելով, վոր իր՝ բոլոր կուլտուրական յերկրների բանվորության համար ընդհանուր՝ ձգտումների անհրաժեշտ հետևանքը լինելու յե ժողովուրդների միջազգային յեղբայրությունը[2]:

II

Այդ սկզբունքներից յելնելով՝ Գերմանական բանվորական կուսակցությունն ամեն օրինական միջոցներով ձգտում է ազատ պետության և սոցիալիստական հասարակության. աշխատավարձի սիստեմի—իր յերկաթե օրենքի հետ միասին — և ամեն տեսակի շահագործման վերացման. սոցիալական և քաղաքական ամեն անհավասարության վոչնչացման[3]:

միջոցով է հնարավոր, ուստի աշխատանքի ամբողջ արդյունքը պատկանում է հասարակությանը, այսինքն՝ նրա բոլոր անդամներին հավասար իրավունքի հիման վրա, յուրաքանչյուրին ըստ իր բանական պահանջմունքների:

1 Վերջնական տեքստը. «Աշխատանքի ազատագրումը պահանջում է աշխատամիջոցների վերածումը հասարակության հանրային սեփականության և ամբողջ աշխատանքի ընկերային կանոնավորումը՝ աշխատանքի արգասիքի հանրօգուտ գործադրման և արդարացի բաշխման հետ միասին»: Տես էջ 29:

2 Վերջնական տեքստը. «Գերմանիայի Սոցիալիստական Բանվորական Կուսակցությունը, թեյեվ առաջին հերթին գործելու յե ազգային սահմաններում, սակայն գիտակցում է բանվորական շարժման միջազգային բնույթը և պատրաստ է դրա համաձայն կատարելու բանվորների վրա դրված բոլոր պարտավորությունները՝ բոլոր մարդկանց յեղբայրությունն իրականություն դարձնելու համար»: Հմմտ. էջ 41—45 և 55—57:

3 Այս կետի յերկրորդ մասի վերջնական տեքստն ասում է. «...(ձգտում է)... աշխատավարձի յերկաթե օրենքի ջնջման՝ վարձու աշխատանքի սիստեմը վոչնչացնելու միջոցով, ամեն տեսակի շահագործման վերացման, սոցիալական և քաղաքական ամեն անհավասարության վոչնչացման»: Հմմտ. էջ 46:

III

Գերմանական բանվորական կուսակցությունը սոցիալական հարցի լուծման համար ուղի հարթելու նպատակով՝ պահանջում է արտադրողական ընկերությունների հիմնում՝ պետության ոժանդակությամբ և աշխատավոր ժողովրդի դեմոկրատական հսկողությամբ։ Արտադրողական ընկերությունները թե՛ արդյունաբերության և թե՛ հողագործության մեջ այնպիսի ծավալով են կյանքի կոչվելու, վոր նրանցից առաջանա ամբողջ հասարակական աշխատանքի սոցիալիստական կազմակերպություն։

IV[1]

Ա. Գերմանական բանվորական կուսակցությունը պահանջում է վորպես պետության հիմքերն ապահովող ազատություն.

1. Ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ընտրական իրավունք բոլոր տղամարդկանց համար՝ սկսած 21 տարեկանից, բոլոր ընտրությունների ժամանակ պետության մեջ և համայնքում։

2. Անմիջական ժողովրդական որենսդրություն՝ առաջարկություններ մտցնելու և մերժելու իրավունքով։

3. Ընդհանուր զինապարտություն։

4. Բոլոր բացառիկ որենքների, այն է՝ մամուլի, միությունների և ժողովների վերաբերյալ որենքների վերացում։

5. Ժողովրդական դատարան։ Ձրի դատավարություն։

Բ. Գերմանական բանվորական կուսակցությունը պահանջում է վորպես պետության մտավոր ու բարոյական հիմքեր[2].

1. Բոլորի համար ընդհանուր և հավասար ժողովրդական կրթություն, վոր գտնվում է պետության ձեռքում։ Դպրոցների պարտադիր հաճախում։ Ձրի ուսուցում։

2. Գիտության ազատություն։ Խղճի ազատություն[3]։

---

[1] Ա բաժինը միացրած է Բ բաժնի հետ, իսկ Գ բաժինը միացրած է Դ բաժնի հետ։ Առաջին բաժնի ներածական ֆրազը, վոր 6 կետ է պարունակում, ասում է. «Գերմանիայի սոցիալիստական բանվորական կուսակցությունը վորպես պետության հիմք պահանջում է»։ Նախագծի «ապահովող ազատություն» արտահայտությունը դուրս է գցված։ Հմմտ. եջ 53։

[2] Վերջնական խմբագրության մեջ այդ ֆրազը դուրս է գցված։

[3] Այս կետը դուրս է գցված (հմմտ. եջ 59—60), իսկ նախորդ, 4-րդ կետին

Գ. Գերմանական բանվորական կուսակցությունը պահանջում է վորպես պետության տնտեսական հիմք[1].

միանական պրոգրեսիվ յեկամտային հարկ պետության և համայնքի համար՝ բոլոր գոյություն ունեցող, մանավանդ անուղղակի հարկերի փոխարեն։

Դ. Գերմանական բանվորական կուսակցությունը պահանջում է բանվոր դասակարգի պաշտպանության համար՝ ընդդեմ կապիտալի իշխանության՝ գոյություն ունեցող հասարակության սահմաններում[2]—

1. Կոալիցիայի ազատություն։
2. Նորմալ աշխատօր[3]։
3. Կանանց աշխատանքի սահմանափակումն և յերեխաների աշխատանքի արգելումն[4]։
4. Պետական հսկողություն գործարանային, արհեստավորական և տնային արդյունաբերության վրա[5]։
5. Կալանավորների աշխատանքի կանոնավորումն։
6. Պատասխանատվության իրական օրենք։

ավելացրած է. «(վերացումն)... առհասարակ այն բոլոր օրենքների, վորոնք սահմանափակում են մտքի ազատ արտահայտությունը, ազատ հետազոտությունն ու մտածողությունը», և 6-րդ կետին (Բ-ից առաջ) ավելացրած է. «Կրոնն անհատական գործ հայտարարելը»:

[1] Վերջնական տեքստում ներածական ֆրազը յերկրորդ բաժնի, վոր 8 կետ է պարունակում, ասում է. «Գերմանիայի Սոցիալիստական Բանվորական Կուսակցությունը պահանջում է գոյություն ունեցող հասարակության շրջանակներում»։

[2] Վերջնական խմբագրության մեջ այս ֆրազը դուրս է գցված։

[3] Վերջնական տեքստում. «Հասարակական կարիքներին համապատասխանող նորմալ աշխատօր»։ Հմմտ. եջ 60։

[4] Վերջնական տեքստում. «Յերեխաների աշխատանքի արգելումն, ինչպես նաև կանանց առողջությանը յեվ բարոյականությանը վնասող ամեն տեսակ աշխատանքի արգելումն»։ Հմմտ. եջ 60—61։

[5] Վերջնական տեքստը. «Բանվորների կյանքը և առողջությունը պահպանող օրենքներ։ Բանվորական բնակարանների առողջապահական վերահսկողություն։ Հանքավայրերի, գործարանների, արհեստավորական և տնայնագործական արդյունաբերության հսկողություն՝ բանվորների կողմից ընտրված պաշտոնյաների միջոցով։ Հմմտ. եջ 61։

ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Մարքսի, Էնգելսի ու Լենինի անունները չենք դնում։ Չենք դնում նաև միքանի անուններ, վորոնք անցողակի յեն հիշվում։ Աստղանիշ թվերը ցույց են տալիս, վոր Մարքսի ու Էնգելսի հիշատակած անձերի մասին այդ էջերում խմբագրության կողմից ծանոթագրություններ են դրված։

Ալեքսանդր II։—*43*։
Աուեր։—*80*, 85, 90*։
Բակունին, բակունիզմ։—*41, 75, 80, 81, 91—92, 116, 123*։
Տե՛ս նաև *նյութերի ցանկում՝ անարխիստներ*։
Բեբել։—*6, 14, 15, 17, 27, 38, 46, 52, 55, 56, 65*, 66, 68, 75—78, 80, 87, 88, 90, 96, 98, 103, 107, 115, 117, 121, 123—126, 130*։
Նրա վերաբերմունքը դեպի Գոթայի ծրագրի քննադատության հրատարակումը 1891 թվին։—*87—88, 95—97*։
Էնգելսի նամակը Բեբելին 1875 թվի մարտի 18—28-ին։—*65—79*։
Լենինն այդ նամակի մասին։—*103—107, 115—117, 121—124*։
Էնգելսի նամակը Բեբելին 1875 թվի հոկտեմբերի 12-ին։—*15, 87—89*։
Բեկքեր, Բերնհարդ։—*82*, 84, 89*։
Բեկքեր, Ֆ.—*45*։
Բերնշտայն։—*39, 76, 106*։
Բիսմարկ։—*15, 27, 28, 41, 42*—43*, 44, 59, 78, 85, 97, 98*։
Բյուշնե։—*52*, 70, 71*։
Բուխարին։—*92, 106*։
Բրակքե։—*14, 15, 70*, 71, 75, 78*, 80, 83, 85, 87—90, 107, 117, 121, 125*։
Մարքսի նամակը Բրակքեյին 1875 թվի մայիսի 5-ին։—*14, 80—82, 90*։
Լենինն այդ նամակի մասին։—*125*։
Էնգելսի նամակը Բրակքեյին 1875 թվի հոկտեմբերի 11-ին։—*15, 83—86*։
Գայբ։—*80*, 85, 90*։
Գլադստոն, Վ.։—*58**։
Գլադստոն, Ռ.։—*58**։
Գյորգ, Ամանդ։—*71**։
Գյոթե։—*47*։
Գրիլլենբերգեր։—*16*։
Դից։—*95*, 99*։
Զիննովյեվ։—*10*։
Զոննեման։—*85*, 89*։
Զորգե։—*16, 92*։
Լանգե, Ֆ. Ա.։—*47**։
Լասսալ։—*6, 16, 18, 26*—27*, 28, 29, 40, 41, 45, 47, 48, 49, 51, 70, 71, 77, 82, 84, 85, 88, 91, 96, 97, 99, 117, 126, 134, 135*։
Լեգենդա Լասսալի մասին։—*17—18, 98*։
Տե՛ս նաև *նյութերի ցանկում՝ լասսալականություն, լասսալյաններ*։

Լիբկնեխտ, Վ.։—6, 14, 55, 56, 65—68, 75*, 76, 78, 80, 81, 83, 86, 88, 89, 90, 95*, 99*, 116, 123։
Լուդվիգ, Էմիլ։—12։
Լուի Ֆիլիպպ։—52*, 56, 109։
Կաուցկի։—9, 10, 16, 17—19, 54, 65, 88, 90, 92, 94—96, 99, 105, 106, 123։
Էնգելսի նամակը Կաուցկուն 1891 թվի փետրվարի 23-ին։—17, 90, 94—99։
Կաուցկու դերը «Քննադատության» հրատարակման ժամանակ 1891 թ.։—95—96, 99։
Լասսալի մասին.—96,99։
Կուգելման։—28, 47։
Կրոմվել։—13։
Հազենկլեվեր։—6, 66*, 77, 85, 86,
Հասսելման («Բեռլինյան Մարատ»)։—6, 41*, 66*, 77, 86։
Հացֆելդ, Սոֆիա։—97*։
Հիրշ, Կարլ։—85*։
Մալթուս։—47*, 70։
Մաձձինի։—41։
Մարատ։—41*։
Միլլերան։—76։
Յակոբի։—67։
Նապոլեոն III (Լուի Բոնապարտ)։—27, 43, 56, 109։
Շվայցեր։—98*։
Շտիբեր։—86*։
Շտիրներ։—12։
Պաննեկուկ։—106։
Պլեխանով։—105։
Պրուդոն։—32, 41, 72*, 73, 103, 121։
Ռամմ։—78*, 79։
Ռիկարդո։—70։
Ռյազանով։—7։
Ռուսսո։—25*։
Սմիթ, Ադամ։—49։
Ստալին։—9, 10, 11, 12, 19։
Ստրուվե։—38։
Վալթայր։—85*, 89։
Վանդերվելդ։—19։
Վան-Պատտեն։—73։
Տեսսենդորֆ։—86*։
Տյոլկե։—6, 66*, 77։
Ֆիշեր, Ռիխարդ։—99*։

ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

Աստղանիշ թվերը ցույց են տալիս, որ տվյալ հարցի մասին հիշատակված էջերում խմբագրության կողմից ծանոթագրություններ են դրված։

Ազատությունը կոմունիզմի ժամանակ։—73, 130—131։

«Ազատ պետություն», «ազատ ժողովրդական պետություն»։—53—54, 71—74, 103—104, 121—122։

Աղանդավորներ, սոցիալիստական։—30*։

Ամեն մեկն ըստ իր ընդունակության, ամեն մեկին ըստ իր պահանջմունքի։—36, 137—140, 142։

Անարխիստները՝ պետության մասին։—72, 73*—74*, 103, 104, 106, 121, 122, 123, 140·

— *և մարքսիստները։*—91—92*։

Անցումը կապիտալիզմից դեպի կոմունիզմ։—54, 108, 110, 127—133։

Աշխատանք։—23*. *և բնություն*—23—24. *իբրև հարստության և կուլտուրայի աղբյուր։*—23—26։

Աշխատանք՝ երեխաների—60—61. *կանանց*—60։

Աշխատանքը կոմունիզմի ժամանակ։—137—139. *արտադրողական աշխատանք և կրթություն։*—61։

«Աշխատանքի անկրճատ արդասիք», «աշխատանքի արդասիք», «աշխատանքի լրիվ արդյունք»։—29, 30*—33*, 112, 133, 134։

Աշխատանքի բաշխումը կոմունիզմի առաջին փուլի ժամանակ։—136—137, 140—141։

Աշխատավարձ։—47—49։

Աշխատավարձի «երկաթե օրենք»։—46—50, 68—70։

«Արդարացի բաշխում»։—29—30։

«Արդարություն»։—29, 30, 134—135։

Արհեստակցական միություններ։—71—72, 115—116։

«Արտադրողական ընկերություններ պետական օժանդակությամբ»։—52, 70—71, 87։

Բանվորական և զինվորական պատգամավորների խորհուրդ։—132, 140։

Բանվորների միջազգային ընկերություն (I Ինտերնացիոնալ)։—28, 41*, 44—45, 68—69.

Հաագայի կոնգրեսը։—91*։

Բաշխում և արտադրության եղանակ։—37*—38*։

«Բուրժուական իրավունքը» սոցիալիզմի ժամանակ։—34, 114, 136, 139, 141։

Տե՛ս նաև *իրավունք, հավասար։*

Գերմանական սոցիալ-դեմոկրատիան 1871—1914 թ. թ.։—129։

Դեմոկրատական հանրապետություն։—56—57, 127—128։

Դեմոկրատիա—բուրժուական, կապիտալիստական։—110—111, 127—133
Վուլգար—57, 110։
Դեմոկրատիա—լիակատար։—111. պրոլետարական—111, 117—120, 130—131, 141—143.
և հավասարություն—141—142. «Կոմունիստական մանիֆեստը» դեմոկրատիայի մասին։—118—120, 128։
Դեմոկրատիա և պրոլետարիատի պայքարը կապիտալիստների դեմ։—141—142.
և պրոլետարական հեղափոխություն։—117—118։
Ընդհանուր գերմանական բանվորական միություն։—98*։
Ժողովրդական կուսակցություն, գերմանական։—55*, 67*, 84, 88։
Ժողովրդական կրթություն։—58—59։
«Ժողովրդական պետություն»—տե՛ս «Ազատ պետություն»։
Ինտերնացիոնալ I—տե՛ս Բանվորների միջազգային ընկերություն։
Ինտերնացիոնալիզմ—բուրժուական,—42—44.
Պրոլետարական—43—44, 68—69։
Իրավունք։—34—37, 112—113. Բուրժուական—տե՛ս «Բուրժուական իրավունք»։
Իրավունք, հավասար — իրավունքի հավասարություն։ — 33 — 36, 112 — 113 134—135.
Կոմունիզմի առաջին փուլի ժամանակ։—33—36, 134—137։
Տե՛ս նայեվ հավասարություն։
Լասսալականություն—տե՛ս «աշխատանքի անկրճատ արդյունք», «աշխատավարձի յերկաթե օրենք», «միասնական ռեակցիոն մասսա», «արտադրողական ընկերություններ պետության օժանդակությամբ»։
Լասսալականներ—և այզենախականներ։—65—67, 77, 80—81.
Յուրահատուկ լասսալականներ։—90—91։
Խաղաղության ու ազատության (միջազգային) լիգա։—43*, 55, 68—69։
Կաուցկիականություն։—110։
Կապիտալիստական հասարակության «ազատությունը»։—128.
«Ազատություն» և «հավասարություն»—72, 104—105, 115—116.
«Գիտության ազատություն»—72.
«Խղճի ազատություն»—59—60, 72։
Կոմունիստական հասարակություն («նոր հասարակություն»)։—31—32։
Կոմունիստական հասարակություն (առաջին, ամենացած փուլը)։—32-36, 111—113, 133—137, 140—141, 143.
Բարձրագույն փուլը—36*, 137—145.
Զարգացում—126—127, 135, 140—141.
Հաշվառում և վերահսկողություն կոմունիզմի ժամանակ—143—145։
Կոոպերատիվ ընկերություն։—52։ Տե՛ս նայեվ «արտադրողական ընկերություններ պետական օժանդակությամբ»։
Կուլտուրկամպֆ։—59*։
Կուսակցության ծրագիրը, նրա նշանակությունը։—77, 80—81, 117։
Կրթություն, կապակցված արտադրողական աշխատանքի հետ։—61։
Կրոն։—59—60։
Հասարակություն և պետություն—53—54։
Հավասարություն։—34, 35*, 74, 116.
«Ընդհանրապես»—74—75, 116, 134.

Ձևական և իրական—141—142։
Հարկ, յեկամտային։—57։
Մանր բուրժուազիան Գերմանիայում 60—70-ական թվականներին։—67։
«Մի հետադիմական մասսա»։—38*—41*, 67—68, 115—116։
Յեկամտահարկ—Տե՛ս հարկ, յեկամտային։
Նորմալ աշխատօր։—60։
Պետություն—էությունը։—53, 71—75, 103—104, 130—132.
Բուրժուական պետություն—53—54, 56—58, 108, 110—111, 115—116, 126—127, 132—133.
Գերմանական, բուրժուական-յունկերական—57*.
Մարքսի ու Էնգելսի պետության ուսմունքի աղավաղումը օպորտունիստների, սոցիալ-դեմոկրատների կողմից—105—106։
Պետություն Կոմունայի տիպի, պետություն-կոմունա, պետություն-համայնք։—72, 74, 103—105, 106, 121—123, 125։
Պետություն—մահացումը, լուծումը սոցիալիզմ-կոմունիզմի ժամանակ։—73—74*, 103, 104, 110—111, 117—118, 125—126, 131, 133, 137, 138, 144—145.
«Կոմունիստական մանիֆեստը» պետության և պետության մահացման մասին—73, 119—120, 128.
«Փիլիսոփայության թշվառությունը» պետության մահացման մասին—73—74, 117—118.
Կապիտալիզմից կոմունիզմին անցնելիս—129—130, 132—133.
Պրոլետարական պետություն—73—74, 110—111, 117—120, 141—144.
Պետության մահացման տնտեսական հիմքերը—125—145։
Տե՛ս նաև պրոլետարիատի դիկտատուրան։
Պրոլետարիատի դիկտատուրա։—54*—55*, 107—111, 129—130.
և դեմոկրատիա—128։
Սպառման միջոցների (պրոդուկտների) բաշխում։—37.
Կոմունիզմի առաջին փուլի ժամանակ—32—35, 111—115, 136—137.
Կոմունիզմի բարձրագույն փուլի ժամանակ—36, 112—114, 137—140։
Ստրկություն (վարձու բանվորների)։—48*—49*, 50։
Վուլգար դեմոկրատիա։—57, 110։
Փարիզի կոմունան։—72, 104, 107, 115, 121, 123, 130։
Ֆրանս-պրուսական պատերազմը (1870—1871 թ. թ.) և գերմանական սոցիալիստական բանվորները։—68—69։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՌԱՋԱԲԱՆ . . . . 5—20
Կ. ՄԱՐՔՍ—ԳՈԹԱՅԻ ԾՐԱԳՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ . . . . 21—62
(դիտողություններ Գերմանական բանվորական կուսակցության ծրագրի մասին) . . . .
Մարքսի ու Էնգելսի նամակներից՝ Գոթայի ծրագրի նախագծի մասին . . 63—99
Էնգելսը—Բեբելին, 1875 թ. մարտի 18—28-ին 65
Մարքսը—Բրակեին, 1875 թ. մայիսի 5-ին 80
Էնգելսը—Բրակեին, 1875 թ. հոկտեմբերի 11-ին 83
Էնգելսը—Բեբելին, 1875 թ. հոկտեմբերի 12-ին 87
Էնգելս, առաջաբան «Գոթայի ծրագրի քննադատության» առթիվ, 1891 թ. հունվարի 6-ին 90
Էնգելսը—Կաուցկուն, 1891 թ. փետրվարի 23-ին 94
Լենինը «Գոթայի ծրագրի քննադատության մասին» . . . . 101—145
I. *«Մարքսիզմը պետության մասին» տետրից* (հունվար—փետրվար 1917 թ.) . . . . 103—120
Էնգելսի նամակը Բեբելին 103
Մարքս—«Գոթայի ծրագրի քննադատությունը» . . . 107
Էնգելսի 1875 թվի նամակը 115
Մարքս—«Փիլիսոփայության թշվառությունը» 117
«Կոմունիստական մանիֆեստը» պետության մասին . 118
II. *«Պետություն և հեղափոխություն» գրքից* (օգոստոս—սեպտեմբեր 1917 թ.) . . . . 121—145
IV *գլուխ. Էնգելսի լրացուցիչ պարզաբանությունները. Նամակ Բեբելին* 121
V *գլուխ. Պետության մահացման տնտեսական հիմքերը* . . 125
1. Հարցադրումը Մարքսի կողմից 125
2. Անցումը կապիտալիզմից կոմունիզմին 127
3. Կոմունիստական հասարակության առաջին փուլը . 133
4. Կոմունիստական հասարակության ամենաբարձր փուլը 137
Բանվորական կուսակցության ծրագրի նախագիծը . . . . . . 147—150
Անունների ցանկ 151
Նյութերի ցանկ 153

Пров. 1940 г.

Թարգմանիչ Ցե. Տ.-Մինասյան
Խմբագիր [redacted]
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Լ. Աբովյան
Կոնտրոլ սրբագրիչ Ցե. Տ.-Մինասյան

Գլավլիտի լիազոր Ի—4885
Հրատ. № 449, պատվեր № 93
Տիրաժ 7000
Գինը 2 ռ. 50 կ., կազմը 1 ռ.
Հանձնված է արտադրության 11/V 1937 թ
Ստորագրված է տպագրելու 14/VIII 1937 թ.

Հայկուսհրատի տպարան, Երևան,
Ալավերդյան № 71

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0022414

A II/5830